

Ոստիկանության բարեփոխումները քրեական արդարադատության համակարգի բարեփոխումների շրջանակում

ԱՍՄԿ/ՈԳՈՅՍ հրատարակությունների շարք, հ. 11

Ե Ա Հ Կ

Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ

Ոստիկանության բարեփոխումները քրեական արդարադատության համակարգի բարեփոխումների շրջանակում

ԱԱՍՊՎ/ՈԳՌՅՍ հրատարակությունների շարք, հ. 11

- Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) 57 պետություններում աշխատում է հանուն **կայունության, բարեկեցության և ժողովրդավարության**:
Քաղաքական երկխոսություն է ծավալվում միասնական արժեքների շուրջ:
Իրականացվում են կայուն առաջընթացի ապահովմանն ուղղված գործնական աշխատանքներ:



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

Վիեննա, հուլիս 2014 թ.

© ԵԱՀԿ 2014

Բոլոր իրավունքները պահպանված են: Սույն հրապարակման բովանդակությունը կարելի է ազատորեն օգտագործել և բազմացնել կրթական և ոչ առևտրային այլ նպատակների համար՝ պայմանով, որ ցանկացած արտատպում պետք է ուղեկցվի ԵԱՀԿ-ի՝ որպես սկզբնաղբյուրի մատնանշմամբ:

ISBN 978-92-9234-283-8

ԵԱՀԿ քարտուղարություն
Անդրազգային սպառնալիքների դեմ պայքարի վարչություն
Ոստիկանական գործունեության ռազմավարական հարցերի
ստորաբաժանում
Wallnerstrasse 6
A-1010 Վիեննա, Ավստրիա

Հեռախոս. +43-1 514 36 6942
Ֆաքս. +43-1 514 36 6266
Էլեկտրոնային փոստ. spmu@osce.org
<http://www.osce.org/spmu>
<http://polis.osce.org>

Բովանդակություն

Հապավումներ.....	9
Նախաբան.....	12
Երախտիքի խոսք.....	14
Համառոտ ակնարկ	18
I. Ներածություն.....	37
1.1. Ուղեցույցի նպատակները	41
1.2. Ուղեցույցի կառուցվածքը.....	45
II. Եզրութաբանությունը	47
2.1. Արդարադատությունը և իրավունքի գերակայությունը	47
2.2. Զրեական արդարադատության համակարգի սուբյեկտները	48
2.3. Բարեփոխումները տարբեր իրավիճակային պայմաններում	51
2.4. ԶԱՀԲ-ի նպատակները և ուղղորդիչ սկզբունքները.....	56
III. Զրեական արդարադատության համակարգի ամբողջական գնահատումը	62
3.1. Գնահատումների պլանավորումը.....	64
3.1.1. Գնահատող թիմի կազմը.....	64
3.1.2. Գնահատման թիրախային խմբերը.....	65
3.1.3. Գնահատման կարևորագույն ոլորտները	68
3.1.4. Գնահատման մեթոդաբանությունը	70
3.2. ԶԱՀ-ի տարբեր կառույցների, պետական այլ մարմինների և ոչ պետական կառույցների փոխհարաբերությունների վերլուծության հարցերը գնահատման գործընթացում	78
3.2.1. Սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական իրավիճակներին վերաբերող հարցերը.....	78
3.2.2. Անվտանգության և արդարադատության ոլորտներում հանրության կարիքներին վերաբերող հարցերը	80

3.2.3.	<i>ԶԱՅ-ի կառավարմանը և կարողություններին վերաբերող հարցերը</i>	81
3.2.4.	<i>ԶԱՅԲ-ի միջազգային այլ ծրագրերին վերաբերող հարցեր</i>	98
IV.	Բարեփոխումների ռազմավարության և իրականացման ծրագրերի մշակումը	99
V.	Իրավական դաշտի բարեփոխումները.....	103
5.1.	Վերանայման ենթակա գործող օրենքները	105
5.2.	Իրավական դրույթների վերանայումը ԶԱՅ-ի արձագանքը բարելավելու նպատակով	109
5.2.1.	<i>Խորացված համագործակցությունը ԶԱՅ-ի կառույցների միջև</i>	109
5.2.2.	<i>Համագործակցության խորացումը ԶԱՅ-ի կառույցների, պետական այլ մարմինների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև</i>	119
5.2.3.	<i>Մարդու իրավունքներին առնչվող դրույթները</i> ..	121
5.2.4.	<i>Հաշվետվողականությունը և վերահսկողությունը</i>	122
VI.	Քաղաքականության, ընթացակարգերի, կանոնների և կանոնակարգերի մշակումը/բարեփոխումը.....	125
6.1.	Խորացված համագործակցությունը ԶԱՅ-ի կառույցների միջև.....	128
6.2.	Խորացված համագործակցությունը ԶԱՅ-ի կառույցների, պետական այլ մարմինների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև	129
6.3.	Մարդու իրավունքներին վերաբերող դրույթները.....	130
6.4.	Հաշվետվողականությունը և վերահսկողությունը....	134
VII.	Կառուցվածքային և կազմակերպական	

	բարեփոխումները.....	136
7.1.	Խորացված համագործակցությունը ԶԱՀ-ի կառույցների միջև.....	138
7.1.1.	<i>Համակարգման և համագործակցության մեխանիզմների ստեղծումը ռազմավարության/քաղաքականության մակարդակում.....</i>	139
7.1.2.	<i>Համակարգման և համագործակցության մեխանիզմների ստեղծումը գործառնական մակարդակում.....</i>	145
7.1.3.	<i>Փորձագիտական ծառայությունները.....</i>	157
7.2.	Խորացված համագործակցությունը ԶԱՀ-ի կառույցների և անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորուբային և ոչ պետական կառույցների միջև.....	161
7.2.1.	<i>Աջալուրջ բնակիչների խմբերը/Թաղային պահակային դիտարկման համակարգերը.....</i>	162
7.2.2.	<i>Անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունները.....</i>	166
7.2.3.	<i>Արդարադատության ոլորտում ծառայություններ մատուցող սովորուբային/ոչ պետական կառույցները.....</i>	168
7.3.	Խորացված համագործակցությունը ԶԱՀ-ի կառույցների և քաղաքացիական հասարակության միջև.....	172
7.3.1.	<i>Համայնքային ոստիկանությունը.....</i>	172
7.3.2.	<i>Արտադատական ծրագրերը.....</i>	174
7.3.3.	<i>Քրեական գործերով միջնորդությունը.....</i>	177
7.3.4.	<i>Ինտերնետում երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների կանխարգելումը, բնությունը և քրեական հետապնդումը.....</i>	183
7.4.	Մարդու իրավունքներին առնչվող առանձնահատկությունները.....	185

7.4.1.	<i>Արդարադատության հասանելիությունը/հրավաքանական օգնության տրամադրումը</i>	186
7.4.2.	<i>Աջակցությունը տուժողներին</i>	189
7.4.3.	<i>Աջակցությունը վկաներին/Վկաների պաշտպանությունը.....</i>	195
7.4.4.	<i>Իրավախախտի վարման միասնական մոտեցումը</i>	201
7.4.5.	<i>Անչափահասների արդարադատությունը.....</i>	202
7.5.	<i>Հաշվետվողականությունը և վերահսկողությունը....</i>	203
7.5.1.	<i>Ոստիկանության հաշվետվողականությունը և վերահսկողությունը</i>	204
7.5.2.	<i>Դատական իշխանության հաշվետվողականությունը և վերահսկողությունը</i>	208
7.5.3.	<i>Բանտային համակարգի հաշվետվողականությունը և վերահսկողությունը</i>	214
7.5.4.	<i>Անվտանգության ոլորտում ծառայություններ մատուցող ոչ պետական սուբյեկտների հաշվետվողականությունը և վերահսկողությունը</i>	214
7.5.5.	<i>Արդարադատության ոլորտում ծառայություններ մատուցող սովորութային/ոչ պետական սուբյեկտների հաշվետվողականությունը և վերահսկողությունը</i>	216
7.5.6.	<i>ԶԱՀ-ի կառույցների հարաբերությունների հաշվետվողականությունը և վերահսկողությունը</i>	216
7.6.	<i>Մշակույթի փոփոխությունները ԶԱՀ-ում</i>	221
7.7.	<i>Վերապատրաստումը և մասնագիտական զարգացումը.....</i>	225
7.7.1.	<i>Խորացված համագործակցությունը ԶԱՀ-ի կառույցների միջև</i>	227

7.7.2.	Համագործակցության խորացումը ԶԱՀ-ի կառույցների, պետական այլ մարմինների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև	234
7.7.3.	Մարդու իրավունքներին առնչվող առանձնահատկությունները	235
7.7.4.	Հաշվետվողականությունը և վերահսկողությունը	240
VIII.	ԶԱՀ-ի գնահատումը և վերանայումը	243
8.1.	Գնահատման չափորոշիչները	244
8.2.	ԶԱՀ-ի աշխարհագրական ընդգրկումը	247
8.3.	Շարունակելիությունը և «ելքի» փուլը	248
IX.	ԶԱՀ-ի վերաբերյալ միասնական մոտեցումները բարեփոխումներին աջակցող միջազգային կազմակերպությունների միջև	250
X.	ԶԱՀ-ի վերաբերյալ միասնական մոտեցումները բարեփոխումներին աջակցող միջազգային կազմակերպությունների ներսում	253
Հղումներ.....		257
Փաստաթղթեր		257
Օգտագործված գրականությունը		260
Հավելված 1. ԵԱՀԿ տարածաշրջանում ԶԱՀ աշխատանքների նկատմամբ կիրառելի կարևորագույն միջազգային կոնվենցիաները, ուղեկիշները և հանձնառությունները.....		289
Միավորված ազգերի կազմակերպության փաստաթղթերը և գործիքները.....		289
ԵԱՀԿ փաստաթղթերը, ԵԱՀԿ նախարարների խորհրդի և մշտական խորհրդի որոշումները և գործողությունների ծրագրերը		299
Եվրոպայի խորհրդի փաստաթղթերը		304
Ինտերպոլի փաստաթուղթ		308

Հավելված 2. Ձինված ուժերի ժողովրդավարական
վերահսկողության ժնկյան կենտրոնի (ՉՈՒԺԿ)
մշակած Կարողությունների և բարեվարքության
հայեցակարգի (ԿԲՅ) կիրառությանն առնչվող
ընդհանուր բնույթի հարցադրումները..... 309

Հապավումներ

ԱԱՄԿ	Անդրազգային սպառնալիքների դեմ պայքարի վարչություն
ԱԱՄԿ/ԱՊՍ	Անդրազգային սպառնալիքների դեմ պայքարի վարչություն/Ահաբեկչության դեմ պայքարի ստորաբաժանում
ԱԱՄԿ/ՈԳՌՅՍ	Անդրազգային սպառնալիքների դեմ պայքարի վարչություն/Ոստիկանական գործունեության ռազմավարական հարցերի ստորաբաժանում
ԱՄՆԽ	Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտ
ԱՊՅԱԿ	Ահաբեկչության դեմ պայքարի համակարգման ազգային կենտրոն
ԱԶՄԾ	Անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայություններ
ԳՍԸ	Գործառնական ստանդարտ ընթացակարգ
ԴԱԱՄ	Դոկտրինների աջակցության ավտոմատացված մեխանիզմ
ԵԱՅԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՉՈՒԺԿ	Չինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնևյան կենտրոն
ԺՅՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԻԴՅ	Ինտերնետի դիտարկման հիմնադրամ
ԽԱԳԿ	Խաղաղության և անվտանգության գործադիր կոմիտե

ԿԲՅ	Կարողությունների և բարեվարքության հայեցակարգ
ՅԱԱԽ	Յամաշխարհային առցանց աշխատանքային խումբ
ՅԱՊԿ	Յավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՅԿ	Յասարակական կազմակերպություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿԱԿՅԿ	Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիա
ՄԱԿԹՅԾ	Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների միջազգային հսկողության ծրագիր
ՄԱԿԹՅՊԳ	Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ
ՄՄԿ ՄԹ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն Մարդկանց թրաֆիքինգ
ՈՂՊՄ	Ոստիկանության ղեկավար պաշտոնյաների միություն
ՍԲԱԽ	Սեռական բռնության հարցերով անկախ խորհրդատուներ
ՏՅԶԿ ՉԱՅ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Չարգացման աջակցության հանձնաժողով
ՏՅԽ	Տարածաշրջանային համակարգման խորհուրդ
ՔԱԱԽ	Քրեական արդարադատության ազգային խորհուրդ
ՔԱԲԳ	Քրեական արդարադատության բարեփոխումների գրասենյակ
ՔԱՅ	Քրեական արդարադատության համակարգ

ՔԱՅԲ	Քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներ
ՔԱՅՅ	Քրեական արդարադատության համակարգող հանձնաժողովներ
ՔԱՏԽ	Քրեական արդարադատության տեղական խորհուրդ
ՔԴՕ	Քրեական դատավարության օրենսգիրք
ՔԴՕՕ	Քրեական դատավարության օրինակելի օրենսգիրք
ՈԻԱՄ	Ուղղորդման ազգային մեխանիզմ
ՖՅԿ	Ֆինանսական հետախուզության կենտրոն

Նախաբան

Քրեական արդարադատության ոլորտի պրակտիկ մասնագետների, քաղաքականությունը որոշող անձանց և գիտական աշխատողների շրջանում վերջին տասնամյակի ընթացքում լայն տարածում է գտել այն համոզմունքը, որ քրեական արդարադատության համակարգի (ՔԱՀ) մեկ հատվածի բարեփոխումները պետք է լրացնել այլ հատվածների բարեփոխումներով և համաձայնեցնել դրանց հետ, որպեսզի հնարավոր լինի բարձրացնել քրեական արդարադատության ողջ գործընթացի արդյունավետությունը և օգտավետությունը, բնակչության համար ապահովել անվտանգության և արդարադատության հասանելիությունը և մնայուն դարձնել ՔԱՀ-ի բարեփոխումների ձեռքբերումները:

Սույն ուղեցույցում ներկայացվում են քրեական արդարադատության գործընթացում ՔԱՀ-ի տարբեր կառույցների փոխառնչությունները, նրանց հարաբերությունները կառավարական համապատասխան կառույցների, ինչպես նաև անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության հաստատությունների հետ: Մանրամասնորեն նկարագրվում են վերոհիշյալ հարաբերություններում բարեփոխումների գործնական քայլերի արդյունքում կուտակված՝ հաջողված փորձի մի շարք օրինակներ: Միաժամանակ ներկայացվում են ՔԱՀ-ի բարեփոխումների համապարփակ մոտեցման կիրառությամբ միջազգային համագործակցության խորացման հնարավոր տարբերակներ: Սույն ուղեցույցի մշակման ուղղությամբ ԵԱՀԿ-ի կողմից գործադրվող ջանքերը բուռն դրական արձագանքի են արժանացել ԵԱՀԿ մասնակից պետություններում, միջազգային այլ գործընկերային կազմակերպություններում, հետազոտական կառույցներում, ինչպես նաև ՔԱՀ-ում գործող անհատների շրջանում, որոնցից շատերը մեծ պատրաստակամությամբ տեղեկություններ են տրամադրել բարեփոխումների համապարփակ մոտեցման կիրառության՝ իրենց փորձի մասին:

2012 թվականին ընդունելով «Ոստիկանության առնչությամբ ԵԱՀԿ-ի կողմից իրականացվող աշխատանքների ռազմավարական հայեցակարգը» (անգլ.՝ «*OSCE Strategic Framework for Police-Related Activities*»)՝ ԵԱՀԿ մասնակից պետությունները վերահաստատեցին, որ կարևորում են ոստիկանության բարեփոխումներին օժանդակելը ու վերջիններս քրեական արդարադատության համակարգի այլ հատվածներում իրականացվող աշխատանքներով լրացնելը, և ԵԱՀԿ-ին

հանձնարարեցին ուղենիշներ մշակել այդ բնագավառում:

Սույն ուղեցույցը՝ որպես նոր փաստաթուղթ, պետք է վերացնի անվտանգության ոլորտի բարեփոխումներին (ԱՌԲ) և ԶԱՅԲ-ին վերաբերող առկա ուղենշային փաստաթղթերի միջև անջրպետը: Մասնավորապես, Ուղեցույցն անդրադառնում է քրեական արդարադատության գործընթացի հիմնական մասնակիցների միջև առկա շփման եզրերին: Ներկայացվում են տարբեր գործող անձանց համագործակցության բարելավման գործնական միջոցառումների որոշ կոնկրետ օրինակներ:

Հաշվի առնելով ԵԱՀԿ տարածաշրջանում առկա բազմազանությունը, մասնավորապես՝ քրեական արդարադատության տարբեր ավանդույթները՝ ներառյալ իրավական տարբեր համակարգերի առկայությունը, ինչպես նաև ԶԱՅ-ի կառույցների և անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների տարաբնույթ գործառույթները՝ վերոհիշյալ օրինակները բավականաչափ ճկուն են, որպեսզի հնարավոր լինի դրանք կիրառել տարածաշրջանային, ազգային և մշակութային բազմաբնույթ հանգամանքներում: Ավելին, քաղաքականությունը որոշող անձանց և քրեական արդարադատության ոլորտի պրակտիկ աշխատողների համար դրանք վերածվում են յուրատեսակ հայեցակարգի, որի հիման վրա կարելի է կյանքի կոչել ոստիկանության բարեփոխումները՝ համապարփակ մոտեցմամբ դրանք համատեղելով ԶԱՅ-ի բարեփոխումների հետ:

Մնում է հուսալ, որ բարեփոխումների հաջողված փորձի այդ օրինակները լայն տարածում կգտնեն և կկիրառվեն ԶԱՅԲ-ով հետաքրքրված միջազգային և ազգային սուբյեկտների շրջանում՝ թե՛ ԵԱՀԿ տարածաշրջանում, թե՛ ԵԱՀԿ տարածաշրջանից դուրս և լրացուցիչ թափ կհաղորդեն բարեփոխումների իրականացման լավագույն ուղիների վերաբերյալ նրանց միջև ծավալվող քննարկումներին:



Ալեքսեյ Լիժենկով

Անդրազգային սպառնալիքների դեմ պայքարի աշխատանքների համակարգող

Երախտիքի խոսք

Սույն ուղեցույցն ստեղծվել է քրեական արդարադատության փորձագետների խմբի միասնական ջանքերով, ովքեր գործել են ոստիկանության հարցերով ԵԱՀԿ ավագ խորհրդական պրն Կնուտ Դրեյերի խնդրանքով: Փորձագետների շարքում եղել են ոստիկաններ, դատախազներ և դատավորներ, մարդու իրավունքների պաշտպաններ, քաղաքականությունը որոշող անձինք և հետազոտողներ ԵԱՀԿ մասնակից պետություններից, ԵԱՀԿ գործադիր կառույցներից, միջազգային գործընկերային կազմակերպություններից, հետազոտական հաստատություններից և հասարակական կազմակերպություններից (ՀԿ-ներ): Ուղեցույցի տեքստը հիմնականում կազմել և խմբագրել է Հետազոտությունների և վերլուծությունների հարցերով ԱԱՍԴՎ/ՈԳՌ-ՅՍ-ի խորհրդական պրն Թորսթեն Ստոդյեկը: Ուղեցույցում զետեղված են գրասենյակային պայմաններում իրականացված մանրակրկիտ հետազոտության, ինչպես նաև մի շարք երկկողմանի հանդիպումների և փորձագետների բազմակողմանի սեմինարների՝ ներառյալ 2011 թվականի սեպտեմբերին Վիեննայում գումարված՝ Ոստիկանության փորձագետների ամենամյա ժողովի արդյունքները և եզրակացությունները: Ուղեցույցի առաջին և երկրորդ նախագծերը քննարկվել են երկու առցանց սեմինարի ընթացքում՝ համապատասխանաբար 2012 և 2013 թվականներին:

Անդրազգային սպառնալիքների դեմ պայքարի աշխատանքները համակարգողը և ոստիկանության հարցերով ավագ խորհրդականը խորապես երախտապարտ են մասնակցող փորձագետներին՝ գործընթացին լիարժեք և արժեքավոր ներդրման համար:

Ուղեցույցի մշակման գործընթացին մասնակցել են հետևյալ փորձագետները.

Պրն Ռենե Բյուլեր, Շվեյցարիայի արդարադատության և ոստիկանության դաշնային դեպարտամենտի ոստիկանության դաշնային գրասենյակի իրավական հարցերի բաժնի պետ,
Տկն Էստելա-Մարիս Դեոն, ՄԱԿԹՀԴԳ-ի (ք. Վիեննա) գործառնությունների բաժնի արդարադատության ծրագրի հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հարցերով պատասխանատու,
Պրն Թիմոթի Դել Վեկիո, ԵԱՀԿ Անդրազգային սպառնալիքների դեմ

պայթարի վարչության/ Ոստիկանական գործունեության
ռազմավարական հարցերի ստորաբաժանման (ԱԱՍՊՎ/ՈԳՈՅՍ,
ք. Վիեննա) ոստիկանության հարցերով
պատասխանատու/հանցավորության դեմ պայթարի հարցերով
խորհրդական,

Պրն Մարկ Դոուզ, Չինված ուժերի ժողովրդավարական
վերահսկողության ժնևյան կենտրոնի (ՉՈԲՄՎ, ք. ժնև)
անվտանգության ոլորտի միջազգային խորհրդատվական թիմի
ղեկավար,

Պրն Կնուտ Դրեյեր, ԵԱՀԿ ԱԱՍՊՎ/ՈԳՈՅՍ (ք. Վիեննա),
ոստիկանության հարցերով ԵԱՀԿ ավագ խորհրդական,

Պրն Բրունո Յեդերման, ԵԱՀԿ Անդրազգային սպառնալիքների դեմ
պայթարի վարչության սահմանների հարցերով
ստորաբաժանման (ք. Վիեննա) սահմանների հարցերով
խորհրդական,

Պրն Ապոլոն Յոչա, Կոսովոյում ԵԱՀԿ առաքելության անվտանգության
և հասարակական անվտանգության վարչության (ք. Պրիշտինա)
ազգային վերլուծությունների և հաշվետվությունների
պատասխանատու,

Պրն Ռոբերտ Յենկիչի, ԵԱՀԿ ԱԱՍՊՎ/ՈԳՈՅՍ (ք. Վիեննա),
քաղաքական հարցերով պատասխանատու/ոստիկանության
հարցերով պատասխանատու,

Պրն Թոր Թանթե Յոլմ, Նորվեգիայի ոստիկանության
համալսարանական քոլեջի (ք. Օսլո) հետմագիտորոսական
ուսումնասիրությունների բաժնի ղեկավար,

Պրն Օլվինդ Յոյեն, ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի (ք. Վարշավա) մարդու
իրավունքների հարցերով պատասխանատու,

Պրն Օլիվեր Յանսեր, Տաշիկստանում ԵԱՀԿ գրասենյակի
ահաբեկչության դեմ պայթարի և ոստիկանության հարցերով
խորհրդական,

Պրն Ռոբերտ Կերեպ, Սերբիայում ԵԱՀԿ առաքելության իրավապահ
վարչության ռազմավարական զարգացման ստորաբաժանման
ղեկավար,

Պրն Մարկո Կուբևի, ԵԱՀԿ ԱԱՍՊՎ/ՈԳՈՅՍ (ք. Վիեննա) համայնքային
ոստիկանության հարցերով խորհրդական/պետի տեղակալ,

Պրն Մանուել Լ. Մարիոն Մայներ, ԵԱՀԿ Անդրազգային
սպառնալիքների դեմ պայթարի վարչություն /Ահաբեկչության
դեմ պայթարի ստորաբաժանման (ք. Վիեննա) ծրագրերի ավագ
պատասխանատու,

Տկն Սուսաննա Նալթակյան, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ռազմաքաղաքական ծրագրերի ազգային պատասխանատու,
Տկն Ջոանա Փերի, ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի (ք. Վարշավա) աստվուրյան հողի վրա կատարվող հանցագործությունների հարցերով պատասխանատու,
Պրն Վալերի Պետրով, Չեռնոգորիայում ԵԱՀԿ առաքելության իրավապահ ոլորտի ծրագրերի ղեկավար,
Տկն Տետյանա Ռուդենկո, Ուկրաինայում ԵԱՀԿ ծրագրերի համակարգող, ծրագրերի ազգային պատասխանատու,
Պրն Փեր Յեթոն Սենդ, Նորվեգիայի ոստիկանության համալսարանական քոլեջի (ք. Օսլո) հետմագիտորոսական ուսումնասիրությունների բաժնի հետազոտող,
Պրն Ֆրիդրիխ Շվինդտ, Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքի ոստիկանության պետի օգնական, մարդու իրավունքների և ոստիկանության բարեփոխումների հարցերով միջազգային խորհրդական,
Տկն Լյուսիլ Սենգլեր, ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի (ք. Վարշավա) մարդու իրավունքների վարչության ահաբեկչության դեմ պայքարի հարցերով խորհրդական,
Տկն Զրիստինա Սիմիոն, Ֆոլկե Բերնադոտի ակադեմիայի (ք. Ստոկհոլմ) իրավունքի գերակայության հարցերով պատասխանատու,
Տկն Յանա Սնայդրովա, ԵԱՀԿ ԱԱՍՊԿ/ՈԳՈՅՍ (ք. Վիեննա) ոստիկանության հարցերով պատասխանատու/մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով խորհրդական,
Պրն Թորսթեն Ստոդյեկ, ԵԱՀԿ ԱԱՍՊԿ/ՈԳՈՅՍ (ք. Վիեննա) ոստիկանության հարցերով պատասխանատու/հետազոտությունների և վերլուծությունների հարցերով խորհրդական,
Պրն Ղիրոյուկի Յամամոտո, ՄԱԿԹՅՊԳ-ի (ք. Վիեննա) համաձայնագրային իրավահարաբերությունների բաժնի կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ստորաբաժանման կազմակերպված հանցավորության դեմ պայքարի փորձագետի օգնական,
Պրն Ասեն Յանչև, ԵԱՀԿ Բաքվի գրասենյակի անդրազգային սպառնալիքների բաժնի ոստիկանության հարցերով խորհրդական,
Տկն Զենդիս Վեյլ, ՄԱԿԹՅՊԳ-ի (ք. Վիեննա) գործառնությունների

բաժնի արդարադատության ծրագրի հանցավորության
կանխարգելման և թմրադեղերի հսկողության հարցերով
պատասխանատու:

Համառոտ ակնարկ

Ոստիկանության բարեփոխումներն անհրաժեշտ է լրացնել քրեական արդարադատության համակարգի (ՔԱՀ) այլ հատվածներում իրականացվող բարեփոխումներով և համաձայնեցնել վերջիններիս հետ, որպեսզի հնարավոր լինի բարձրացնել քրեական արդարադատության ողջ գործընթացի արդյունավետությունը և օգտավետությունը և մնալուն դարձնել ՔԱՀ-ի տարբեր հատվածներում բարեփոխումների ձեռքբերումները: Համապարփակ մոտեցման հիմնական խնդիրներից պետք է լինի բարելավել ոստիկանության և ՔԱՀ-ի այլ կառույցների համագործակցությունը, ինչպես նաև՝ ՔԱՀ-ի համագործակցությունը կառավարական այլ կառույցների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության հաստատությունների հետ:

Քրեական արդարադատության համակարգի բարեփոխումների (ՔԱՀԲ) շրջանակում ոստիկանության բարեփոխումների իրականացման համապարփակ մոտեցման պլանավորման և իրագործման կարևորագույն քայլերը ներկայացված են ստորև:

ՔԱՀ-ի ամբողջական գնահատումը

ՔԱՀԲ-ի շրջանակներում ոստիկանության համապարփակ բարեփոխումների իրականացման հիմքում պետք է դրված լինի բարեփոխումների ազգային համատեքստի՝ ներառյալ իրավական դաշտի, համապատասխան կառույցների և սուբյեկտների, նրանց աշխատանքի և անվտանգության և արդարադատության ոլորտներում հանրության կարիքների ամբողջական վերլուծությունը, քանի որ ՔԱՀԲ-ի գլխավոր խնդիրն է բարելավել քրեական արդարադատության ոլորտում հանրությանը մատուցվող ծառայությունները:

Այդօրինակ գնահատման թիրախային խմբերը պետք է ներառեն ՔԱՀ-ի բոլոր հաստատությունները, որոնց հետ իրավապահ մարմինները փոխկապակցված են քրեական արդարադատության գործընթացում, մասնավորապես՝ փաստաբանների միությունները, դատախազությունները, դատարանները և ազատագրկման հաստատությունները: Ինչ վերաբերում է անվտանգության ծառայություններ մատուցող կա-

ռույցներին, կարող է անհրաժեշտ լինել նաև գնահատել զինված ուժերը և սահմանապահ ծառայությունները:

ԶԱՅ-ի կառավարման գործում ուղղակի դերակատարում ունեցող ներքին գործերի և արդարադատության նախարարություններից զատ՝ պետք է դիտարկել նաև վերաբերելի այլ նախարարությունները, մասնավորապես՝ պաշտպանության, ֆինանսների և արտաքին գործերի նախարարությունները, օրենսդրություն և քաղաքականություն մշակող հաստատությունները, ինչպես նաև հանրային վերահսկողություն իրականացնող և վարչական կառույցները:

Անվտանգության և արդարադատության ոլորտներում հանրության կարիքների և ԶԱՅ-ի գործունեության մասին հանրության պատկերացումների վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու հարցում անփոխարինելի դերակատարում ունի քաղաքացիական հասարակությունը: Հանրության կարիքների և կարծիքների մասին համարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է խորհրդակցել հասարակության տարբեր հատվածները ներկայացնող կազմակերպությունների և անձանց լայն շրջանակի հետ:

Իրականացվող ԶԱՅԲ աշխատանքների օգտավետությունը որոշելու և միջազգային այլ կառույցների կողմից ձեռնարկված աշխատանքները կրկնելուց խուսափելու համար պետք է մանրամասնորեն վերլուծել միջազգային այլ սուբյեկտների կողմից ԶԱՅԲ-ի ուղղությամբ իրագործվող աշխատանքները: Այդպես հնարավոր կլինի նաև կանխել բարեփոխումների հակադիր և անզամ իրարամերժ հայեցակարգերի ներկայացումը, որը կարող էր շփոթություն առաջացնել աջակցությունն ստացողների շրջանում: Գնահատման հաջորդ նպատակը պետք է լինի պարզել, թե ինչպես կարելի է համակարգել միջազգային աջակցությունը, ինչպիսի հաջորդական քայլերով տրամադրել այն, անզամ ինչպես բազմապատկել արդյունքը և երաշխավորել ռեսուրսների տնտեսումը:

Բարեփոխումների ռազմավարության և իրականացման պլանների մշակումը

Գնահատման գործընթացում հավաքված տեղեկությունների հիման վրա պետք է մշակել բարեփոխումների ռազմավարություն, որում կմատնանշվեն երկարաժամկետ ծրագրերը և կարճաժամկետ/տարե-

կան նախագծերը՝ բոլոր շահակիցներին հստակորեն ներկայացնելով պլանավորվող աշխատանքները:

Բարեփոխումների ռազմավարությամբ պետք է ձևակերպվեն իրատեսական և իրագործելի նպատակներ, հաջողության հեռանկիշներ և չափորոշիչներ, որոնց պետք է հասնել իրատեսական ժամկետներում: Նշված հեռանկիշների օգտագործմամբ հետագայում պետք է գնահատել ԶԱԲ ծրագրերի կատարման հաջողությունը և/կամ ազդեցությունը:

Բարեփոխումների ռազմավարությունը պետք է լրացնել ռազմավարության իրականացման միջոցառումների կոնկրետ ծրագրերով, որոնցում մանրամասնորեն նկարագրված կլինի, թե ինչպես են կյանքի կոչվելու իրագործման տարբեր ֆայլերը: Այդ ծրագրերում պետք է նաև ներկայացնել պահանջվող կազմակերպական փոփոխությունները և տարբեր ֆայլերի համար անհրաժեշտ ռեսուրսները՝ ընդգծելով ոչ թե նոր տեխնիկական միջոցների տրամադրումը, այլ առկա ռեսուրսների առավել արդյունավետ տնօրինումը:

Բարեփոխումների ցանկացած ռազմավարություն կարող է հաջողությամբ իրականացվել միայն այն դեպքում, եթե կառավարությունը դրսևորում է բարեփոխումների քաղաքական կամք, և առկա են պահանջվող ֆինանսավորումը և այլ ռեսուրսներ տրամադրելու հանձնառությունը: Ազգային շահակիցներին բարեփոխումների գործընթացին «տեր ու տիրական» դարձնելու և բարեփոխումների համար նրանց լիարժեք օժանդակությունը ստանալու պարտադիր նախապայման է ռազմավարության մշակման գործընթացում սկզբից ևեթ ներգրավել պետական կառույցների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության համապատասխան ներկայացուցիչներին՝ վերջիններիս համոզելով, որ բարեփոխումներն անհրաժեշտ են և օգտավետ, և բարեփոխումների ծրագրում արտացոլել բոլոր շահակիցների հետաքրքրությունները:

Այս համատեքստում կարևոր է հաշվի առնել բարեփոխումների քաղաքական բնույթը՝ ներառյալ բարեփոխումների հնարավոր օգտավետությունը տեղական և ազգային մակարդակի տարբեր սուբյեկտների համար: ԶԱԲ-ի կոնկրետ սուբյեկտին մեկ այլ սուբյեկտի «հաշվին» փաստացի ուժեղացնելը կամ նման տպավորություն թողնելը կարող է ի չիք դարձնել կառույցների միջև առկա փխրուն քաղաքական հավասարակշռությունը և «տանուլ տվողի» կողմից դիմադրություն առաջացնել:

Ավելին, եթե հանրությունը չնկատի իրեն սպասող անմիջական օգուտները և ունենա այն զգացողությունը, թե բարեփոխումները չեն բարե-

լավում և չեն բարելավելու իր անվտանգությունը և ապահովությունը կամ իր համար արդարադատության հասանելիությունը, ապա նա չի սատարի բարեփոխումների գործընթացին, որի հետևանքով հնարավոր չի լինի բարեփոխումները շարունակական և մնայուն դարձնել:

Իրավական դաշտի բարեփոխումները

Պետության կիրառելի օրենքներում թերևս փոփոխությունների կարիք կզգացվի՝ դրանք առավել համապատասխանեցնելով թե՛ մարդու իրավունքների համընդհանուր կիրառելի չափանիշներին և թե՛ քրեական արդարադատության չափանիշներին (որոնք ընդունվել են Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո), ինչպես նաև՝ մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և իրավունքի գերակայության առումով ԵԱՀԿ շրջանակում ստանձնած հանձնառություններին:

Ավելին, պետության քրեական օրենսդրության փոփոխությունների անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել հասարակական նորմերի և ավանդույթների տիրույթում արձանագրվող փոփոխություններին հարմարվելու, ինչպես նաև ահաբեկչության և հանցավորության նոր ձևերից, մասնավորապես՝ կազմակերպված հանցավորությունից բխող նոր սպառնալիքները չեզոքացնելու խնդիրներով: Յետևապես, նոր քրեական օրենքները կարող են կարգավորել նոր քրեական հանցագործությունները և քննության վարման նոր մեթոդները: Պետք է ստուգել քրեական դատավարության օրենքների նոր դրույթների ազդեցությունը ԶԱՀ-ի տարբեր կառույցների փոխհարաբերությունների վրա: ԶԱՀ-ի նոր գործառույթների, պարտականությունների և մեթոդների ներդրումից հետո, թերևս, անհրաժեշտ կլինի նոր օրենքում հստակեցնել սահմանված նոր լիազորությունների բաշխումը ԶԱՀ-ի կառույցների միջև:

Քաղաքականության, ընթացակարգերի, կանոնների և կանոնակարգերի մշակումը

Օրենսդրությունը գործողությունների վերածելու և գործնականում դրա կիրառությունն ապահովելու համար անհրաժեշտ է ընդունել որոշակի քաղաքականություն, որով կսահմանվի օրենքի իրագործման մեխանիզմը: Ավելին, օրենքների կատարումն ապահովելու համար անհրաժեշտ քաղաքականությունը և մեխանիզմները պետք է ձևակերպել քաղաքականության հասկանալի և պաշտոնական «հայտարարությա-

յունների» տեսքով, որոնցում հակիրճ բացատրված կլինեն այն նպատակները, որոնց պետությունը և ԶԱՀ-ը ձգտում են հասնել՝ ներդնելով կոնկրետ քաղաքականությունը:

Քաղաքացիական հասարակության և անվտանգության ու արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների հետ սերտ համագործակցության միջավայրում պետական մարմինները և ԶԱՀ-ը պետք է մշակեն քաղաքականության իրագործման ռազմավարությունները և միջոցառումների ծրագրերը, ինչպես նաև համապատասխան ընթացակարգերը, կանոնները և կանոնակարգերը, իսկ հետագայում՝ նաև մշտադիտարկեն դրանց կատարումը:

Քաղաքականության մեջ պետք է ուղղակիորեն մատնանշված լինի ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև, ինչպես նաև ԶԱՀ-ի ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցների և քաղաքացիական հասարակության միջև հաղորդակցության և սերտ համագործակցության կարևորությունը քրեական արդարադատության գործընթացի արդյունավետությունը և օգտավետությունը բարձրացնելու տեսանկյունից: Ուստի քաղաքականությունը պետք է նաև աջակցի հաղորդակցության և համագործակցության բարելավման համար անհրաժեշտ միջավայրի ձևավորման համար պահանջվող կազմակերպական և կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտ քայլերի իրականացմանը:

Դրանից զատ՝ ԶԱՀ-ի կազմակերպական և կառուցվածքային բարեփոխումների քաղաքականությունը պետք է անդրադառնա միջոլորտային այնպիսի հիմնախնդիրներին, ինչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանությունը, քրեական արդարադատության գործընթացում գենդերային հիմնախնդիրների արտացոլումը և հաշվետվողականության ու վերահսկողության ընթացակարգերի և մեխանիզմների ստեղծումը կամ կատարելագործումը:

Գործառնական մակարդակում պետք է ներդնել կանոններ և կանոնակարգեր, գործառնական ստանդարտ ընթացակարգեր և ուղենիշներ, որոնք քրեական արդարադատության գործընթացի շրջանակներում կապահովեն օրենքի և քաղաքականության գործնական կիրառությունը ԶԱՀ-ի կառույցների կողմից:

Կառուցվածքային և կազմակերպական բարեփոխումները

ԶԱՀ-ի տարբեր կառույցներում իրականացվող կառուցվածքային և կազմակերպական փոփոխությունները, մասնավորապես՝ ԶԱՀ-ի տար-

բեր կառույցների շփումներով իրականացվող փոփոխությունները պետք է նպատակ հետապնդեն.

- Ապահովել արդյունավետ և օգտավետ համակարգումը և համագործակցությունը ոստիկանության և ԶԱՀ-ում վերջինիս գործընկերների միջև, ինչպես նաև ԶԱՀ-ի և անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորութային և ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև,
- Ապահովել ամկա մեսուրսների ողջամիտ օգտագործումը,
- Անհրաժեշտության դեպքում ներդնել միասնական ծառայություններ և օղակներ,
- Աջակցել իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգմանը և պաշտպանությանը,
- Ներդնել և երաշխավորել ԶԱՀ-ի կառույցների ժողովրդավարական հաշվետվողականությունը և վերահսկելիությունը:

Կառուցվածքային և կազմակերպական բարեփոխումների հիմնական ուղղությունները ներկայացված են ստորև:

Համագործակցությունը ԶԱՀ-ի ներսում

Համատեղ աշխատանքի համար պահանջվում են միջգերատեսչական համակարգում, արդյունավետ ԶԱՀ-ի մասին միասնական պատկերացումներ և տեսլական, հարգանք յուրաքանչյուր գործընկերոջ առանձին լիազորությունների նկատմամբ: Թեպետ քննող, քրեական հետապնդում իրականացնող, դատական քննություն իրականացնող և լուծող կառույցների ընդհանուր քաղաքական պարտավորությունները պետք է տարանջատված պահել, սակայն միևնույն ժամանակ անհրաժեշտ է ունենալ միասնական նպատակների իրականացման գործընթացի համատեղ կառավարման և որոշ ընդհանուր վեկտորների երաշխավորման մեխանիզմ:

Ուստի ռազմավարական և կառավարչական մակարդակով անհրաժեշտ է ստեղծել ԶԱՀ-ը համակարգող միջգերատեսչական խմբեր, որոնք կհամակարգեն և կմշտադիտարկեն ԶԱՀ-ի համապարփակ ռազմավարությունների և աշխատանքային ծրագրերի իրագործումը: Նրանք պետք է հաշվի առնեն մեկ գերատեսչությունում կատարվող փոփոխությունների ազդեցությունն այլ գերատեսչությունների վրա:

ԶԱՅ-ի տարբեր կառույցների միջև համակարգումն ինստիտուցիոնալ հենքի վրա դնելու համար կարելի է նախարարների և գերատեսչությունների ղեկավարների մակարդակով ստեղծել միջգերատեսչական համակարգման հարթակներ, որոնցում ընդգրկված կլինեն ԶԱՅ-ի տարբեր կառույցների բարձրաստիճան ներկայացուցիչները: Նրանց խնդիրը լինելու է ԶԱՅ-ի զարգացման ընդհանուր վեկտորի որոշումը:

Տեղական մակարդակում անհրաժեշտ է քրեական արդարադատության համակարգման ազգային հարթակների նմանությամբ ստեղծել տեղական հարթակներ, որոնց կազմում կլինեն, օրինակ, ԶԱՅ-ի կառույցների տեղի ծառայությունների ղեկավարները, առողջապահական ծառայությունների, անչափահասների իրավախախտումների հարցերով զբաղվող հանձնաժողովների, համայնքային այլ գերատեսչությունների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

Գործառնական մակարդակով հնարավոր է զգալիորեն բարելավել աշխատանքների համակարգումը և դեպքերի վարման ուղղությամբ համագործակցությունը՝ ձևավորելով ֆիզիկական ենթակառուցվածք ԶԱՅ-ի տարբեր կառույցների և տարբեր սուբյեկտների հանդիպումներ կազմակերպելու և տեղեկությունները և տեսակետները քննարկելու և փոխանակելու համար:

Ֆիզիկական ենթակառուցվածքի ձևավորման ուղղությամբ առավել հեռահար միջոցառումներից կարող են լինել ոստիկանության և դատախազության գրասենյակների միաձուլումը, դատախազների տեղակայումը ոստիկանության բաժանմունքներում և/կամ միևնույն գրասենյակում գտնվող՝ քննչական հատուկ համատեղ թիմերի կամ աշխատանքային հանձնախմբերի ստեղծումը: Նույնիսկ եթե կոնկրետ երկրում հնարավոր չէ ստեղծել նման ֆիզիկական ենթակառուցվածք, հաճախ գոյություն են ունենում ԶԱՅ-ի տարբեր սուբյեկտների միջև հարդորակցության զգալի բարելավման առնվազն որոշ հնարավորություններ, օրինակ՝ պարբերական հանդիպումների մեխանիզմ ձևավորելը և էլեկտրոնային պահպանության հարդորակցային գործիքների կիրառությամբ տեղեկատվության կորուստը կամ ապամեկնաբանությունը կանխելը:

Փաստաթղթավարությունը և տեղեկատվության փոխանակման գործիքները

Պատշաճ փաստաթղթավարությունը կարևոր է ոչ միայն մեղադրյալների նկատմամբ հիմնավոր ապացույցներ հավաքագրելու, այլ նաև ամբաստանյալի պաշտպանվելու իրավունքը երաշխավորելու տեսանկյունից, օրինակ՝ վերջինիս համար հասանելի դարձնելով կատարված քննչական գործողությունների փաստաթղթերը և արձանագրությունները:

Փաստաթղթերն արդյունավետորեն կառավարելու նպատակով անհրաժեշտ է դրանք հավաքել և դասակարգել տվյալների էլեկտրոնային շտեմարանների մեջ: Տեղեկատվության և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաները և թվային ապացույցները ԶԱՀ-ին հնարավորություն են ընձեռում ռացիոնալացնելու և հղկելու վարչարարական համակարգերի և գործընթացների աշխատանքը:

Այնուհանդերձ, անհրաժեշտ է զգուշավորություն դրսևորել, որպեսզի ԶԱՀ-ի տարբեր կառույցների տվյալների շտեմարանների համակարգերը կարողանան միմյանց հետ «հաղորդակցվել», և որպեսզի մեղադրանքը ներկայացնելու պահից մինչև գործի վերջնական լուծումը հնարավոր լինի տվյալների միասնական մշակումը: Քրեական գործերի նյութերի կառավարումը կազմակերպելու առավել արդյունավետ մեխանիզմ կարող է լինել ԶԱՀ-ի կառույցների միջև տվյալների միասնական շտեմարանի ձևավորումը, որը թույլ կտա տվյալները փոխանակել էլեկտրոնային ֆայլի միջոցով: Նման ֆայլը պետք է պարունակի յուրաքանչյուր գործին առնչվող բոլոր փաստաթղթերը և ողջ տեղեկատվությունը և կարողանա արագորեն տեղաշարժվել ԶԱՀ-ի ներսում: ԶԱՀ-ի բոլոր սուբյեկտների համար քրեական գործերի նյութերը պարունակող տվյալների շտեմարանների հասանելիությունը թույլ կտա նաև գործերին առնչվող տեղեկությունները համախմբել ըստ ամբաստանյալների, տուժողների, գործի ելքի կամ ցանկացած այլ չափանիշի, որից հետո այդ տեղեկությունները կօգտագործվեն այլ գործերի քննության և քրեական հետապնդման ժամանակ:

Գործերի հսկողության և կառավարման արդյունավետ համակարգերը ոչ միայն արագացնում են քրեական հետապնդման գործընթացը, այլև բարելավում են քննիչների և դատախազների աշխատանքի զնահատման մեխանիզմները, որը խիստ կարևոր է ԶԱՀ-ի հաշվետու գործելակերպն ապահովելու տեսանկյունից:

Քրեական գործերի նյութերի կառավարման միասնական համակարգերը կարելի է ստեղծել համընթաց կերպով կամ հերթականությամբ՝ կախված ֆինանսական ռեսուրսների, վերապատրաստումների և փոփոխությունների գործընթացի կառավարման կարողությունների առկայությունից:

Փորձագիտական կարողությունները

Փորձագիտական ծառայությունները առանցքային նշանակություն ունեն քրեական արդարադատության համակարգի արդյունավետության և արդարության ապահովման համար, քանզի դրանք ժամանակին տրամադրում են անաչառ տեղեկություններ, որոնց օգտագործմամբ ոստիկանությունը հետաքննության փուլում հայտնաբերում է կասկածյալներին, և որոնք օգտագործվում են դատախազների և դատավորների կողմից քրեական արդարադատության գործընթացի դատական քննության փուլում: Ուստի փորձագիտական ծառայությունները պետք է արդյունավետորեն մատուցվեն բարձր որակավորում ունեցող և անկողմնակալ կառույցի կողմից: Դրա համար պահանջվում են կրթված գիտական փորձագետներ և քրեական արդարադատության պրակտիկ աշխատողներ, ովքեր կհասկանան գիտական փորձերի հիման վրա մշակվող եզրակացությունները, ինչպես նաև՝ քրեական արդարադատության գործընթացում փորձագիտական ապացույցների ճանաչման, հավաքման, վերլուծության, մեկնաբանության և ներկայացման գործառույթներում ներթաշված բոլոր սուբյեկտների միջև պատշաճ համագործակցություն:

Համագործակցությունը ՔԱՀ-ի և անվտանգության ու արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորույթային և ոչ պետական կառույցների միջև

Այն պետություններում, որտեղ անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորույթային և ոչ պետական կառույցները փոխլրացնող դերակատարում ունեն այդ ոլորտներում ծառայությունների մատուցման գործում, անհրաժեշտ է ստեղծել ՔԱՀ-ի վերահսկողության, ինչպես նաև սովորույթային և ոչ պետական կառույցների և ՔԱՀ-ի միջև տեղեկատվության փոխանակման մեխանիզմներ:

Ինչ վերաբերում է անվտանգության ծառայությունների մատուցմանը, ապա «աչալուրջ բնակիչների խմբերի» տիպի կառույցները՝ ներառյալ «թաղային պահակային դիտարկման» համակարգերը, կարող են հա-

վուր պատշաճի ապահովել համայնքի բնակիչների ներգրավումը հիմնախնդիրների լուծման գործում՝ ամրապնդելով կանոնավոր հաղորդակցությունը հանրության և ոստիկանության միջև և խորացնելով համայնքի՝ իր իսկ անվտանգության համար պատասխանատվության զգացումը: Վերոհիշյալ կառույցների գործունեությունը պետք է հստակորեն և խստորեն կանոնակարգել՝ նրանց դերը սահմանափակելով միայն մշտադիտարկմամբ և հաշվետվություններով, միևնույն ժամանակ ուժի գործադրման բացառիկ «մենաշնորհը» վերապահելով ոստիկանությանը: Ոստիկանությունը պետք է նաև վերահսկողական և համակարգող գործառույթ կատարի՝ որոշակի պատասխանատվություն ստանձնելով վերոհիշյալ կառույցների գործողությունների համար:

Անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունները մատուցում են անվտանգությանն առնչվող ծառայություններ, մասնավորապես՝ մարդկանց, ապրանքների, տեղանքների, տարածքների, միջոցառումների, գործընթացների և տեղեկատվության անվտանգության վճարովի պաշտպանություն հիմնականում հանցավորությանն առնչվող ռիսկերից: Նրանք կարող են օժանդակել իրավապահ կառույցներին կամ անգամ լրացնել վերջիններիս գործունեությունը՝ օրենքով թույլատրված դեպքերում: Այնուամենայնիվ, պետք է հստակորեն սահմանել նրանց գործառույթները, պարտականությունները և հարաբերությունները ոստիկանության հետ:

Վեճերի լուծման ավանդական մեխանիզմները՝ ներառյալ սովորույթի դատարանները, նույնպես էական դեր են կատարում մի շարք պետություններում: Կարևոր է պատշաճ չափով նախատեսել ֆորմալ և սովորույթային/ոչ պետական համակարգերի ներգրավվածությունը, որը կարող է ներառել արդարադատության սովորույթային համակարգերի իրավագործության սահմանափակ շրջանակը (սովորաբար այդ շրջանակը սահմանափակվում է մանր հանցագործություններով), վեճերի լուծման սովորույթային մեխանիզմների՝ որպես արտադատական հաշտության իրավաչափ ձևերի ճանաչումը կամ ավանդույթի դատարանների ներառումը ֆորմալ դատական համակարգի մեջ՝ դատական ամենացածր ատյանի կարգավիճակով:

Անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորույթային և ոչ պետական բոլոր կառույցների գործունեությունը ցանկացած պարագայում պետք է համապատասխանի մարդու իրավունքների միջազգային չափանիշներին և լինի թափանցիկ ու հաշվետու:

Համագործակցությունը ԶԱՀ-ի և քաղաքացիական հասարակության միջև

ԶԱՀԲ-ի միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև ԶԱՀ-ի արտաքին վերահսկողության ձևավորման գործում քաղաքացիական հասարակության ներգրավումից զատ, անվտանգության և արդարադատության հետ կապված մի շարք կոնկրետ ոլորտներում ԶԱՀ-ի համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ կարող է էապես բարելավել քրեական արդարադատության ծառայությունների մատուցումը: Բնորոշ օրինակներից են հանցավորության կանխարգելումը համայնքային ոստիկանության բնագավառում կամ քաղաքացիական հասարակության ներգրավումն արտադատական կարգավորման կամ միջնորդության ծրագրերում:

Հանցավորության կանխարգելման համար պահանջվում է, որ ոստիկանությունը և հանրությունը միասնաբար ցուցաբերեն հանձնառու և հոգատար վերաբերմունք: Դրան կարելի է հասնել միմյայն ոստիկանության և հանրության միջև վստահության վրա հիմնված գործընկերություն ձևավորելու ճանապարհով, որի պայմաններում ոստիկանական ողջ համակարգը, պետական բոլոր կառույցները և հասարակության բոլոր հատվածներն ակտիվորեն կհամագործակցեն հիմնախնդիրների բացահայտման և լուծման ուղղությամբ: Համայնքային ոստիկանությունը գաղափարախոսություն է և կազմակերպական ռազմավարություն, որում կարևորվում է հենց գործընկերության վրա հիմնված, համագործակցային մոտեցումը: Համայնքի հետ փոխակտիվ աշխատանքի ծրագրերը, օրինակ՝ ոստիկանության և բոլոր համայնքների ներկայացուցիչների միջև բաց քննարկումների պաշտոնական կամ ոչ պաշտոնական հարթակների ձևավորումը, հատկապես արժեքավոր են հանրության կարծիքը պարզելու, ինչպես նաև տեսակետների փոխանակումը և համագործակցությունն ամրապնդելու տեսանկյունից: Դրա շնորհիվ համայնքը կարող է ներգրավվել հանցավորության կանխարգելման ծրագրերում, մասնավորապես՝ ստեղծելով հիմնախնդիրների լուծման դաշինքներ, որի արդյունքում կզարգանա հանրության անվտանգության համար միասնական պատասխանատվության զգացումը: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել նշված հարթակներում հասարակության լայն շրջանակների՝ ներառյալ փոքրամասնությունների և խոցելի խմբերի ներկայացվածությանը:

Քրեական գործերի վարման սովորական կարգի փոխարեն որպես այլընտրանք և/կամ ի լրումն սովորական կարգի կարելի է կիրառել

քրեական արդարադատության արտադատական ծրագրերը, որոնց պարագայում վեճի լուծման մեջ հաճախ ներգրավվում է համայնքը: Արտադատական ծրագրերը մեղադրյալին հնարավորություն են տալիս խուսափելու հրապարակային քրեական վարույթից և ստանալու համապատասխան աջակցություն՝ վերականգնման, խորհրդատվության և/կամ ուղղման տեսքով, մինչդեռ տուժողը կամ ամբողջությամբ վերցրած համայնքն օգտվում են, քանի որ տարբեր բարեգործական հիմնադրամների կամ համայնքային տեղական ծրագրերի համար ստացվում են հանգանակություններ կամ չվճարվող հանրօգուտ աշխատանք: Քաղաքացիական հասարակության սուբյեկտները կարող են կարևոր դեր կատարել արտադատական ծրագրերի իրականացման գործում, քանի որ նրանք կարող են աշխատել իրավախախտների հետ՝ վերականգնելով և ուղղելով նրանց և մշտադիտարկելով և օժանդակություն ցուցաբերելով արտադատական ծրագրերի մասնակիցներին:

Քրեական գործերով միջնորդությունը նույնպես ճկուն, խնդրի լուծում ապահովող և մասնակցային տարբերակ է, որն իրականացվում է ի լրումն ավանդական քրեական վարույթի կամ որպես դրա այլընտրանք, ընդ որում՝ միջնորդի դերում հաճախ հանդես են գալիս քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

Ավանդական քրեական վարույթների փոխարեն կիրառվող այլընտրանքային բոլոր այս ընթացակարգերի դեպքում պետք է օրենքով, քաղաքականությամբ, կանոնակարգերով և ընթացակարգերով հստակորեն սահմանել և՛ տուժողների, և՛ իրավախախտների իրավունքները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և քրեական արդարադատության ոլորտի իրավասու մարմինների իրավունքները, պարտավորությունները և փոխհարաբերությունները:

Մարդու իրավունքներին առնչվող առանձնահատկությունները

Քրեական արդարադատության արդար, արդյունավետ և գործունակ համակարգում պաշտպանված են անձնական անձեռնմխելիության, անձի կյանքի և ազատության իրավունքները, ապահովված են արդարադատության հասանելիությունը և օրենքի առջև հավասարությունը: Ավելին, նման համակարգում հարգվում են տուժողների և վկաների, ինչպես նաև կասկածյալների և իրավախախտների հիմնարար իրավունքները, մասնավորապես՝ անչափահասների և խոցելի այլ խմբերի իրավունքները: ԶԱՅ-ի տարբեր կառույցների և քաղաքացիական հա-

սարակութեան միջև արդյունավետ համագործակցությունը հատկապես կարևոր է մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի ուղղություններում, ինչպիսիք են, ի թիվս այլոց, արդարադատության հասանելիությունը և իրավաբանական օգնության տրամադրումը, տուժողներին ցուցաբերվող աջակցությունը, վկաների նկատմամբ հանդես բերվող աջակցությունը և նրանց պաշտպանությունը, իրավախախտների հետ կատարվող համապարփակ աշխատանքները և անչափահասների արդարադատությունը:

ԶԱՅ-ի հաշվետվողականությունը և վերահսկողությունը

Հաշվետվողականությունը նշանակում է, որ ԶԱՅ-ի կառույցները պետք է բաց լինեն վերահսկողական տարաբնույթ կառույցների դիտարկումների համար, ընդ որում՝ բաց պետք է լինեն բոլոր կառույցները և գործառույթները՝ ԶԱՅ-ի ոլորտում գործող անհատների աշխատանքից մինչև քրեական արդարադատության գործընթացի կառավարման ռազմավարությունները, նշանակման ընթացակարգերը և բյուջեի տնօրինումը:

ԶԱՅ-ի կառույցների գործունեության շրջանակի սահմանների գծանշման պատասխանատուն օրենսդիր մարմինն է: Գործադիրը պատասխանատու է ԶԱՅ-ի շրջանակը կամ հայեցակարգը կյանքի կոչելու համար: Դատական և օրենսդիր իշխանությունները պատասխանատու են շրջանակի կամ հայեցակարգի ճշգրիտ իրագործումը գնահատելու համար: Պետական վերահսկողության նշված երեք հիմնասյուներից զատ՝ գոյություն ունեն ոչ պետական, արտաքին տարաբնույթ կառույցներ, որոնք կարող են առանցքային դերակատարում ունենալ ԶԱՅ-ի վերահսկողության գործում, ինչպիսիք են մարդու իրավունքների հանձնաժողովները, քաղաքացիների բողոքները քննող հանձնաժողովները, անկախ օմբուդսմենները և զանգվածային լրատվամիջոցները:

Զաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են վերահսկողական տարաբնույթ աշխատանքներ կատարել՝ ներառյալ ԶԱՅ-ի կառույցների կողմից մարդու իրավունքների խախտումների և վարքագծի նորմերի այլ խախտումների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը և հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը, ծանրաբեռնվածության վերլուծությունը, նախնական կալանքի վայրերում և բանտերում պայմանների մշտադիտարկումը և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը, դատական նիստերին մասնակցությունը և դրանց վերաբերյալ մեկնաբանություն-

ների ներկայացումը, ինչպես նաև քրեական արդարադատության կատարողականի ցուցանիշների միտումների վերլուծությունը և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը:

Վերահսկողական իրենց լիազորություններն արդյունավետորեն կատարելու համար վերահսկողության ներքին և արտաքին հաստատություններին անհրաժեշտ են բավարար ռեսուրսներ, իրավասություններ և անկախություն գործադիրի ազդեցությունից:

Աշխատանքային մշակույթի փոփոխությունը

Կառավարման և գործառնական հարթություններում նոր օրենքներին, քաղաքականությանը և կանոնակարգերին համահունչ իրականացվող կառուցվածքային և կազմակերպական բոլոր փոփոխությունները մեծ ազդեցություն չեն ունենա, եթե ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև չկա համագործակցության և համակարգման մշակույթ:

Աշխատանքային մշակույթը փոխելու համար թերևս անհրաժեշտ կլինի բարձրացնել ԶԱՀ-ի բոլոր կառույցների միջև փոխադարձ վստահության, փոխըմբռնման և միմյանց դերի, պարտականությունների և կարիքների ընկալման մակարդակները, ինչպես նաև ձևավորել օրենքի և կարգուկանոնի եության նկատմամբ միասնական պատկերացումներ:

Եթե համագործակցությունը և համակարգումը խորացնելու մասին խնդրանք-առաջարկը կասկածի տակ է առնում ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև ձևավորված ուժերի հարաբերակցությունը, ապա անհրաժեշտ է ակնկալել, որ «տանուլ տվող» կողմը դիմադրելու է: Ոստիկանները կամ դատախազները նույնպես կարող են դժկամություն արտահայտել փոփոխություններն ընդունելու հարցում, հատկապես եթե քննությունը կատարելու պարտավորությունները մեկ կառույցից փոխանցվում են մյուսին:

Ավելին, դատարանների և ԶԱՀ-ի այլ կառույցների միջև համագործակցության և համակարգման ոգու ամրապնդմանը հաճախ խոչընդոտում է իշխանությունների տարանջատման ուսմունքի այն մեկնաբանությունը, որում շեշտադրվում են իշխանության գործադիր ճյուղից դատական իշխանության անկախության մասին պնդումները:

ԶԱՀ-ի կառույցների աշխատանքային մշակույթի փոփոխությունը պետք է վերաբերի ոչ միայն ԶԱՀ-ի ներսում համագործակցության նկատմամբ առկա դիրքորոշումներին, այլ նաև հանրության հետ շփումներին: Որպեսզի հնարավոր լինի հանրությանը քաջալերել՝ պա-

տասխանատվություն ստանձնելու համայնքի կենսամակարդակը բարձրացնելու համար, և որպեսզի հանրությունը ցանկանա ակտիվորեն օժանդակել ոստիկանությանը հանցավորության կանխարգելման և հանցավորության դեմ պայքարի ջանքերում, ոստիկանությունը պետք է ձգտի իսկական գործընկերություն կերտելու հանրության հետ: Հանրությանը որպես հավասար գործընկեր ընդունելու պատրաստակամությունը կախված է նաև ոստիկանների և քրեական արդարադատության այլ սուբյեկտների մտածելակերպից և դիրքորոշումներից, մասնավորապես՝ նրանք պետք է չափազանց սուր կերպով չարձագանքեն ԶԱՀ-ի գործունեության վերաբերյալ հանրության քննադատությանը և պետք է առավել լիարժեքորեն հետևեն հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքներին:

ԶԱՀ-ի կառույցների աշխատանքային մշակույթը փոխելը, սակայն, կարող է լուրջ մարտահրավերներ առաջացնել, քանի որ ԶԱՀ-ում աշխատողների կազմակերպական մեխանիզմները և աշխատանքային մոտեցումները կարող են այնքան խոր արմատներ ունենալ, որ դժվար լինի դրանք փոխելը: Ուստի բարեփոխումների համար անհրաժեշտ են փոփոխությունների գործընթացի կառավարման պատշաճ մոտեցումներ, որոնցում հաշվի կառնվեն փոփոխությունների նկատմամբ անհատներից և կազմակերպություններից սպասվող՝ անխուսափելի դիմադրությունը, փոփոխություններն առաջ մղող ուժերի առանձնացումը և նրանց ցուցաբերվող օժանդակությունը, ինչպես նաև խանգարողների զսպումը, ԶԱՀ-ի մակարդակով փոփոխությունների անհրաժեշտության, բոլոր շահակիցների համար դրանց արդյունքում սպասվող օգուտների և փոփոխությունների իրականացման գործում ԶԱՀ-ի տարբեր սուբյեկտների դերի բացատրությունը: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նաև հաստատել գործառնական ստանդարտ ընթացակարգեր (ԳՍԸ) և համապատասխան անձանց վերապատրաստել դրանց կիրառության ուղղությամբ:

Վերապատրաստումը և մասնագիտական կատարելագործումը

Մշակույթը՝ ներառյալ ԶԱՀ-ի սուբյեկտների դիրքորոշումները և վարքը փոխելու նպատակով անհրաժեշտ է քաղաքականության, վարքագծի կանոնների և ԳՍԸ-ների ներդրումը և ղեկավարության կողմից համապատասխան արժեհամակարգի պարբերական և շարունակական արմատավորումը համատեղել աշխատանքի ընդունումից առաջ և աշխատելու ընթացքում կազմակերպվող վերապատրաստումների և

մասնագիտական կատարելագործման միջոցառումների հետ: Մասնագիտական կատարելագործման գործընթացում վերադասները կարող են կրտսեր գործընկերներին «մարզելու», խրախուսելու, պարզևատրելու և կարգապահական տույժի ենթարկելու ճանապարհով իրենց աշխատակազմի շրջանում ամրապնդել և մնայուն դարձնել վերոհիշյալ փոփոխությունները՝ ապահովելով պատշաճ վարքագծի դրսևորումը: Արժեքները և դիրքորոշումները՝ ներառյալ չափահասների շրջանում հաճախ խորապես արմատացած կարծրատիպերը փոխելն առանձնապես դժվար է, և դրա համար պահանջվում են հմուտ վերապատրաստողներ և երկարատև գործընթացներ:

ԶԱՅ-ի ոլորտի պրակտիկ աշխատողներին պետք է նաև զինել քրեական դատավարության օրենսգրքերի մասին գիտելիքներով, քանզի դրանցով են կարգավորվում ԶԱՅ-ի տարբեր կառույցների դերերը, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչպես նաև ԶԱՅ-ի այլ կառույցների գործունեության համատեքստը: Դա հույժ կարևոր է ԶԱՅ-ի բոլոր սուբյեկտների կարիքների մասին իրազեկվածությունը մեծացնելու համար, որը կնպաստի քրեական արդարադատության գործընթացի արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

ԶԱՅ-ի կառույցների միջև համագործակցությունը և համակարգումը խորացնելու հետ կապված վերապատրաստումների ընդհանրական թեմաներից կարող են լինել ղեկավարների ընդհանուր կատարելագործումը, միջգերատեսչական համագործակցության մեթոդները, դատարան ուղարկվելիք գործերի կազմումը և այլն:

Քրեական արդարադատության ոլորտի պրակտիկ աշխատողների համար խորհուրդ է տրվում մասնագիտական քննության թեմաներով վերապատրաստման համատեղ դասընթացներ կազմակերպել այնպիսի հանցագործությունների դեմ պայքարի թեմաներով, ինչպիսիք են սեռական ոտնձգությունները, կենցաղային բռնությունը, մարդկանց թրաֆիքինգը, թմրամիջոցների և պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը, տնտեսական, ինչպես նաև ֆինանսական հանցագործությունները՝ ներառյալ փողերի լվացումը և ահաբեկչության ֆինանսավորումը, կոռուպցիան և կիբերհանցավորությունը:

Ավելին, վերապատրաստումը պետք է անդրադառնա նաև անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության հետ ԶԱՅ-ի համագործակցության խորացման պահանջներին:

Վերջինը, սակայն ոչ պակաս կարևորը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների թեման է, որը պետք է պարտադիր ներառել ԶԱՀ-ի աշխատողների վերապատրաստման կամ կրթման բազային, խորացված և մասնագիտացված բոլոր ծրագրերում:

ԶԱՀ-ի գնահատումը և վերանայումը

Համապարփակ ԶԱՀ-ի իրականացումը երկարաժամկետ գործընթաց է, որը պետք է շրջափուլերով գնահատել՝ գնահատումները կապակցելով քաղաքականության շրջափուլերին, որպեսզի ռազմավարական օղակները կարողանան համակարգված և շարունակական կերպով բարելավել ԶԱՀ-ի ծառայությունների որակը:

Առանձնահատուկ ջանասիրություն պետք է գործադրել, որպեսզի մշտադիտարկման և գնահատման բոլոր համակարգերը պարունակեն որակական և քանակական ցուցանիշների բավականաչափ լայն շրջանակ: Չարգացման աջակցող ծրագրերի գնահատման համար Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Չարգացման աջակցության հանձնաժողովը (ՏՀՉԿ ՉԱՀ) մշակել է որոշակի չափորոշիչներ, որոնց համաձայն ԶԱՀ-ի կատարման գործընթացների գնահատման ընդհանուր չափորոշիչներն են բարեփոխումների նախաձեռնությունների վերաբերելիությունը, օգտավետությունը, արդյունավետությունը, ազդեցությունը և շարունակելիությունը: Վերջին հաշվով, ԶԱՀ-ի տարբեր կառույցներում նախաձեռնությունների հաջողության և քրեական արդարադատության գործընթացի վրա դրանց ընդհանուր ազդեցության գնահատման չափորոշիչը կարող է լինել կառուցվածքային և կազմակերպական փոփոխությունների մակարդակը՝ ներառյալ ԶԱՀ-ի ներսում սերտ համագործակցությունը և համակարգումն ապահովող իրավական դաշտի կայացումը, հաղորդակցության և համակարգման կառույցների ձևավորումը, կադրերի և վերապատրաստումների կազմակերպումը և իրականացումը, ինչպես նաև հաշվետվողականության թափանցիկ, արդար և արդյունավետ մեխանիզմների ստեղծումը:

Կատարողականի և արդյունքների գնահատման հիման վրա պետք է նախաձեռնել վերանայման գործընթաց, որը բոլոր շահակիցների մասնակցությամբ կանդարառնա աշխատանքների իրականացման բոլոր փուլերին: Անհրաժեշտ կլինի հիմնավորապես վերափոխել ռազմավարական, կառուցվածքային, կազմակերպական և գործառնական այն միջոցառումները, որոնք առավել տևական ժամանակի ընթացքում չեն

նպաստել քրեական արդարադատության գործընթացի արդյունավետության և օգտավետության ցուցանիշների բարելավմանը:

ԶԱՅԲ-ի միասնական մոտեցումները բարեփոխումներին աջակցող միջազգային կազմակերպությունների միջև

Հույժ կարևոր են սերտ քննարկումները և խորհրդակցությունները ԶԱՅԲ-ում ներգրավված միջազգային շահակիցների միջև. այդպիսի կարևոր կկարողանան մշակել բարեփոխումների համապարփակ և փոխլրացնող նպատակներ և ռազմավարություններ, ազգային շահակիցների առջև հանդես գալ համահունչ և միասնական նպատակներով և ակնկալիքներով և խուսափել իրականացվող ծրագրերի իրարամերժ փոխհակասություններից և կատարման հակասական մեթոդաբանություններից, որոնք կարող են լուրջ շփոթություն և դժգոհություն առաջացնել ծրագրերի շահառուների՝ ներառյալ ԶԱՅԻ կառույցների և քաղաքացիական հասարակության շրջանում: Հաշվի առնելով ֆինանսական և կադրային ռեսուրսների սղությունը՝ համագործակցության շնորհիվ կարելի է ձևավորել սիներգիա, պատվիրակել և լիազորել գործառույթները և բացառել շանքերի կրկնողությունը և անհամատեղելի տեխնիկական միջոցների նվիրաբերումը:

Ակնհայտ է, որ ԶԱՅԲ-ի համար միջազգային աջակցություն ստացող շահառուները, հատկապես տեղացիները, պետք է ներգրավված լինեն բարեփոխումների միջազգային աշխատանքների պլանավորման և համակարգման գործընթացներում, որպեսզի ավելի մեծ պատրաստակամությամբ տեր կանգնեն բարեփոխումների գործընթացին: Շահառուի կողմից իրականացվող համակարգմանը կարող են աջակցել համակարգող միավորները կամ հանձնախմբերը՝ բուն ծրագրերի իրականացմամբ զբաղվող ազգային կառույցներում, կամ միջազգային առաջատար կառույցներից մեկնումեկը, որին կընտրի աջակցությունն ստացող պետության կառավարությունը, և որին կվերապահվեն արտաքին բոլոր գերատեսչությունների ու շահակիցների գործունեությունը համակարգելու գործառույթները և դրա համար անհրաժեշտ լիազորությունները:

ԶԱՅԲ-ի միասնական մոտեցումները բարեփոխումներին աջակցող միջազգային կազմակերպությունների ներսում

ԶԱՅԲ-ի շրջանակում ուստիկանության բարեփոխումների համապարփակ մոտեցումն ապահովելու համար, բնականաբար, անհրաժեշտ է,

որ միասնական մոտեցում ձևավորված լինի աջակցությունը ցուցաբերող կազմակերպության ներսում, որպեսզի կազմակերպության տեղի գրասենյակի և գլխավոր գրասենյակի/քարտուղարության բոլոր ներգրավված ստորաբաժանումները սերտորեն համակարգեն, փոխհամաձայնեցնեն և փոխլրացնեն միմյանց աշխատանքները պլանավորման, գնահատման, իրագործման և վերանայման փուլերում:

Նմանօրինակ համապարփակ մոտեցում երաշխավորելու համար անհրաժեշտ է դիտարկել տեղի գրասենյակներում ԶԱՅԲ-ի ստորաբաժանում ստեղծելու կամ առնվազն համակարգման հարցերով պատասխանատուի հաստիքը նախատեսելու նպատակահարմարությունը. այդ ստորաբաժանումը կամ պատասխանատուն կհամակարգեն ԶԱՅԲ-ը և կաջակցեն դրա իրականացմանը տվյալ շահառու պետության տարածքում և սերտորեն կհաղորդակցվեն իրենց գլխավոր գրասենյակի/քարտուղարության բոլոր շահագրգիռ ներկայացուցիչների հետ: Նշված ստորաբաժանումը կամ պատասխանատուն պետք է ռազմավարական մակարդակով տեղակայված լինեն տեղի գրասենյակի ղեկավարի աշխատակազմում, որպեսզի քաղաքական և բյուրոկրատական բավարար լծակներ ունենան և երաշխավորեն նաև գրասենյակի համապատասխան վարչությունների համակարգված և փոխլրացնող աշխատանքը:

Միջազգային կազմակերպությունների համահունչ, համապարփակ և միասնական մոտեցումն ապահովելու համար առաջին հերթին պետք է տեղի գրասենյակի տարբեր վարչությունները համոզված լինեն, որ անհրաժեշտ է կիրառել ԶԱՅԲ-ի համապարփակ բազմաոլորտային մոտեցումներ և պատրաստ լինեն բարեփոխումների իրենց ծրագրերը միավորելու գրասենյակի բազմաոլորտային մոտեցման հովանու ներքո: Դրանից զատ՝ նրանց անհրաժեշտ կլինի տեղեկացված լինել շահառու պետության ԶԱՅ-ի տարբեր կառույցների, ինչպես նաև միջազգային կազմակերպության տեղի գրասենյակի այլ վարչությունների առանձնահատուկ կարիքների և համատեքստի յուրահատկությունների մասին: Այդ իմացությունը և մտածելակերպը տարածելու համար կպահանջվեն ԶԱՅԲ-ի համապարփակ մոտեցումներին վերաբերող ռազմավարական և գործառնական ուղենիշային փաստաթղթեր, ինչպես նաև միջազգային կազմակերպության տեղի գրասենյակի աշխատողների վերապատրաստման մանրակրկիտ և համատեղ աշխատանքներ:

I. Ներածություն

Քրեական արդարադատության համակարգի բարեփոխումները (ՔԱՅԲ) առաջնայնություն են ձեռք բերել միջազգային հանրության համար՝ վերջինիս կողմից իրավունքի գերակայության հաստատման կամ վերահաստատման գործում անցումային կամ հետհակամարտային հասարակություններին ցուցաբերվող աջակցության աշխատանքներում: ՔԱՅԲ տեղի է ունենում նաև կայացած բազմաթիվ ժողովրդավարություններում, որտեղ ուրվագծվել է քրեական արդարադատության գործընթացի արդյունավետությունը և գործունակությունը բարելավելու անհրաժեշտությունը:

Միջազգային այդ աշխատանքներում ԵԱԿԿ ներգրավումը 1998 թվականից ի վեր հիմնականում բնորոշվել է ոստիկանության առաջնությամբ ԵԱԿԿ-ի կողմից իրականացվող ծրագրերով: Վերոհիշյալ աշխատանքները կատարելիս քաղված դասերից է այն, որ ոստիկանության գործառնական արդյունավետության բարելավման ձեռքբերումները և դրանց մնայունությունը կարող են տուժել, եթե բավարար առաջընթաց չարձանագրեն քրեական արդարադատության ողջ համակարգի, մասնավորապես՝ իրավական, դատական և ուղղիչ ոլորտների բարեփոխումները: Քրեական արդարադատության այլ ոլորտներում բարեփոխումների անբավարարությունը, սակայն, բացասաբար է անդրադարձել ոստիկանության բարեփոխումների ձեռքբերումների վրա:

Ոստիկանության համար փորձագիտական գերժամանակակից կարողությունների ապահովումը, օրինակ, այնքան էլ օգտակար չէ, եթե օրենսդրական հիմքերի կամ դատախազների և դատավորների մասնագիտական հմտությունների բացակայության պատճառով հնարավոր չէ փորձագիտական ապացույցները կիրառել դատարանում:

Բացի դրանից՝ ոստիկանների, դատախազների և դատավորների միջև հաղորդակցության պակասը՝ ներառյալ տեղեկությունների պահպանման և փոխանակման, ինչպես նաև քրեական գործերի ընթացքին հետևելու մեխանիզմների անբավարարությունը զգալիորեն թուլացնում են քրեական վարույթների համակարգումը: Դրա հետևանքով կարող են տեղի ունենալ քրեական վարույթների ձգձգումներ, ստեղծվել քննչական ոչ լիարժեք կյուբեր, որոնք կարող են հանգեցնել նախքան մեղադրանք ներկայացնելը գործերի կարճմանը կամ, օրինակ, ո-

որոշ ամբաստանյալների նախկին դատվածությունների մասին չիմանալու պայմաններում դատավճիռների կայացմանը:

Ավելին, ոստիկանության կողմից ձերբակալված կասկածյալները կարող են պարբերաբար ազատ արձակվել դատական գործընթացի սխալների կամ կոռուպցիայի կամ էլ պարզապես բանտերում բավարար թվով խցեր չունենալու պատճառով:

Դատավորների, դատախազների, իսկ երբեմն նաև փաստաբանների անբավարարության հետևանքով կարող են ծագել այնպիսի իրավիճակներ, երբ կալանավորված անձինք, առանց մեղադրանք ներկայացվելու, պահվում են օրենքով սահմանված 48 կամ 72 ժամից բավականին երկար, իսկ հետո նրանք բավականին երկար սպասում են, որ իրենց գործն ուղարկվի դատարան:

Հաշվետվությունների և գործերի վարման անգործունակ համակարգերը և անհարկի ձգձգվող մինչդատական կալանքի ժամկետները խախտում են թե՛ կալանավորված անձանց, թե՛ տուժողների՝ մարդու իրավունքները, այդ թվում՝ գործին առնչվող տեղեկությունները և պատշաճ դատավարական գործընթաց ստանալու իրավունքը, և կարող են նվազեցնել քրեական արդարադատության ողջ համակարգի նկատմամբ վստահությունը:

Ընդհանուր ԶԱԲ-ում առաջընթացի պակասը՝ ներառյալ ոստիկանության բարեփոխումների համեմատությամբ դատական կամ քրեակատարողական ոլորտների բարեփոխումների դանդաղ տեմպերը, կարող է բնակչության շրջանում ձևավորել անպատժելիության զգացում, իսկ ոստիկանների շրջանում՝ հիասթափություն և ցինիզմ, որոնց հետևանքով վերջիններս կարող են ոչ պատշաճ վարք դրսևորել և խախտել օրենքը:

Քրեական արդարադատության համակարգի (ԶԱԲ) ֆորմալ բաղադրիչների նկատմամբ հանրության ընդհանուր անվստահությունը կարող է նպաստել, որ հանրությունն ավելի շատ հենվի արդարադատության սովորությանին, ոչ պետական մեխանիզմների վրա, որոնք կարող են, սակայն, իրենց ընթացակարգերով և որոշումներով խախտել մարդու համընդհանուր իրավունքներին վերաբերող նորմերը:

ԶԱԲ-ի պրակտիկ աշխատողների քաղաքականությունը որոշող անձանց և գիտական աշխատողների շրջանում լայն տարածում է գտել այն համոզմունքը, որ ԶԱԲ-ի մեկ հատվածի բարեփոխումները պետք է լրացնել այլ հատվածների բարեփոխումներով, որպեսզի հնարավոր

լինի բարելավել քրեական արդարադատության ողջ գործընթացը և մ-
նայուն դարձնել բարեփոխումների ձեռքբերումները:

2004 թվականին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր
քարտուղարն ուղղակիորեն ընդգծեց, որ «... անձանց ձեռքալուծելու՝
ոստիկանության կարողությունների զարգացումը չի կարող համարվել
իրավունքի գերակայության ամրապնդմանն ուղղված միջոցառում, ե-
թե չկան կիրառության ենթակա ժամանակակից օրենքներ, եթե ձեռ-
բակավածներին պահելու համար չկան մարդավայել և բավարար ռե-
սուրսներով ապահովված և վերահսկելի հաստատություններ, եթե
դատական համակարգը չի գործում հավուր պատշաճի և չի կարող օ-
րինական և արագ կերպով անցկացնել նրանց դատավարությունները,
կամ եթե չկան նրանց շահերը պաշտպանող փաստաբաններ»¹:

Գլխավոր քարտուղարը շեշտեց, որ ոստիկանական ծառայությունների
վերականգնումը պետք է զուգակցել «օրինաստեղծ աշխատանքի, հան-
ցավորության կանխարգելման, դատական համակարգի զարգացման,
իրավաբանական կրթության, բանտային բարեփոխումների, դատախա-
զական մասնագիտական կարողությունների զարգացման, տուժողների
պաշտպանության և օժանդակության, քաղաքացիական հասարակութ-
յանն օժանդակության, քաղաքացիության և անձի ճանաչման կանոնա-
կարգերի, ինչպես նաև գույքին առնչվող վեճերի լուծման» ոլորտներում
իրականացվող բարեփոխումների հետ²: Ավելին, ԲԱՀ-ի համապարփակ
և ամբողջական³ բարեփոխումների ռազմավարության մեջ «անիրա-
ժեշտ է ուշադրություն դարձնել արդարադատության ստանդարտներին,
դրանք կողմնորոշ օրենքներին, դրանք կյանքի կոչող հաստատություն-
ներին, դրանք մշտադիտարկող մեխանիզմներին և այն անձանց, ում
համար դրանք պետք է հասանելի լինեն»⁴:

Յետևաբար, իրավունքի գերակայությունը հաստատելու համար պա-
հանջվում է ոչ միայն զարգացնել իրավապահ մարմինների կարողութ-

¹ United Nations Security Council, *The rule of law and transitional justice in conflict and post-conflict societies. Report of the Secretary-General*, S/2004/616, 23 August 2004, Para. 30, էջեր 10f [Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ, *Իրավունքի գերակայությունը և անցումային շրջանի արդարադատությունը հակամարտային և հետհակամարտային հասարակություններում*, *Գլխավոր քարտուղարի զեկույցը*, S/2004/616, 23-ն օգոստոսի, 2004 թ., պարբ. 30, էջ 10 և շարունակ.]:

² Նույն տեղը, պարբ. 24, էջ 9:

³ ԲԱՀ-ի համապարփակ մոտեցման հիմքում այն փաստի գիտակցումն է, որ ԲԱՀ-ի տարբեր բաղադրիչները ԲԱՀ-ի ընդհանուր գործունեության մեջ սերտորեն փոխկախված են միմյանցից: Ուստի, համապարփակ բարեփոխումների մոտեցման մեջ կարևորվում է այն գաղափարը, որ պետք է կենտրոնանալ ոչ թե ԲԱՀ-ի առանձին բաղադրիչների, այլ ամբողջությամբ վերցված համակարգի վրա:

⁴ Նույն տեղը, պարբ. 23, էջ 9:

յունները և ուժեղացնել կառուցակարգերը և հաստատությունները, այլ նաև համադրելի չափով և համընթաց կերպով բարելավել ողջ ԶԱՀ-ը, հատկապես՝ ԶԱՀ-ի տարբեր հատվածների աշխատանքը փոխկապակցող օղակները, ինչպես նաև ԶԱՀ-ը և քրեական արդարադատության գործընթացում անվտանգության և արդարադատության ու լրրոսներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցները փոխկապակցող օղակները:

Ուստի ԶԱՀ-ի շրջանակում ոստիկանության բարեփոխումների ամբողջական մոտեցումը ենթադրում է բարեփոխումների ներդաշնակեցում և փոխլրացում ԵԱՀԿ տարածաշրջանի պետությունների միջև, ԵԱՀԿ գործունեության տարբեր թեմատիկ ուղղությունների միջև, ինչպես նաև ԵԱՀԿ-ի, վերջինիս գործընկեր միջազգային կազմակերպությունների և բարեփոխումներով հետաքրքրված ազգային շահակիցների միջև:

Հաշվի առնելով ԵԱՀԿ գործունեության քաղաքական հայեցակարգը, ԵԱՀԿ տարբեր գործադիր կառույցների կողմից կիրառվող՝ անվտանգության միջմասնագիտական մոտեցումը և մի շարք մասնակից պետություններում տևական հիմունքներով գործող գրասենյակների առկայությունը՝ ԵԱՀԿ-ն ի գործու է ԶԱՀ-ի համապարփակ և մնայուն բարեփոխումներ իրականացնել:

Թեպետ միջազգային և ազգային բազմաթիվ կազմակերպություններ սկսել են խրախուսել ԶԱՀ-ի համապարփակ մոտեցումը, և միջազգային հանրությանը հայտնի են նշված մոտեցման դժվարությունները, համապարփակ մոտեցման կիրառության գործնական ուղենիշներ դեռևս չկան: Մասնավորապես, չկան ԶԱՀ-ի տարբեր հատվածների փոխգործակցության վերաբերյալ ուղենիշներ:

Հաշվի առնելով ԶԱՀ-ի շրջանակում ոստիկանության բարեփոխումների վերոհիշյալ մարտահրավերները և առաջնորդվելով իրավունքի գերակայության երաշխավորման և ոստիկանական կարևորագույն հմտությունների զարգացման գործում մասնակից պետություններին աջակցելու մանդատով⁵, ինչպես նաև «իր քաղաքականության և գործունեության մեջ քրեական արդարադատության համակարգերի առանցքային դերակատարմանն ավելի մեծ չափով ուշադրություն

⁵ Հանձնառ. OSCE, *OSCE Strategy to Address Threats to Security and Stability in the Twenty-First Century*, Eleventh Meeting of the Ministerial Council, Maastricht, 1 and 2 December 2003, Para. 32 [ԵԱՀԿ, 21-րդ հարյուրամյակում անվտանգության և կայունության սպառնալիքներին հակազդեցության՝ ԵԱՀԿ շագմավարությունը, նախարարների խորհրդի 11-րդ նիստ, Մասստրիխտ, 1–2-ը դեկտեմբերի, 2003 թ., պարբ. 32]:

դարձնելու [...] և նշված համակարգերի բաղադրիչների փոխադարձ կապերն առավել լիարժեքորեն հաշվի առնելու»⁶ նպատակով՝ ԵԱՀԿ Անդրազգային սպառնալիքների դեմ պայքարի վարչության Ոստիկանական գործունեության ռազմավարական հարցերի ստորաբաժանումը (ԱԱՍՊՎ/ՈԳՌՅՍ) 2011 թվականին ձեռնամուխ եղավ ԶԱԳ-ի ընդհանուր բարեփոխումների համապարփակ մոտեցման հիման վրա ոստիկանության բարեփոխումների ծրագրերի իրականացման լավագույն փորձին նվիրված ուղեցույցի մշակմանը: Այդ մոտեցումը լրացուցիչ հավանության արժանացավ ԵԱՀԿ մասնակից պետությունների կողմից 2012 թվականին, երբ հաստատվեց *ԵԱՀԿ ռազմավարական հայեցակարգը ոստիկանական գործառույթներին առնչվող գործունեության ոլորտում*, որում պետությունները վերահաստատեցին, որ կարևորում են ոստիկանության բարեփոխումներին օժանդակելը և դրանք քրեական արդարադատության համակարգի այլ ոլորտներում իրականացվող բարեփոխումների հետ զուգակցելը, և ԵԱՀԿ-ին հանձնարարեցին ուղենիշներ մշակել դրանց վերաբերյալ:

1.1. Ուղեցույցի նպատակները

Սույն ուղեցույցի նպատակն է.

- Յամպատասխան շահակիցների՝ ներառյալ օրենսդիրների և քաղաքականությունը մշակող անձանց, դոնորների, հետազոտողների, ԵԱՀԿ-ում քրեական արդարադատության գործնական խնդիրներով զբաղվողների, միջազգային այլ կազմակերպությունների, ԵԱՀԿ մասնակից պետությունների պետական գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների շրջանում բարձրացնել իրազեկվածությունը ԶԱԳ-ի շրջանակում ոստիկանության բարեփոխումների համապարփակ մոտեցումներ կիրառելու անհրաժեշտության մասին:
- Պարզել ԶԱԳ-ի համապատասխան հատվածների, մասնավորապես՝ ոստիկանության, դատախազության, պաշտպանության,

⁶ OSCE, Ministerial Council Decision No. 5/06, *Organized Crime*, Fourteenth Meeting of the Ministerial Council, Brussels, 5 December 2006, Para. 11 [ԵԱՀԿ, Նախարարների խորհրդի թիվ 5/06 որոշումը, *Կազմակերպված հանցավորությունը*, Նախարարների խորհրդի 14-րդ նիստ, Բրյուսել, 5-ը դեկտեմբերի, 2006 թ.]:

դատական իշխանության և բանտային համակարգի, ինչպես նաև՝ արդարադատության սովորությանը և ոչ պետական համակարգերի և անվտանգության ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների միջև գոյություն ունեցող այն հարաբերությունները, որոնց պետք է անդրադառնան բարեփոխումները:

- ԵԱՀԿ համապատասխան գործադիր կառույցներին, միջազգային գործընկեր կազմակերպություններին և ԵԱՀԿ մասնակից պետություններում գործող շահակիցներին խորհուրդներ տալ այն մասին, թե ինչպես կարելի է ներթոգրյալի հիման վրա ԶԱՀԲ-ի շրջանակում ավելի արդյունավետ և մնայուն դարձնել ոստիկանության բարեփոխումները.
 - Ոստիկանության բարեփոխումների ներդաշնակեցումը (փոխլրացնողություն և համընթացություն) ԶԱՀ-ի այլ հատվածներում իրականացվող բարեփոխումներին,
 - ԵԱՀԿ տարբեր գործադիր կառույցների, բարեփոխումներով զբաղվող միջազգային և ազգային սուբյեկտների, դոկորների և ազգային շահակիցների միջև համագործակցության և համակարգման խորացումը և կատարելագործումը,
 - ԶԱՀ-ի տարբեր հատվածների միջև համագործակցության և համակարգման խորացումը և կատարելագործումը,
 - ԶԱՀ-ի կառույցների, պետական այլ մարմինների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության և համակարգման խորացումը և կատարելագործումը:

Գոյություն ունեն բազմաթիվ ուղեցույցներ՝ նվիրված ընդհանուր առմամբ անվտանգության ոլորտի բարեփոխումներին (ԱՌԲ) և ԶԱՀ-ին և, մասնավորապես, ոստիկանության բարեփոխումներին և ԶԱՀ-ի այլ բաղադրիչների բարեփոխումներին: Առավել ամբողջական և նշանակալի փաստաթղթերից են *ՏՀԶԿ ՉԱՀ-ի ուղեցույցն անվտանգության ոլորտի բարեփոխումների համար*, Միավորված ազգերի կազմակերպության Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (ՄԱԿԹՊԳ) *Արդարադատության համակարգի գնահատման*

ձեռնարկը և ՄԱԿԹՅԳ-ի Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում խորագրով ուղեցույցը, որոնցում մանրամասնորեն նկարագրվում են ԶԱՅ-ի բարեփոխումների կարևորագույն տարրերը:

Ուստի սույն ուղեցույցում մանրամասնորեն և մեկ առ մեկ նկարագրված չեն ԶԱՅ-ի յուրաքանչյուր առանձին հատվածում անհրաժեշտ բարեփոխումների քայլերը: Փոխարենը՝ հակիրճ և համառոտ կերպով ներկայացվելու են ԶԱՅ-ի տարբեր հատվածներում անհրաժեշտ բարեփոխումների հիմնական առանձնահատկությունները՝ առավել մանրամասն տեղեկությունների համար խաչաձև հղումներ տալով այլ փաստաթղթերին, որոնց՝ ընթերցողի համար բացահայտմանն անուղղակիորեն կնպաստի սույն ուղեցույցը:

Սույն ուղեցույցի հիմնական նպատակն է լրացնել գրականության մեջ առկա բացը՝ օրենսդրության, ռազմավարության, ընթացակարգերի, կազմակերպման և վերապատրաստման մակարդակներով կենտրոնանալով ԶԱՅ-ի տարբեր հատվածների միջև գոյություն ունեցող այն փոխհարաբերություններին, որոնց պետք է անդրադառնան ԶԱՅ-ի համապարփակ բարեփոխումները, ինչպես նաև՝ ներկայացնելով ԵԱԶԿ տարածաշրջանում, մասնակից պետություններում և միջազգային և ազգային գործընկերային կազմակերպությունների մոտ առկա համապարփակ բարեփոխումների արդյունավետ իրականացման լավագույն փորձի օրինակները:

Ավելին, լավագույն փորձի վերլուծության և համադրման այս աշխատանքները հիմնականում կատարվում են ոստիկանության դիտանկյունից՝ առաջին հերթին անդրադառնալով ոստիկանության և ԶԱՅ-ում ոստիկանության գործընկերների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև համապատասխան հարաբերություններին:

Թեպետ սույն ուղեցույցը նվիրված է ազգային և տեղական մակարդակով իրականացվող ԶԱՅԲ-ին, այնուհանդերձ, տեքստում կարևորվում է նաև ԶԱՅ-ում միջազգային և տարածաշրջանային համագործակցության խորացումը: Ահաբեկչությունից և կազմակերպված հանցավորությունից բխող անդրազգային սպառնալիքների դեմ արդյունավետ պայքարը հնարավոր է միմիայն ԶԱՅ-ի տարբեր սուբյեկտների միջև արդյունավետ անդրսահմանային համագործակցության պարագայում: Ուստի սույն ուղեցույցն անդրադառնում է իրավական բարե-

փոփոխումների և վերապատրաստման համատեղ դասընթացների համատեքստում միջազգային մակարդակով ԶԱՀ-ի ոլորտում ծավալվող համագործակցությանը, որի նպատակն է կյանքի կոչել ԶԱՀ-ում միջազգային համագործակցության գործիքները, մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիան (ՄԱԿԱԿՅԿ), որը վավերացնող պետությունները պարտավոր են արտահանձնման, իրավական փոխօգնության և իրավապահ ոլորտում համագործակցության մեխանիզմներ ներդնել:

1.2. Ուղեցույցի կառուցվածքը

Սույն ուղեցույցի II գլխում պարզաբանված և սահմանված են ԶԱՅԲ-ին վերաբերող մի շարք կիրառելի եզրույթներ և բնորոշումներ: Հակիրճ նկարագրված են ԶԱՅԲ-ի հիմնարար տարրերը և սկզբունքները:

III գլխում շարադրված են ԶԱՅ-ի համապարփակ ելակետային գնահատումների կարևորագույն բաղադրիչները, մասնավորապես՝ ԶԱՅ-ի վերաբերյալ օրենսդրությունը, քաղաքականությունը և իրավական կարգավորումը, կազմակերպական կառույցները, վերապատրաստման և մասնագիտական զարգացման կառույցները, ինչպես նաև հաշվետվողականության և վերահսկողության կառույցները: Հատուկ ուշադրություն է դարձվում ոստիկանության և ԶԱՅ-ի այլ բաղադրիչների միջև հարաբերություններին:

IV գլուխը նվիրված է ԶԱՅԲ-ի շրջանակում ոստիկանության համապարփակ և ամբողջական բարեփոխումների ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի մշակմանը. ներկայացված են բարեփոխումների գործընթացի միջազգային և ազգային շահակիցների խնդիրները, գործառույթները և պարտավորությունները:

V գլխում վերլուծվում է ԶԱՅ-ի հիմնարար իրավական դաշտը, որով միայն կարելի է երաշխավորել օրենքի համապատասխանությունը մարդու իրավունքների միջազգային նորմերին և չափանիշներին, ինչպես նաև՝ ապահովել արդյունավետ և գործուն համագործակցությունը ԶԱՅ-ի բոլոր ոլորտների և քրեական արդարադատության գործընթացի այլ կարևոր սուբյեկտների, մասնավորապես՝ պետական գերատեսչությունների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև:

VI գլխում նկարագրված են քրեական արդարադատության իրավա-նորմերն այնպիսի քաղաքականության և կարգավորումների վերածելու ուղիները, որոնք թույլ կտան բարելավել համագործակցությունը ներգրավված բոլոր սուբյեկտների միջև՝ նպատակ հետապնդելով բարելավելու անվտանգության և արդարադատության հասանելիությունը, ինչպես նաև՝ մարդու իրավունքների նորմերին և չափանիշներին համահունչ բարձրացնելու քրեական արդարադատության գործընթացի արդյունավետությունը և գործունակությունը:

VII գլխում ամփոփ ներկայացված են քաղաքականությունը և իրավական կարգավորումները կյանքի կոչելու համար անհրաժեշտ կազմակերպական և կառուցվածքային փոփոխությունների գործնական օրինակներ: Հատուկ կերպով ընդգծվում են համագործակցության կարևորագույն ուղղությունները և մեխանիզմները ԶԱՀ-ի կառույցների միջև, ինչպես նաև ԶԱՀ-ի և ոչ պետական սուբյեկտների և քաղաքացիական հասարակության սուբյեկտների միջև, որոնք էական դերակատարում ունեն անվտանգության և արդարադատության հասանելիությունը բարելավելու և քրեական արդարադատության գործընթացի արդյունավետությունը և գործունակությունը բարձրացնելու տեսանկյունից:

Նույն գլուխն անդրադառնում է նաև վերապատրաստման և մասնագիտական կատարելագործման համատեղ միջոցառումներին, որոնք բարձրացնում են ԶԱՀ-ի և քրեական արդարադատության գործընթացներում կարևոր դերակատարում ունեցող այլ սուբյեկտների գործառնական արդյունավետությունը և գործունակությունը:

VIII գլուխը համառոտակի անդրադառնում է ԶԱՀ-ի գնահատման և վերլուծության հիմնախնդիրներին:

Վերոհիշյալ բոլոր գլուխներն ըստ անհրաժեշտության շարունակաբար անդրադառնում են իրավունքի գերակայության և ժողովրդավարական ԶԱՀ-ի հիմունքներին և հիմնարար սկզբունքներին, մասնավորապես՝ մարդու իրավունքներին, գենդերային բաղադրիչի ներառման, հաշվետվողականության և վերահսկողության հիմնախնդիրներին:

Վերջապես, IX գլխում շարադրված են միջազգային տարբեր սուբյեկտների՝ ԶԱՀ-ի նկատմամբ միասնական մոտեցման հիմնական բաղադրիչները:

X գլխում նկարագրված են ԶԱՀ-ին աջակցող կազմակերպությունների ներսում ձևավորված միասնական մոտեցումից բխող պահանջները:

II. Եզրութաբանությունը

2.1. Արդարադատությունը և իրավունքի գերակայությունը

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի բնորոշմամբ՝ արդարադատությունը պատասխանատվության և արդարության գերագույն դրսևորումն է ինչպես իրավունքների պաշտպանության և պահպանության, այնպես էլ դրանց խախտումների կանխարգելման և պատժման գործում: Արդարադատությունը ենթադրում է հարգանք առ մեղադրյալի իրավունքները, տուժողի շահերը և հասարակության լայն շրջանակների բարեկեցությունը: Այդ հասկացությունը խորապես արմատացած է բոլոր ազգերի մշակույթներում և ավանդույթներում, և թեպետ դրա իրականացումը սովորաբար ապահովում են դատական ֆորմալ մեխանիզմները, ոչ պակաս նշանակություն ունեն նաև վեճերի լուծման ավանդական մեխանիզմները⁷:

Գլխավոր քարտուղարն իրավունքի գերակայությունը բնորոշում է հետևյալ կերպ. «Իրավունքի գերակայությունը՝ իբրև սկզբունք, Միավորված ազգերի կազմակերպության առաքելության սիրտն է և հոգին: Դա կառավարման սկզբունք է, որի համաձայն բոլոր անձինք, հաստատությունները և սուբյեկտները՝ պետական թե մասնավոր՝ ներառյալ բուն պետությունը, առաջնորդվում են օրենքներով, որոնք ընդունվել են հրապարակավ, կիրարկվում են հավասարապես, կիրառվում են անկախ դատական մարմինների կողմից և համապատասխանում են մարդու իրավունքների միջազգային նորմերին և չափանիշներին: Դրա համար պահանջվում են նաև այնպիսի միջոցառումներ, որոնք գործնականում կերաշխավորեն օրենքի առաջնայնությունը, օրենքի առջև հավասարությունը, օրենքի նկատմամբ պատասխանատվությունը, օրենքի արդար կիրառությունը, իշխանությունների բաժանումը, որոշումների կայացմանը մասնակցությունը, իրավական որոշակիությունը, կամայականության բացառումը և ընթացակարգային և իրավական թափանցիկությունը»⁸:

⁷ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ, *Իրավունքի գերակայությունը և անցումային շրջանի արդարադատությունը հակամարտային և հետհակամարտային հասարակություններում* (տե՛ս էջատակի 1-ին ծանոթագրությունը), պարբ. 7, էջ 4:

⁸ Նույն տեղը, պարբ. 6, էջ 4:

2.2. Զրեական արդարադատության համակարգի սուբյեկտները

Առաջնորդվելով ՄԱԿԹՀՊԳ-ի «*Criminal Justice Reform in Post-Conflict States*» (Զրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում) ուղեցույցով և «*Criminal Justice Assessment Toolkit*» (Զրեական արդարադատության համակարգի գնահատման ձեռնարկ) ձեռնարկով, սույն ուղեցույցն անդրադառնում է ԶԱՀ-ի տարբեր կառույցներին՝ ներառյալ ոստիկանությանը, դատախազությանը, փաստաբաններին և քրեական գործերով պաշտպաններին, դատարաններին և ուղղիչ ծառայություններին (սախնական կալանքի վայրեր և բանտեր)⁹:

ԶԱՀ-ի վերոհիշյալ կառույցներից զատ՝ գոյություն ունեն պետական և ոչ պետական այլ կարևոր կառույցներ, որոնց նույնպես հարկ է անդրադառնալ ԶԱՀ-ի համապարփակ բարեփոխումների ընթացքում և համատեքստում, մասնավորապես՝

- Զրեական արդարադատությունը կառավարող կառույցները, օրինակ՝ արդարադատության սախարարությունը և ներքին գործերի սախարարությունը, որոնք հաճախ օրենսդրության և իրավակարգավորման հիմնական սախաձեռնողներն են և կարող են նաև վերահսկողական և/կամ բյուջետային հսկողության գործառույթներ ունենալ համապատասխանաբար արդարադատության կառույցների կամ ոստիկանության նկատմամբ,
- Վերահսկող կառույցները՝ ներառյալ ներքին վերահսկողության և արտաքին վերահսկողության մարմինները, ինչպիսիք են սախարարությունները, խորհրդարանները և խորհրդարանական հանձնաժողովները, ազգային անվտանգության խորհրդակցական խորհուրդները, օմբուդսմենները, մարդու իրավունքների ազգային հանձնաժողովները, քաղաքացիական հասարակության վերահսկողական մարմինները և զանգվածային լրատվամիջոցները¹⁰:

⁹ Համեմատ. UNODC/United States Institute of Peace, *Criminal Justice Reform in Post-Conflict States. A Guide for Practitioners*, New York, September 2011, էջեր 9-11 and 14f [ՄԱԿԹՀՊԳ/Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտ, *Զրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում. ուղեցույց գործնական աշխատողների համար*, Նյու Յորք, 2011 թվականի սեպտեմբեր, էջեր 9-11, 14 և շարունակ.]:

¹⁰ Նույն տեղը, էջ 12:

Ավելին, առաջնորդվելով Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի վերոհիշյալ հայտարարությամբ (տե՛ս 2.1. Ենթագլուխը)՝ դատական ֆորմալ մեխանիզմներից ոչ պակաս կարևոր են վեճերի լուծման ավանդական մեխանիզմները, քանզի անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցները, օրինակ՝ «աչալուրջ բնակիչների խմբերը», «թաղային պահակային դիտարկման» խմբերը, անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունները և ավանդույթի դատարանները, կարող են կարևոր դերակատարում ունենալ կոնկրետ պետության անվտանգության և արդարադատության համակարգում:

Այն հասարակություններում, որոնցում անվտանգության և արդարադատության ֆորմալ կառույցների ընդգրկումը խիստ սահմանափակ է, և դրանք գրեթե անմատչելի են բնակչության մեծ մասին, հանրությունը բոլոր վիճահարույց խնդիրների՝ ներառյալ հանցագործությունների լուծման համար դիմում է արդարադատության սովորութային կամ ոչ պետական համակարգերին:

Հակամարտություններ վերապրած պետություններում, մասնավորապես՝ անվտանգության ոլորտում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցները հաճախ պետական կառույցներից ավելի կարևոր դերակատարում ունեն, քանզի նրանք անվտանգության ծառայություններ մատուցելու ավելի մեծ պատրաստակամություն և կարողություններ ունեն, մինչդեռ պետական սուբյեկտները կա՛մ չեն ցանկանում, կա՛մ ի վիճակի չեն դա անել՝ հակամարտության մեջ նախկինում ունեցած անօրինական և կողմնակալ ներգրավվածության հետևանքով բավարար վստահություն չվայելելու կամ պարզապես բոլոր խմբերի անվտանգությունը հավասարապես ապահովելու համար անհրաժեշտ ռեսուրսները չունենալու պատճառով¹¹:

Թեպետ ԵԱՀԿ տարածաշրջանում անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորութային և ոչ պետական կառույցների տոկոսաբաժինը շատ ավելի ցածր է, քան աշխարհի այլ տարածաշրջաններում¹², այնուհանդերձ, դեռևս առկա

¹¹ Նույն տեղը, էջ 103:

¹² ՄԱԿԹՀՊԳ-ի տվյալներով, արդարադատության սովորութային կամ ոչ պետական համակարգերն «արդարադատության ստացման հիմնական միջոցն են աշխարհի բնակչության ավելի քան 80 տոկոսի համար», տե՛ս UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), էջ 103 [ՄԱԿԹՀՊԳ/Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 103]:

են բազմաթիվ օրինակներ, երբ մասնակից պետություններից շատերում արդարադատության և անվտանգության ֆորմալ կառույցների գործունեությունը փոխլրացվում է սովորությանին և ոչ պետական կառույցներով:

Յետևաբար որոշ դեպքերում պետության ֆորմալ կառույցներից ավելի մեծ լեգիտիմություն վայելող սովորությանին և ոչ պետական կառույցներին բարեփոխումների գործընթացում անուշադրության մատնելու հետևանքով բարեփոխումները կարող են անեական դառնալ բնակչության բազմաթիվ խմբերի համար և չբավարարել արդարադատության բուն պահանջմունքները:

Բացի դրանից՝ ՄԱԿԹՀՊԳ-ի վերջին զեկույցներից մեկի տվյալներով, «պետությունների մեծ մասում զգալիորեն աճել է անվտանգության մասնավոր ծառայությունների ոլորտը». ոստիկանության որոշ գործառույթների «մասնավորեցման» միտումներին համահունչ՝ անվտանգության քաղաքացիական մասնավոր կառույցները լրացնում են պետության գերբեռնված ոստիկանության թողած բացերը և գնալով ավելի կարևոր դեր ստանձնում հանցավորության կանխարգելման և հասարակության անվտանգության ապահովման գործում: Ոստիկանությունը «մասնավորեցվել» է մի քանի հարթություններում: Որոշ դեպքերում ոստիկանությունը հրաժարվում է իր որոշ պարտականությունների կատարումից, և առաջացած բացը լրացնում են անվտանգության մասնավոր կառույցները: Այլ դեպքերում ոստիկանությունը չի հրաժարվում իր գործառույթներից, սակայն ծառայությունների մատուցումը պայմանագրով պատվիրակում է մասնավոր կապալառուին: Լինում են նաև դեպքեր, երբ պետության ոստիկանությունը կրկնում է մասնավոր հատվածին բնորոշ գործելաոճը, օրինակ՝ վճարներ է գանձում ծառայությունների դիմաց կամ ընդունում է հովանավորների հանգանակությունները»¹³:

Անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորությանին և ոչ պետական կառույցների սովորույթները և գործելաոճը, սակայն, նույնպես պետք է համապատասխանի

¹³ UNODC, *Civilian Private Security Services: Their Role, Oversight and Contribution to Crime Prevention and Community Safety*, background paper for Expert Group Meeting on Civilian Private Security Services, Vienna, 24 August 2011 [ՄԱԿԹՀՊԳ, *Անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունները. նրանց դերը և ներդրումը հանցավորության կանխարգելման և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացման գործին, և նրանց գործունեության վերահսկողությունը*, Անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունների հարցերով փորձագետների խմբի նիստի նախնական օրակարգ, Վիեննա, 24-ն օգոստոսի, 2011 թ.]:

մարդու իրավունքների միջազգային չափանիշներին: Նրանք նույնպես իրենց աշխատանքում պետք է լինեն թափանցիկ և հաշվետու: Նրանց որոշումները նույնպես պետք է ենթակա լինեն բողոքարկման: Միայն այդ պարագայում նրանք կարող են ընդունելի փոխլրացնող տարր լինել ֆորմալ կառույցների համար: Սույն ուղեցույցում զետեղված են անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորությալի և ոչ պետական կառույցների հետ տարվող աշխատանքի վերաբերյալ ընդհանուր բնույթի որոշ ուղեցույցներ¹⁴:

2.3. Բարեփոխումները տարբեր իրավիճակային պայմաններում

ԶԱՐԲ-ը հետհակամարտային սցենարում, անցումային պետություններում և հասուն ժողովրդավարություններում

Հաշվի առնելով, որ սույն ուղեցույցի նպատակն է ԵԱՀԿ ողջ տարածաշրջանում ԶԱՐԲ-ի շրջանակում օժանդակել ոստիկանության բարեփոխումների համապարփակ միջոցառումների իրականացմանը, Ուղեցույցն անդրադառնում է բարեփոխումների ճանապարհին առկա ընդհանուր մարտահրավերներին և հասուն ժողովրդավարություններում բարեփոխումներն իրագործողներին ներկայացվող պահանջներին: Ներկայացվում են նաև այն մարտահրավերները, որոնք հաճախ ավելի բնորոշ են հակամարտություններ վերապրած պետություններին կամ անցումային պետություններին, որտեղ ԶԱՐ-ի կարևորագույն պետական կառույցների գործունեությունը զգալիորեն խաթարված է:

Հետհակամարտային սցենարում, մասնավորապես, իրավական դաշտին հաճախ բնորոշ է քաղաքական աղճատումը և մարդու իրավունքներին և քրեական իրավունքին վերաբերող միջազգային չափանիշների անտեսումը: «Արտակարգ իրավիճակներում ընդունված օրենքները և գործադիր իրավական ակտերը հաճախ սովորական երևույթ են դառնում: Համարժեք օրենքները կարող են թղթի վրա գոյություն ունենալ, սակայն հանրությունը չի իմանում դրանց մասին, իսկ պաշտոնա-

¹⁴ Արդարադատության ոչ ֆորմալ սովորությալի համակարգերի առավելությունների և սահմանափակումների ամբողջական վերլուծության համար տե՛ս UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), էջեր 103-113 [ՄԱԿԹՀԳԳ/Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջեր 103-113]:

կան սուբյեկտները չեն ունենում դրանք ի կատար ածելու համար անհրաժեշտ կարողությունները կամ գործիքները: Առանձին պետությունների դատական, ոստիկանական և ուղղիչ համակարգերը, որպես կանոն, զրկված են լինում դրանց պատշաճ գործունեությունը երաշխավորելու համար անհրաժեշտ կադրային, ֆինանսական և կյուրական ռեսուրսներից»¹⁵: Զրեական արդարադատության մարմինները, հետևապես, հաճախ չեն ունենում լեգիտիմություն կամ հակամարտությունների պայմաններում վերածվում են բռնաճնշումների գործիքների կամ ներքաշվում կազմակերպված հանցավորության մեջ:

Չետհակամարտային սցենարներին հաճախ բնորոշ են նաև գեներալ համատարած հասանելիությունը, գեներոսիտի և սեռով պայմանավորված բռնության ծայրահեղ բարձր ցուցանիշները, երեխաների շահագործումը, փոքրամասնությունների և խոցելի խմբերի հետապնդումը, մարդկանց մաքսանենգ փոխադրումը, մարդկանց թրաֆիքինգը և այլ հանցագործությունները: «Նման իրավիճակներում կազմակերպված հանցավոր խմբերը հաճախ ավելի շատ ռեսուրսներ են ունենում, քան կառավարությունը, և ավելի լավ են զինված, քան՝ տեղի իրավապահ մարմինները»¹⁶:

Թեպետ ԶԱՀ-ի բարեփոխումները սովորաբար անդրադառնում են տարբեր կառույցների փոխհարաբերություններին, այդ թվում՝ գործառույթների և պարտականությունների սահմանազատմանը և, անհրաժեշտության դեպքում, վերաիմաստավորմանը, հետհակամարտային սցենարներում զրեական արդարադատության և անվտանգության ծառայություններ մատուցողների նոր տեսակների սահմանումը կարող է անզամ ավելի կարևոր լինել: Այստեղ, օրինակ, հաճախ անհրաժեշտ է լինում վերահաստատել բանակի և ոստիկանության տարանջատումը (արտաքին և ներպետական իրավակիրառ գործունեության իրականացման առումով) կամ ոստիկանության և ուղղիչ ծառայությունների անջատ լինելը՝ այդպեսով հնարավորություն ընձեռելով համապատասխան սուբյեկտներին՝ ապահովելու «զսպանակների և հակակշիռների» աշխատանքը զրեական արդարադատության կառույցների միջև¹⁷:

¹⁵ United Nations Security Council, *The rule of law and transitional justice in conflict and post-conflict societies* (op.cit. note 1), Para 27, p. 13 [Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ, *Իրավունքի գերակայությունը և անցումային շրջանի արդարադատությունը հակամարտային և հետհակամարտային հասարակություններում* (տե՛ս էջատակի 1-ին ծանոթագրությունը), պարբ. 27, էջ 13]:

¹⁶ Նույն տեղը:

¹⁷ CF, UNDP, *Security Sector Reform and Transitional Justice. A Crisis Post-Conflict Programmatic Approach*, March 2003, էջ 9 [ՄԱԿԶԾ, *Անվտանգության ոլորտի*

ԲԱՅԲ-ը տարբեր իրավական համակարգերում

Բարեփոխումների տեղայնացված և անհատականացված մոտեցման մեջ բնականաբար հարկ է հաշվի առնել ազգային իրավական համակարգի առանձնահատկությունները, որը կարող է ազդել քրեական արդարադատության համակարգի տարբեր սուբյեկտների գործառույթների, ինդիքների և պարտավորությունների սահմանման վրա:

Իրավական համակարգերի ամենատարածված տարբերակումը դրանց դասակարգումն է ըստ անգլոսաքսոնական «նախադեպային իրավակարգի» ավանդույթի և «եվրոպական մայրցամաքային քաղաքացիական իրավունքի» ավանդույթի: Նախադեպային իրավակարգը սովորաբար կոդավորված չէ և հիմնված չէ իրավական կանոնների և կանոնադրությունների ամբողջական բազայի վրա: Թեպետ նախադեպային իրավակարգում օգտագործվում են տեղ-տեղ հանդիպող կանոնադրություններ կամ օրենսդրական կարգավորումներ, որոնք փաստացի օրենսդիր մարմնի որոշումներն են, համակարգը մեծ մասամբ հիմնված է նախադեպերի, այսինքն՝ նմանօրինակ գործերով նախկինում արդեն իսկ կայացված դատական որոշումների վրա: Նախադեպերը ժամանակի ընթացքում պահպանվում են՝ շնորհիվ դատարանների արխիվների: Պատմության ընթացքում նախադեպերը փաստաթղթավորվում են նախադեպերի հավաքածուների մեջ՝ տարեգրքերի և զեկույցների տեսքով: Յուրաքանչյուր նոր գործով որոշում կայացնելիս այս կամ այն նախադեպի կիրառելիությունը որոշում է սովյալ գործով նախագահող դատավորը: Ստացվում է, որ դատավորները վիթխարի դեր են կատարում իրավունքի նորմերի ստեղծման գործում: Իրավունքի երկու համակարգերի հիմնական տարբերությունը փաստորեն այն է, որ նախադեպային իրավակարգի պայմաններում դատական իշխանությունը «ստեղծում է» ազգային իրավական դաշտը՝ նախադեպերի տեսքով: Հետևաբար դատավորներն այդ համակարգում հանդես են գալիս որպես *դե ֆակտո* օրենսդիրներ՝ օրինաստեղծ լիազորությունների իրականացմամբ ստեղծելով իրավունքի նորմեր ամրագրող օրենքներ¹⁸:

բարեփոխումները և անցումային շրջանի արդարադատությունը: Ծրագրային մոտեցում հետհակամարտային ձգնաժամային իրավիճակների համար, 2003 թվականի մարտ, էջ 9]:

¹⁸ Համեմատ. Blank, J.L.T. (ed.), *Public Provision and Performance*. Amsterdam 2000, p. 18 [Ջ.Լ.Տ. Բլանկ (խմբ.), *Պետական ապահովումը և արտադրողականությունը: Ամստերդամ 2000 թ., էջ 18], մեջբերման աղբյուրը՝ Kuhry, Bob, *Public Sector Performance. An International Comparison of Education, Health Care, Law and Order and Public Administration*, Social and Cultural Planning office, The Hague, September 2004, p. 189 [Բոբ Բուրի, *Պետական հատվածի աշխատանքը: Կրթության,**

«Մայրցամաքային եվրոպական ավանդույթի պայմաններում, ի տարբերություն Նախադեպային իրավակարգի, իրավաստեղծ գործառույթն առաջին հերթին կատարում է օրենսդիր մարմինը», իսկ դատավորները գործում են իրավական դաշտի պայմաններում, որն «ամրագրված է կարևորագույն օրենսգրքերում, որոնք պարունակում են հստակորեն սահմանված և ընդգրկուն ոլորտների նկատմամբ կիրառելի օրենսդրական համակարգված նորմեր: Մայրցամաքային իրավակարգում դատարանների որոշումների ոճը նպաստում է առանձին դատավորի դերի սահմանափակմանը և իրավական դաշտի նշանակության բարձրացմանը»¹⁹:

«Որոշ իրավական համակարգերում, հատկապես՝ քաղաքացիական իրավունքի համակարգի ազդեցությունը կամ ավանդույթները կրող համակարգերում, քրեական գործի քննությունը վարում է դատախազը կամ քննության դատավորը, ով օրենքի համաձայն իրավասու է ուղղորդել ոստիկանության, իսկ որոշ դեպքերում՝ դատական իշխանության ենթակայությամբ գործող հատուկ ոստիկանական ծառայության կողմից կատարվող քննությունը: Ոստիկանությունը պարտավոր է կատարել քննչական գործողությունների վերաբերյալ դատախազի կամ քննության դատավորի բոլոր կարգադրությունները և այդ մասին հաշվետվություն ներկայացնել նրան: Կան նաև այլ համակարգեր, հատկապես՝ Նախադեպային իրավակարգի ազդեցությունը կամ ավանդույթը կրող իրավական համակարգեր, որոնցում ոստիկանությունն ավելի ակտիվ և ինքնուրույն դերակատարում ունի քրեական հանցագործությունները քննելիս: Ոստիկաններն են ըստ էության պատասխանատու քրեական գործի ողջ քննության համար: Ոստիկանությունը քննության վերջում հավաքում է ապացույցները և դրանք ներկայացնում պետության իրավասու դատախազական մարմին, որն այդ պահից ստանձնում է գործով մեղադրողի լիազորությունները: Վերոհիշյալ մոտեցումների կիրառությունները կարող են տարբերվել, սակայն հիմնադրույթները նույնն են՝ հայտնաբերել մեղավորին և նրան կանգնեցնել արդարադատության առաջ»²⁰:

առողջապահության, իրավակարգի և պետական կառավարման միջազգային համեմատությունը, Սոցիալական և մշակութային պլանավորման գրասենյակ, Հաագա, 2004 թվականի սեպտեմբեր, էջ 189]:

¹⁹ Blank, *Public Provision and Performance* (op.cit. note 18), p. 18 [Բլանկ, *Պետական ապահովումը և արտադրողականությունը* (տե՛ս էջատակի 18-րդ ծանոթագրությունը), էջ 18], մեջբերման աղբյուրը Kuhry, *Public Sector Performance* (op.cit. note 18), p. 189 [Բոբ Քուիրի, *Պետական հատվածի աշխատանքը* (տե՛ս էջատակի 18-րդ ծանոթագրությունը), էջ 189]:

²⁰ UNODC, "Policing. Public Safety and Police Service Delivery", in: *Criminal Justice Assessment Toolkit*, New York, 2006, p. 13 [ՄԱԿԹՀՊԳ, «Ոստիկանական

Ավելին, տարբեր պետությունների իրավական համակարգերը կարող են զգալի չափով տարբերվել *օրինականության սկզբունքի* և *նպատակահարմարության սկզբունքի* առումով, որոնք վերաբերում են դատախազի հայեցողական իրավասություններին: *Օրինականության սկզբունքը* պահանջում է, որ դատախազը մեղադրանք ներկայացնի բոլոր այն գործերով, որոնցով առկա են կասկածյալի մեղքը հաստատող բավարար ապացույցներ: *Նպատակահարմարության սկզբունքը* դատախազին օժտում է ավելի մեծ հայեցողությամբ՝ ցանկացած գործով որոշելու, թե արդյոք քրեական հետապնդումն իրականացնելը տվյալ դեպքում բխում է հանրային շահից²¹:

Իրավական համակարգերը դասական եղանակով տարաբաժանվում են ըստ մեղադրական վարույթների և ինկվիզիցիոն վարույթների: Մեղադրական վարույթ կիրառող իրավական համակարգում դատավորն ավանդաբար ավելի պասիվ է և ունի չեզոք դերակատարում՝ պաշտպանության և մեղադրանքի կողմերի միջև, և գործն առավել ակտիվորեն ներկայացնում է մեղադրողը: Ինկվիզիցիոն վարույթ կիրառող համակարգում դատավորը պետք է ավելի ակտիվ դերակատարում ունենա ամբաստանյալի օգտին և նրա դեմ առկա ապացույցների բացահայտման գործում²²: Դատավորի դերը զգալի փոփոխության է ենթարկվում նաև այն դեպքում, երբ դատական քննության մեջ կարևոր

գործունեությունը: Հասարակական անվտանգությունը և ոստիկանական գործառնությունների կատարումը», աղբյուրը՝ *Արդարադատության համակարգի գնահատման ձեռնարկ*, Նյու Յորք, 2006 թ., էջ 13], տե՛ս նաև UNODC, “Policing. Crime Investigation”, in: *Criminal Justice Assessment Toolkit*, New York, 2006, p. 1 [ՄԱԿԹՀՊԳ, «Ոստիկանական գործունեությունը: Հանցագործությունների քննությունը», աղբյուրը՝ *Արդարադատության համակարգի գնահատման ձեռնարկ*, Նյու Յորք, 2006 թ., էջ 1], և UNODC, “Access to Justice. The Prosecution Service”, in: *Criminal Justice Assessment Toolkit*, New York, 2006, p. 7 [ՄԱԿԹՀՊԳ, «Արդարադատության հասանելիությունը: Դատախազությունը», աղբյուրը՝ *Արդարադատության համակարգի գնահատման ձեռնարկ*, Նյու Յորք, 2006 թ., էջ 7]:

²¹ Հանեմատ. Aromaa, Kauko et al, *Crime and Criminal Justice in Europe and North America 1995-1997: Report on the Sixth United Nations Survey on Crime Trends and Criminal Justice Systems*, European Institute for Crime Prevention and Control, affiliated with the United Nations (HEUNI), Publication Series No. 40, Helsinki 2003, p. 15 [Արոմաա, Կաուկո և այլք, *Հանցավորությունը և քրեական արդարադատությունը Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում 1995-1997 թթ.: Հանցավորության միտումների և քրեական արդարադատության համակարգերի գործունեության վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության վեցերորդ հետազոտության զեկույցը*, Հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի եվրոպական ինստիտուտ՝ Միավորված ազգերի կազմակերպությանն առընթեր, իրատարակությունների թիվ 40 շարք, Հելսինկի, 2003 թ., էջ 15], տե՛ս նաև Kuhn, *Public Sector Performance* (op.cit. note 18), p. 190 [Քուհրի, *Պետական հատվածի աշխատանքը*: (տե՛ս էջատակի 18-րդ ծանոթագրությունը), էջ 190]:

²² Նույն տեղը:

դեր է վերապահվում երդվյալ ատենակալներին կամ ժողովրդական դատավորներին²³:

Իրավական տարբեր համակարգերի առանձնահատկություններից հարկ է հիշատակել նաև այն, որ որոշ պետություններում սովորութային իրավունքը և կրոնական կանոնները կամ իրավանորմերը (օրինակ՝ իսլամական/շարիաթի կանոնները) կարող են որոշակիորեն լրացնել ֆորմալ իրավական դաշտը: Այնուամենայնիվ, կան դեպքեր, երբ սովորութային իրավունքը ոչ թե լրացնում է ֆորմալ իրավական դաշտը, այլ՝ գործում ֆորմալ դաշտին զուգահեռ կամ՝ անգամ ֆորմալ դաշտի հետ հակադրության մեջ:

Քրեական արդարադատության բարեփոխումներին աջակցող կառույցները պետք է հաշվի առնեն, որ քրեական արդարադատության յուրաքանչյուր համակարգ յուրատիպ է և պայմանավորված է տվյալ պետության առանձնահատուկ պատմությամբ և նախկինում ներմուծված համակարգերի թողած հետքերով:

Հաշվի առնելով ԵԱՀԿ տարածաշրջանում իրավական տարբեր համակարգերի և ավանդույթների գոյությունը՝ ԶԱՀ-ի և քրեական արդարադատության գործընթացի արդյունավետության և գործունակության բարձրացման մասին սույն ուղեցույցի մեջ ներկայացված իրավական դրույթները կարելի է որպես օրինակ կիրառել պետության օրենքների և ընթացակարգերի փոփոխություններ նախաձեռնելիս, իսկ եթե կոնկրետ պետության իրավական համակարգում դրանց տեղայնացումը չի համարվի նպատակահարմար, ապա՝ դրանցով «ոգեշնչել» բաղադրականությունը որոշող անձանց և պրակտիկ աշխատողներին, որպեսզի նրանք փոփոխեն իրավական նորմերը:

2.4. ԶԱՀ-ի նպատակները և ուղղորդիչ սկզբունքները

ԶԱՀ-ի վերջնանպատակն է ողջ բնակչության համար ապահովել անվտանգության և արդարադատության արդյունավետ և գործունակ համակարգի թափանցիկ և հաշվետու գործելակերպը՝ իրավունքի գե-

²³ Համեմատ. Kuhry, *Public Sector Performance* (op.cit. note 18), стр. 190 [Քուրիի, *Պետական հատվածի աշխատանքը* (տե՛ս էջատակի 18-րդ ծանոթագրությունը), էջ 190]:

րակայության և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման պայմաններում²⁴:

ԶԱԲ-ի մասնավոր նպատակը պետք է լինի բարեխիղճ կառավարման հետևյալ սկզբունքներին համապատասխանող, ժողովրդավարական ԶԱԲ-ի ձևավորումը²⁵.

- ԶԱԲ-ի կառույցները պետք է գործեն միջազգային իրավունքի նորմերին և սահմանադրական իրավունքի ներպետական նորմերին համապատասխան:
- ԶԱԲ-ի կառույցները պետք է հաշվետու լինեն օրենքի և հանրության առջև: Նրանց գործունեությունը պետք է վերահսկվի դատական իշխանության և հանրության՝ ներառյալ ընտրված քաղաքացիական իշխանությունների և քաղաքացիական հասարակության կողմից: ԶԱԲ-ի կառույցների պլանավորման, բյուջետավորման և գործառնությունների մասին տեղեկությունները պետք է հասանելի լինեն կառավարության ներսում և հանրության համար: Պետք է որդեգրված լինի բոլոր ռեսուրսների կառավարման համապարփակ և կանոնակարգված մոտեցում:
- Ոստիկանությունը և իրավապահ այլ մարմինները պետք է օրենքը կիրարկեն առանց խտրականության և համապատասխան գործողություններ ձեռնարկեն օրենքի ենթադրյալ խախտումներ

²⁴ Համեմատ. Hartog, Merijn (ed.), *Security Sector Reform in Central Asia: Exploring Needs and Possibilities*, Centre for European Security Studies, Groningen 2010, p. 8 [Մերին Հարթոգ (խմբ.), *Անվտանգության ոլորտի բարեփոխումները Կենտրոնական Ասիայում. կարիքների և հնարավորությունների ուսումնասիրությունը*, Անվտանգության ոլորտում եվրոպական հետազոտությունների կենտրոն, Գրոնինգեն, 2010 թ., էջ 8]:

²⁵ Համեմատ. DFID, *Security Sector Reform and the Management of Military Expenditure: High Risks for Donors, High Returns for Development*, Report on an International Symposium Sponsored by the United Kingdom Department for International Development, London, February 2000, p. 46 [Միջազգային զարգացման դեպարտամենտ («DFID»), *Անվտանգության ոլորտի բարեփոխումները և ռազմական ծախսերի կառավարումը. մեծ ռիսկեր դոնորներին, մեծ օգուտներ զարգացման համար*, Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման դեպարտամենտի հովանու ներքո անցկացված միջազգային սինադոզիումի մասին զեկույց, Լոնդոն, 2000 թվականի փետրվար, էջ 46]:

Համեմատ. United Nations, *Guidance Note of the Secretary-General. United Nations Approach to Rule of Law Assistance*, New York, April 2008, pp. 6f [Միավորված ազգերի կազմակերպություն, *Ուղեցույց-հուշագիր Գլխավոր քարտուղարի համար. ՄԱԿ-ի մոտեցումն օրինականության ապահովման ոլորտում աջակցության ցուցաբերմանը*, Նյու Յորք, 2008 թվականի ապրիլ, էջ 6 և շարունակ.], և

Համեմատ. OSCE, *Guidebook on Democratic Policing by the Senior Police Adviser to the OSCE Secretary General*, SPMU Publication Series Vol. 1, 2nd Edition, Vienna, May 2008, p. 15 [ԵԱՀԿ, *Ոստիկանական գործունեության ժողովրդավարական հիմունքների մասին ձեռնարկ, հեղինակ՝ ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի ավագ խորհրդական ոստիկանության հարցերով*, ՈԳՌՀՍ-ի իրատարակությունների շարք, հատոր 1, 2-րդ իրատարակություն, Վիեննա, 2008 թվականի մայիս, էջ 15]:

րի դեպքում: Նրանք պետք է պաշտպանեն անհատների և համայնքների հիմնարար իրավունքները և ազատությունները, կանխեն և հայտնաբերեն հանցագործությունները, նվազեցնեն վախը և աջակցություն ու ծառայություններ տրամադրեն հանրությանը:

- Դատական իշխանությունը պետք է գործի որպես անկախ համակարգ, որն ի վիճակի է դատական որոշումները և այլ ակտերը կայացնելիս հավասար և անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերելու իր իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց նկատմամբ՝ գերծ մնալով արտաքին ազդեցությունից և միջամտությունից:
- Ուղղիչ ծառայությունները պետք է ապահովեն բանտային և վերականգնողական ապահով, անվտանգ և մարդավայել համակարգի գործունեությունը՝ ներառյալ ազատագրկման այլընտրանքները և արտադատական միջոցները:
- ԶԱՅ-ի կառույցներում աշխատող անձինք պետք է վերապատրաստվեն այնպես, որ իրենց պարտականությունները կատարեն արհեստավարժ կերպով՝ պատշաճ դատավարության սկզբունքների և մարդու իրավունքների պահանջների պահպանմամբ, մասնագիտության և էթիկայի կանոնագրքերին և ուղեկիշներին համապատասխան:
- Անհատների համար պետք է երաշխավորված լինեն պատշաճ դատավարությունը, իրավաբանական ներկայացուցչությունը և հավասար վերաբերմունքը, ընդ որում՝ իրավական վարույթները պետք է լինեն կանխատեսելի, արդար և թափանցիկ: Իրավաբանական և մերձիրավաբանական աջակցությունը պետք է հասանելի լինի նրանց համար, ովքեր ի վիճակի չեն վճարելու դրա դիմաց:

Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար պետք է կիրառել բարեփոխումների հետևյալ սկզբունքները, որոնք համահունչ և փոխլրացնող են Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի կողմից 2008 թվականին ընդունված *Գլխավոր քարտուղարի ուղեցույց-հուշագրին* («ՄԱԿ-ի մոտեցումն օրինականության ապահովման ոլորտում աջակցության ցուցաբերմանը»)՝²⁶.

²⁶ Հանձնառ. United Nations, *United Nations Approach to Rule of Law Assistance* (op.cit. note 25), p. 1-4 [Միավորված ազգերի կազմակերպություն, *Ուղեցույց-հուշագիր Գլխավոր քարտուղարի համար. ՄԱԿ-ի մոտեցումն օրինականության ապահովման*

- ԶԱՅԲ-ի հիմքում պետք է ընկած լինեն միջազգային նորմերը և չափանիշները: ԶԱՅԲ-ի նորմատիվային հիմքը պետք է կազմեն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը, մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավական նորմերը, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, քրեական իրավունքի միջազգային նորմերը և փախստականներին վերաբերող միջազգային իրավանորմերը:
- Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան համաձայնագրերին, հռչակագրերին, ուղեւիշներին և սկզբունքների հավաքածուներին համահունչ՝ ԶԱՅԲ-ին ԵԱՀԿ այցակցությունը պետք է կողմնորոշվի նաև ԵԱՀԿ Յեյխնկյան ակտով, Կոպենհագենյան փաստաթղթով և ոստիկանական գործառույթներին առնչվող գործունեության ոլորտում ԵԱՀԿ տարաբնույթ որոշումներով սահմանված նորմերով, սկզբունքներով և չափանիշներով²⁷:
- Գենդերային հավասարությունը և խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը մարդու իրավունքների հիմնարար բաղադրիչներից են: Ուստի դրանք պետք է երաշխավորված լինեն բարեփոխումների գործընթացում:
- ԶԱՅ-ի հաշվետվողականությունը և թափանցիկությունը, ինչպես նաև ԶԱՅ-ի նկատմամբ հանրային վերահսկողությունը նույնպես իրավունքի գերակայության և բարեխիղճ կառավարման բաղադրիչներ են, որոնք պետք է ապահովված լինեն բարեփոխումների գործընթացում:
- ԶԱՅԲ-ում պետք է հաշվի առնել յուրաքանչյուր պետության սոցիալ-բաղաբանական համատեքստը և անվտանգության ու արդարադատության առանձնահատուկ կարիքները, իրավական համակարգի բնույթը և վիճակը, ինչպես նաև համակարգի հիմքում ընկած ավանդույթները և հաստատությունները:

ոլորտում այցակցության ցուցաբերմանը (տե՛ս էջատակի 25-րդ ծանոթագրությունը), էջեր 1-4):

²⁷ Համեմատ. OSCE, *OSCE Strategic Framework for Police-Related Activities*, Permanent Council Decision No. 1049, 922nd Plenary Meeting, Vienna, 26 July 2012, Para. 10 [ԵԱՀԿ, ԵԱՀԿ ռազմավարական հայեցակարգը ոստիկանական գործառույթներին առնչվող գործունեության ոլորտում, Մշտական խորհրդի թիվ 1049 որոշումը, 922-րդ լիազումար նիստ, Վիեննա, 26-ը հուլիսի, 2012 թ., պարբ. 10]: ԵԱՀԿ տարածաշրջանում ՔԱՀ-ում իրականացվող աշխատանքները կարգավորող միջազգային հիմնական կոնվենցիաների, ուղեւիշների և հանձնառությունների ցանկի համար տե՛ս Հավելված 1:

- ԶԱՐԲ-ի մոտեցումը պետք է «մարդակենտրոն» լինի, տեղացիների կողմից համարվի «իրենց սեփականը» և ստանա օժանդակություն, որպեսզի համարժեքորեն արձագանքի շահառուների կարիքներին և մնայուն դառնա: Բարեփոխումների գործընթացներով հետաքրքրված ազգային շահակիցների թվում կարևոր դերակատարում ունի քաղաքացիական հասարակությունը: Ավելին, բարեփոխումներին «տեր կանգնելու» համար պետք է երաշխավորել հասարակության բոլոր հատվածների իրավունքները:
- Բարեփոխումների ձեռքբերումները կարելի է դարձնել էլ ավելի մնայուն և տևական՝ զարգացնելով մարդկանց կարողությունները և կատարելագործելով բյուջետային գործընթացները և ֆինանսների կառավարումը²⁸:
- ԶԱՐ-ի բարեփոխումների համար անհրաժեշտ են կառույցներով և գործընթացներով կողմնորոշվող մոտեցումներ: Կառույցներով կողմնորոշվող բարեփոխումների մեջ կարևորվում են օրենքների, քաղաքականության և իրավական կարգավորումների փոփոխությունները, վերապատրաստումները, ենթակառուցվածքի զարգացումը և նյութական օժանդակության ցուցաբերումը: Գործընթացներով կողմնորոշվող բարեփոխումներն ուղղված են քրեական արդարադատության կառույցների, վերահսկող կառույցների, քրեական արդարադատության ֆորմալ և ոչ պետական համակարգերի արդյունավետության և նրանց միջև աշխատանքային հարաբերությունների, ինչպես նաև՝ քրեական արդարադատության սուբյեկտների և հանրության միջև հարաբերությունների բարելավմանը: Բարեփոխումների ձեռքբերումները մնայուն դարձնելու համար անհրաժեշտ է հավասարակշռել կառույցներով կողմնորոշվող մոտեցումները և գործընթացներով կողմնորոշվող մոտեցումները²⁹:
- ԶԱՐԲ-ն համապարփակ դարձնելու համար հաճախ պահանջվում է ներգրավել միջազգային և ազգային բազմաթիվ սուբյեկտ-

²⁸ Համեմատ. OECD, *OECD DAC Handbook on Security System Reform. Supporting Security and Justice*, Paris, 2007, pp. 63-67 [ՏՀԶԿ, ՏՀԶԿ ԶԱՎ-ի ուղեցույցն անվտանգության ոլորտի բարեփոխումների համար: Օժանդակությունն անվտանգության և արդարադատության ոլորտներին, Փարիզ 2007 թ., էջեր 63-67]:

²⁹ Համեմատ. World Bank, *World Development Report 2011, Conflict, Security, and Development*, Washington, DC 2011, p. 5 [Համաշխարհային բանկ, 2011 թ. գեկույցը համաշխարհային զարգացման մասին. հակամարտությունները, անվտանգությունը և զարգացումը, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 2011 թ., էջ 5]:

ների, համակարգել նրանց աշխատանքները և համապարփակ ռազմավարություններ մշակել՝ աջակցության ծրագրերը փոխլրացնող, համընթաց, արդյունավետ, գործունակ և մնայուն դարձնելու համար:

Հաջորդ գլուխներում հաշվի են առնվելու ԶԱՀԲ-ի՝ վերը նշված բոլոր նպատակները և ուղղորդիչ սկզբունքները:

III. Զրեական արդարադատության համակարգի ամբողջական գնահատումը

ԶԱՅԲ-ի շրջանակում ոստիկանության ամբողջական բարեփոխումներ իրականացնելու համար անհրաժեշտ է նախապես համակողմանիորեն վերլուծել բարեփոխումների ազգային համատեքստը՝ ներառյալ իրավական դաշտը և համապատասխան կառույցները, ներգրավված սուբյեկտներին և նրանց գործունեության արդյունավետությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է հիմնվել անվտանգության և արդարադատության ոլորտներում հանրության կարիքների ամբողջական վերլուծության վրա, քանի որ ԶԱՅԲ-ի բուն ինդիքը ԶԱՅ-ում հանրությանը մատուցվող ծառայությունների բարելավումն է: Հանրության կարիքները հաշվի առնելու միջոցով է միայն հնարավոր տեղացիների լայն շրջանակներում ապահովել «սեփականատիրոջ» հանձնառու և հոգատար վերաբերմունքը բարեփոխումների նկատմամբ:

Փոփոխությունների ելակետերը և հնարավորությունները, բարեփոխումների գործընթացում հնարավոր արգելքները, խոչընդոտները և դրանք ստեղծողների ինքնությունը պարզելու համար նաև անհրաժեշտ է մանրակրկիտ վերլուծության ենթարկել սոցիալ-տնտեսական համատեքստը: Հաշվի առնելով, որ ԶԱՅ-ի բարեփոխումները կարող են ազդել ուժերի հարաբերակցության վրա, հատկապես՝ հակամարտություններ վերապարժ հասարակություններում, շատ կարևոր է գնահատել միջազգային աջակցության հնարավոր ազդեցությունը հակամարտությունների ընթացքի վրա³⁰:

Ելակետային գնահատման շրջանակում հավաքված քանակական և որակական տվյալները պետք է օգտագործել նաև հետագայում գործառնական ծրագրի այն հենանիշները և չափանիշները մշակելիս, որոնցով գնահատվելու են ԶԱՅԲ-ի նախաձեռնությունների արդյունավետությունը և/կամ ազդեցությունը, և հենանիշների կատարման հիման վրա պատրաստվելու են ծրագրային աջակցության դադարեցման՝ «ելքի» ռազմավարությունները (տե՛ս նաև IV գլուխը):

³⁰ Հանձնառու. OECD, *OECD DAC Handbook on Security System Reform* (op.cit. note 28), p. 41 [ՏՀԶԿ, ՏՀԶԿ ԶԱՀ-ի ուղեցույցն անվտանգության ոլորտի բարեփոխումների համար (տե՛ս էջատակի 28-րդ ծանոթագրությունը), էջ 41]:

ՏՀԶԿ ՉԱՅ-ը տարբերակում է գնահատման չորս տեսակներ՝ կախված տեղի իրավիճակի առանձնահատկություններից և ժամանակի և ռեսուրսների առկայությունից³¹ .

- Նախնական ոչ ֆորմալ վերլուծություն, ըստ որի հնարավոր է ընդհանուր պատկերացում կազմել տեղի իրավիճակի և քաղաքական միջավայրի մասին, որը թույլ կտա որոշում կայացնել ԶԱՅԲ-ում ներգրավվելու նպատակահարմարության մասին,
- սկզբնական շրջանակային ուսումնասիրություն, որով կպարզվեն ԶԱՅԲ-ի ուղղությամբ ներկայումս իրականացվող աշխատանքները՝ ներառյալ հիմնական շահակիցները և սուբյեկտները, նրանց ձեռքբերումները և նրանց առջև ծառայած մարտահրավերները, և կստացվեն նոր նախաձեռնություններ իրականացնելու նպատակահարմարության և հնարավորությունների առկայության մասին տեղեկություններ,
- ամբողջական գնահատում՝ ներառյալ ԶԱՅԲ-ի համատեքստի համապարփակ գնահատումը՝ հաշվի առնելով նախնական ոչ ֆորմալ վերլուծությունից և շրջանակային ուսումնասիրությունից հետո բարեփոխումների համատեքստում տեղի ունեցած զարգացումները,
- ոլորտային կամ առանձին խնդիրներին նվիրված գնահատումներ, որոնց նպատակն է առավել խորացված վերլուծության ենթարկել ԶԱՅ-ի կոնկրետ հատվածները, որոնցում առաջնահերթության կարգով անհրաժեշտ են համարվել բարեփոխումները կամ անվտանգության և ապահովության կոնկրետ հիմնախնդիրները՝ ԶԱՅ-ի համապատասխան ոլորտներում անհրաժեշտ բարեփոխումները պարզելու համար:

ՏՀԶԿ ՉԱՅ-ը գտնում է, որ տարբեր գնահատումները հերթականությամբ իրականացնելու միջոցով հնարավոր է ստանալ ԶԱՅԲ-ի համապարփակ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ լիարժեք տեղեկություններ:

Գնահատման տարբեր քայլերը՝ ներառյալ նախնական վերլուծության և սկզբնական ուսումնասիրության փուլերը, մանրամասնորեն նկարագրվել են ՏՀԶԿ-ի, ՉՈՒԺԿ-ի Անվտանգության ոլորտի միջազգային

³¹ Նույն տեղը, էջեր 45-48:

խորհրդատվական թիմի («International Security Sector Advisory Team of DCAF»), Շվեդիայի Ֆոլկե Բերնադոտի ակադեմիայի և այլ կառույցների կողմից³²: Ուստի սույն ուղեցույցը ուշադրությունը կենտրոնացնում է խորացված գնահատման փուլի հիմնական առանձնահատկությունների վրա՝ հատուկ ուշադրություն դարձնելով գնահատման այն հարցերին, որոնք կարևորվում են ԶԱՀ-ի այլ կառույցների և ոչ պետական սուբյեկտների հետ ուստիականության հարաբերությունների և շփումների ամբողջական վերլուծության տեսանկյունից:

3.1. Գնահատումների պլանավորումը

3.1.1. Գնահատող թիմի կազմը

ԶԱՀ-ի շրջանակում ուստիականության բարեփոխումների ամբողջական մոտեցում որդեգրելու համար բնականաբար անհրաժեշտ է ԶԱՀ-ի տարբեր ոլորտների, ինչպես նաև հասարակագիտության, մենեջմենթի, ֆինանսների և պետական կառավարման ոլորտների փորձագետներից բաղկացած՝ միջմասնագիտական գնահատող թիմ: Ավելին, գնահատող թիմը պետք է ունենա լեզվական հմտություններ, որպեսզի կարողանա հաղորդակցվել ազգային շահակիցների՝ ներառյալ քաղաքացիական հասարակության լայն շրջանակների հետ: Թիմի ղեկավարը պետք է լինի քրեական արդարադատության ավագ փորձագետ, ով կվայելի տվյալ պետության համապատասխան ոլորտների բարձրաստիճան պաշտոնյաների հարգանքը և վստահությունը: Տեղացիների շրջանում «սեփականատիրոջ» հանձնառու և հոգատար վերաբերմունքն ապահովելու համար ցանկալի է, որ թիմի ղեկավարը լինի որակավորված փորձագետ տվյալ պետությունից:

³² Տե՛ս, օրինակ, OECD, *OECD DAC Handbook on Security System Reform* (op.cit. note 28), pp. 42-52 [ՏՀԶԿ, ՏՀԶԿ ԶԱՀ-ի ուղեցույցն անվտանգության ոլորտի բարեփոխումների համար (տե՛ս էջատակի 28-րդ ծանոթագրությունը), էջեր 42-52], DCAF, *Operational Guidance Note: Processing a Security & Justice Assessment Proposal*, The International Security Sector Advisory Team (ISSAT), ISSAT Operational Guidance Notes (OGNs), Supporting the International Community's SSR Capacity, Geneva, 2010 [ԶՈՒԺԿ, *Գործառնական ուղեցույց-հուշագիր. անվտանգության և արդարադատության գնահատման արդյունքների հիման վրա միջոցառումների իրականացումը*, Անվտանգության ոլորտի միջազգային խորհրդատվական թիմ («ԱՈՍԽԹ»), ԱՈՍԽԹ-ի գործառնական ուղեցույց-հուշագրերն ինտերնետում, ԱՈԲ-ի բարեփոխումների միջազգային հանրության ներուժի զարգացման օժանդակությունը, ժնև, 2010 թ.], և Folke Bernadotte Academy/Swedish Contact Group, *Security Sector Reform. Assessment Framework*, Stockholm [Ֆոլկե Բերնադոտի ակադեմիա / Շվեդիայի կրոնտակտային խումբ, *Անվտանգության ոլորտի բարեփոխումները: Գնահատման հայեցակարգը*, Ստոկհոլմ]:

Հաշվի առնելով ամբողջական ԶԱՐԲ-ի տիրույթում գնահատվող ու լորտների լայն շրջանակը և գնահատման համար փորձագետների միջմասնագիտական մեծ թիվեր ունենալու անհրաժեշտությունը՝ հարկ է դիտարկել բարեփոխումների ազգային և միջազգային տարբեր շահակիցների ներկայացուցիչներից բաղկացած՝ գնահատման համատեղ թիվերով գործելու նպատակահարմարությունը: Դա կարող է «անվտանգության և արդարադատության առանձնահատուկ մարտահրավերների և համարժեք արձագանքի վերաբերյալ միասնական պատկերացում կազմելու և համագործակցությունը խորացնելու անկրկնելի հնարավորություն» ընձեռել³³: Գնահատման համատեղ թիվերի աշխատանքը, սակայն, կարող են խոչընդոտել տարբեր անդամների շահերը, քանզի նրանց միջև կարող են լինել անհամաձայնություններ, իսկ նրանց լիազորությունները կարող են փոխլրացնող չլինել:

3.1.2. Գնահատման թիրախային խմբերը

Անվտանգության և արդարադատության ծառայություններ մատուցող պետական կառույցները

ԶԱՐԲ-ի շրջանակում ոստիկանության բարեփոխումների ամբողջական մոտեցում որդեգրելու համար անհրաժեշտ է խորհրդակցել ոչ միայն իրավապահ մարմինների, այլև ԶԱՐ-ի այլ կարևոր կառույցների հետ, որոնք քրեական արդարադատության գործընթացում փոխկապակցված են իրավապահ մարմինների հետ՝ ներառյալ փաստաբանները և նրանց միությունները, դատախազությունը, դատարանները և բանտային կառույցները: Ինչ վերաբերում է անվտանգության ծառայություններ մատուցող կառույցներին, ապա կարող են անհրաժեշտ լինել խորհրդակցություններ նաև բանակի և սահմանապահ ծառայությունների հետ³⁴:

Անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորույթային/ոչ պետական կառույցները

Այն պետություններում, որտեղ նրանք կարևոր դեր են կատարում անվտանգության և արդարադատության ծառայությունների մատուց-

³³ DCAF, *Processing a Security & Justice Assessment Proposal* (op.cit. note 32) [ԶՈՒԺԿ, *Գործառնական ուղեցույց-հուշագիր. անվտանգության և արդարադատության գնահատման արդյունքների հիման վրա միջոցառումների իրականացումը* (տե՛ս էջատակի 32-րդ ծանոթագրությունը)]:

³⁴ Համեմատ. OECD, *OECD DAC Handbook on Security System Reform* (op.cit. note 28), p. 48 [ՏՀԶԿ, *ՏՀԶԿ ԶԱՀ-ի ուղեցույցն անվտանգության ոլորտի բարեփոխումների համար* (տե՛ս էջատակի 28-րդ ծանոթագրությունը), էջ 48]:

ման գործում, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորութային և ոչ պետական կառույցները նույնպես պետք է գնահատվեն: Դրանց թվում կարող են լինել, օրինակ, «աչալուրջ բնակիչների խմբերը», «թաղային պահակային դիտարկման» խմբերը և անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայություններ մատուցող ընկերությունները, ինչպես նաև սովորույթի դատարանները, վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները և մերձիրավաբանական ծառայությունները³⁵:

Կառավարական և խորհրդարանական կառույցները

Ի լրումն ներքին գործերի և արդարադատության նախարարությունների, որոնք ուղղակիորեն մասնակցում են ԶԱՀ-ի պետական կառավարման գործընթացին, ամբողջական գնահատումը պետք է ընդգրկի նաև կարևոր այլ նախարարություններ, ինչպիսիք են պաշտպանության, ֆինանսների, առողջապահության և արտաքին գործերի նախարարությունները: Ավելին, պետք է հարցազրույցներ անցկացնել ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակում օրենսդրությունը ձևավորող և քաղաքականությունը մշակող կարևոր հաստատությունների, պետական վերահսկողություն իրականացնող և վարչարարական կառույցների՝ ներառյալ խորհրդարանների, խորհրդարանական հանձնաժողովների, քաղաքական կուսակցությունների, առանձին քաղաքական գործիչների և վարչական կառույցների հետ:

Քաղաքացիական հասարակությունը

Ինչպես նշվեց, քաղաքացիական հասարակության սուբյեկտներն առանցքային դերակատարում ունեն անվտանգության և արդարադատության ոլորտներում հանրության կարիքների, ինչպես նաև ԶԱՀ-ի աշխատանքի մասին հանրության պատկերացումների մասին լիարժեքորեն տեղեկանալու, բարեփոխումների նկատմամբ տեղացիների շրջանում «սեփականատիրոջ» հանձնառու և հոգատար վերաբերմունքն ապահովելու և բարեփոխումների արդյունքները մնայուն դարձնելու հարցերում: Քաղաքացիական հասարակությունը կարող է նաև օժանդակել արդարադատության և անվտանգության ոլորտների սովորութային և ոչ պետական կառույցների մասին տեղեկությունների ստացմանը: Ուստի պետք է քննարկումներ կազմակերպել հանրության ամենատարբեր խմբերի շահերը ներկայացնող կառույցների և

³⁵ Նույն տեղը:

սուբյեկտների լայն շրջանակի, մասնավորապես՝ փոքրամասնությունների կամ մարգինալացված խմբերի և այլ խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ: Չնահատման գենդերային բաղադրիչը պետք է անդրադառնա հատկապես անվտանգության և արդարադատության ոլորտներում կանանց և աղքիկների, ինչպես նաև մարգինալացված տղաների և տղամարդկանց կարիքներին: Քաղաքացիական հասարակության սուբյեկտների շարքում պետք է լինեն նաև հանրային վերահսկողություն իրականացնող կառույցները, կրոնական կազմակերպությունները, գիտական հաստատությունները, մասնավոր բիզնեսի հատվածը և զանգվածային լրատվամիջոցները³⁶:

Միջազգային այլ կառույցները

Իրականացվող ԶԱՀԲ աշխատանքների օգտավետությունը որոշելու և միջազգային այլ կառույցների կողմից կատարվող աշխատանքները կրկնելուց խուսափելու համար պետք է մանրամասնորեն վերլուծել միջազգային այլ կառույցների կողմից ԶԱՀԲ-ի ուղղությամբ կատարվող աշխատանքները: Այդպես հնարավոր կլինի նաև կանխել բարեփոխումների հակադիր և անզամ իրարամերժ հայեցակարգերի ներկայացումը, որը կարող էր շփոթություն առաջացնել աջակցությունը ստացողների շրջանում: Չնահատման հաջորդ նպատակը պետք է լինի պարզել, թե ինչպես կարելի է համակարգել միջազգային աջակցությունը, ինչպիսի հաջորդական քայլերով տրամադրել այն, անզամ ինչպես բազմապատկել արդյունքը և երաշխավորել ռեսուրսների տնտեսումը: Հաշվի առնելով ողջ ԶԱՀ-ը բարեփոխելու համար անհրաժեշտ վիթխարի ջանքերը՝ միջազգային որևէ կազմակերպություն դժվար թե միայնակ կարողանա ավարտին հասցնել այդ աշխատանքը: Ցանկալի է, որ հնարավոր միջազգային գործընկերները զնահատումն իրականացնեն համատեղ կերպով³⁷:

Վերոհիշյալ բոլոր թիրախային խմբերից կարևոր է խորհրդակցել կանանց և փոքրամասնությունների և մարգինալացված խմբերի ներկայացուցիչների հետ, եթե այդպիսիք կան, որպեսզի հնարավոր լինի տարաբնույթ շահակիցներից ստանալ կարծիքների և տեսակետների հնարավորինս լայն շրջանակ: Հակառակ պարագայում, խոցելի և մարգինալացված խմբերի տեսակետները կարող են անտեսվել կամ չնկատվել:

³⁶ Նույն տեղը, էջ 48 և շարունակ.:

³⁷ Նույն տեղը, էջ 49:

3.1.3. *Գնահատման կարևորագույն ոլորտները*

Սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական իրավիճակը

Սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական իրավիճակի վերլուծությամբ հնարավոր է կազմել պետության ընդհանուր բնութագիրը, որը կներառի, մասնավորապես, անվտանգության իրավիճակը, բնակչության էթնիկ կազմը և ժողովրդագրությունը, քաղաքացիական հասարակության դերակատարումը, քաղաքական համակարգը և ԶԱՀ-ի կառավարումը, պետության և ԶԱՀ-ի կառույցների լեգիտիմությունը: Բացի դրանից՝ հետհակամարտային իրավիճակներում պետք է վերլուծել հակամարտության պատմությունը՝ ներառյալ լարվածության խորքային պատճառները և բռնի ընդհարումների հանգեցրած գործոնները՝ առաձևահահատուկ ուշադրություն դարձնելով հակամարտության մեջ ԶԱՀ-ի ունեցած դերին: Հետհակամարտային իրավիճակներում գնահատումը թույլ կտա պարզել, թե ինչպես կարող է ԶԱՀ-ը նպաստել ԶԱՀ-ի և բնակչության միջև կամ ԶԱՀ-ի ներսում լարվածության սրացումների կանխարգելմանը՝ հակամարտությունից հետո իրականացվող վերականգնման աշխատանքների արդյունքներն անշրջելի դարձնելու նպատակով: Այս մոտեցման համար անհրաժեշտ է պարզել, թե ովքեր կարող են խոչընդոտել բարեփոխումների գործընթացը, և ինչով շահագրգռել նրանց, որպեսզի ձեռնպահ մնան բարեփոխումներն արգելակելուց³⁸: Գնահատման այս ոլորտի հարցերի մի քանի օրինակներ գետնիցված են *ՏՀԶԿ ՉԱՀ-ի անվտանգության ոլորտի բարեփոխումների ուղեցույցում* (52-րդ էջից սկսած):

Անվտանգության և արդարադատության ոլորտներում հանրության կարիքները

Անվտանգության և արդարադատության ոլորտներում հանրության կարիքների վերլուծությունը թույլ կտա պարզել այդ ոլորտներում հանրության՝ ներառյալ մարզինալացված խմբերի հիմնական մտահոգությունները և ԶԱՀ-ի կառույցների աշխատանքի կամ ԶԱՀ-ի հիմնական թերացումների մասին նրանց պատկերացումները, որի արդյունքում պարզ կդառնան բարեփոխումների կարիքները և բարեփոխումների հնարավոր ելակետերը և ուղղությունները³⁹ Անվտանգության և արդարադատության ծառայություններ մատուցող կոնկրետ սուբյեկտներին դիմելու կամ չդիմելու՝ բնակչության պատրաստակամության վեր-

³⁸ Նույն տեղը, էջ 50:

³⁹ Նույն տեղը, էջ 51:

լուծությամբ հնարավոր կլինի պարզել, թե ԶԱՀ-ի որ ֆորմալ կառույցները և անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական որ կառույցներն են առավել կարևորվում հանրության կողմից, քանզի բարեփոխումների գործընթացում անհրաժեշտ կլինի ավելի շատ ուշադրություն դարձնել հենց նրանց: Անվտանգության և արդարադատության ծառայություններ մատուցող կոնկրետ սուբյեկտներին չդիմելու՝ հանրության որոշ խմբերի դրդապատճառների վերլուծությամբ հնարավոր է բացահայտել նաև գեների, ազգության և սոցիալական այլ գործոնների հետ կապված պատկերացումները:

ԶԱՀ-ի կառավարումը և կարողությունները

ԶԱՀ-ի կառավարման և կարողությունների վերլուծությունը պետք է անդրադառնա գործող իրավական դաշտին, քաղաքականությանը և կարգավորումներին, ինչպես նաև ԶԱՀ-ի տարբեր կառույցների կազմակերպական, կառավարչական, գործառնական և ուսուցողական կառույցներին: Վերլուծությունը պետք է անդրադառնա նաև վերահսկողության ներքին և արտաքին կառույցներին, որոնք երաշխավորում են ԶԱՀ-ի պատասխանատվությունը ԶԱՀ-ի ծառայությունները ստացող անձանց նկատմամբ:

ԶԱՀ-ի լիազորությունները սահմանող իրավական դաշտը ներառում է սահմանադրությունը, ԶԱՀ-ի կառույցների իրավասություններին վերաբերող կոնկրետ օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև քրեական օրենսգրքերը և քրեական դատավարության օրենսգրքերը: Իրավական դաշտի վերլուծությունը պետք է անդրադառնա նաև այն հարցին, թե որքանով են օրենքները, այլ իրավական ակտերը և օրենսգրքերը համապատասխանում միջազգային կոնվենցիաներին: Իրավական դաշտի վերլուծությունը թույլ կտա ավելի լիարժեք պատկերացում կազմել ԶԱՀ-ի տարբեր կառույցների գործառնությունների, պարտականությունների, պարտավորությունների և իրավունքների մասին:

Քաղաքականության և կարգավորումների վերլուծությամբ կպարզվի, թե գործառնությունները, պարտականությունները, պարտավորությունները և իրավունքներն ինչպես են կյանքի կոչվում ԶԱՀ-ի ներսում՝ ներառյալ քրեական արդարադատության գործընթացում ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև համագործակցության կարգավորման մեխանիզմը:

ԶԱՀ-ի կառույցների վերլուծությունը պետք է վերաբերի ԶԱՀ-ի տարբեր կառույցների կառուցվածքին, չափին, կադրային, ֆիզիկական և

Ֆինանսական ռեսուրսներին, ինչպես նաև հաղորդակցության օղակներին և հրամանատարական հսկողության շղթաներին:

Հաշվի առնելով ԶԱՀ-ի կառույցներին և սուբյեկտներին վերապահված՝ հարկադրանքի լիազորությունները՝ հույժ կարևոր է ԶԱՀ-ի աշխատանքի նկատմամբ անկախ վերահսկողությունը: Ուստի ԶԱՀ-ի գործունեության վերահսկելիությունը և հաշվետվողականությունն ապահովելու նպատակ հետապնդող՝ վերահսկողության ներքին և արտաքին կառույցների վերլուծությունը սերտորեն առնչվում է ԶԱՀ-ի կառույցների ընդհանուր վերլուծությանը:

Վերոհիշյալ տարբեր ոլորտների գնահատումների կարևոր ընդհանրությունների շարքում պետք է կարևորվի մարդու իրավունքների և գենդերային գործոնը:

Ի վերջո, ինչպես նշվել է 3.1.2. ենթագլխում, գնահատմամբ պետք է նաև «քարտեզագրել» միջազգային և ազգային այլ սուբյեկտների կողմից ԶԱՀ-ի ուղղությամբ իրականացվող ծրագրերը, ինչպես նաև ԶԱՀ-ի հետ հնարավոր առնչություն ունեցող և տվյալ պետության տարածքում իրականացվող՝ քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացման այլ ծրագրերը: Դա թույլ կտա ապահովել բարեփոխումների տարբեր ծրագրերի փոխլրացնող ազդեցությունը և ձեռքբերումների անշրջելիությունը:

3.1.4. Գնահատման մեթոդաբանությունը

Գրասենյակային ուսումնասիրությունները

Գնահատողական հետազոտություններին և հարցազրույցներին նախապատրաստվելու համար անհրաժեշտ է նախևառաջ գրասենյակային համապարփակ ուսումնասիրություն իրականացնել և ընդհանուր բնույթի տեղեկություններ ստանալ գնահատման տարբեր ոլորտների և ուղղությունների վերաբերյալ: Գրասենյակային ուսումնասիրության հիմքում դրվելու է տարաբնույթ բաց աղբյուրների վերլուծությունը, իսկ հնարավորության դեպքում՝ նաև կառավարության գաղտնի տվյալները:

Վերլուծության ենթակա փաստաթղթերից են, ի թիվս այլոց, պետության սահմանադրությունը, ոստիկանության մասին օրենքները և այլ իրավական ակտերը, քրեական օրենսգրքերը և քրեական դատավարության օրենսգրքերը, ԶԱՀ-ի ազգային ռազմավարությունները, ԶԱՀ-ի տարբեր կառույցների ազգային ռազմավարությունները, համակար-

գերի քաղաքականությունը, կանոնակարգերը և գործառնական ստանդարտ ընթացակարգերը (ԳՍԸ-ներ), կազմակերպական կառուցվածքի գծագրերը, ուսումնական ծրագրերը և ձեռնարկները, հանցավորության մասին վիճակագրական տվյալները⁴⁰, զոհայնացման ուսումնասիրությունները, բացահայտման ցուցանիշները, չբացահայտված քրեական գործերի թիվը, դատապարտման ցուցանիշները, բանտարկյալների թիվը և ոստիկանությունում ձերբակալման և նախնական կալանքի տևողությունը, բանտարկյալների թվի և քաղաքացիների ընդհանուր թվի հարաբերակցությունը, անչափահաս և կին բանտարկյալների թվի և բանտարկյալների ընդհանուր թվի հարաբերակցությունը, ոստիկանական տեսչությունների և վերահսկողական արտաքին մարմինների զեկույցները, ՀԿ-ների և դոնորական պետությունների զեկույցները, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների զեկույցները:

Հարցազրույցները և հետազոտությունները

Հարցազրույցները պետք է անցկացնել բարեփոխումների գործընթացի հիմնական շահակիցների՝ ներառյալ պետական հաստատությունները և քաղաքացիական հասարակության կառույցները ներկայացնող անհատների հետ: Հարցերը պետք է հիմնված լինեն գրասենյակային ուսումնասիրության արդյունքների վրա: Հարցերի միջոցով պետք է փորձել հաստատել նշված արդյունքները կամ պարզաբանել առկա խնդիրները: Հարցազրույցները սովորաբար անցկացվում են ազատ ոճով՝ կիսահամակարգված հարցախույզների հիման վրա: Հարցազրույցները պետք է բավականաչափ ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի ինքնաբուխ և զգայնաբար անդրադառնալ ամենահրատապ խնդիրներին և ստանալ անհրաժեշտ տեղեկությունները: Գործունեության որոշակի շրջանակի վերաբերյալ հարցազրույցներ անցկացնելը նպաստում է տեղեկությունների խաչաձև ստուգմանը և եռանկ-

⁴⁰

Հանցավորության վերաբերյալ վիճակագրական տվյալներն օգտագործելիս միշտ պետք է հաշվի առնել արժանահավատության և անաչառության հիմնախնդիրը, քանի որ տվյալները կարող են կեղծված լինել, կամ կարող է դժվար լինել դրանց ճշգրիտ մեկնաբանությունը: Օրինակ՝ հանցավորության ցածր ցուցանիշները կարող են վկայել կա՛մ հանցագործությունների սակավաթիվ լինելու մասին, կա՛մ այն մասին, որ հանրությունը չի վստահում ոստիկանությանը և որևէ իմաստ չի տեսնում ոստիկանությանը հաղորդելու մասին չսպասելով արդյունավետ արձագանք ոստիկանությունից: Վիճակագրությունը մեկնաբանելու ճշգրտության խնդրի և դժվարությունների պատճառով կրնկրետ աղբյուրի վիճակագրական տվյալները ցանկալի է առկայության դեպքում համեմատել մեկ այլ աղբյուրի համադրելի տվյալների հետ:

յունացմանը: Ֆոկուս խմբերի հարցազրույցների միջոցով կարելի է նաև հարցեր ուղղել անձանց որոշակի խմբերին:

Մեծ ընտրանքից տեղեկություններ ստանալու համար կարելի է իրականացնել հանրային կարծիքի հետազոտություններ, որոնք առավել հաճախ կազմակերպվում են գրավոր եղանակով և համակարգված կերպով: Հանրային կարծիքի հետազոտությունների համար պետք է կազմել բնակչության տարբեր խավերի՝ ներառյալ խոցելի և մարգինալացված խմբերի ներկայացուցչական ընտրանք, որպեսզի հնարավոր լինի լիարժեք և ներկայացուցչական պատկերացում կազմել հասարակության տարբեր տեսակետների մասին: Հետազոտությունների անցկացման գործիքներից են անվտանգության տեղական ստուգումները⁴¹ և զոհայնացման հետազոտությունները⁴²:

ԶԱՀ-ի կառույցների/սուբյեկտների քարտեզագրումը

Անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցելու՝ ԶԱՀ-ի տարբեր կառույցների պարտականությունների իրավական շրջանակի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար խիստ կարևոր է պարզել տարբեր սուբյեկտների միջև առկա հարաբերությունները, ինչպես նաև դրանց վերաբերյալ գործող օրենսդրական կարգավորումները, քաղաքականությունը, կազմակերպական և գործառնական խնդիրները և վերապատրաստումները:

ԶԱՀ-ի տարբեր կառույցների պարտականությունների իրավական շրջանակը պարզելուց զատ՝ քարտեզագրումը պետք է անդրադառնա այն հարցին, թե գործնականում ով և ինչպես է փաստացի մատուցում ծառայությունները: Օրինակ, թեպետ անվտանգության ներպետական ծառայություններ մատուցելու բացառիկ լիազորությունն օրենքով պաշտոնապես վերապահված է ոստիկանությանը, անվտանգության ծառայությունները կարող են փաստացի մատուցվել «աչալուրջ բնակիչների խմբերի» կողմից այն տարածքներում, որտեղ ոստիկանությունը ներկա չէ, կամ որտեղ ոստիկանության հակազդումը շատ թույլ է: Անվտանգության և արդարադատության ծառայությունների փաստացի մատուցման և ֆորմալ կանոնների միջև առկա տարբերությունների օրինակ է այն դեպքը, երբ ոստիկանությունը ձերբակալում է են-

⁴¹ Տե՛ս European Forum for Urban Safety, *Guidance on Local Safety Audits – Compendium of International Practice*, Paris 2007 [Քաղաքների անվտանգության եվրոպական ֆորում, *Անվտանգության տեղական ստուգումների մասին ուղեցույց. միջազգային կործի օրինակների հավաքածու*, Փարիզ 2007 թ.]:

⁴² Տե՛ս UNODC/UNECE, *Manual on Victimization Surveys*, Geneva 2010 [ՄԱԿԹՀՊԳ/ՄԱԿԵՏՀ, *Չոհայնացման հետազոտությունների ձեռնարկ*, Ժնև 2010 թ.]:


թաղրյալ գողին և նրան պահում անազատության մեջ այնքան ժամանակ, քանի դեռ նա տուժողին չի փոխհատուցել վերջինիս կրած վնասը, ընդ որում՝ ոստիկանությունն այդ ընթացքում տարբեր պատճառներով, օրինակ՝ չափազանց հեռու գտնվելու պատճառով, դատախազությանը չի ներգրավում գործընթացի մեջ⁴³:

Քարտեզագրման գործընթացում ԶԱՅ-ի տարբեր սուբյեկտներից և քաղաքացիական հասարակության կառույցներից ստացված տեղեկությունները կարելի է համեմատել կազմակերպական կառուցվածքի պաշտոնական գծագրերի, ինչպես նաև համագործակցությունը կարգավորող ակտերի հետ: Արդյունքում կարելի է առաջարկություններ ներկայացնել համագործակցության բարելավման ուղիների և բարեփոխումների ելակետերի և հնարավորությունների մասին:

ՄԱԿԹՅԴԳ-ի *Քրեական արդարադատության համակարգի գնահատման ձեռնարկում* օգտակար տեղեկություններ են ներկայացված ԶԱՅ-ի տարբեր կառույցների միջև առկա համալիր փոխադարձ կապերի մասին, որոնց հիման վրա կարելի է քարտեզագրել միջուլորտային հարաբերությունները ԶԱՅ-ում (տե՛ս Գծապատկեր 1):

⁴³ Downes, Mark, *Paper for OSCE Meeting on 'Police Reform within the Reform of the Wider Criminal Justice System'*, OSCE, Vienna, September 2011, p. 3 [Մարկ Դունզ, *զեկույց ԵԱՀԿ «Ոստիկանության բարեփոխումները քրեական արդարադատության առավել ընդլայնված համակարգի բարեփոխումների շրջանակում» խորագրով ժողովի համար*, ԵԱՀԿ, Վիեննա, 2011 թվականի սեպտեմբեր, էջ 3]:

Գծապատկեր 1. Որոշումների կայացման հանգույցները քրեական արդարադատության գործընթացում



Աղբյուրը՝ ՄԱԿԹՊԳ, Ոստիկանական գործունեությունը. քրեափորձագիտական ծառայությունները և ենթակառուցվածքը, տե՛ս ՄԱԿԹՊԳ, Ջրեական արդարադատության համակարգի գնահատման ձեռնարկ, Նյու Յորք, 2010 թ., էջ 57:

Հաշվի առնելով ապագա բարեփոխումների գործընթացը՝ քարտեզագրման արդյունքում պետք է ոչ միայն պատկերել տարբեր սուբյեկտների փոխհարաբերությունների առկա վիճակը, այլ նաև արտացոլել այդ փոխհարաբերություններում հնարավոր փոփոխությունները և բարեփոխումների ծավալման ընթացքում տարբեր սուբյեկտների կողմից ստանձնվող նորանոր գործառույթները:

Ինչ վերաբերում է ԶԱՀ-ի ներսում իրականացվող վերահսկողության խնդրին, ապա քարտեզագրման հաջորդ նպատակը պետք է լինի պարզել, թե ով ում վերահսկելու իրավասություններ ունի, և թե իրավիճակը շտկելու և/կամ պատժելու ինչ մեխանիզմներ կան⁴⁴:

ԶԱՀ-ի բոլոր սուբյեկտների ու անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող բոլոր ոչ պետական կառույցների, դրանց փոխհարաբերությունների և փոխազդեցության մեխանիզմների քարտեզագրումն ավարտելուց հետո պետք է գնահատել դրանց աշխատանքի արդյունավետությունը և պարզել ենթադրյալ թեոացումների բուն պատճառները:

Չինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնկյան կենտրոնը (ՉՈՒԺԿ) խորհուրդ է տալիս ԶԱՀ-ի կառույցների և սուբյեկտների գործունեությունը վերլուծել երկու հիմնական առումներով՝ կարողությունների և բարեվարքության տեսանկյունից, հաշվի առնելով, որ կարողությունների զարգացումը մնայուն չի կարող լինել առանց հաշվետվողականության և բարեվարքության: *Բոսնիա-Հերցեգովինայում ՄԱԿ-ի առաքելությանը և Միավորված ազգերի կազմակերպության ոստիկանության հարցերով միջազգային աշխատանքային խմբին՝ ոստիկանության հարցերով իրականացված լրացուցիչ այցելության վերաբերյալ Բարձր ներկայացուցչի գրասենյակի զեկույցում*⁴⁵ ներկայացված մոդելի հիման վրա ՉՈՒԺԿ-ն այդ նպատակով մշակել է Կարողությունների և բարեվարքության հայեցակարգը (ԿԲՀ), որում կարողությունների զարգացման և բարեվարքության

⁴⁴ Նույն տեղը, էջ 4 և շարունակ.:


⁴⁵ Համեմատ. Holm, Tor Tanke/Monk, Richard/Rumin, Serge, *OHR Report on a Police-Follow-On Mission to UNMIBH and the United Nations International Police Task Force*, Sarajevo, November 2001 [Թոր Թանքե Հոլմ, Ռիչարդ Մոնք, Սերժ Ռումին, *Բարձր ներկայացուցչի գրասենյակի զեկույցը Բոսնիա-Հերցեգովինայում ՄԱԿ-ի առաքելությանը և Միավորված ազգերի կազմակերպության ոստիկանության հարցերով միջազգային աշխատանքային խմբին՝ ոստիկանության հարցերով իրականացված լրացուցիչ այցելության վերաբերյալ*, Սարաևո, 2001 թվականի նոյեմբեր]:

տեսանկյունից խմբավորված են համապատասխան հարցադրումները.

1. Հաստատության երեք կազմակերպական մակարդակները.
 - 1.1. Անհատական. կրթություն, ունակություններ,
 - 1.2. Կազմակերպական. լիազորությունների շրջանակը, ռեսուրսները, կառույցները, քաղաքականությունը և ընթացակարգերը,
 - 1.3. Արտաքին. հաստատության հարաբերություններն այլ հաստատությունների հետ:

2. Հաստատության որակի երկու մակարդակները.
 - 2.1. Կարողություններ. առկա ռեսուրսները (մարդկային, ֆիզիկական և տեխնիկական), կառույցները և ընթացակարգերը,
 - 2.2. Բարեվարքություն. գործառույթների կատարման ընթացքում հիմնարար նորմերի և արժեքների պահպանումը և հարգումը:

Կարողությունների և բարեվարքության հայեցակարգը



ԿԲՀ-ի օգնությամբ կարելի է նաև վերլուծել քրեական արդարադատության համակարգի միևնույն ոլորտում գործող սուբյեկտների (այսինքն՝ ոստիկանական կառույցի տարբեր մասնաճյուղերի միջև կամ ոստիկանական միևնույն կառույցի տեղական, տարածքային կամ պետական մակարդակների մասնաճյուղերի միջև կամ քրեական արդարադատության համակարգի տարբեր կառույցների միջև) կողմից մատուցվող ծառայությունների բացերը և կրկնությունները՝ ներառյալ տարբեր սուբյեկտների միջև հիերարխիկ կապերի կամ հաղորդակցության շղթաների անորոշությունը: Դա ներառում է նաև տարբեր կառույցների մշակութային տարբերությունները, որոնք կարող են խոչընդոտել համագործակցությունը: ԿԲՀ-ի սկզբունքներից գատ՝ ԶԱՀ-ի աշխատանքի որոշ թերացումներ բացատրելիս կարող են օգտագործվել նաև սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության արդյունքները: ԿԲՀ-ի կիրառությանն առնչվող ընդհանուր բնույթի հարցադրումները գետեղված են Հավելված 2-ում:

Կառավարման համակարգերի և կարողությունների վերլուծության, ինչպես նաև քարտեզագրման աշխատանքի հիման վրա ստացված տեղեկությունները պետք է խաչաձև ստուգումների ենթարկել՝ համադրելով և «եռանկյունացնելով»⁴⁶ հանրային կարիքների և կարծիքների հետազոտությունների արդյունքների հետ: Այստեղ հարկ է հաշվի առնել նաև գնահատվողների քաղաքական, տնտեսական, սոցիալական, էթնիկ կամ այլ շահերը և դրդապատճառները:

⁴⁶ Տեղեկատվության «եռանկյունացումը» նշանակում է, որ հակադիր երկու տեսակետները հավասարակշռվում են երրորդ, ցանկալի է՝ անկախ տեսակետով, որը կարող է բացատրել հակադիր երկու տեսակետները: Համեմատ. Downes, *Paper for OSCE Meeting on 'Police Reform within the Reform of the Wider Criminal Justice System'* (op.cit. note 43), p.8 [Դոունզ, *գեկույց ԵԱՀԿ «Ոստիկանության բարեփոխումները քրեական արդարադատության առավել ընդլայնված համակարգի բարեփոխումների շրջանակում» խորագրով ժողովի համար* (տե՛ս էջատակի 43-րդ ժանոթագրությունը), էջ 8]:

3.2. ԶԱՅ-ի տարբեր կառույցների, պետական այլ մարմինների և ոչ պետական կառույցների փոխհարաբերությունների վերլուծության հարցերը գնահատման գործընթացում

ՄԱԿԹՅՊԳ-ն, ՏՅԶԿ-ն և այլ կազմակերպությունները⁴⁷ մշակել են ԶԱՅ-ի տարբեր կառույցների գնահատման նպատակով կիրառվող հարցերի համալիր հավաքածու: Այս բաժնում ներկայացված են այդ հարցերը, մասնավորապես՝ գնահատման տարբեր ոլորտներին առնչվող հարցադրումները: Առանձնակի ուշադրություն է հատկացվում քրեական արդարադատության գործընթացում ոստիկանության և պետական և ոչ պետական այլ մարմինների հարաբերություններին, ինչպես նաև համընդհանուր բնույթի այնպիսի ինտիդրների, ինչպիսիք են մարդու իրավունքները, գենդերային բաղադրիչը և վերահսկողությունը: Հարցերը կարելի է փոփոխել և տեղայնացնել՝ հաշվի առնելով ազգային իրավիճակի առանձնահատկությունները:

3.2.1. Սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական իրավիճակին վերաբերող հարցերը

- Սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման ո՞ր փուլում է պետությունը:
- Պատմական ի՞նչ իրավիճակում է պետությունը, հատկապես՝ հաշվի առնելով կիրառվող օրենսդրությունը և անվտանգության

⁴⁷ Ի լրումն ՄԱԿԹՅՊԳ-ի և ՏՅԶԿ-ի գնահատման հարցերի ցանկերի, հարցերի լիարժեք ցանկեր են տրամադրել նաև Folke Bernadotte Academy/Swedish Contact Group, *Security Sector Reform. Assessment Framework* (op.cit. note 32) [Ֆոլկե Բերնադոտի ակադեմիա / Շվեդիայի կոնտակտային խումբը, *Անվտանգության ոլորտի բարեփոխումները: Գնահատման հայեցակարգը* (տե՛ս էջատակի 32-րդ ծանոթագրությունը)], Bureau for International Narcotics and Law Enforcement Affairs, U.S. Department of State, *Criminal Justice Sector Assessment Rating Tool*, Washington, D.C., June 2006 [ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի Թմրադեղերի դեմ միջազգային պայքարի և իրավապահ գործունեության բյուրո, *Քրեական արդարադատության գնահատման շեյթինգային գործիքը*, Վաշինգտոն, ԱՄՆ, 2006 թվականի հունիս], և Rausch, Colette (ed.), *Combating Serious Crimes in Post-Conflict Societies. A Handbook for Policy Makers and Practitioners*, United States Institute of Peace Press, Washington D.C., 2006, pp. 17-38 [Քոլեթ Բաուշ (խմբ.), *Պայքարը ծանր հանցագործությունների դեմ հետհակամարտային հասարակություններում. Ծեռնարկ քաղաքական գործիչների և պրակտիկ աշխատողների համար*, ԱՄՆ-ի խաղաղության ինստիտուտի մամուլ, Վաշինգտոն, 2006 թ., էջեր 17-38]:

և արդարադատության մատուցման ֆորմալ և ոչ պետական մեխանիզմների ավանդույթները:

- Գոյություն ունի՞ իշխանության բաժանում օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի միջև:
- Ինչպիսի՞ն է ԶԱՀ-ի կառույցների նկատմամբ քաղաքական հսկողության մակարդակը:
- Անվտանգության և արդարադատության ֆորմալ ծառայություններ մատուցողները ներգրավվա՞ծ են քաղաքական կյանքի մեջ:
- Բնակչության շրջանում ինչպիսի՞ լեգիտիմություն է վայելում քաղաքական համակարգը:
- Հասարակությունն ընդհանուր առմամբ միասնական պատկերացում ունի՞ իրավունքի գերակայության մասին: Մարդկանց կարծիքով՝ հարգվու՞մ է իրավունքի գերակայությունը:
- Բնակչության շրջանում ինչպիսի՞ լեգիտիմություն են վայելում ԶԱՀ-ի տարբեր կառույցները և անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցները (տե՛ս նաև 3.2.2. Ենթագլուխը):
- Կոռուպցիան ինչպե՞ս է ազդում ԶԱՀ-ի վրա:
- Էթնիկ տարբեր համայնքներն ինչպե՞ս են ներկայացված ԶԱՀ-ում:
- Կանայք ինչպե՞ս են ներկայացված ԶԱՀ-ում:
- Ովքե՞ր կարող են լինել ԶԱՀ-ի ճանապարհին խոչընդոտներ և խուփեր ստեղծողները:
- Որո՞նք են բարեփոխումների կարևորագույն շահակիցների տարբեր արժեքները, գաղափարախոսությունը և պատկերացումները:
- Բարեփոխումներին սատարելու կամ չսատարելու ի՞նչ շահագրգռվածություն և դրդապատճառներ կարող են ունենալ տարբեր շահակիցները:

3.2.2. Անվտանգության և արդարադատության ոլորտում հանրության կարիքներին վերաբերող հարցերը

- Որո՞նք են անվտանգության ռիսկերի և անարդարության դրսևորումների առավել հաճախ հանդիպող և բարդ տեսակները:
- Կա՞ն այնպիսի խմբեր, որոնք ուրիշներից ավելի շատ են տուժում:
- Կա՞ն ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների գոհերի որոշակի խմբեր:
- Կանայք, տղամարդիկ և երեխաները խոցելի՞ են անվտանգության ռիսկերի և անարդարության դրսևորումների տարբեր տեսակների նկատմամբ:
- Ի՞նչ կարծիքի է հանրությունը ԶԱՀ-ի մասին: Վերջինս համարվու՞մ է արդարացի, արդյունավետ և գործունակ: Մարդիկ վստահու՞մ են ԶԱՀ-ին: Եթե ոչ, ապա ինչո՞ւ: Հանրության կարծիքով՝ որո՞նք են ԶԱՀ-ի առջև ծառայած լրջագույն հիմնախնդիրները: Կա՞ն այնպիսի խմբեր, որոնք կարծում են, որ ԶԱՀ-ում խտրականություն է տեղի ունենում իրենց նկատմամբ:
- Ինչպիսի՞ կարծիքի է հանրությունը ԶԱՀ-ի տարբեր կառույցների մասին: Ո՞ր կառույցներն են առավել բարձր գնահատականի արժանանում իրենց արդարացիության, արդյունավետության, գործունակության և բանիմացության առումներով:
- Հանրության կարծիքով՝ ԶԱՀ-ն արդյունավետորեն պայքարու՞մ է պետական կոռուպցիայի դեմ:
- Հանրությունը տեղյա՞կ է ԶԱՀ-ի տարբեր կառույցների գործառույթների մասին:
- Հանրությունը տեղյա՞կ է ԶԱՀ-ի կողմից համայնքների հետ տարվող իրազեկման և այլ աշխատանքների մասին:
- Հանրության կարծիքով՝ հանրությունը ներգրավվա՞ծ է ԶԱՀ-ում քրեական արդարադատության առաջնահերթ խնդիրների լուծման գործում: Այս առումով ի՞նչ կարելի է ասել փոքրամասնությունների և մարգինալացված խմբերի մասին:
- Զաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ենթարկվու՞մ են ռիսկի՝ շփվելով անվտանգության և արդարադատության կառույցների հետ: Նրանց կարո՞ղ են մտահոգություն-

ներ պատճառել հետևյալ գործոնները. ԶԱՀ-ի սուբյեկտների մարդու իրավունքների խախտումները, հանցագործների վրեժխնդիր հարձակումները, ԶԱՀ-ի լեգիտիմության բացակայության պայմաններում հանրության լայն շրջանակների կողմից ռեպրեսալիայի գործողությունները և հարձակումների կամ հանրային ռեպրեսալիայի ենթարկվելու դեպքում ԶԱՀ-ից պաշտպանություն չստանալը:

- Հանրությանը հասանելի՞ են հրապարակային տեղեկություններ քրեական գործերի մասին:
- Հանրությունը մասնակի՞ց է ԶԱՀ-ի վերահսկողությանը:
- ԶԱՀ-ի ո՞ր կառույցների նկատմամբ է հանրությունը ցանկանում ունենալ ավելի մեծ հսկողություն կամ ազդեցություն:
- Բնակչությունը որչա՞փ է օգտվում անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների ծառայություններից: Ի՞նչ պատճառով է դա տեղի ունենում (օրինակ՝ հեռավորություն, ցածր ծախսեր, ավանդույթներ, կրոն կամ հավատ, ֆորմալ ԶԱՀ-ի անբավարար հասանելիություն, ֆորմալ ԶԱՀ-ի նկատմամբ վստահության պակաս): Անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող որոշ ոչ պետական կառույցներ հսկողություն իրականացնում են որոշակի համայնքների, տարածքների և ռեսուրսների նկատմամբ:

3.2.3. ԶԱՀ-ի կառավարմանը և կարողություններին վերաբերող հարցերը

ա) ԶԱՀ-ի իրավական դաշտը

Ընդհանուր հարցադրումներ

- Օրենսդրությամբ (սահմանադրությամբ, օրենքներով, ոստիկանության կամ արդարադատության կամ բանտերի կամ պրոբացիոն ծառայության մասին օրենքներով, քրեական օրենսգրքով, քրեական դատավարության օրենսգրքով, դատարանների մասին կանոններով) սահմանվա՞ծ են, ի թիվս այլ սկզբունքների, ԶԱՀ-ի տարբեր կառույցների հիմնական իրավունքները և

պարտավորությունները ձերբակալության, նախնական կալանքի, քրեական գործերի քննության և դատական քննության ընթացակարգերի առնչությամբ, ինչպես նաև՝ տուժողներին ցուցաբերվող աջակցության և դատապարտյալների ուղղման և հասարակություն նրանց վերադարձի առնչությամբ: Օրենսդրությունը համապատասխանում է տվյալ միջազգային կոնվենցիաներին և կարգավորումներին⁴⁸:

- Օրենսդրությամբ ամրագրված են դրույթներ անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կամ սովորության կառույցների գոյության մասին: Սահմանափակված են արդյոք հանցագործությունների այն տեսակները, որոնցով կարող են զբաղվել անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցները, կամ պատիժների կամ տույժերի այն տեսակները, որոնք կարող են կիրառվել անվտանգության ոլորտում ծառայություններ մատուցող սովորության/ոչ պետական կառույցների կողմից:
- Ե՞րբ են վերջին անգամ վերանայվել իրավական դաշտը կամ դրա առանձին բաղադրիչները:

Քրեական վարույթները

- Որևէ օրենքով կամ օրենսգրքով սահմանվում է, թե ինչպես և ում կողմից պետք է իրականացվի քրեական գործի քննությունը:
- Օրենքի համաձայն՝ ՔԱԶ-ում կա՞ն քննության դատավորներ: Ո՞րն է նրանց դերը: Քանի՞սն են նշանակվել և դատական համակարգի ո՞ր ատյանում:
- Դատախազների և նրանց լիազորությունների միջև կա՞ն կրկնություններ կամ բացեր, որոնք ստեղծում են իրավական անորոշություն:
- Դատախազությունն իշխանության ո՞ր ճյուղի մաս է կազմում գործադի՞ր, թե՞ դատական:

⁴⁸ ԵԱՀԿ տարածաշրջանում ՔԱՀ-ում իրականացվող աշխատանքները կարգավորող միջազգային հիմնական կոնվենցիաների, ուղեմիջոցների և հանձնառությունների ցանկի համար տե՛ս Հավելված 1:

- Քրեական հետապնդման գործառույթը որքանով է անկախ իշխանության գործադիր և դատական ճյուղերից:
- Ո՞վ է վարում քննությունը:
- Օրենքով նախատեսվում են գործերի լուծման արտադատական մեխանիզմներ, մասնավորապես՝ քրեական հետապնդման այլընտրանքներ, օրինակ՝ միջնորդություն, վերականգնողական ծրագրեր և/կամ հանրօգուտ աշխատանքներ:
- Նկատելի՞ է գործի քննությանը նախորդող (կամ օպերատիվ տվյալների կամ նյութերի հավաքման) փուլի տարբերակումը գործի բուն քննության փուլից:
- Օրենքով ամրագրված են դրույթներ իրեղեն ապացույցների և փորձագիտական ծառայությունների օգտագործման վերաբերյալ:
- Օրենքը կարգավորում է փորձագիտական ծառայությունների ստեղծումը, գործունեությունը և ֆինանսավորումը, ինչպես նաև դատական վարույթներում իրեղեն ապացույցների օգտագործումը և թույլատրելիությունը:

Մարդու իրավունքները

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հայեցակարգն ամրագրված է ազգային օրենսդրության մեջ:
- ԶԱՅ-ին ներկայացվում է մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները պաշտպանելու և հարգելու պահանջ:
- Օրենքի համաձայն՝ ԶԱՅ-ի կառույցներն ի՞նչ պարտավորություններ ունեն հանցագործությունից տուժած անձանց և քրեական գործերով վկաների նկատմամբ: Օրենքով նախատեսվում են վկաների պաշտպանության միջոցառումներ՝ ներառյալ ֆիզիկական պաշտպանություն, ձայնի աղճատում, հեռուստակոնֆերանսի օգտագործում, դռնփակ դատական նիստեր, բնակության վայրի փոփոխություն և այլն:
- Անվճարունակ ամբաստանյալների համար երաշխավորվում է փաստաբան ունենալու իրավունքը:
- Նախնական կալանքի ի՞նչ հիմքեր են նախատեսված օրենքով:

- Ոստիկանությունում և նախնական կալանքի վայրերում ազատագրված ժամկետներն ամրագրված են օրենսդրության մեջ: Անչափահասների դեպքում դրանք նո՞ւյնն են, ինչ՝ մեծահասակների համար:
- Կա՞ն որոշակի ժամկետներ, որոնց ընթացքում քրեական գործը պետք է ուղարկել դատարան և լուծել (այսինքն՝ կայացնել դատավճիռ կամ նշանակել պատիժ):
- Օրենսդրությամբ ուղղակիորեն արգելված է միևնույն մեղադրանքի հիման վրա անձին կրկին ձերբակալելը (այն դեպքում, երբ ոստիկանությունում անձի պահման ժամկետների պատճառով անհրաժեշտ է եղել անձին ազատ արձակել, կամ երբ մեղադրյալն ազատ է արձակվել դատարանի որոշմամբ):

Չաշվետվողականությունը և վերահսկողությունը

- ԶԱՅ-ի տարբեր կառույցների աշխատողների համար գոյություն ունե՞ն էթիկայի կանոնագրքեր:
- Օրենքով ամրագրվո՞ւմ են ԶԱՅ-ի կառույցների գործունեության մշտադիտարկման և վերահսկողության մեխանիզմներ:
- ԶԱՅ-ի պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների խախտումների դեպքերը կարո՞ղ են ներկայացվել անկախ դատարանների:
- ԶԱՅ-ի կառույցների առումով կոռուպցիայի մասին հատուկ նշումներ կա՞ն:
- Դատախազությունն ունի՞ իշխանության այլ ճյուղերի նկատմամբ վերահսկողության լիազորություններ:

բ) Քաղաքականությունը և կանոնակարգերը

Ընդհանուր հարցադրումներ

- Կա՞ն, արդյոք, քրեական արդարադատության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի փաստաթղթեր:
- Գոյություն ունե՞ն ԶԱՅ-ի տարբեր կառույցների ազգային ռազմավարություններ և գործողությունների ծրագրեր:

- Վերջին անգամ ե՞րբ են վերանայվել քաղաքականությունը և կանոնակարգերը:
- Պետական անվտանգության պարտավորությունները վերապահվա՞ծ են ոստիկանության կառույցին, թե՞ դա առանձին գործառույթ է: Եթե դա առանձին գործառույթ է, ապա այդ գործերի քննության նկատմամբ կիրառելի են նո՞ւյն կանոնները, ինչ կիրառվում են ոստիկանության կողմից իրականացվող քննությունների նկատմամբ:
- Գործառնական ընթացակարգերը նպաստո՞ւմ են ԶԱՅ-ի տարբեր կառույցների միջև համագործակցության խորացմանը, թե՞ խոչընդոտում են համագործակցությունը:
- Դատախազության և ոստիկանության միջև բարձրաստիճան մակարդակով տեղի՞ են ունենում համակարգման կանոնավոր հանդիպումներ:
- Ֆորմալ ԶԱՅ-ն ինչպիսի՞ ընթացակարգային հարաբերություններ ունի անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների հետ: Նրանք միմյանց փոխանցո՞ւմ են կոնկրետ գործեր:
- Գենդերային բաղադրիչը ներառվա՞ծ է քաղաքականության, կանոնակարգերի և կազմակերպության մշակույթի մեջ, մասնավորապես՝ աշխատանքի ընդունման, պաշտոնետական առաջխաղացման, աշխատանքի պայմանների և աշխատողների պահպանության հարցերում, հատկապես՝ կանանց և էթնիկ փոքրամասնությունների համար:

Քրեական վարույթները

- Ինչպիսի՞ ընթացք է ունենում քրեական գործը՝ քրեական գործի մեջ կասկածելուց կամ մեղադրելուց և քննիչներին խորհուրդներ տալուց մինչև մեղադրանքը պաշտոնապես ներկայացնելը, գործի դատական լուծումը և փակումը:
- Փաստացի ո՞վ է վարում քննությունը՝ ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյա՞, դատախա՞, թե՞ դատավոր:

- Քրեական գործերի քննության՝ դատախազության փիլիսոփայությունը համահո՞նչ է ոստիկանության կողմից կիրառվող մոտեցումներին:
- Զննվող առանձին գործերն ինչպե՞ս են բաշխվում քննիչների միջև:
- Գործերի ո՞ր տեսակներն են ուղղահայաց կարգով փոխանցվում դատախազներին, այսինքն՝ ո՞ր գործերի դեպքում է դատախազը պատասխանատու քրեական արդարադատության ողջ գործընթացում՝ քննությունից մինչև պաշտոնապես մեղադրանքը ներկայացնելը, դատական քննությունը և պատժի նշանակումը:
- Այն համակարգերում, որոնցում կա քննության դատավոր, ո՞ր պահից է այդ պաշտոնյան պատասխանատվություն ստանձնում քրեական գործի վարման, քննության կամ ապացույցների հավաքման համար: Ինչպիսի՞ դեր ունի դատական ոստիկանությունը (եթե այդպիսին կա) քննության դատավորի առնչությամբ:
- Ո՞վ է կատարում նոր աշխատանքի բաշխումը:
- Ո՞վ է պատրաստում գործի նյութերը:
- Ինչպիսի՞ տվյալներ են պարունակում գործի նյութերը:
- Ո՞վ է վերահսկում գործի նյութերը:
- Ինչպիսի՞ ապացույցներ ձեռք բերելու համար է անհրաժեշտ նախապես սանկցիա ստանալու միջնորդությամբ դիմել դատավորին: Ոստիկանությունը կամ դատախազությունը ներկայացնո՞ւմ են նման սանկցիաներ ստանալու միջնորդություններ:
- Դատախազը խորհուրդներ տալի՞ս է ոստիկանությանն այն մասին, թե երբ է անհրաժեշտ սանկցիա ստանալու միջնորդություն ներկայացնել:
- Ո՞վ է իրավասու ձերբակալել անձին:
- Ի՞նչ պարտավորություններ ունեն դեպքի վայրում առաջինն արձագանքողները (ներկայացող առաջին ոստիկանները):
- ԶԱԳ-ի կառույցները հավուր պատշաճի հասկանո՞ւմ են, թե ինչպիսի օգուտ կարող է բերել քրեափորձագիտական գործառույթների կատարումը դեպքի վայրից մինչև դատական նիստերի դահլիճում գործի քննությունն ընկած ողջ ժամանակահատվածում:

- Զաղաքականության մեջ կա՞ն որոշակի պահանջներ, որոնք կօգնեն դեպքի վայրում առաջինն արձագանքողներին, ոստիկանության քննիչներին և դատախազներին՝ հասկանալու փորձագիտական ապացույցների և հանցագործության դեպքի վայրի քննության հնարավորությունները և սահմանափակումները, ինչպես նաև կօգնեն արդարադատության կառույցներին, որպեսզի վերջիններս հասկանան փորձագիտական ապացույցների կշիռը:
 - Զաղաքականության մեջ կա՞ն որոշակի պահանջներ, որոնք կօգնեն փորձագետներին՝ հասկանալու քրեական արդարադատության գործընթացում փորձագիտական տվյալների օգտագործումը և փորձագիտական վերլուծությունների և ուսումնասիրությունների վրա հիմնված արդյունքների նշանակությունը:
- Գործառնական ընթացակարգերը կանոնակարգում են հավաքված ապացույցների հետ պատշաճ կերպով աշխատելու (հավաքում, պահպանություն, պիտականշում, փաթեթավորում և պահեստային պահպանություն) անհրաժեշտությունը և ապացույցների «պատասխանատու պահպանության շղթայի»⁴⁹ ապահովման նշանակությունը:
 - Զննության ընթացքում ինչպե՞ս են արձանագրվում, պիտականշվում և փաթեթավորվում ապացույցները և նյութերը:
 - Ինչպե՞ս է համակարգվում աշխատանքը հանցագործությունները քննող քննիչների, դատախազների և փորձագիտական լաբորատորիաների միջև:
 - Լաբորատորիաների համար հասանելի՞ են տեղեկատվական անհրաժեշտ նյութերը և/կամ գործին առնչվող նյութերի ամբողջությունը: Ո՞վ է իրավասու օգտագործել տեղեկատվական

⁴⁹ «Պատասխանատու պահպանության շղթան» վերաբերում է այն ընթացակարգերին և փաստաթղթերին, որոնք ապահովում են իրեղեն ապացույցների անխախտելիությունը՝ հսկելով դրանց հետ կատարվող գործողությունները և պահպանումը՝ վերցնելու պահից մինչև գործով վերջնական որոշման կայացման պահը: Օգտագործվում են նաև «ապացույցների շղթա» և «հետքորոշում» եզրույթները: Տե՛ս UNODC, "Policing. Forensic Services and Infrastructure," in: UNODC, *Criminal Justice Assessment Toolkit*, New York, 2010, p. 53 [ՄԱԿԹՀՊԳ, «Ոստիկանական գործունեությունը. քրեափորձագիտական ծառայությունները և ենթակառուցվածքը», աղբյուրը՝ ՄԱԿԹՀՊԳ, *Քրեական արդարադատության համակարգի գնահատման ձեռնարկ*, Նյու Յորք, 2010 թ., էջ 53]:

կյութերը: Մեծածավալ տեղեկատվությամբ աշխատելու դեպքում հնարավոր են գործերի ձգձգումները:

- Ոստիկանության կատարած քննության արդյունքներն իրավաբանորեն պարտադիր են դատախազների համար:
- Ոստիկանները և դատախազներն իրավասու՞ են սեփական հայեցողությամբ գործերն ուղարկել քրեական արդարադատության գործընթացից դուրս կամ որոշում կայացնել անձին գրավով ազատ արձակելու մասին (դա կարող է լուրջ ազդեցություն ունենալ աշխատանքային ծանրաբեռնվածության և բանտերում պահվողների թվաքանակի/բանտերի պայմանների վրա):
- Ոստիկանները, դատախազները և քրեական արդարադատության ոլորտի այլ սուբյեկտներն ի՞նչ իրավասություններ ունեն՝ նախքան մեղադրանք ներկայացնելն ազատ արձակելու հարցաքննության նպատակով կալանավորված անձին:
- Օրենքով նախատեսված է գրավը կամ նախնական կալանքի փոխարեն որոշակի այլընտրանքներ (օրինակ՝ վերահսկողություն/տեղաշարժի սահմանափակումներ) կիրառելու առաջնայնության սկզբունքը:
- Դատախազն իրավասու՞ է քրեական հետապնդման փոխարեն գործն ուղարկել այլընտրանքային մեխանիզմներին, օրինակ՝ միջնորդության, վերականգնման կամ հանրօգուտ աշխատանքների կատարման համար: Եթե այո, ապա դրա համար անհրաժեշտ է դատարանի համաձայնությունը: Այդ այլընտրանքները սահմանափակվո՞ւմ են իրավախախտների և հանցագործությունների որոշ տեսակներով (օրինակ՝ անչափահասներ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցողներ, թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ և կենցաղային բռնություն):
- Դատախազն իրավասու՞ է մեղքի ընդունման համաձայնության շուրջ բանակցել: Ինչպիսի՞ն են այդ գործընթացի իրավակարգավորումները:
- Իրավախախտումների ո՞ր տեսակներով են զբաղվում արդարադատության ոլորտի ոչ պետական/սովորույթային կառույցները:
- Ո՞վ է իրավասու առաջարկ ներկայացնել վկային վկաների պաշտպանության ծրագրի մեջ ներառելու մասին, և ո՞վ է պատասխանատու վկային այդպիսի ծրագրի մեջ ներառելու կամ

վկայի նկատմամբ ծրագրի գործողությունը դադարեցնելու հարցերով:

- Ո՞վ է պատասխանատու քրեական վարույթում վտանգավորության աստիճանը գնահատելու և վկաների պաշտպանության միջոցներ կիրառելու հարցերով:
- Ո՞վ է պատասխանատու դատարանի անվտանգության համար:
- Ո՞վ է պատասխանատու բանտարկյալներին դատարան փոխադրելու համար, և ո՞վ է փոխադրման ընթացքում ապահովում անվտանգությունը:

Մարդու իրավունքները

- Ոստիկանությունում և նախնական կալանքի վայրերում անազատության մեջ պահման ժամկետները կարո՞ղ են երկարաձգվել: Ո՞վ և ի՞նչ հիմքերով է կայացնում այդ որոշումները:
- Դատախազն իրավասո՞ւ է երկարաձգել կասկածյալի նախնական կալանքի ժամկետը (այդ պարագայում կարող են մարդու իրավունքներին առնչվող մտահոգություններ ծագել, եթե հանցագործությունը քննողը նույնպես դատախազությունն է):

Հաշվետվողականությունը և վերահսկողությունը

- Դատախազությունը և դատարաններն ունե՞ն անօրինական ճանապարհով ստացված ապացույցների վերաբերյալ որոշակի քաղաքականություն, և ինչպիսի՞ն է այն էթիկայի, իրավունքի և դատավարական նորմերի տեսանկյունից: Անօրինական ճանապարհով ստացված ապացույցները թույլատրելի՞ են:
- Ինչպիսի՞ քաղաքականություն և ընթացակարգեր կան արդարադատության գործընթացներում թույլ տրվող այնպիսի սխալների վերաբերյալ բողոքների քննության համար, ինչպիսիք են սխալմամբ դատապարտումը կամ դատախազական հայեցողության/իրավասությունների չարաշահումը: Նման գործերով գոյություն ունի՞ ԴՆԹ-ի թեստավորման հնարավորություն: Իրեղեն ապացույցները պահպանվո՞ւմ են, որպեսզի հետագայում նման դեպքերում հնարավոր լինի դրանք օգտագործել:

- Ժամանակավոր ազատագրկման վայրերի ներքին և արտաքին ստուգումներին առնչվող ի՞նչ դրույթներ են գործում:
- Ընթացակարգերը և/կամ կանոնակարգերը թույլատրո՞ւմ են ոստիկանությունում պահման վայրերի և նախնական կալանքի վայրերի մշտադիտարկման անկախ մեխանիզմ ստեղծել:
- Ընթացակարգերը և/կամ կանոնակարգերը թույլատրո՞ւմ են արտաքին դիտորդներին անակնկալ այցելություններ կատարել:
- Մեղադրանքը ներկայացնելուց հետո այդ տեղեկությունները հրապարակվո՞ւմ են և տրամադրվո՞ւմ են զանգվածային լրատվամիջոցներին:
- Գործի նյութերի կազմման նկատմամբ իրականացվո՞ւմ է որակի վերահսկողություն:
- Ոստիկանությունը պարտավո՞ր է վարել ազատագրկված բոլոր կասկածյալների՝ անազատության մեջ պահման մատյաններ: Ի՞նչ տեղեկություններ են պարունակում անազատության մեջ պահման մատյանները:
- Ընթացակարգերը և/կամ կանոնակարգերը թույլատրո՞ւմ են դատական քննությունների մշտադիտարկման անկախ մեխանիզմ ստեղծել:

գ) Կառույցները

Ընդհանուր հարցադրումներ

- Եթե գոյություն ունի դաշնային համակարգ, ապա դաշնային ԶԱՀ-ն ինչպե՞ս է փոխլրացնում ԶԱՀ-ի տեղական և տարածքային մակարդակներին:
- ԶԱՀ-ի կառույցները ո՞ր մակարդակում են համակարգում իրենց գործունեությունը՝ ազգային, տարածքային, թե՞ տեղական: Ինչպիսի՞ համակարգում է տեղի ունենում, այսինքն՝ ժամանակավոր աշխատանքային խմբե՞ր, թե՞ ֆորմալ հանձնաժողովներ:
- ԶԱՀ-ում կա՞ն ներքին կառավարման համակարգեր (կառավար-

ման կառուցվածք, տեղեկատվական համակարգեր, որոշումների կայացման գործընթաց, աշխատանքի արդյունավետության կառավարում և այլն) և հաղորդակցության կառույցներ: Դրանք բարձրացնում են քրեական արդարադատության գործընթացի/ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև համագործակցության արդյունավետությունը, թե՛ ընդհակառակը:

- Ոստիկանության քննիչները և դատախազներն անցկացնում են համակարգման հանդիպումներ ընթացիկ գործերը քննարկելու նպատակով:
- Գործը վարող քննիչը (դատախազը կամ դատավորը) գտնվում է ոստիկանության հետ միևնույն շենքում կամ ոստիկանության մոտակայքում:
- Գոյություն ունեն պետական ծառայության գերատեսչությունների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության խմբերի հետ գործընկերության կառույցներ:
- Անվտանգության ծառայություններ մատուցող պետական և մասնավոր սուբյեկտների միջև գործառնության ինչպիսի՞ հարաբերություններ և պարտականությունների ինչպիսի՞ բաժանում կան:
- Անվտանգության ծառայություններ մատուցող պետական սուբյեկտներն ինչպիսի՞ մասնակցություն ունեն անվտանգության ծառայություններ մատուցող մասնավոր սուբյեկտների վերապատրաստմանը, լիցենզավորմանը և օժանդակությանը:
- Գոյություն ունեն սոցիալական ծառայությունների կամ պրոբացիոն ծառայության հետ համագործակցության մեխանիզմներ:
- ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև իրականացվում է ռեսուրսների և աշխատանքային պարտականությունների պատշաճ և օպտիմալ բաշխում, որը կնպաստի քրեական արդարադատության գործընթացի արդյունավետությանը և գործունակությանը:
- Ինչպիսի՞ն է դատախազների/քննության դատավորների և ոստիկանության քննիչների թվաքանակների հարաբերակցությունը:

Քրեական վարույթները

- Գոյություն ունի՞ հանցագործությունների մասին հաղորդումների ներկայացման համակարգ:
- Գոյություն ունի՞ մեղադրական դատավճիռների մասին տվյալների շտեմարան: Եթե այո, ապա այն ներառո՞ւմ է իրավախախտի անձնական տվյալները՝ խաչաձև հղումներով: Յնարավո՞ր է ջնջել կամ ոչնչացնել դատվածության մասին տեղեկությունները, հատկապես՝ անչափահասների մասով:
- Գոյություն ունի՞ մատնահետքերի, ԴՆԹ-ի, ձգաբանական և/կամ այլ տվյալների (օրինակ՝ կոշիկի հետքերի, անիվների հետքերի, ապակու, ներկանյութի, մանրաթելի, պայթուցիկ նյութերի կամ անօրինական թմրադեղերի և պրեկուրսորների քիմիական կազմի) փորձագիտական շտեմարան⁵⁰:
 - Այդ շտեմարանի տվյալները փոխանակվո՞ւմ են ԶԱԶ-ի տարբեր կառույցների միջև:
 - Ո՞վ է պատասխանատու փորձագիտական տվյալների շտեմարանների ընթացիկ պահպանության, պահուստավորման, վերբեռնման և թարմացման, լիարժեքության, անխախտելիության և օգտագործման թույլտվությունների տրամադրման համար:
- Յանցագործության դեպքի վայրում աշխատանքներ կատարող ծառայությունները մտնո՞ւմ են ոստիկանական կառույցի մեջ, թե՞ դրանք փորձագիտական ավելի խոշոր կառույցի կազմում են:
- Ինչպիսի՞ պետական գերատեսչությունների (ո՞ր նախարարությունների) կամ մասնավոր կառույցների ենթակայությամբ են տրամադրվում փորձագիտական ծառայությունները:
- Դեպքի վայրի փորձագիտական զննության ինչպիսի՞ հարմարություններ և տեխնիկական միջոցներ գոյություն ունեն: Ոստիկանությունը և դատախազությունն իրականացնո՞ւմ են դրանց համատեղ օգտագործում:

⁵⁰ Փորձագիտական ծառայությունների հնարավոր շրջանակի մասին ամբողջական տեղեկությունների համար տե՛ս UNODC, "Policing. Forensic Services and Infrastructure" (op.cit. note 49), p. 48 [ՄԱԿԹՀՊԳ, «Ոստիկանական գործունեությունը. քրեափորձագիտական ծառայությունները և ենթակառուցվածքը» (տե՛ս էջատակի 49-րդ ծանոթագրությունը), էջ 48]:

- Փորձագիտական լաբորատորիաներն անկախ են ոստիկանությունից:
- Լայնամասշտաբ գործերի քննությունը վարելու համար կա՞ն գործի նյութերի կառավարման էլեկտրոնային համակարգեր: Գործի նյութերի կառավարման համակարգերը ներառո՞ւմ են ոստիկանության տեղեկությունները, դատարանների ժամանակացույցները, գործերով կայացված վերջնական որոշումները և ազատագրվման կամ կալանքի մասին տեղեկությունները:
- Ի՞նչ տեղեկություններ են փոխանակվում ԶԱՅ-ի տարբեր կառույցների միջև, և որչա՞փ պաշտպանված են գործին առնչվող գաղտնի տեղեկությունները: Պաշտպանությունը կարո՞ղ է բացահայտման մասին միջնորդություն ներկայացնելու ճանապարհով ստանալ և ուսումնասիրել այն ապացույցները, որոնք դատախազությունը մտադիր է օգտագործել:
- Կա՞ն գործի նյութերի կառավարման էլեկտրոնային համակարգերի օգտագործման թեմայով վերապատրաստված բավարար թվով աշխատողներ:
- Վերջին տարիներին միջոցներ ձեռնարկվե՞լ են գործերի ընթացքի կառավարումը բարելավելու ուղղությամբ (օրինակ՝ ազատագրվման վայրում գործի դատական քննությանը սպասող կամ տեսչական հսկողության մեխանիզմի որոշմանը սպասող անձանց թվի կրճատման փորձեր):
- Գոյություն ունի՞ արժանահավատ մեթոդ, որով կարելի է պարզել, թե քրեական գործի քննությունը կամ դատական քննությունը որ փուլում կամ ժամանակաշրջանում է:

Վերապատրաստումները

- Ոստիկանների, դատախազների և դատավորների համար կազմակերպվո՞ւմ են հանցագործությունների (ներառյալ կազմակերպված հանցագործությունների) քննության թեմայով մասնագիտական վերապատրաստման համատեղ դասընթացներ:
- ԶԱՅ-ի տարբեր կառույցներում աշխատողների վերապատրաստման բազային և խորացված դասընթացների ուսումնական ծրագրերը ներառո՞ւմ են անդրուղրտային այնպիսի հիմ-

նախնդիրներ, ինչպիսիք են մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, գեղեցիկ բաղադրիչի ներառումը և էթիկայի և հաշվետվողականության սկզբունքները ԶԱՀ-ում:

Մարդու իրավունքները

- Մարդու իրավունքների երաշխիքների իրագործման համար գոյություն ունե՞ն արդյունավետ մեխանիզմներ, թե՞ դրանք հիմնականում մնում են հռչակագրային:
- Երեխաների և անչափահասների, ինչպես նաև տղամարդկանց և կանանց համար ոստիկանությունում պահման վայրերում, նախնական կալանքի վայրերում և բանտերում կա՞ն առանձին խցեր:
- Անվճարունակ անձանց տրամադրվո՞ւմ է անվճար իրավաբանական օգնություն:
 - Այդ կարգով նշանակված պաշտպանի անկախության ի՞նչ երաշխիքներ կան:
 - Կա՞ն ամբաստանյալների խմբեր, ովքեր իրավունք չունեն հրաժարվելու պաշտպան ունենալու իրավունքից:
 - Անչափահասներն իրավունք ունե՞ն հրաժարվելու պաշտպան ունենալու իրավունքից:
- Գոյություն ունե՞ն տվյալների պաշտպանության վերաբերյալ իրավական կորմեր, որոնք կարգավորում են կասկածյալների և դատապարտյալների անձնական տվյալների հետ պատշաճ վարվեցողությունը ԶԱՀ-ի պաշտոնատար անձանց կողմից՝ տվյալների պաշտպանության միջազգային սկզբունքների պահպանմամբ: Բացի դրանից՝ անձնական տվյալների օգտագործումը նրանց կողմից սահմանափակվո՞ւմ է օրինական, իրավաչափ և որոշակի խնդիրների լուծման համար անհրաժեշտ չափով:

Հաշվետվողականությունը և վերահսկողությունը

- Եթե ոստիկանությունը սահմանազանցում է կասկածյալին ոստիկանությունում անազատության մեջ պահելու՝ իր իրավասությունը, ի՞նչ փաստերով կամ պատճառներով է ոստիկա-

նութիւնը փորձում հիմնավորել այդ գործելակերպը:

- ԶԱՅ-ի կառույցների գործունեության մշտադիտարկման և վերահսկողության ի՞նչ մեխանիզմներ և կառույցներ կան: Քաղաքացիական հասարակութիւնը ներգրավվա՞ծ է ԶԱՅ-ի կառույցների մշտադիտարկման գործընթացում:
- Այդ մեխանիզմները գործո՞ւմ են:
- Գոյություն ունե՞ն քրեական արդարադատության համակարգում ԶԱՅ-ի պաշտոնատար անձանց մասին բողոքներ ներկայացնողների՝ «աղմուկ բարձրացնողների» պաշտպանության հայեցակարգային միջոցառումներ:
- Գոյություն ունի՞ բողոքարկման համակարգ, որը հանրությանը թույլ է տալիս բողոքներ ներկայացնել ԶԱՅ-ի հասանելիության, ԶԱՅ-ի ծառայությունների մատուցման և ԶԱՅ-ի առանձին սուբյեկտների վարքագծի վերաբերյալ: Ինչպե՞ս է գործում այդ համակարգը:
- Չանգվածային լրատվամիջոցներին թույլատրվո՞ւմ է ներկա գտնվել դատական նիստերին:

դ) ԶԱՅ-ի կառույցների աշխատանքը

Քրեական վարույթները

- Համակարգող մարմինները հավուր պատշաճի գործակցո՞ւմ են միմյանց հետ:
- Գոյություն ունի՞ հակասություն ԶԱՅ-ի տարբեր կառույցների միջև համագործակցության ֆորմալ կանոնների և մշակութային նորմերի միջև:
- Զննիչներն իրենց ընթացիկ գործերում կատարո՞ւմ են խաչաձև հղումներ անցյալի գործերին:
- Փորձագիտական ուսումնասիրությունները և վերլուծությունները կատարելուց հետո ստացվող արդյունքները և պատրաստվող եզրակացությունները տրամադրվո՞ւմ են: Եթե այո, ապա.
 - ո՞ւմ (օրինակ՝ ոստիկանությանը, քրեական գործերով քննիչներին, դատախազներին, դատավորներին, կասկածյալներին, պաշտպաններին, տուժողներին և/կամ այլ անձանց),

- միաժամանակ, թե՛ տարբեր ժամանակներում, և ի՞նչ հերթականությամբ:
- Տարեկան քանի՞ գործ է ուղարկվում փորձագիտական լաբորատորիաներ, և ի՞նչ ժամկետներում է ավարտին հասցվում փորձագիտական աշխատանքը:
- Ոստիկանությունը կամ իրավապահ այլ մարմիններն օգտագործո՞ւմ են անձանց ձերբակալելու՝ իրենց իրավասությունն առանց տարբերակման և կամայականորեն:
- Ոստիկանությունը վարո՞ւմ է անազատության մեջ պահման մատյաններ: Ինչպիսի՞ն է դրանցում արձանագրվող տեղեկությունների որակը:
- Գոյություն ունե՞ն ժամանակի մեջ հետ ընկած գործերի կուտակումներ: Քրեական գործով քանի՞ անձ է սպասում վերաքննիչ բողոքների քննությանը:
- Որքա՞ն հաճախ են ոստիկանները և/կամ դատախազները կամ քրեական արդարադատության այլ սուբյեկտները պրակտիկայում գործերն ուղարկում քրեական արդարադատության համակարգից դուրս: Դուրս ուղղորդման ո՞ր մեխանիզմներն են առավել հաճախակի օգտագործվում:

Մարդու իրավունքները

- Ոստիկանության խցերն օգտագործվո՞ւմ են տևական ժամանակով՝ նախնական կալանքի վայրերում տարածքի անբավարարության կամ նախնական կալանքի վայրերի թվի անբավարարության պատճառով:
- Ոստիկանությունում և նախնական կալանքի վայրերում անազատության մեջ պահվող անչափահասները մշտապես առանձնացվո՞ւմ են չափահաս անձանցից:
- Ոստիկանությունում և նախնական կալանքի վայրերում անազատության մեջ պահվող անչափահասների և չափահասների քանի՞ տոկոսն ունի փաստաբան:
- Նշանակված փաստաբանները համարվո՞ւմ են անկախ:
- Ոստիկանությունում և նախնական կալանքի վայրերում անա-

զատության մեջ պահելու ժամկետները հարգվում են: Եթե ոչ, ապա ազատագրված անձինք որքա՞ն հաճախ են պահվում օրենքով ամրագրված առավելագույն ժամկետից ավելի երկար: Որո՞նք են սահմանված ժամկետները գերազանցելու պատճառները:

- Եթե ամրագրված է անազատության մեջ պահելու առավելագույն տևողությունը, և դատարանն այդ ժամկետը լրանալու հիմքով ազատ է արձակում ազատագրվածին, կամ երբ դատարանն արդարացնում է մեղադրյալին, ոստիկանները կրկին ձերբակալո՞ւմ են մեղադրյալին և կրկին մեղադրա՞նք են ներկայացնում նրան միևնույն հանցագործության համար: Եթե այո, ապա որքա՞ն հաճախ:
- Անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցները դիմո՞ւմ են այնպիսի գործելաո՞ճի, որը խախտում է ֆորմալ օրենքները և միջազգային նորմերը:

Հաշվետվողականությունը և վերահսկողությունը

- ԶԱՀ-ում ի՞նչ աշխատանքներ են տարվում ԶԱՀ-ի գործառույթների և դրանց կատարման արդյունավետության մասին հանրության իրազեկման բարձրացման ուղղությամբ: ԶԱՀ-ում իրականացվո՞ւմ են հանրության հետ կապերի ամրապնդման միջոցառումներ: ԶԱՀ-ը փորձո՞ւմ է հանրությանը ներգրավել քրեական արդարադատության առաջնահերթ խնդիրների լուծման աշխատանքներում: Ինչպե՞ս: ԶԱՀ-ը միևնույն ջանասիրությամբ իրականացնո՞ւմ է աշխատանքներ էթնիկ, կրոնական և փոքրամասնական այլ համայնքների հետ:
- ԶԱՀ-ը դյուրացնո՞ւմ, թե՞ դժվարացնում է ԶԱՀ-ում քրեական հետապնդման ենթարկվող գործերի մասին հրապարակային տեղեկատվության հասանելիությունը: Գոյություն ունի՞ հանրության տեղեկացման ծառայություն, որից զանգվածային լրատվամիջոցները և առանձին քաղաքացիներ կարող են տեղեկություններ ստանալ գործերի մասին: Ինչպիսի՞ն են հարաբերությունները զանգվածային լրատվամիջոցների հետ:

- ԶԱՅ-ի աշխատողները պատրաստակամորեն են պատասխանում քրեական օրենսդրության վերաբերյալ հանրության հարցերին:
- Ոստիկանության քննիչները տուժողներին պարբերաբար տրամադրում են նոր տեղեկություններ վերջիններիս գործերի ընթացքի վերաբերյալ:
- ԶԱՅ-ի տարբեր կառույցներն ունեն իրենց աշխատողների արդյունավետության գնահատման ցուցանիշներ: Եթե այո, ապա որո՞նք են դրանք: Դրանք անդրադառնում են ԶԱՅ-ի կառույցների միջև փոխհարաբերություններին:

3.2.4 ԶԱՅ-ի միջազգային այլ ծրագրերին վերաբերող հարցեր

- ԶԱՅ-ի ի՞նչ աշխատանքներ են ներկայումս ընթացքի մեջ:
- Բարեփոխումներին օժանդակող միջազգային և պետական ո՞ր կառույցներն են ներգրավված:
- Միջազգային տարբեր կառույցները համակարծի՞ք են ԶԱՅ-ի ընդհանուր նպատակի հարցում:
- Բարեփոխումների բոլոր սուբյեկտները հասկանո՞ւմ են նպատակները և իրենց պարտավորությունները: Բարեփոխումների աշխատանքները կատարվո՞ւմ են ամբողջական և միջմասնագիտական համակառավարական մոտեցմամբ՝ ներառելով քաղաքական միջոցառումները և զարգացման ծրագրերը: Բարեփոխումներն անդրադառնո՞ւմ են ԶԱՅ-ի կառույցների միջև փոխհարաբերություններին: Բարեփոխումների աշխատանքները համակարգվո՞ւմ են: Գոյություն ունի՞ր համակարգման մեխանիզմ: Գոյություն ունի՞ր առաջատար կառույց:
- Գոյություն ունե՞ն համատեղ աշխատանքների և նվիրատվությունների ազդեցության անշրջելիության երաշխավորման մեխանիզմներ:

IV. Բարեփոխումների ռազմավարության և իրականացման ծրագրերի մշակումը

ԶԱՅԲ-ի ծրագրի ռազմավարությունը մշակելիս անհրաժեշտ է ելակետային ուսումնասիրության արդյունքներն ամփոփել այնպես, որ հանրության կարծիքների և կարիքների վերաբերյալ ստացված տեղեկությունների հիման վրա որոշվեն բարեփոխումների ուղղությունները և հնարավոր սկզբնակետերը: Պետք է ընտրել այնպիսի սկզբնակետեր, որոնք անմիջապես օգուտ բերեն քաղաքացիներին: Ելնելով ԶԱՅԲ-ում երկարաժամկետ մոտեցումներ կիրառելու անհրաժեշտությունից՝ չպետք է մոռանալ համալիր և ամբողջական միջոցառումների նշանակությունը: Ուստի ռազմավարությունների մեջ պետք է սահմանել երկարաժամկետ ծրագրերը և կարճաժամկետ/տարեկան ծրագրերը, որոնց շնորհիվ բոլոր շահակիցները հստակ պատկերացում կկազմեն ծրագրվող աշխատանքների վերաբերյալ: Դա հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով գրասենյակում և գործընթացում ներգրավված միջազգային և ազգային այլ կառույցներում աշխատող կադրերի հունություն անխուսափելիությունը⁵¹:

Գնահատման գործընթացում ձեռք բերված քանակական և որակական տեղեկությունների հիման վրա բարեփոխումների ռազմավարության մեջ պետք է ամրագրել իրատեսական և իրագործելի նպատակներ, հաջողության հենանիշներ և չափորոշիչներ և իրատեսական ժամկետներ: Այդ հենանիշները հետագայում պետք է օգտագործել ԶԱՅԲ-ի ծրագրի իրագործման հաջողությունը և/կամ ազդեցությունը գնահատելիս: Հաջողության դեպքում պետք է անցում կատարել ծրագրային աջակցության դադարեցման՝ «Ելքի» փուլին: «Ելքի» փուլի

⁵¹

Բարեփոխումների ռազմավարության մշակման գործնական քայլերի մասին լիարժեք տեղեկությունների համար տե՛ս նաև Hansen Annika S./Wiharta, Sharon/Claussen, Bjorn R./Kjeksrud, Stian, *The Transition to a Just Order – Establishing Local Ownership after Conflict. A Practitioners' Guide*, Folke Bernadotte Academy Publications, Stockholm 2007, pp. 29-36 [Աննիկա Ս. Հանսեն / Շերոն Վիհարթա / Բյորն Ռ. Կլաուսսեն / Ստիան Կյեկսրուդ, *Անցումն արդար իրավակարգին. «տեղական սեփականության» սկզբունքի ներդրումը հակամարտությունից հետո: Գործնական ուղեցույց*, Ֆոլկե Բեռնադոտեի ակադեմիայի հրատարակություններ, Ստոկհոլմ, 2007, էջեր 29-36], և Harris, Frank, *The Role of Capacity-Building in Police Reform*, OSCE Mission in Kosovo, Department of Police Education and Development, Pristina 2005, pp. 23-29 [Ֆրեդնք Հերիս, *Կարողությունների զարգացման նշանակությունը ոստիկանության բարեփոխումներում*, Կոսովոյում ԵԱՀԿ առաքելություն, Ոստիկանության կրթության և զարգացման վարչություն, Պրիշտինա, 2005 թ., էջեր 23-29]:

ռազմավարությունը պետք է բավականաչափ ճկուն լինի, որպեսզի հարմարեցվի ապագա զարգացումներին:

Սահմանված ժամկետները պետք է արտացոլեն ԶԱՀ-ի ներկայիս վիճակը և իրագործման ճանապարհին հնարավոր դժվարությունների դեպքում անհրաժեշտ լրացուցիչ ժամանակը: Մարտահրավերներով լի միջավայրում կարող է պահանջվել առնվազն երեքից հինգ տարի:

Ավելին, բարեփոխումների ռազմավարություններն անհրաժեշտ է համադրել ռազմավարության իրականացման գործողությունների կոնկրետ ծրագրերի հետ: Գործողությունների ծրագրերում պետք է ներառել միջոցառումների կամ գործառնությունների հանգամանակից ծրագրեր՝ բացատրելով տարբեր քայլերի գործնական կատարման առանձնահատկությունները:

Ծրագրերում պետք է ներկայացնել նաև տարբեր քայլերի համար պահանջվող կազմակերպական փոփոխությունները և ռեսուրսները (կադրային, նյութական և ֆինանսական): Հարկավոր է ընդգծել ոչ թե նոր տեխնիկական միջոցների տրամադրումը, այլ առկա ռեսուրսների առավել արդյունավետ տնօրինումը: Թեպետ ԶԱՀ-ի կառույցներից շատերին կարողությունների զարգացման համար իսկապես անհրաժեշտ են ենթակառուցվածք և տեխնիկական սարքավորումներ, տեխնիկական միջոցները պետք է տրամադրվեն միայն կարիքների գնահատման արդյունքում որոշված և զարգացման համապատասխան ծրագրում հստակորեն մատնանշված պահանջները բավարարելու նպատակով: Այդ մասին պետք է պարզորոշ կերպով տեղեկացնել բարեփոխումների ցանկացած ծրագրի սկզբում, այլապես նյութական ռեսուրսների վերաբերյալ խոստումը կարող է շեղել կառույցների բարեփոխման առավել հրատապ նպատակից կամ խաթարել վերջինիս իրագործումը⁵²:

Եթե ԵԱՀԿ-ն ներգրավված է բարեփոխումների աշխատանքներում, ապա գործողությունների ծրագրերը պետք է լիովին հիմնվեն «ըստ արդյունքի ծրագրային բյուջետավորման» տարեկան գործընթացի

⁵² OSCE, *Implementation of Police-Related Programmes. Lessons Learned in South-Eastern Europe*, SPMU Publication Series Vol. 7, Vienna, December 2008, pp. 25-27 a. 39-41 [ԵԱՀԿ, *Ոստիկանական գործունեությանն առնչվող ծրագրերի իրագործումը. Հարավարևելյան Եվրոպայում քաղված դասերը*, ՈԳՌՀՍ-ի հրատարակությունների շարք, հ. 7, Վիեննա, 2008 թվականի դեկտեմբեր, էջեր 25-27 և 39-41], տե՛ս նաև UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 8), pp. 27-35 [ՄԱԿԹՀՊԳ/ԱՄՆ-ի խաղաղության ինստիտուտ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջեր 27-35]:

վրա, որով պահանջվում է հստակորեն ձևակերպել ծրագրերի ցանկալի արդյունքները և ազդեցությունը, ինչպես նաև՝ առաջընթացի չափման ցուցանիշները⁵³:

Ինչպես նշվել է, ազգային բոլոր կարևոր շահակիցներին բարեփոխումների գործընթացին «տեր ու տիրական» դարձնելու և բարեփոխումների համար նրանց լիարժեք օժանդակությունը ստանալու պարտադիր նախապայման է ռազմավարության մշակման գործընթացում սկզբից ևեթ ներգրավել պետական կառույցների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության համապատասխան ներկայացուցիչներին և բարեփոխումների ծրագրում արտացոլել բոլոր շահակիցների հետաքրքրությունները: Այնուհանդերձ, բարեփոխումների քայլերի վերաբերյալ բոլոր շահակիցների միջև փոխհամաձայնության ձևավորումը կարող է լինել դժվար՝ հաշվի առնելով քաղաքացիական հասարակությանը բնորոշ ներքին տեսակային տարբերությունները, որոնց արդյունքում հավանական է դառնում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների շահերի տարամիտումը և ԶԱՀ-ի տարբեր կառույցների շահերի տարբերությունները:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է բոլոր շահակիցների միջև գտնել ընդհանուր հայտարարը բարեփոխումների առաջնահերթությունների և իրականացվելիք քայլերի հերթականության վերաբերյալ, քանի որ սովորաբար սահմանափակ են ռեսուրսները և բարեփոխումներ իրագործելու՝ միջազգային և ազգային շահակիցների կարողությունները: Այդ մարտահրավերները հաղթահարելու համար անհրաժեշտ է նաև, որ բոլոր շահակիցները պարտավորվեն հարգել ձեռք բերված պայմանավորվածությունները:

Այս համատեքստում կարևոր է հաշվի առնել բարեփոխումների քաղաքական բնույթը՝ ներառյալ բարեփոխումների հնարավոր օգտակարությունը տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակի տարբեր սուբյեկտների համար: ԶԱՀ-ի կոնկրետ սուբյեկտին մեկ այլ

⁵³ Ծրագրերի գնահատման և «ըստ արդյունքի ցուցանիշների» բյուջետավորման ծրագրի վերաբերյալ լիարժեք տեղեկությունների համար տե՛ս OSCE, *Performance-Based Programme Budgeting*, Vienna, 2007 [ԵԱՀԿ, *Ըստ արդյունքի ցուցանիշների բյուջետավորման ծրագիրը*, Վիեննա, 2007 թ.], OSCE, *A Guide to Using Performance Indicators in the OSCE*, Programming and Evaluation Support Unit, Vienna, March 2009 [ԵԱՀԿ, *ԵԱՀԿ-ում արդյունավետության ցուցանիշների օգտագործման ուղեցույցը*, Ծրագրման և գնահատման ապահովման ստորաբաժանում, Վիեննա, 2009 թվականի մարտ], և OSCE, *Project Management in the OSCE. A Manual for Programme and Project Managers*, Vienna, 2010 [ԵԱՀԿ, *ԵԱՀԿ ծրագրերի կառավարումը. ուղեցույց ծրագրերի և նախագծերի ղեկավարների համար*, Վիեննա, 2010 թ.]:

սուբյեկտի «հաշվին» փաստացի ուժեղացնելը կամ նման տպավորություն թողնելը կարող է ի չիք դարձնել կառույցների միջև առկա փխրուն քաղաքական հավասարակշռությունը և առաջացնել դիմադրություն «տանուլ տվողի» կողմից:

Ավելին, եթե հանրությունը չնկատի իրեն սպասող անմիջական օգուտները և ունենա այն զգացողությունը, թե բարեփոխումները չեն բարելավում և չեն բարելավելու իր անվտանգությունը և ապահովությունը, ապա նա (հանրությունը) չի սատարի բարեփոխումների գործընթացին, որի հետևանքով հնարավոր չի լինի դրանք դարձնել շարունակական և մնայուն: Բարեփոխումների գործընթացի մեկնարկից մի քանի ամիս հետո իրականացվող և «արագ արդյունքներ տվող ծրագրերը» կարող են առանց ուշացումների տեսանելիորեն բարելավել ապահովության և անվտանգության վիճակը⁵⁴:

Պետք է հաշվի առնել նաև այնպիսի տեխնիկական խնդիրներ, ինչպիսիք են օգնությունն ստացող պետության կողմից օգնությունը «կլանելու» կարողությունը, անորոշությանը համակերպվելու անհրաժեշտությունը, որի առնչությամբ անհրաժեշտ է ճկուն վերաբերմունք գործընթացին, և հնարավոր ձեռքբերումների առումով իրատեսական լինելու անհրաժեշտությունը:

⁵⁴ Արագ արդյունք տվող ծրագրերը կարող են ներառել ենթակառուցվածքի բաղադրիչներ, մասնավորապես՝ ոստիկանության բաժինների կամ դատարանների կառուցումը կամ վերանորոգումը՝ արդարադատության հասանելիությունը բարձրացնելու նպատակով, կամ անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների նվիրաբերումը՝ անվտանգության և արդարադատության ոլորտի պրակտիկ աշխատողների գործունեությունը բարելավելու համար, կամ իրավապահ մարմինների կամ ուղղիչ համակարգում աշխատողների արագացված ուսուցումները մարդու իրավունքների կամ խոցելի խմբերի հետ աշխատանքի թեմաներով, ինչպես նաև՝ ազատագրված վայրերում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքը կամ ընդհանրապես խոցելի խմբերի նկատմամբ վերաբերմունքը դիտարկող անկախ հանձնաժողովների օժանդակությունը: Լրացուցիչ օրինակների համար տե՛ս UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), pp. 33 and 84 [ՄԱԿԹՀՊԳ/ԱՄՆ-ի խաղաղության հնստիտուտ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հսկամարտություններ վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջեր 33 և 84]:

V. Իրավական դաշտի բարեփոխումները

Առաջնորդվելով իրավունքի գերակայության սկզբունքներով, որոնց համաձայն՝ «բոլոր անձինք, կառույցները և սուբյեկտները՝ պետական թե մասնավոր՝ ներառյալ բուն պետությունը, առաջնորդվում են օրենքներով, որոնք ընդունվել են հրապարակավ, կիրարկվում են հավասարապես, կիրառվում են անկախ դատական մարմինների կողմից»⁵⁵, ԶԱՀ-ին առնչվող օրենքների բարեփոխումը ԶԱՀ-ի արդյունավետության և գործունակության մակարդակի բարձրացման անհրաժեշտ նախապայման է, ուստիև՝ առաջին քայլը ԶԱՀ-ի իրականացման ուղղությամբ:

Հակամարտություններ վերապրած բազմաթիվ տարածաշրջաններում իրավական բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված է նաև կիրառելի օրենքի ընտրության հարցում առկա անորոշությամբ: Դա լուրջ խնդիր էր Կոսովոյում Միավորված ազգերի կազմակերպության Ժամանակավոր վարչական առաքելության համար. Կոսովոյում ազգությամբ ալբանացի դատավորները հրաժարվում էին ճանաչել Հարավսլավիայի 1999 թվականի օրենքը, քանի որ համարում էին, որ վերջինիս պատճառով իրենք ենթարկվել են խտրականության և բռնաճնշումների⁵⁶: Հակամարտությունից առաջ գոյություն ունեցած օրենսդրական որոշակի բազան «մարդու իրավունքներին վերաբերող միջազգային նորմերին և չափանիշներին համապատասխան մեկնաբանելու պահանջով հանդերձ՝ որպես կիրառելի օրենսդրություն» ճանաչելու պրակտիկան, սակայն, իրավական որոշակիությունն ապահո-

⁵⁵ United Nations Security Council, *The rule of law and transitional justice in conflict and post-conflict societies* (op.cit. note 1), Para. 6 [Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ, *Իրավունքի գերակայությունը և անցումային շրջանի արդարադատությունը հակամարտային և հետհակամարտային հասարակություններում* (տե՛ս էջատակի 1-ին ծանոթագրությունը), պարբ. 6]:

⁵⁶ Համեմատ. Stodieck, Thorsten, "International Police Forces in Peace Operations", in: Harvey Langholtz/Boris Kondoch/Alan Wells (eds.), *International Peacekeeping: The Yearbook of International Peace Operations*, Vol. 9 (2005), p. 97 [Թորսթեն Սթոդիեկ, «Միջազգային ոստիկանական ուժերը խաղաղապահ գործողություններում», աղբյուրը՝ Հարվի Լանգհոլց/Բորիս Կոնդոխ/Ալան Վելզ (խմբագիրներ), *Միջազգային խաղաղապահությունը. միջազգային խաղաղապահ գործողությունների տարեգիրք*, հ. 9, 2005 թ., էջ 97], և Համեմատ. Rausch, *Combating Serious Crimes in Post-Conflict Societies* (op.cit. note 47), p. 51 [Քոլեթ Ռաուշ (խմբ.), *Պայքարը ծանր հանցագործությունների դեմ հետհակամարտային հասարակություններում* (տե՛ս էջատակի 47-րդ ծանոթագրությունը), էջ 51]:

վելու փոխարեն հաճախ էլ ավելի է խորացրել իրավական անորոշությունը⁵⁷:

Ընդհանուր առմամբ պետության տարածքում գործող քրեական օրենսդրության մեջ կարող են անհրաժեշտ լինել փոփոխություններ՝ օրենսդրությունը սոցիալական նորմերի և ավանդույթների միջավայրային փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով, ինչպես նաև՝ ահաբեկչության և հանցավորության, մասնավորապես՝ կազմակերպված հանցավորության նոր ձևերից բխող նոր սպառնալիքներին հակազդելու նպատակով: Յետևաբար քրեական նոր օրենքները կարող են կարգավորել նոր քրեական հանցագործություններ, ինչպես նաև՝ նախատեսել քննության նոր գործիքներ: Նոր հանցագործություններից կարող են լինել կենցաղային կամ գենդերահեն բռնությունը, ատելության հողի վրա կատարվող հանցագործությունները, կոռուպցիան, կամ կազմակերպված հանցավորության նորանոր դրսևորումները, օրինակ՝ փողերի լվացումը, ահաբեկչության ֆինանսավորումը և մարդկանց թրաֆիքինգը: Կարելի է ներառել նաև որոշակի ապրանքների, օրինակ՝ թմրամիջոցների կամ դրանց պրեկուրսորների, ինչպես նաև՝ զենքի անօրինական շրջանառությունը:

Վերոհիշյալ հանցագործություններն անհրաժեշտ է նախատեսել օրենքով, որպեսզի ԶԱՀ-ի կառույցները կարողանան հակազդել դրանց: Որպեսզի ԶԱՀ-ը կարողանա արդյունավետորեն արձագանքել նոր հանցագործություններին, հանցավորության կանխարգելման և քննության նոր գործիքները նույնպես անհրաժեշտ կլինի ամրագրել օրենսդրությամբ: Նոր գործիքներից կարող են լինել քննության նոր հնարքները (օրինակ՝ էլեկտրոնային դիտարկումը, ներդրված գործողությունները, հսկվող առաքումները և փորձագիտական վերլուծությունները), վկաների պաշտպանության միջոցառումները և գործի նյութերի կառավարման նոր համակարգերը:

Ինչ վերաբերում է բարեփոխումների ամբողջականության հայեցակարգին, ապա հարկ է հաշվի առնել, որ օրենսդրության մեկ ոլորտում կատարվող փոփոխությունները սովորաբար ազդում են նաև օրենսդրության այլ ոլորտների վրա: Պետք է ստուգել նոր իրավանորմերի ազդեցությունը ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև հարաբերությունների և շփումների վրա: ԶԱՀ-ում նոր գործառույթների, պարտավորություն-

⁵⁷ Համեմատ. Cp. UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), p. 63 [ՄԱԿԹՀՊԳ/ԱՄՆ-ի խաղաղության ինստիտուտ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 63]:

ների և գործիքների ներդրման պայմաններում, հետևապես, նոր օրենսդրությամբ անհրաժեշտ կլինի հստակեցնել իրավասությունների նոր բաշխումը ԶԱՀ-ի կառույցների միջև:

Ավելին, նոր օրենքների տեսական արժանիքները և գործնական կիրառելիությունը համադրելու ճանապարհով անհրաժեշտ է հաշվի առնել նաև այդ օրենքների ֆինանսական հետևանքները:

Հետագա բաժիններում նախ՝ վերլուծված են գործող այն օրենքները, որոնք անհրաժեշտ կլինի վերանայել բարեփոխումների գործընթացում: Ապա՝ դիտարկված են մի շարք իրավանորմեր, որոնք վերաբերում են քրեական հանցագործությունների դեմ արդյունավետ պայքար ծավալելու ուղղությամբ ԶԱՀ-ի կառույցների միջև անհրաժեշտ համագործակցությանը:

5.1. Վերանայման ենթակա գործող օրենքները

Պետության գործող օրենքները «ներառում են թե՛ երկրի ներպետական օրենքները, թե՛ միջազգային իրավունքի նորմերը, որոնցով միջազգային մակարդակով նախատեսվում են պետության այն պարտավորությունները, որոնք պետք է կատարվեն երկրի ներսում»⁵⁸:

Միավորված ազգերի կազմակերպությունը համարում է, որ օրենսդրական բարեփոխումների նորմատիվային ընդհանուր հիմքը պետք է ներառի *ՄԱԿ-ի կանոնադրությունը*, մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավունքի նորմերը, միջազգային մարդասիրական իրավունքը, միջազգային քրեական իրավունքը և փախստականներին վերաբերող միջազգային իրավունքի նորմերը: Դրանցով սահմանվում են մարդու համընդհանուր իրավունքները և քրեական արդարադատության այն չափանիշները, որոնք ընդունվել են Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Ավելին, քրեական արդարադատությանը վերաբերող օրենսդրության բարեփոխումները ԵԱՀԿ տարածաշրջանում պետք է համապատասխանեն մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և իրավունքի գերակայության ոլորտներում ԵԱՀԿ հանձնառություններին, որոնք զետեղված են *ԵԱՀԿ Յեյ-սինկյան ակտում*, *Կոպենհագենյան փաստաթղթում*, *Անվտանգության ռազմաքաղաքական առանձնահատկություններին առնչվող վարքագ-*

⁵⁸ Նույն տեղը, էջ 57:

ծի կանոնադրքում և ոստիկանական գործառույթներին առնչվող գործունեության ոլորտում ԵԱՀԿ տարաբնույթ որոշումներում⁵⁹:

Համապարփակ ԶԱՀԲ-ի ընթացքում վերանայման ենթակա են հետևյալ փաստաթղթերը և օրենքները⁶⁰.

- պետությունների սահմանադրությունները,
- նախագահի կամ արքայական իշխանության հրամանագրերը այն պետություններում, որոնցում այդպիսիք ընդունվում են,
- քրեական օրենսգրքերը,
- քրեական դատավարության օրենսգրքերը,
- հանցագործության կոնկրետ տեսակներին առնչվող հատուկ օրենքները,
- ոչ ծանր հանցագործություններին/զանցանքներին վերաբերող օրենսգրքերը, որոնցով նախատեսվում են հասարակական կարգին առնչվող իրավախախտումները և լիազորությունները,
- անչափահասների արդարադատության օրենսգրքերը,
- քրեական դատավարությանը վերաբերող ցանկացած օրենսդրություն այն պետություններում, որոնցում չի ընդունվել քրեական դատավարության օրենսգիրք,
- քրեական պատիժների կատարման մասին օրենքները (եթե դրանք ներառված չեն քրեական դատավարության օրենսգրքում),
- դատարաններին և դատավորների ընտրությանը, նշանակմանը և հեռացմանը վերաբերող օրենքները,
- դատախազներին և նրանց ընտրությանը, նշանակմանը և հեռացմանը վերաբերող օրենքները,
- ոստիկանությանը վերաբերող օրենքները,

⁵⁹ ԵԱՀԿ տարածաշրջանում ԶԱՀ-ում իրականացվող աշխատանքները կարգավորող միջազգային հիմնական կոնվենցիաների, ուղենիշների և հանձնառությունների ցանկի համար տե՛ս Հավելված 1:

⁶⁰ Հանեմատ. Cp. UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), p. 58 [ՄԱԿԹՀՊԳ/Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 58], և Rausch, *Combating Serious Crimes in Post-Conflict Societies* (op.cit. note 473), pp. 43-45 [Քոլեթ Ռաուչ (խմբ.), *Պայքարը ծանր հանցագործությունների դեմ հետիսկանարտային հասարակություններում* (տե՛ս էջատակի 47-րդ ծանոթագրությունը), էջեր 43-45]:

- բանտերի և պրոբացիոն ծառայությունների մասին օրենքները,
- հետախուզական ծառայությունների և գաղտնի ոստիկանության գործունեությունը կարգավորող օրենքները,
- անձնական տվյալների պաշտպանության և թվային տեղեկատվության համակարգերի մասին օրենքները,
- ներպետական զինված ուժերին վերաբերող օրենքները՝ այն մասով, որով դրանք առնչվում են հասարակական կարգին, ազատագրվմանը կամ քաղաքացիական կամ քրեական գործերով իրականացվող քննություններին,
- երկրում իրավունքի պրակտիկային վերաբերող օրենքները՝ ներառյալ անվճար իրավաբանական օգնության մասին օրենքները և փաստաբանների միությունների մասին օրենքները,
- տուժողների և վկաների պաշտպանության և աջակցության մասին օրենքները,
- խտրականության դեմ պայքարին վերաբերող օրենքները,
- դատավորների, դատախազների, փաստաբանների և ոստիկանների վարքագծի համապատասխան կանոնադրությունները,
- վերահսկող կառույցների մասին օրենքները (օրինակ՝ օմբուդսմենի մասին օրենքը),
- իրավաբանական կրթության մասին օրենքները,
- արդարադատության և անվտանգության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցներին վերաբերող օրենքները, վերջիններիս համակարգի և պետության ֆորմալ համակարգի հարաբերություններին վերաբերող օրենքները,
- քրեական գործերով սովորության կամ սովորության իրավունքի նորմերը, եթե օրենսդրության համաձայն դրանք կիրառելի են,
- անվտանգության մասնավոր ծառայություններին վերաբերող օրենքները,
- պետական գործիչների և հանրային ծառայողների անձեռնմխելիությանը վերաբերող օրենքները,
- միավորումների (ներառյալ հասարակական կազմակերպությունների) մասին օրենքները,

- հատուկ դատարանների կամ անցումային արդարադատության մեխանիզմների ստեղծման մասին օրենքները:

Հակամարտություններ վերապրած պետություններում իրավական դաշտը կարող է ներառել նաև խաղաղության համաձայնագրերով և Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով/մանդատներով ամրագրված դրույթները⁶¹:

Ինչպես նշվեց, ԵԱՀԿ մասնակից որոշ պետություններում իրավական դաշտը կարող է, գրված ֆորմալ օրենքներից զատ, ներառել նաև տարաբնույթ սովորույթային նորմեր և կրոնի վրա հիմնված ավանդույթներ և օրենքներ, որոնք կարող են ազդել արդարադատության և անվտանգության ծառայությունների մատուցման վրա:

Ի լրումն քրեական արդարադատության արդյունավետ և գործունակ գործընթացի կազմակերպման հարցում վերոհիշյալ օրենքների համարժեքությունը հստակեցնելուն՝ օրենքի վերանայմամբ հնարավոր է լինում նաև պարզել, թե պետության միջազգային իրավական համաձայնագրերով նախատեսված պարտավորություններն արդյո՞ք իրավական ուժ են հաղորդել քրեական արդարադատության գործընթացին և որքանով: Օրինակ, եթե պետությունը ստորագրել և վավերացրել է ՄԱԿԱԿԻԿ-ն, ապա օրենսդրությամբ ամրագրելով և արդյոք Կոնվենցիայով պահանջվող քրեական հանցագործություններին առնչվող նյութական իրավունքի նորմերը և դատավարական նորմերը՝ ներառյալ արտահանձնման, իրավական փոխօգնության և իրավապահ մարմինների միջև միջազգային համագործակցության իրավական մեխանիզմի ստեղծումը⁶²:

Ի լրումն միջազգային համաձայնագրերին՝ պետությունը կարող է նաև ստորագրած և վավերացրած լինել տարածաշրջանային կամ երկկողմ պարտադիր համաձայնագրեր այլ պետությունների կամ կազմակերպությունների հետ, որոնք կարող են իրավական ազդեցություն ունենալ քրեական արդարադատության ազգային և անդրազգային գործընթացների վրա:

Վերջապես, անհրաժեշտ է վերանայել կիրառելի ֆորմալ և ոչ ֆորմալ օրենքները՝ պարզելու դրանց համապատասխանությունը մարդու իրավունքներին վերաբերող միջազգային վերոհիշյալ չափանիշներին և քրեական արդարադատության չափանիշներին, որպեսզի հնարավոր

⁶¹ Նույն տեղը, էջ 43:
⁶² Նույն տեղը, էջ 40:

լինի անդրադառնալ տարաբնույթ համընդհանուր հիմնախնդիրների, ինչպիսիք են մարդու իրավունքների հարգումը ԶԱՀ-ի գործունեության մեջ՝ ներառյալ խոցելի խմբերի պաշտպանությունը, գենդերային բաղադրիչի ներառումը և ԶԱՀ-ի հաշվետվողականության և վերահսկելիության ապահովումը:

Վերոհիշյալ համընդհանուր հիմնախնդիրներից զատ՝ հետևյալ բաժինն առաջին հերթին անդրադառնում է իրավական այն բարեփոխումներին, որոնք վերաբերում են ԶԱՀ-ի տարբեր կառույցների, պետական այլ մարմինների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համագործակցության բարելավման միջոցառումներին՝ նպատակ ունենալով ավելի արդյունավետ և գործունակ դարձնել քրեական արդարադատության գործընթացը:

5.2. Իրավական դրույթների վերանայումը ԶԱՀ-ի արձագանքը բարելավելու նպատակով

5.2.1. Խորացված համագործակցությունը ԶԱՀ-ի կառույցների միջև

ԶԱՀ-ին վերաբերող իրավական դաշտի վերանայումը պետք է նպատակ հետապնդի աջակցելու քրեական արդարադատության գործընթացում ներգրավված նախարարությունների, գերատեսչությունների և այլ կառույցների համար միասնական քաղաքականության և ընթացակարգերի ձևավորմանը:

Հաշվի առնելով, որ իրավական դաշտի բարեփոխումները պետք է համապատասխանեցնել ազգային իրավիճակին, իսկ ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև հարաբերությունները կարող են տարբեր պետություններում տարբերվել, ընդհանուր բնույթ ունեցող հետևյալ մտահոգությունները կիրառելի են տարբեր պետությունների առանձնահատուկ իրավիճակներում:

Ավելին, ԶԱՀ-ի կառույցների միջև համագործակցության խորացմանը վերաբերող իրավական դրույթների օրինակները հիմնականում վերցված են *Քրեական օրինակելի օրենսգրքից* (ԶՕՕ) և *Քրեական դատավարության օրինակելի օրենսգրքից* (ԶԴՕՕ), որոնք մշակվել են Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտի և Մարդու

իրավունքների իռլանդական կենտրոնի կողմից՝ ՄԱԿԹՅՊԳ-ի և Միավորված ազգերի կազմակերպության և Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի համագործակցությամբ: Այդ դրույթները կարող են տեղայնացվել և ներառվել ազգային նոր օրենքում կամ՝ առնվազն օգտագործվել որպես ոգեշնչման աղբյուր օրենսդրության բարեփոխումների գործընթացում⁶³:

Միաժամանակ, օրենքները վերանայողներին և նոր օրենքների հեղինակներին խորհուրդ է տրվում օգտագործել *Քրեական դատավարության տեղեկատվական ուղեցույց*⁶⁴, որը նախաձեռնել և որի մշակմանն օժանդակել են Բելգիան և Իսպանիան՝ որպես ԵԱՀԿ-ում նախագահող պետություններ: Ուղեցույցը մշակվել է 2006-2007 թվականներին՝ ԵԱՀԿ Ոստիկանական գործունեության ռազմավարական հարցերի ստորաբաժանման կողմից, սերտորեն համագործակցելով Քրեական դատավարության հարցերով բարձրաստիճան աշխատանքային խմբի հետ: Վերջինիս կազմում եղել են միջազգային տարբեր կազմակերպությունները և ԵԱՀԿ մասնակից պետությունները ներկայացնող՝ քրեական արդարադատության փորձագետներ, ուստի ներկայացված են եղել ԵԱՀԿ տարածաշրջանի այնպիսի պետություններ, որոնց քրեական արդարադատության համակարգերը տարբեր են, և այդպեղյա երաշխավորվել է քրեական արդարադատության ոլորտում միջազգայնորեն ընդունված նորմերի և չափանիշների պահպանումը: *Քրեական դատավարության տեղեկատվական ուղեցույցի* մեջ թվարկված են որոշ ընդհանուր դրույթներ, որոնց շուրջ համաձայնության են եկել քրեական արդարադատության տարբեր համակարգերի ներկայացուցիչները:

Հաշվի առնելով, որ քաղաքացիական իրավական համակարգի և նախադեպային իրավական համակարգի բաժանարար սահմաններն ազգային օրենսդրության ներսում հաճախ ձուլվում են՝ պայմանավորված

⁶³ Համեմատ. United States Institute of Peace, *Model Criminal Code*, Model Codes for Post-Conflict Criminal Justice, Volume I, Washington, D.C., 2007 [Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտ, *Քրեական օրինակելի օրենսգիրք*, Հետհակամարտային քրեական դատավարության օրինակելի օրենսգրքեր, հատոր I, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 2007 թ.], և United States Institute of Peace, *Model Code of Criminal Procedure*, Model Codes for Post-Conflict Criminal Justice, Volume II, Washington, D.C., 2008 [Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտ, *Քրեական դատավարության օրինակելի օրենսգիրք*, Հետհակամարտային քրեական դատավարության օրինակելի օրենսգրքեր, հատոր II, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 2008 թ.]:

⁶⁴ Համեմատ. OSCE, *Reference Guide to Criminal Procedure*, SPMU Publication Series Vol. 2, Vienna, December 2006 [ԵԱՀԿ, *Քրեական դատավարության տեղեկատվական ուղեցույց*, ՈԳՈՒ-ի հրատարակությունների շարք, հ. 2, Վիեննա, 2006 թվականի դեկտեմբեր]:

իրավական նախկին բարեփոխումների ընթացքում տարբեր համակարգերից կատարված փոխառություններով, ազգային օրենքները հաճախ ունենում են «խառնուրդային» բնույթ: Յետևաբար նոր օրենքների հեղինակները կարող են ընտրել և միախառնել տարբեր համակարգերի այն առանձնահատկությունները և իրավանորմերը, որոնք լավագույնս կաշխատեն իրենց երկրի պայմաններում⁶⁵:

Չարաբերությունները ԶԱՀ-ի կառույցների միջև

Իրավական համակարգի բարեփոխումները պետք է ընդհանուր առմամբ երաշխավորեն ձերբակալության, նախնական կալանքի, քննության և դատական ընթացակարգերի մեջ, ինչպես նաև տուժողների աջակցության և դատապարտյալների ուղղման և վերաինտեգրման հարցերում ԶԱՀ-ի տարբեր կառույցների հիմնական պարտականություններին, գործառույթների և իրավասությունների հստակ ձևակերպումը:

Բարեփոխումների այդ քայլի հաջորդ նպատակը պետք է լինի պարտավորությունների առնչությամբ առկա իրավական անորոշության վերացումը՝ մի կողմից ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև կրկնվող պարտավորությունները բացառելու, իսկ մյուս կողմից՝ ԶԱՀ-ի կառույցների պարտավորությունների «բացերը» լրացնելու ճանապարհով: Դաշնային պետություններում դրա համար պահանջվում են նաև կենտրոնական/ազգային և տարածաշրջանային մակարդակի միևնույն ճյուղերի ԶԱՀ-ի կառույցների պարտավորություններին վերաբերող հստակ դրույթներ:

Ավելին, քրեական դատավարության օրենսգրքերով կամ տարբեր օրենքներով պետք է սահմանել քրեական քննության իրականացման կարգը՝ ներառյալ, օրինակ, թե ով է վարելու քննությունը: Օրենսգրքերը և օրենքները պետք է հստակորեն նպաստեն ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև սերտ համագործակցությանը:

Իրավական համակարգի բարեփոխումների արդյունքում ազգային օրենսդրությամբ պետք է երաշխավորել նաև դատական իշխանության անկախությունն իրավապահ մարմիններից՝ հստակորեն սահմանելով

⁶⁵ Համեմատ. United States Institute of Peace/United States Army Peacekeeping and Stability Operations Institute, *Guiding Principles for Stabilization and Reconstruction*, Washington D.C., 2009, p. 73 [Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտ/Ամերիկայի Ամերիկայի Միացյալ Նահանգների բանակի խաղաղապահ և կայունության գործողությունների ինստիտուտ, *Կայունացման և վերականգնման ուղղորդիչ սկզբունքները*, Վաշինգտոն, ԱՄՆ, 2009 թ., էջ 73]:

անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորույթային և ոչ պետական կառույցների պարտավորությունները, ինչպես նաև՝ նրանց համագործակցությունը և համակարգումը ֆորմալ ԶԱՀ-ի կառույցների հետ:

Ինչ վերաբերում է քրեական արդարադատության գործընթացում ԶԱՀ-ի տարբեր կառույցների պարտավորություններին, ապա ԶԴՕՕ-ում ներառված են դրանց վերաբերող մի քանի դրույթներ⁶⁶.

- ԶԴՕՕ-ի 45-րդ հոդված. նկարագրվում են դատախազության պարտականությունները,
- ԶԴՕՕ-ի 46-րդ հոդված. նկարագրվում են առանձին դատախազների պարտականությունները,
- ԶԴՕՕ-ի 53-րդ հոդված. նկարագրվում են ոստիկանության պարտականությունները,
- ԶԴՕՕ-ի 91-րդ հոդված. նկարագրվում է քրեական քննության իրականացման կարգը:

ԶԴՕՕ-ում հաշվի է առնված այն փաստը, որ որոշ ԶԱՀ-երում ենթադրյալ քրեական հանցագործության ողջ քննության և ապացույցների պահպանության միակ պատասխանատուն ոստիկանությունն է՝ նախքան գործը դատախազությանը փոխանցելը, որից հետո դատախազությունն է որոշում կայացնում այն մասին, թե արդյոք առկա են բավարար ապացույցներ քրեական հետապնդում հարուցելու համար: Կան նաև այլ՝ հակադիր համակարգեր, որոնցում քննությունը նույնպես ուղղորդում է դատախազությունը, որը պատասխանատու է գործի կազմման և ապացույցների պահպանության համար⁶⁷:

- ԶԴՕՕ-ի 93-րդ հոդված. նկարագրվում են պաշտոնապես քննություն հարուցելուց առաջ ոստիկանության կողմից կատարվող քննչական գործողությունները:
- *Միավորված ազգերի կազմակերպության Թմրամիջոցների միջազգային հսկողության ծրագրի (ՄԱԿԹՅԾ) «Վկաների պաշտպանության մասին» 2000 թվականի օրինակելի օրենքում* գե-

⁶⁶ Հաշվի առնելով, որ ԶԴՕՕ-ի բոլոր վերաբերելի դրույթների ներկայացումը չէր տեղավորվի սույն Ուղեցույցի շրջանակի մեջ, ընթերցողներին խորհուրդ է տրվում առանձին ուսումնասիրել ԶԴՕՕ-ն:

⁶⁷ USIP, *Model Code of Criminal Procedure* (op.cit. note 63), p. 103 [ԱՄՆ-ի խաղաղության ինստիտուտ, *Քրեական դատավարության օրինակելի օրենսգիրք* (տե՛ս էջատակի 63-րդ ծանոթագրությունը), էջ 103]:

տեղված են վկայի պաշտպանության ծրագրեր նախաձեռնելու, իրականացնելու և դադարեցնելու հարցում ԶԱՀ-ի կառույցների պարտավորություններին վերաբերող օրինակելի օրենսդրական դրույթներ⁶⁸:

ԶԱՀ-ի պարտավորությունների իրավական բարեփոխումների օրինակներ

Դատախազի կողմից վարվող քննության ներդրումը

Բոսնիա-Չերցեգովինայում դատախազի կողմից վարվող քննության մոդելը ներդրվել է 2003-2004 թվականներին⁶⁹: Քննության լիազորությունները դատարաններից դատախազությանը փոխանցելու նպատակն էր հանցագործությունների՝ ներառյալ պատերազմական հանցագործությունների քրեական հետապնդման գործում ավելի արդյունավետ և գործունակ դարձնել քրեական արդարադատության տեղական համակարգը⁷⁰: Քրեական դատավարության նոր դրույթներով ընդլայնվեցին քննությունը պլանավորելու, կառավարելու և ուղղորդելու՝ դատախազի լիազորությունները: Դատախազին իրավունք

⁶⁸ United Nations International Drug Control Programme, *UNDCP Model Witness Protection Bill 2000*, 2000 [Միավորված ազգերի կազմակերպության Թմրամիջոցների միջազգային հսկողության ծրագիր, *ՄԱԿԹՀԾ-ի 2000 թ. օրինակելի օրենքը վկաների պաշտպանության մասին*, 2000 թ.]:

⁶⁹ Criminal Procedure Code of Bosnia and Herzegovina (BiH), effective from 1 March 2003, Official Gazette of BiH, No. 36/2003 [Բոսնիա-Չերցեգովինայի քրեական դատավարության օրենսգրքը, ուժի մեջ է 2003 թվականի մարտի 1-ից, Բոսնիա-Չերցեգովինայի պաշտոնական տեղեկագիր թիվ 36/2003]:

St' u nas. Radulovic, Drago, "The Concept of Investigation in Criminal Proceedings in the Light of the New Criminal Procedure Legislation", in: Petrovic, Ana/Jovanovic, Ivan, *New Trends in Serbian Criminal Procedure Law and Regional Perspectives. Normative and Practical Aspects*, OSCE Mission to Serbia, Belgrade, 2012, p. 14 [Դրագո Ռադուլովիչ, «Քննության հայեցակարգը քրեական դատավարության շրջանակում քրեական դատավարության մասին Սերբիայի նոր օրենսդրության լույսի ներքո», աղբյուրը՝ Անա Պետրովիչ/Իվան Յովանովիչ, *Նոր միտումները Սերբիայի քրեական դատավարության օրենսգրքում և տարածաշրջանային զարգացումները, նորմատիվային-գործնական առանձնահատկություններ*, Սերբիայում ԵԱՀԿ առաքելություն, Բելգրադ, 2012 թ., էջ 14], և

Dodik, Bozidarka, "Prosecutorial Investigation – the Experiences of Bosnia and Herzegovina", in: Petrovic /Jovanovic, *New Trends in Serbian Criminal Procedure Law and Regional Perspectives* (ibid), p. 26 [Բոզիդարկա Դոդիկ, «Դատախազական քննությունը. Բոսնիա-Չերցեգովինայի փորձը», աղբյուրը՝ Պետրովիչ/Յովանովիչ, *Նոր միտումները Սերբիայի քրեական դատավարության օրենսգրքում և տարածաշրջանային զարգացումները* (նույն տեղը), էջ 26]:

⁷⁰ Համեմատ. DeNicola, Christopher, "Criminal Procedure Reform in Bosnia and Herzegovina: Between Organic Minimalism and Extrinsic Maximalism", 2010, p. 32 [Քրիստոֆեր ԴեՆիկոլա, *Քրեական դատավարության բարեփոխումները Բոսնիա-Չերցեգովինայում. օրգանական մինիմալիզմի և արտաքին մաքսիմալիզմի մեջտեղում*, 2010 թ., էջ 32]:

վերապահվեց նաև իր լիազորությունները փոխանցելու «պետական այլ լիազոր անձանց»: Դա մի կողմից բարձրացրեց պետական լիազոր անձանց դերը, իսկ մյուս կողմից՝ աճեց նրանց կողմից նախաձեռնությունը սեփական ձեռքը վերցնելու կարևորությունը: Դատարաններն այլևս ոչ թե քննում էին, այլ հսկում էին քննության ընթացքում մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները սահմանափակող գործողությունների և միջոցառումների հիմնավորվածությունը⁷¹:

Սերբիայում *Քրեական դատավարության նոր օրենսգրքը* ընդունվեց 2012 թվականին՝ սահմանելով դատախազի կողմից իրականացվող քննության նոր քրեաիրավական կարգավորումները: Նպատակն էր դատախազին առաջատար դեր վերապահել քննության և ապացույցների բացահայտման հարցերում: Դատախազին ավելի ակտիվ դեր վերապահվեց նաև դատական քննության ընթացքում դատարանում փաստերի պարզման առումով: Նոր կարգն ազդեց նաև քննության գործընթացում ոստիկանության դերի վրա, հատկապես կասկածյալների, վկաների և տուժողների հարցազրույցներն անցկացնելու առումով: Ժամանակը ցույց կտա, թե արդյոք դատախազները սեփական նախաձեռնությամբ փորձելու են բացահայտել ապացույցները և ուղղորդելու են ոստիկանությանը՝ կատարելու քննչական կոնկրետ գործողություններ: Այլապես, կարող է պարզվել, որ դատախազները նախընտրում են սպասել և հիմնվել ոստիկանության նախաձեռնած գործողությունների վրա: Զանի որ նոր կարգը սկսել է կիրառվել ընդամենը 2012 թվականից՝ ի սկզբանե սահմանափակված լինելով միայն դատախազության մասնագիտացված ստորաբաժանումներով և կազմակերպված հանցավորության դեմ պայքարող դատական բաժիններով, ուստի դրա ազդեցությունը և արդյունքները 2013 թվականի ընթացքում հնարավոր չեղավ գնահատել:

Շվեյցարիայում 2007 թվականին փոփոխություններ կատարվեցին քրեական դատավարության օրենսգրքում (որոնք ուժի մեջ մտան 2011 թվականի հունվարի 1-ից)՝ նպատակ ունենալով ազգային («Bund») և տարածաշրջանային («Kantone») մակարդակներում սահ-

⁷¹ Հանձնառ. Dodik, Bozidarka, “Prosecutorial Investigation – the Experiences of Bosnia and Herzegovina”, in: Petrovic/Jovanovic, *New Trends in Serbian Criminal Procedure Law and Regional Perspectives* (op.cit. note 69), p. 37 [Բոզիդարկա Դոդիկ, «Դատախազական քննությունը. Բոսնիա-Հերցեգովինայի փորձը», աղբյուրը՝ Պետրովիչ/Յովանովիչ, *Նոր միտումները Սերբիայի քրեական դատավարության օրենսգրքում և տարածաշրջանային զարգացումները* (տե՛ս էջատակի 69-րդ ծանոթագրությունը), էջ 37]:

մանել քրեական միասնական ընթացակարգեր: Փոփոխությունների արդյունքում վերացվեց քննության դատավորի ինստիտուտը, և քննության (ներառյալ նախքան քննությունը կատարվող գործողությունների) բոլոր գործառույթները փոխանցվեցին դատախազներին: Նախքան քննությունը կատարվող գործողություններից մինչև մեղադրանքի պաշտպանությունը բոլոր գործառույթները դատախազությանը վերապահելու նպատակն էր ավելի արդյունավետ դարձնել քրեական դատավարության գործընթացը⁷²:

Քրեական արդարադատության գործընթացում քրեական արդարադատության համապատասխան կառույցների լիազորությունների փոփոխություններ կատարելու դեպքում նոր պարտավորություններ ստացող գերատեսչությանը պետք է տրամադրել բավարար ժամանակ, վերապատրաստումներ և ռեսուրսներ, որպեսզի այն յուրացնի նոր գործառույթները և պարտավորությունները: Ինչ վերաբերում է դատախազի կողմից քննությունը վարելու սկզբունքի ներդրմանը, ապա ԵԱՀԿ մասնակից մի քանի պետություններում քաղված դասն այն էր, որ նոր գործառույթները և պարտավորությունները չափազանց ծանր էին դատախազների համար, քանի որ նրանք պետք է նախաձեռնեին քննությունը, իրականացնեին քննչական ողջ աշխատանքը, գրեին մեղադրական եզրակացությունը, ներկայացնեին գործը դատարանում և իրականացնեին դատարանում ցուցմունք տվող վկաների խաչաձև հարցաքննությունը: Ոստիկանությունը հաճախ չափազանց պասիվ էր դառնում՝ դատախազությանը մեղադրելով քննչական աշխատանքներում ոստիկանությանը բավարար ինքնուրույնություն չվերապահելու մեջ⁷³:

Քրեական վարույթի արագացմանն ուղղված իրավական բարեփոխումների օրինակ

Արագ քննության կարգը Բուլղարիայում

Քրեական վարույթներն արագացնելու նպատակով Բուլղարիայի քրեական դատավարության օրենսգրքի 356-րդ հոդվածով նախատեսվել է «արագ քննության կարգը»: Համաձայն այդ կարգի, որում

⁷² *Schweizerischer Bundesrat, Botschaft zur Vereinheitlichung des Strafprozessrechts (StPO)*, 21. December 2005, էջեր 1105ff.

⁷³ Մասնակից տարբեր պետություններում բարեփոխումների վերաբերյալ խորհուրդներ տվող մասնագետների հետ անցկացված հարցազրույցների հիման վրա:

փոփոխություններ են կատարվել 2006 թվականին, քննիչը պարտավոր է քննությունն ավարտին հասցնել յոթ օրվա ընթացքում, որին հաջորդող երեք օրվա ընթացքում դատախազը պարտավոր է որոշում կայացնել հետագա քայլերի վերաբերյալ:

356(1) հոդվածի համաձայն՝ արագ քննություն է նախատեսվում այն գործերով, որոնցով.

- Անձը ձերբակալվել է հանցանքը գործելու պահին կամ անմիջապես դրանից հետո:
- Անձի մարմնի կամ հագուստի վրա առկա են հանցագործության ակնհայտ հետքեր:
- Անձը ներկայացել է ներքին գործերի նախարարության համապատասխան մարմիններին, քննող մարմին կամ դատախազին՝ կատարված հանցագործության մասին մեղայականով:
- Վկան ճանաչել է անձին՝ որպես հանցանքը կատարողի:

357(1) հոդվածի համաձայն՝ վերահսկող դատախազը պարտավոր է քննության ավարտից հետո երեք օրվա ընթացքում որոշում կայացնել.

- քրեական վարույթը կարճելու մասին (ՔԴՕ-ի 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով),
- քրեական վարույթը կասեցնելու մասին (ՔԴՕ-ի 25-րդ և 26-րդ հոդվածներով սահմանված հիմքերով),
- մեղադրանքը և գործը դատական քննության նպատակով դատարան ուղարկելու մասին,
- վարչական տույժի կիրառությամբ կամ գործի վերաբերյալ հաշտության համաձայնագիր կնքելու առաջարկով՝ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու մասին որոշում կայացնելու մասին միջնորդությունը դատարան ներկայացնելու մասին,
- Նոր ապացույցներ հավաքելու կամ դատավարական կանոնների թույլ տված էական խախտումները վերացնելու նպատակով գործը լրացուցիչ քննության ուղարկելու մասին՝ դրա համար սահմանելով յոթ օրը չգերազանցող ժամկետ:

2012 թվականի առաջին կեսին արագ քննության կարգը կիրառվել է մոտ 4,900 գործով, որն այդ ժամանակահատվածում քննված գործե-

րի մոտ 8 տոկոսն է: 4,900-ից 1,180 գործով դատախազը քննչական լրացուցիչ գործողություններ է կատարել սովորական քննության կարգի շրջանակում⁷⁴:

Քրեական դատավարության տեխնիկական առանձնահատկությունները

Իրավական դաշտի բարեփոխումները պետք է ընդհանուր առմամբ ապահովեն, որ ազգային օրենսդրությունը.

- սահմանի գործի նյութերի կառավարման համար սվյալների շտեմարանների ստեղծման, ինչպես նաև ՔԱՀ-ի տարբեր կառույցների կողմից այդ շտեմարանների օգտագործման կարգը,
- սահմանի ՔԱՀ-ի տարբեր կառույցների միջև օպերատիվ և այլ տեղեկությունների փոխանակման կարգը,
- սահմանի իրեղեն ապացույցների և փորձագիտական ծառայությունների օգտագործման կարգը,
- կանոնակարգի փորձագիտական ծառայությունների ստեղծումը, գործունեությունը և ֆինանսավորումը, ինչպես նաև դատական քննության ընթացքում իրեղեն ապացույցների օգտագործումը և թույլատրելիությունը:

Ինչ վերաբերում է գործի նյութերի կառավարմանը, ապա.

- ԵՂՕՕ-ի 102-րդ հոդվածում նկարագրվում են այն պահանջները, որոնց համաձայն՝ ոստիկանությունը և դատախազությունը պարտավոր են գրավոր տեղեկություններ ունենալ քրեական գործի քննության շրջանակում իրականացված յուրաքանչյուր գործողության մասին, ընդ որում՝ կատարված գործողությունների արձանագրությունները պետք է ներառվեն գործի նյութերի մեջ: *Քրեական դատավարության տեղեկատվական ուղեցույցի*

⁷⁴ Prosecutor's Office of the Republic of Bulgaria, Summary Report of the Work of the Prosecutor's Office for the first half of 2012 [ОБОБЩЕНА ИНФОРМАЦИЯ, ЗА ОБРАЗОВАНИЕТО, ДВИЖЕНИЕТО И РИКЛЮЧВАНЕТО НА ПРЕПИСКИТЕ И ДЕЛАТА В ПРОКУРАТУРАТА НА РЕПУБЛИКА БЪЛГАРИЯ, за I шестмесечие на 2012 г. /Изготвена на основание чл. 142, ал. 3 ЗСВ] [Բուլղարիայի Հանրապետության դատախազություն, 2012 թվականի առաջին կիսամյակի ընթացքում դատախազության գործունեության արդյունքների մասին ամփոփ զեկույց]:

մեջ մանրամասնեցված են գործի նյութերի բովանդակությանն առնչվող այլ պահանջները⁷⁵:

- ԶԴՕՕ-ի 101-րդ հոդվածով առաջարկվում է, որ գործի նյութերը տնօրինի դատախազը, ով պետք է «պատասխանատու լինի քննության ընթացքում ձեռք բերված տեղեկությունների, ապացույցների և իրեղեն նյութերի պահպանման, պահպանության և անվտանգության համար՝ այնքան ժամանակ, քանի դեռ դրանք դատարանում պաշտոնապես չեն ճանաչվել որպես ապացույցներ»⁷⁶: ԶԴՕՕ-ի համաձայն՝ ոստիկանության կատարած քննչական գործողությունների ընթացքում ձեռք բերված ապացույցները պետք է ԶԴՕՕ-ի 91-րդ հոդվածով նախատեսված կարգով տրամադրվեն դատախազին⁷⁷:
- ԶԴՕՕ-ի 37-րդ հոդվածում նկարագրված են դատական նիստերի արձանագրությունները վարելու և դրանք մեղադրողին, պաշտպանին, իսկ «համապատասխան դեպքերում՝ նաև տուժողի իրավաբանին» տրամադրելու՝ դատարանների պարտավորությունները⁷⁸:

Չետևյալը վերաբերում է դատարանում ապացույցների ձեռքբերմանը և օգտագործմանը:

ԶԴՕՕ-ի 106-146-րդ հոդվածներում բավականին մանրամասնորեն նկարագրվում են այն հանգամանքները և ընթացակարգերը, որոնք կիրառելի են դատարանում ընդունելի ապացույցների հավաքագրման համար: Զննչական նոր մեթոդներին և գործիքներին վերաբերում են.

- ԶԴՕՕ-ի 116-117-րդ հոդվածները, որոնք վերաբերում են կասկածյալներից, տուժողներից և այլ անձանցից տեղեկությունների ստացմանը՝ ներառյալ ձերբակալված և այլ անձանց լուսանկարելուն և նրանց մատնահետքերը վերցնելուն,
- ԶԴՕՕ-ի 128-130-րդ հոդվածները, որոնք վերաբերում են համակարգչային տվյալների և հեռահաղորդակցության միջոցներով հաղորդվող տվյալների պահպանությանը և հասանելիությանը,

⁷⁵ Համեմատ. OSCE, *Reference Guide to Criminal Procedure* (op.cit. note 64), p. 19 [ԵԱՀԿ, *Քրեական դատավարության տեղեկատվական ուղեցույց* (տե՛ս էջատակի 64-րդ ծանոթագրությունը), էջ 19]:

⁷⁶ Համեմատ. USIP, *Model Code of Criminal Procedure* (op.cit. note 63), p. 166 [ԱՄՆԻ, *Քրեական դատավարության օրինակելի օրենսգիրք* (տե՛ս էջատակի 63-րդ ծանոթագրությունը), էջ 166]:

⁷⁷ Նույն տեղը, էջեր 166 և 168:

⁷⁸ Նույն տեղը, էջ 82:

- ԵՂՕՕ-ի 134-140-րդ հոդվածները, որոնք նկարագրում են օպերատիվ դիտարկման կամ քննության բողարկված կամ այլ տեխնիկական միջոցները,
- ԵՂՕՕ-ի 142-145-րդ հոդվածները, որոնք նկարագրում են քննության փորձագիտական միջոցառումները:

ԵՂՕՕ-ի 106-146-րդ հոդվածների բովանդակությունը լրացվում է.

- ԵՂՕՕ-ի 228-237-րդ հոդվածներով, որոնք սահմանում են դատական քննության ընթացքում ապացույցների օգտագործման և բացառման կանոնները:

Ապացույցների օգտագործմանը և բացառմանը վերաբերող առավել ընդհանրական դրույթները գետեղված են *Քրեական դատավարության տեղեկատվական ուղեցույցի* մեջ⁷⁹:

5.2.2. Համագործակցության խորացումը ԶԱՀ-ի կառույցների, պետական այլ մարմինների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև

Իրավական դաշտի բարեփոխումները պետք է նպատակաուղղվեն նաև ԶԱՀ-ի կառույցների, պետական այլ մարմինների (օրինակ՝ առողջապահության, կրթության և տնտեսական զարգացման), արդարադատության և անվտանգության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության խորացմանը, որն ընդհանուր առմամբ կնպաստի արդարադատության և անվտանգության ծառայությունների մատուցմանը և դրանց հասանելիության բարելավմանը: Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունները «*Գլոբալ մարտահրավերներին հակազդելու համալիր ռազմավարությունների վերաբերյալ սալվադորյան հռչակագիր. հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության համակարգերը և դրանց զարգացումները փոփոխվող աշխարհում*» խորագիրը կրող Սալվադորյան հռչակագրում ընդգծել են, որ «տեղեկատվության, գիտելիքների և փորձի արդյունավետ և երկուստեք փոխանակման և համատեղ ու համակարգված աշխատանքների միջոցով կառավարությունները և

⁷⁹ Հանձնառ. OSCE, *Reference Guide to Criminal Procedure* (op.cit. note 64), pp. 31ff [ԵԱՀԿ, *Քրեական դատավարության տեղեկատվական ուղեցույց* (տե՛ս էջատակի 64-րդ ծանոթագրությունը), էջ 31 և շարունակ.]:

տնտեսվարողները կարող են մշակել, բարելավել և իրագործել միջոցառումներ, որոնք թույլ կտան կանխել, քրեական հետապնդման ենթարկել և պատժել հանցագործությունները՝ ներառյալ նորահայտ և փոփոխվող մարտահրավերները»⁸⁰: Տնտեսական և սոցիալական խորհրդի «Հանցավորության կանխարգելման ուղենիշները» խորագրով թիվ 2002/13 բանաձևում, որը հանցավորության կանխարգելման արդյունավետության մասով սերտորեն կապակցված է Սալվադորյան հռչակագրին, նույնպես խրախուսվում է «համագործակցությունը և գործընկերությունը տարբեր նախարարությունների և իրավասու մարմինների, համայնքային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, մասնավոր հատվածի և քաղաքացիների միջև»: Ավելին, արդարադատության ոլորտի կառույցների և այլ մասնագետների, օրինակ՝ առողջապահության և սոցիալական ծառայություններ մատուցողների գործունեության համակարգման պահանջը նախատեսված է նաև *Քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության հասանելիության մասին Միավորված ազգերի կազմակերպության սկզբունքների և ուղենիշների* փաստաթղթում⁸¹:

⁸⁰ United Nations, *Salvador Declaration on Comprehensive Strategies for Global Challenges: Crime Prevention and Criminal Justice Systems and Their Development in a Changing World*, The Twelfth United Nations Congress on Crime Prevention and Criminal Justice, Annex, Resolution A/RES/65/230, Sixty-fifth session, 1 April 2011, Para. 34 [Միավորված ազգերի կազմակերպություն, *Գլոբալ մարտահրավերներին հակազդելու համալիր ռազմավարությունների վերաբերյալ սալվադորյան հռչակագիր. հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության համակարգերը և դրանց զարգացումները փոփոխվող աշխարհում*, Միավորված ազգերի կազմակերպության 12-րդ կոնգրեսը նվիրված հանցավորության կանխարգելմանը և քրեական դատավարությանը, հավելված, բանաձև A/RES/65/230, 65-րդ նստաշրջան, 1-ն ապրիլի 2011 թ., պարբ. 34]:

⁸¹ United Nations, *Guidelines for the Prevention of Crime*, Annex, ECOSOC Resolution 2002/13, *Action to promote effective crime prevention*, New York, 24 July 2002, Para. 9 [Միավորված ազգերի կազմակերպություն, *Հանցավորության կանխարգելման ուղենիշները, Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 2002/13 բանաձևի հավելված, Հանցավորության արդյունավետ կանխարգելման օժանդակելու միջոցառումները*, Նյու Յորք, 24-ը հուլիսի, 2002 թ., պարբ. 9], և United Nations, *United Nations Principles and Guidelines on Access to Legal Aid in Criminal Justice Systems*, Vienna, 25 April 2012, Para 55 (c), p. 16 [Միավորված ազգերի կազմակերպություն, *Միավորված ազգերի կազմակերպության սկզբունքները և ուղենիշները քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության հասանելիության մասին*, Վիեննա, 25-ը ապրիլի, 2012 թ., պարբ. 55(գ), էջ 16]:

5.2.3. Մարդու իրավունքներին առնչվող դրույթները

Ինչ վերաբերում է մարդու իրավունքներին, ապա իրավական դաշտի բարեփոխումներով պետք է ապահովել, որ ազգային օրենսդրության մեջ.

- Պատշաճ և լիարժեք կերպով ներդրվի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների՝ միջազգային չափանիշներից և պարտավորություններից բխող հայեցակարգը:
- Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները հարգելու և պաշտպանելու ուղղակի պահանջ սահմանվի ԶԱՀ-ի կառույցների համար:
- ԶԱՀ-ի կառույցների համար ուղղակի պահանջ սահմանվի՝ աշխատանքի մեջ հաշվի առնելու գենդերային հիմնախնդիրները, ինչպես նաև խոցելի խմբերի՝ ներառյալ երեխաների և փոքրամասնությունների իրավունքները և օրինական շահերը:
- Սահմանվեն ոստիկանությունում և նախնական կալանքի վայրերում անազատության մեջ պահելու ժամկետները:
- Սահմանվեն ԶԱՀ-ի կառույցների պարտավորությունները հանցագործությունից տուժած անձանց և քրեական գործերով վկաների նկատմամբ:

Դժվարություններ կարող են ծագել այն ժամանակ, երբ վկայի՝ անախուն մնալու իրավունքը հարգելուն զուգահեռ անհրաժեշտ է հարգել մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տվող վկաներին հրավիրելու և հարցաքննելու իրավունքը⁸²:

⁸²

Տե՛ս, օրինակ, United Nations, *International Covenant on Civil and Political Rights*, New York, 16 December 1966, article 14 (3) (e); the *Statute of the International Criminal Court*, Article 67 (1) (e) [Միավորված ազգերի կազմակերպություն, *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը*, Նյու Յորք, 16-ը դեկտեմբերի, 1966 թ., 14 (3) (ե) հոդված, *Միջազգային քրեական դատարանի կանոնադրության* 67 (1) (ե) հոդված], կամ Council of Europe, *European Convention on Human Rights/Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms* (1950), Article 6 (3) (e) [Եվրոպայի խորհուրդ, *Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա / Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա* (1950 թ.), 6 (3) (ե) հոդված]:

5.2.4. Հաշվետվողականությունը և վերահսկողությունը

Ազգային օրենսդրությամբ անհրաժեշտ է նաև սահմանել ԶԱՀ-ի կառույցների նկատմամբ ժողովրդավարական քաղաքական վերահսկողության սկզբունքները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ ԶԱՀ-ի ինտեգրման սկզբունքը:

Իրավական դաշտի բարեփոխումներով անհրաժեշտ է ապահովել, որ ազգային օրենսդրությամբ.

- Նախատեսվի էթիկայի և վարքագծի համապատասխան կանոնագրքերի մշակումը ԶԱՀ-ի տարբեր կառույցների աշխատողների համար:
- Կարգավորվի կոռուպցիայի դեմ պայքարը հանրային ոլորտում՝ ներառյալ ԶԱՀ-ի կառույցներում:
- Ապահովվի իշխանության այլ ճյուղերի նկատմամբ դատական/դատախազական ծառայությունների վերահսկողական լիազորությունների ամրագրումը:
- Ապահովվի ԶԱՀ-ի թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների ստեղծումը՝ ներառյալ ԶԱՀ-ի կառույցների գործունեությունը և ֆինանսավորումը մշտադիտարկող և վերահսկող ներքին և արտաքին մեխանիզմների ստեղծումը:

Օրենքի ուժով ստեղծվող վերահսկողական համապատասխան կառույցները կարող են լինել գործադիրի կազմում (պետական քաղաքականության վերահսկողություն, ֆինանսական վերահսկողություն և հորիզոնական վերահսկողություն կառավարական մարմինների կողմից), օրենսդիրի կազմում (խորհրդարանի անդամներ, խորհրդարանական ուսումնասիրող հանձնաժողովներ), դատական իշխանության կազմում⁸³, ինչպես նաև՝ մարդու իրավունքների հանձնաժողովներ, քաղաքացիների բողոքները քննող հանձնախմբեր կամ անկախ օմբուդսմեններ: Ավելին, զանգվածային լրատվամիջոցները կարող են կարևոր դեր կատարել՝ հանրությանը տեղեկություններ տրամադրելով ոստիկանության գործունեության մասին: Շատ կարևոր է, սակայն, որ զանգվածային լրատվամիջոցներն աշխատանքում հետևեն մաս-

⁸³ Համեմատ. Council of Europe, *Recommendation Rec(2001) 10 of the Committee of Ministers to Member States on the European Code of Police Ethics* (2001), §§ 60 and 62 [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի Rec (2001) 10 հանձնարարական անդամ պետություններին՝ Ոստիկանական էթիկայի եվրոպական կանոնագրի վերաբերյալ* (2001 թ.), §§ 60 և 62]:

նագիտական վարքագծի կանոնագրքին, իսկ տրամադրված տեղեկությունները չվտանգեն ոստիկանության կողմից իրականացվող քննությունները և հասարակական անվտանգության կամ անմեղության կանխավարկածի պահպանման համար անհրաժեշտ տեղեկությունների գաղտնիությունը⁸⁴: Արտաքին վերահսկողական կառույցների աշխատանքը լրացնող՝ ներքին վերահսկողության կառույցներից կարող են լինել ներքին քննության ստորաբաժանումները կամ քրեական արդարադատության ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաներից կազմված ժամանակավոր կարգապահական հանձնաժողովները:

Հաշվետվողականության և վերահսկողության հետ կապված օրենսդրության մեջ անհրաժեշտ են հղումները ԶԱՀ-ի պաշտոնյաների համար միջազգայնորեն ընդունված վարքագծի կանոններին: Նշված օրենսդրությունը պետք է համահունչ լինի վերջիններիս (տե՛ս նաև 4.4. Ենթագլուխը):

Շվեյցարիայում «Քրեական արդարադատության կառույցների կազմակերպման մասին» նոր օրենքը, որն ընդունվեց 2010 թվականին և ուժի մեջ մտավ 2011-ին՝ քրեական դատավարության նոր օրենսգրքի հետ միասին, Դաշնային խորհրդարանին («*Bundesversammlung*») վերապահեց Դաշնային դատախազության գործունեությունը վերահսկելու բացառիկ իրավասությունը: Խորհրդարանին վերապահվեց դաշնային գլխավոր դատախազին ընտրելու և նրա աշխատանքը վերահսկելու իրավասությունը: Այդ փոփոխության նպատակն էր երաշխավորել դատախազության անկախությունն իշխանության գործադիր ճյուղից⁸⁵:

Իրավական դաշտի վերանայմանը հաջորդող բարեփոխումները պետք է միտված լինեն օրենքի հիման վրա համապատասխան քաղաքականության և ընթացակարգերի մշակմանը, օրենքի իրագործման համար անհրաժեշտ կազմակերպական և կառուցվածքային մեխանիզմների ներդրմանը, օրենքի իրագործման առնչությամբ ԶԱՀ-ի աշխատողների մասնագիտական կատարելագործմանը և վերապատրաստմանը,

⁸⁴ Համեմատ. OSCE, *Guidebook on Democratic Policing* (op.cit. note 25), pp. 39 and 43 [ԵԱՀԿ, *Ոստիկանական գործունեության ժողովրդավարական հիմունքների մասին ձեռնարկ* (տե՛ս էջատակի 25-րդ ծանոթագրությունը), էջեր 39 և 43]:

⁸⁵ Ständerat, *Bericht der Kommission für Rechtsfragen vom 3. Juni 2009: 08.066 s Strafbahördenorganisationsgesetz; Wahl des Bundesanwalts oder der Bundesanwältin und Aufsicht über die Bundesanwaltschaft*, պարբ. 3, էջեր 2-5:

պրակտիկայում ՔԱՀ-ի կառույցների կողմից նոր օրենքի, քաղաքականության և կանոնակարգերի իրագործման արդյունավետության գնահատմանը և գնահատման հիման վրա բարեփոխումների գործընթացի ճշգրտմանը՝ նպատակ հետապնդելով այն դարձնել ավելի արդյունավետ և շարունակելի:

Բարեփոխումների բոլոր այդ քայլերը սկարագրված են հաջորդ գլուխներում:

VI. Զաղաքականության, ընթացակարգերի, կանոնների և կանոնակարգերի մշակումը/բարեփոխումը

Օրենսդրությունը գործողությունների վերածելու և գործնականում կիրառելու համար անհրաժեշտ է ընդունել քաղաքականություն, որով կսահմանվեն օրենքների կիրառության մեխանիզմները: Ավելին, քաղաքականությունը և այն իրագործելու համար անհրաժեշտ միջոցառումները պետք է հստակորեն ձևակերպել «պետական քաղաքականության պաշտոնական հայեցակարգերի» տեսքով: Զաղաքականության հայեցակարգերը պետք է ներառեն նաև առաքելության և տեսլականի ձևակերպումները, որոնցում պետք է հակիրճ բացատրված լինեն տվյալ քաղաքականության իրագործման առումով պետության և ԶԱՀ-ի հետապնդած նպատակները: Տեսլականի և առաքելության ձևակերպումները նույնպես պետք է նորմատիվային բնույթ ունենան⁸⁶: Զաղաքականությունը և այն իրագործելու համար անհրաժեշտ միջոցառումները պետք է հրապարակային օժանդակություն ստանան քաղաքական առաջնորդներից և ԶԱՀ-ի կառույցների ղեկավարներից⁸⁷: Ավելին, ԶԱՀ-ի բոլոր սուբյեկտները պետք է ԶԱՀ-ի կառույցներին քաջալերեն՝ կյանքի կոչելու այդ քաղաքականությունը և օժանդակություն ցուցաբերելու դրանց (տե՛ս նաև IV գլուխը):

Զաղաքականությունն իրագործելու և իրագործումը մշտադիտարկելու համար անհրաժեշտ ռազմավարությունները և միջոցառումների ծրագրերը, ինչպես նաև համապատասխան ընթացակարգերը, կանոնները և կանոնակարգերը պետք է մշակվեն պետական մարմինների և ԶԱՀ-ի կողմից՝ սերտորեն համագործակցելով քաղաքացիական հասարակության և անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների հետ:

⁸⁶ Համեմատ. OSCE, *Good Practices in Building Police-Public Partnerships by the Senior Police Adviser to the OSCE Secretary General*, SPMU Publication Series Vol. 4, Vienna, May 2008, pp. 36 and 38 [ԵԱՀԿ, *Ոստիկանության և հասարակության միջև գործընկերության ձևավորման լավագույն փորձը, հեղինակ՝ ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի ավագ խորհրդական ոստիկանության հարցերով, ՈԳՈՀԱ հրատարակությունների շարք, հ. 4, Վիեննա, 2008 թվականի մայիս, էջեր 36 և 38*]:

⁸⁷ Համեմատ. OSCE, High Commissioner on National Minorities, *Recommendations on Policing in Multi-Ethnic Societies*, The Hague 2006, p. 10 [ԵԱՀԿ, Ազգային փոքրամասնությունների հարցերով գերագույն հանձնակատար, *Բազմաէթնիկ հասարակությունում ոստիկանության գործունեության վերաբերյալ հանձնարարականներ*, Հաագա 2006 թ., էջ 10]:

Ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի մեջ անհրաժեշտ կլինի հղումներ կատարել ԶԱՀ-ի ելակետային գնահատման արդյունքներին և քրեական արդարադատության գործընթացի բարելավման վերաբերյալ արված հիմնարար ենթադրություններին: Վերջիններս պետք է ներառեն քրեական արդարադատության յուրաքանչյուր կառույցից պահանջվող կարողությունների հստակ բնորոշումը, տարբեր կառույցների՝ ապագայում նախատեսվող կառուցվածքը կամ վերակառուցումը, ինչպես նաև նշված կարողությունները ձևավորելու և պահպանելու համար անհրաժեշտ ֆինանսական և կադրային ռեսուրսների ծավալը⁸⁸ (տե՛ս նաև IV և VII գլուխները):

ԶԱՀԲ-ի շրջանակում ոստիկանության համապարփակ բարեփոխումների համատեքստում պետական քաղաքականության մեջ պետք է հստակորեն մատնանշված լինի, որ քրեական արդարադատության գործընթացի արդյունավետության և գործունակության բարձրացման համար կարևոր է հաղորդակցությունը և սերտ համագործակցությունը ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև, ինչպես նաև՝ ֆորմալ ԶԱՀ-ի և ոչ պետական կառույցների, նաև՝ քաղաքացիական հասարակության միջև:

Ուստի պետական քաղաքականությունը պետք է նաև աջակցի կազմակերպական և կառուցվածքային անհրաժեշտ բարեփոխումների իրականացմանը՝ ապահովելով հաղորդակցության և համագործակցության բարելավման միջավայրը: Դա կարող է ներառել, ի թիվս այլ գործոնների, ԶԱՀ-ը համակարգող միջգերատեսչական խմբերի և քրեական արդարադատության գործընթացում համագործակցության և համակարգման կոնկրետ մեխանիզմների ստեղծումը, գործի կյուբերի կառավարման նոր համակարգերի ներդրումը և վերապատրաստման համատեղ դասընթացների մշակումը և իրագործումը ԶԱՀ-ի գործունեության մեջ փոխհարաբերվող բոլոր հիմնական սուբյեկտների համար: Նշված դասընթացները պետք է անդրադառնան քրեական արդարադատության գործընթացի ղեկավարման առանձնահատկություններին՝ միաժամանակ ներառելով քննության վարման ընդհանուր ուսուցումը և մասնագիտացված ուսուցումը հանցագործությունների այնպիսի նոր տեսակների վերաբերյալ, որոնց դեմ պայքարում անհրաժեշտ է ոչ միայն քննչական նոր մեթոդներ և գործիքներ օգտագործել,

⁸⁸ Համեմատ. Ball, Nicole/Fayemi, Kayode (eds.), *Security Sector Governance in Africa: A Handbook*, Centre for Democracy and Development, chapter 4. Policy Development and Implementation (2004) [Սիկլո Բոլ / Կայոդե Ֆայեմի (խմբագիրներ), *Անվտանգության ոլորտի կառավարումն Աֆրիկայում. ուղեցույց*, ժողովրդավարության և զարգացման կենտրոն, 4-րդ գլուխ. քաղաքականության մշակումը և իրագործումը, 2004 թ.]:

այլ նաև՝ ապացույցների նոր տեսակներ կիրառել դատական քննության ընթացքում:

Ավելին, ԶԱՀ-ի կազմակերպական և կառուցվածքային բարեփոխումների քաղաքականությունը պետք է անդրադառնա միջուրտային և ընդհանուր այնպիսի հիմնախնդիրների, ինչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանությունը, գենդերային բաղադրիչի ներառումը քրեական արդարադատության գործընթացում և հաշվետվողականության ընթացակարգերի և մեխանիզմների ստեղծումը կամ կատարելագործումը թե՛ ամբողջական ԶԱՀ-ում, թե՛ ոստիկանության քաղաքականությունը և գործելակերպը մշտադիտարկող և գնահատող անկախ մարմնում:

Քաղաքականության, ընթացակարգերի, կանոնների և կանոնակարգերի կատարումը կարող է լավագույնս վերահսկել և համակարգել Իրագործման աշխատանքների հիմնական հանձնախումբը, որն էլ ստեղծելու է հաղորդակցության, վերահսկողության և գնահատման մեխանիզմները և ընդհանուր պատասխանատվություն է կրելու դրանց աշխատանքի համար: Հիմնական հանձնախմբի կազմում պետք է ներառվեն ԶԱՀ-ի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ընդ որում՝ պետք է ապահովված լինի գենդերային հավասարակշռությունը: Հանձնախմբի ղեկավարը պետք է լինի ԶԱՀ-ի բարձրաստիճանի պաշտոնյա: Հանձնախումբը պետք է օժտված լինի բավարար լիազորություններով, որպեսզի նախաձեռնի, նախագծի և ի կատար ածի կառուցակարգային անհրաժեշտ փոփոխությունները՝ ի հեճուկս անխուսափելի դիմադրության: (Փոփոխությունների գործընթացի կառավարման մասին համառոտ տեղեկությունների համար տե՛ս 7.6. Ենթաբաժուխը): Իրագործման աշխատանքների հիմնական հանձնախումբը պետք է պարբերաբար գնահատի ԶԱՀ-ի կառույցների քաղաքականության բովանդակությունը՝ բացահայտելով նրանց աշխատանքի բարելավման հնարավոր ուղիները⁸⁹:

Գործառնական մակարդակով անհրաժեշտ կլինի ներդնել կանոններ, կանոնակարգեր և գործառնական ստանդարտ ընթացակարգեր և ուղենիշներ, որոնք կկանոնակարգեն օրենքի և քաղաքականության կիրառությունը քրեական արդարադատության գործընթացում ԶԱՀ-ի տարբեր կառույցների կողմից և նրանց մասնակցությամբ:

⁸⁹ Հանձնատ. OSCE, *Good Practices in Building Police-Public Partnerships* (op.cit. note 86), p. 39 [ԵԱՀԿ, *Ոստիկանության և հասարակության միջև գործընկերության ձևավորման լավագույն փորձը* (տե՛ս էջատակի 86-րդ ծանոթագրությունը), էջ 39]:

6.1. Խորացված համագործակցությունը ԶԱՀ-ի կառույցների միջև

Քննության տարբեր առանձնահատկություններին և միջդատական և դատական վարույթներին առնչվող օրինակելի կանոնների և կանոնակարգերի օրինակներ կարելի է գտնել ԶԴՕՕ-ում: Հետևյալ բաժնում ներկայացված են մի շարք օրինակելի կանոններ և կանոնակարգեր, որոնք վերաբերում են ԶԱՀ-ում կատարվող աշխատանքներին և հարաբերություններին:

- ԶԴՕՕ-ի 91-րդ հոդվածով առաջարկվում են դատախազության և ոստիկանության հաղորդակցության ընթացակարգեր, որոնք ենթադրում են «հաղորդակցության ավելի ճկուն համակարգ, որում դատախազը կարող է կարգադրություններ տալ գրավոր, բանավոր կամ անգամ էլեկտրոնային փոստով: Այս համակարգի գործունակությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է խրախուսել միջգերատեսչական համագործակցությունը դատախազության և ոստիկանության միջև՝ ապահովելով այդ համագործակցության համար անհրաժեշտ մեխանիզմների ներդրումը: ԶԴՕՕ-ով նախատեսված միջգերատեսչական արդյունավետ հարաբերությունները կառուցելու համար կարող են պահանջվել արարողակարգեր, գործառնական ստանդարտ ընթացակարգեր, վարքագծի կանոնագրքեր և այլ համաձայնագրեր»⁹⁰:
- ԶԴՕՕ-ի 102-րդ հոդվածով նախատեսվում են ոստիկանության և դատախազության կողմից քրեական գործերի քննության փաստաթղթերի տնօրինմանը և պահպանությանը վերաբերող որոշ ընդհանուր դրույթներ: Այդ նկարագրություններին կարելի է հավելել «գործառնական ստանդարտ ընթացակարգերը կամ փոխըմբռնման հուշագիրը ոստիկանության և դատախազության միջև՝ քննչական գործողությունների արձանագրման և այդ գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստաթղթերի և ապացույցների փոխանցման և պահպանության մասին»⁹¹:

«Կենցաղային բռնության վերաբերյալ հաղորդումների ներկայացման կոնկրետ դրույթներն ամրագրված են *Կենցաղային*

⁹⁰ USIP, *Model Code of Criminal Procedure* (op.cit. note 63), p. 155 [ԱՄՆ-ի խաղաղության ինստիտուտ, *Քրեական դատավարության օրինակելի օրենսգիրք* (տե՛ս էջատակի 63-րդ ծանոթագրությունը), էջ 155]:

⁹¹ Նույն տեղը, էջ 168:

բռնության մասին օրինակելի օրենսդրության հայեցակարգում (անգլ.՝ «*Framework for Model Legislation on Domestic Violence*»), որը կազմել է Միավորված ազգերի կազմակերպության՝ կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով հատուկ զեկուցողը (Միավորված ազգերի կազմակերպության փաստաթուղթ թիվ E/CN.4/1996/53/Add.2): Հայեցակարգում որոշակի ուղեցույցներ կան կենցաղային բռնության մասին հանցագործության հաղորդում պատրաստելու վերաբերյալ (22–25-րդ պարբերություններ): Հայեցակարգը նաև օգտակար ուղեցույցներ է պարունակում կենցաղային բռնության առնչությամբ ոստիկանների պարտականությունների (13–17-րդ պարբերություններ) և կենցաղային բռնությունից տուժած անձանց իրավունքների (21-րդ պարբերություն) վերաբերյալ»⁹²:

- ԸԴՕՕ-ի 106–146-րդ հոդվածները, որոնք վերաբերում են ապացույցների ձեռքբերմանը, բավականին մանրակրկիտ են և կարող են օգտագործվել ԳՍԸ-ներ կամ քրեական դատավարության օրենսգրքին զուգահեռ կիրառվող և իրավանորմերը պարզաբանող այլ կանոնակարգեր մշակելու նպատակով⁹³:

6.2. Խորացված համագործակցությունը ԶԱԶ-ի կառույցների, պետական այլ մարմինների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև

Ինչ վերաբերում է ԶԱԶ-ի համագործակցությանը պետական այլ մարմինների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության հետ, ապա քաղաքականությունը, ընթացակարգերը և կանոնակարգերը պետք է կարգավորեն.

⁹² Նույն տեղը, էջ 157:

⁹³ Նույն տեղը, էջ 175:

- Անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների գործունեության վերահսկողությունը ԶԱՀ-ում, ինչպես նաև անվտանգության և արդարադատության որոշ աշխատանքների համատեղ կատարման ընթացակարգերը,
- ԶԱՀ-ի հետ համագործակցող անձանց պաշտպանության մեխանիզմները (տե՛ս նաև 6.3. ենթագլուխը),
- Ոստիկանության և հանրության գործընկերային կառույցների շրջանակում համագործակցության ընթացակարգերը՝ ներառյալ տարբեր սուբյեկտների պարտավորությունները, իրավունքները և գործառույթները (օրինակ՝ ոստիկանության և հանրության համատեղ խորհրդակցական/աշխատանքային խմբեր, արտադատական ծրագրեր և այլն),
- Չանգվածային լրատվամիջոցներին/հանրությանը ԶԱՀ-ի աշխատանքների մասին տեղեկացնելու ընթացակարգերը:

6.3. Մարդու իրավունքներին վերաբերող դրույթները

Քրեական վարույթում մարդու իրավունքներին վերաբերող և ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև համագործակցության վրա ազդող քաղաքականությունը, ընթացակարգերը, կանոնները և կանոնակարգերը պետք է անդրադառնան հետևյալ հիմնախնդիրներին.

Անչափահասների արդարադատությունը.

- ԶԴՕՕ-ի 322-րդ հոդվածով սահմանվում են անչափահասների հարցերով հատուկ հանձնախմբերի կազմը և պարտականությունները,
- ԶԴՕՕ-ի 323-րդ հոդվածով սահմանվում է երեխաների և անչափահասների նկատմամբ իրավագործությունը,
- ԶԴՕՕ-ի 325-րդ հոդվածում նկարագրվում է անչափահասների արդարադատության նպատակը. «Անչափահասների արդարադատության համակարգում պետք է շեշտադրել անչափահասների բարեկեցությունը և ապահովել, որ անչափահասների նկատմամբ կատարվող բոլոր գործողությունները մշտապես համաչափ լինեն թե՛ անչափահասի, թե՛ քրեական հանցագործության

հանգամանքներին»⁹⁴:

- ԶԴՕՕ-ի 326-րդ հոդվածում նկարագրվում են անչափահասների արդարադատության նկատմամբ կիրառելի սկզբունքները,
- ԶԴՕՕ-ի 328-րդ հոդվածով սահմանվում են ոստիկանության և դատախազի հարաբերությունները,
- ԶԴՕՕ-ի 338-րդ հոդվածով սահմանվում է ազատազրկված անչափահասների պայմանական ազատման կարգը:

Կալանքի կիրառության կարգը և ժամկետները.

- ԶԴՕՕ-ի 172-րդ հոդվածում նկարագրվում են ձերբակալման ընթացակարգերը՝ ներառյալ այն դրույթը, որի համաձայն ձերբակալված անձը «պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան ձերբակալությունից հետո 72 ժամվա ընթացքում տարվի դատավորի մոտ, որպեսզի վերջինս գնահատի ձերբակալման օրինականությունը»⁹⁵,
- ԶԴՕՕ-ի 175-րդ հոդվածը վերաբերում է ձերբակալությունից հետո դատարանում անցկացվող առաջին նիստերին, որոնց նպատակն է ստուգել ձերբակալման օրինականությունը և պարզել, թե արդյոք առկա են հիմքեր անձին կալանավորելու, գրավով ազատ արձակելու կամ գրավից կամ կալանավորումից զատ՝ խափանման այլ միջոցներ կիրառելու համար,
- ԶԴՕՕ-ի 185-րդ հոդվածում վերլուծվում են կալանավորման, գրավով ազատ արձակման կամ խափանման այլ միջոցներ կիրառելու մասին դատախազի միջնորդությունները,
- ԶԴՕՕ-ի 186-րդ հոդվածը վերաբերում է 175-րդ հոդվածի համաձայն անցկացվող առաջին դատական նիստի ընթացքում կալանավորման, գրավով ազատ արձակման կամ խափանման այլ միջոցներ կիրառելու մասին միջնորդությունների քննությանը և լուծմանը,
- ԶԴՕՕ-ի 188-րդ հոդվածը վերաբերում է կալանքի կամ տնային կալանքի ժամկետը երկարաձգելու դատական նիստերին, նկարագրվում է կասկածյալի կամ մեղադրյալի կալանքի կամ տնային կալանքի ժամկետը երկարաձգելու մասին միջնորդության ներկայացման կարգը,

⁹⁴ Նույն տեղը, էջ 466:

⁹⁵ Նույն տեղը, էջ 287:

- ԲԴՕՕ-ի 189-րդ հոդվածում նկարագրվում են կալանքի կամ տնային կալանքի ժամկետները,
- ԲԴՕՕ-ի 190-րդ հոդվածում նկարագրվում է կալանքի կամ տնային կալանքի ժամկետների երկարաձգման կարգը:

Հանցագործությունից տուժած անձանց նկատմամբ ԲԱՀ-ի պարտավորությունները սահմանված են հետևյալ փաստաթղթերում.

- Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ R (85) 11 հանձնարարականն անդամ պետություններին՝ քրեական իրավունքի և վարույթի շրջանակում տուժողի կարգավիճակի վերաբերյալ* (1985 թ.), հոդվածներ 1-4,
- Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ Rec (2006) 8 հանձնարարականն անդամ պետություններին՝ հանցավորությունից տուժածներին աջակցելու վերաբերյալ* (2006 թ.), 2-րդ և 3-րդ հոդվածներ,
- Միավորված ազգերի կազմակերպություն, *Հանցավորությունից և իշխանության չարաշահումից տուժած անձանց համար արդարադատության հիմնարար սկզբունքների վերաբերյալ հռչակագիր*, Նյու Յորք, 29-ը նոյեմբերի, 1985 թ.,
- Միավորված ազգերի կազմակերպություն, *Հանցավորությունից տուժած և վկա անչափահասների մասնակցությամբ գործընթացներում արդարադատության վերաբերյալ ուղենիշներ*, Վիեննա, 25-ը մայիսի, 2005 թ.⁹⁶,

⁹⁶ Հանենատ. Council of Europe, *Recommendation No. R (85) 11 on the Position of the Victim in the Framework of Criminal Law and Procedure* (1985), Articles 1-4 [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ R (85) 11 հանձնարարականն անդամ պետություններին՝ քրեական իրավունքի և վարույթի շրջանակում տուժողի կարգավիճակի վերաբերյալ*, հոդվածներ 1-4], Council of Europe, *Rec(2006) 8 on Assistance to Crime Victims* (2006), Articles 2 and 3 [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ Rec (2006) 8 հանձնարարականն անդամ պետություններին՝ հանցավորությունից տուժածներին աջակցելու վերաբերյալ* (2006 թ.), հոդվածներ 2 և 3], United Nations, *Declaration of Basic Principles of Justice for Victims of Crime and Abuse of Power*, New York, 29 November 1985 [Միավորված ազգերի կազմակերպություն, *Հանցավորությունից և իշխանության չարաշահումից տուժած անձանց համար արդարադատության հիմնարար սկզբունքների վերաբերյալ հռչակագիր*, Նյու Յորք, 29-ը նոյեմբերի, 1985 թ.], և United Nations Economic and Social Council, *Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime*, Vienna, 25 May 2005 [Միավորված ազգերի կազմակերպություն, *Հանցավորությունից տուժած և վկա անչափահասների մասնակցությամբ գործընթացներում արդարադատության վերաբերյալ ուղենիշներ*, Վիեննա, 25-ը մայիսի, 2005 թ.]:

- ԵՂՕՕ-ի 72-74-րդ հոդվածներ, որոնցում նկարագրվում են քրեական վարույթում տուժողների նկատմամբ դատարանների, դատախազների և ոստիկանության պարտավորությունները:

Վկաների պաշտպանությանը վերաբերող դրույթները սահմանված են հետևյալ փաստաթղթերում.

- Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ R (97) 13 հանձնարարական անդամ պետություններին՝ հանցավորությունից տուժածներին՝ վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքների վերաբերյալ*, 1997 թ., հոդվածներ 14-15 և 51,
- Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ Rec (2005) 9 հանձնարարական անդամ պետություններին՝ վկաների և արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության վերաբերյալ* (2005 թ.), հոդվածներ 1, 2 և 8-28,
- Միավորված ազգերի կազմակերպություն, *Հանցավորությունից տուժած և վկա անչափահասների մասնակցությամբ գործընթացներում արդարադատության վերաբերյալ ուղենիշներ*, Վիեննա, 25-ը մայիսի, 2005 թ.⁹⁷, և
- ԵՂՕՕ-ի 147-161-րդ և 254-259-րդ հոդվածներ, որոնցում նկարագրվում են պաշտպանության այն միջոցները, որոնք դատավորը կարող է կիրառել վտանգի ենթարկված վկայի կամ «խոցելի վկայի» նկատմամբ՝ ներառյալ վկայի պաշտպանությունը դատական նիստերի ընթացքում, ինչպես նաև՝ պաշտպանության միջոցների կիրառության մասին միջևորդություն ներկայացնելու հիմքերը և կարգը:

⁹⁷ Հանձնառ. Council of Europe, *Recommendation No. R (97) 13 concerning Intimidation of Witnesses and the Rights of the Defence*, 1997, Articles 14-15; see also Article 51 [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ R (97) 13 հանձնարարական անդամ պետություններին՝ հանցավորությունից տուժածներին՝ վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքների վերաբերյալ* (1997 թ.), հոդվածներ 14-15, տե՛ս նաև հոդված 51], և
 Council of Europe, *Rec(2005) 9 on the Protection of Witnesses and Collaborators of Justice* (2005), Articles 1, 2 and 8-28 [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ Rec (2005) 9 հանձնարարական անդամ պետություններին՝ վկաների և արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության վերաբերյալ* (2005 թ.), հոդվածներ 1, 2 և 8-28]:
 United Nations, *Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime* (op.cit. note 96) [Միավորված ազգերի կազմակերպություն, *Հանցավորությունից տուժած և վկա անչափահասների մասնակցությամբ գործընթացներում արդարադատության վերաբերյալ ուղենիշներ*, Վիեննա, 25-ը մայիսի, 2005 թ. (տե՛ս էջատակի 96-րդ ծանոթագրությունը)]:

6.4. Հաշվետվողականությունը և վերահսկողությունը

Ինչ վերաբերում է հաշվետվողականությանը, ապա ոստիկանների, դատախազների, դատավորների, դատական ծառայողների, դատապաշտպանների և բանտերի աշխատողների էթիկայի և վարքագծի կանոնագրքերը պետք է մատնանշեն վարքի ընդունելի չափանիշները և ամրագրեն այն սկզբունքները, որոնց պետք է հետևեն ԶԱՀ-ում աշխատող անձինք:

Նման կանոնագրքերի մշակման վերաբերյալ օգտակար ուղեցույցներ պարունակող աղբյուրներից են, մասնավորապես, հետևյալ փաստաթղթերը.

- Միավորված ազգերի կազմակերպություն, *Իրավապահ մարմինների աշխատողների վարքագծի կանոնագիրքը և Վարքագծի կանոնագրքի արդյունավետ կատարման ուղեցույցները*,
- Միավորված ազգերի կազմակերպություն, *Դատավորի վարքագծի բանալիորյան սկզբունքները*,
- Միավորված ազգերի կազմակերպություն, *Դատախազի դերի վերաբերյալ ուղեցույցները*,
- Միավորված ազգերի կազմակերպություն, *Դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքները*,
- Միավորված ազգերի կազմակերպություն, *Կոռուպցիայի դեմ պայքարի մասին կոնվենցիան*,
- ԵԱՀԿ, *Անվտանգության ռազմաքաղաքական առանձնահատկություններին առնչվող վարքագծի կանոնագիրքը*,
- Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ R (2000) 10 հանձնարարականն անդամ պետություններին՝ պետական ծառայողների վարքագծի կանոնագրքերի վերաբերյալ*,
- Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի Rec (2001) 10 հանձնարարականն անդամ պետություններին՝ Ոստիկանական էթիկայի եվրոպական կանոնագրքի վերաբերյալ*,
- Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, *թիվ 1713 (2005) հանձնարարականն անդամ պետություններում անվտան-*

*գության ոլորտում ժողովրդավարական հսկողության վերաբեր-
յալ, Ստրասբուրգ, 23-ը հունիսի, 2005 թ.:*

Կան պետություններ, որտեղ անվտանգության և արդարադատության ֆորմալ կառույցների գործունեությունը փոխլրացնող դերակատարում ունեն անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորութային և ոչ պետական կառույցները՝ ներառյալ անվտանգության մասնավոր ծառայությունները: Վերջին-ներս նույնպես պետք է առաջնորդվեն էթիկայի և վարքագծի կանոնագրքերով: Պետությունները կարող են դիտարկել նաև անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունների համար գործունեության որոշակի չափանիշներ սահմանելու նպատակահարմարությունը՝ դրանցով սահմանելով անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայություններ մատուցողների գործունեության թույլատրման նվազագույն չափանիշները՝ ներառյալ այդ ծառայությունների սեփականատերերի պատշաճ օրինականության ստուգումները՝ նպատակ հետապնդելով կանխել անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունների վերահսկումը հանցագործների կողմից:

Բոլոր ընթացակարգերը և քաղաքականությունը պետք է ներառեն խրախուսանքի և պատժի միջոցներ, որոնք ԶԱՀ-ի տարբեր ոլորտներում կերաշխավորեն ազնվության և մասնագիտական հմտությունների պատշաճ մակարդակը⁹⁸:

⁹⁸ Համեմատ. UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), p. 79 [ՄԱԿԹՀՊԳ/Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 79]:

VII. Կառուցվածքային և կազմակերպական բարեփոխումները

Առաջնորդվելով բարեփոխումների իրավական հիմքերով՝ ԶԱՅԲ-ի շրջանակում ոստիկանության համապարփակ բարեփոխումների կառուցվածքային և կազմակերպական միջոցառումների նպատակն է բարձրացնել քրեական արդարադատության գործընթացի արդյունավետության և գործունակության մակարդակը:

Մի շարք պետություններում առավել տեսանելի են քրեական արդարադատության գործընթացի հետևյալ հիմնական թերությունները.

- ԶԱՅ-ի տարբեր կառույցների միջև հաղորդակցության և համագործակցության պակասն ընդհանուր առմամբ, մասնավորապես՝
 - քննության մարմինների և դատախազության մոտ մեծաթիվ գործերի ժամկետանց կուտակումները, որոնց հետևանքով՝
 - անհարկի ձգձգվում են նախնական կալանքի ժամկետները, որով խախտվում են թե՛ կալանավորվածների մարդու իրավունքները, թե՛ տուժողների իրավունքները,
 - չեն գործում հաշվետվությունների ներկայացման և գործերի վարման համակարգերը, որի հետևանքով տեղի է ունենում աշխատանքի կրկնություն, տեղեկատվության անհամադրելիություն և տեղեկությունների մշակման ձգձգումներ, որոնց պատճառով գործերն ուշացվում են, երբեմն թերի են լինում, և խախտվում են պաշտպանության նպատակով տեղեկությունները ստանալու՝ ամբաստանյալների և նրանց փաստաբանների իրավունքները:

Ոստիկանության և հետախուզական ծառայությունների փոխհարաբերություններին բնորոշ առանձնահատուկ դժվարությունները

Մի շարք պետություններում առկա են ոստիկանության և հետախուզական ռազմական և քաղաքացիական կառույցների օպերատիվ լիազորությունների և գործառույթների կրկնություններ: Հաճախ հանդիպող մարտահրավերներից են տարբեր ծառայությունների լիազորությունների և դրանց համագործակցության շրջանակի սահմանումը և օպերատիվ աշխատանքների նկատմամբ քաղաքացիական/խորհրդարանական անկախ վերահսկողության երաշխավորումը: *ՏՀԶԿ ՁԱՀ-ի Անվտանգության ոլորտի բարեփոխումների ուղեցույցի* (անգլ. «*Handbook on Security Sector Reform*») համաձայն՝ «սկզբունքը պետք է լինի այն, որ քրեական գործեր քննելու իրավասությունը և լիազորությունը պետք է վերապահված լինեն միայն ոստիկանական գործառույթներով օժտված գերատեսչություններին, ուստի առավել սահմանափակված և խիստ վերահսկողության ենթակա պետք է լինեն նրանց իրավասությունները, մասնավորապես՝ սեփական նախաձեռնությամբ քննության օպերատիվ մեթոդներ, օրինակ՝ գաղտնալսումներ կիրառելու հարցում»⁹⁹: Ավելին, ոստիկանության, դատական իշխանության և հետախուզական ծառայությունների հարաբերություններում հաճախ դժվարությունների պատճառ են դառնում այնպիսի նուրբ խնդիրներ, ինչպիսիք են տեղեկատվության փոխանակումը ոստիկանության և հետախուզական ծառայությունների միջև, հետախուզական ծառայություններից կամ նրանց հետ համագործակցող երրորդ աղբյուրներից ստացված տեղեկությունների օգտագործումը ոստիկանության կողմից իրականացվող քննության ընթացքում և դատարանում, ինչպես նաև՝ վկաների և տուժողների և նրանց ինքնության պաշտպանությունը:

Հարաբերությունների այդօրինակ բարդ միջավայրի վերլուծությունը և կարգավորումը սույն ուղեցույցի շրջանակից դուրս է:

ԶԱՀԲ-ի ուղղորդիչ սկզբունքներին համահունչ (տե՛ս նաև 2.4. ենթագլուխը)՝ սույն գլուխն անդրադառնում է ԶԱՀ-ի տարբեր կառույցների կառուցվածքային և կազմակերպական փոփոխություններին, մասնավորապես՝ ԶԱՀ-ի տարբեր կառույցների հարաբերություններին՝ այնպանով, որքանով դրանց նպատակն է:

⁹⁹ OECD, *OECD DAC Handbook on Security System Reform* (op.cit. note 28), p. 164 [ՏՀԶԿ, ՏՀԶԿ ՁԱՀ-ի ուղեցույցն անվտանգության ոլորտի բարեփոխումների համար] (տե՛ս էջատակի 28-րդ ծանոթագրությունը), էջ 164]:

- Երաշխավորել արդյունավետ համագործակցությունը և համակարգումը ոստիկանության և ԶԱՅ-ում վերջինիս գործընկերների միջև, ինչպես նաև՝ ԶԱՅ-ի և անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորույթային և ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև,
- Խելամտորեն տնօրինել առկա ռեսուրսները,
- Համապատասխան դեպքերում ստեղծել միասնական ծառայություններ և ծրագրեր,
- Խրախուսել իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և հիմնարար իրավունքների հարգումը և պաշտպանությունը,
- Ներդնել և երաշխավորել ԶԱՅ-ի կառույցների ժողովրդավարական հաշվետվողականության և վերահսկողության սկզբունքները:

Թվարկված նպատակներին հասնելու համար պահանջվող ենթակառուցվածքի փոփոխություններից զատ՝ այս գլուխն անդրադառնում է նաև ԶԱՅ-ում կազմակերպական և գործառնական այնպիսի մշակույթի ձևավորմանը, որը կխրախուսի և կոյուրացնի համագործակցությունը համակարգում և հաշվետվողականությունը ԶԱՅ-ի տարբեր կառույցների միջև, ինչպես նաև ԶԱՅ-ի կառույցների և քրեական արդարադատության գործընթացի այլ կարևոր սուբյեկտների միջև: Իրականացվելիք միջոցառումների նկարագրության մեջ բարեփոխումները տարբերակվելու են ըստ կառավարչական, գործառնական և վերապատրաստման մակարդակների:

7.1. Խորացված համագործակցությունը ԶԱՅ-ի կառույցների միջև

«Համատեղ աշխատանքի համար անհրաժեշտ է միջգերատեսչական համագործակցություն, քրեական արդարադատության համակարգի արդյունավետության մասին միասնական պատկերացումների տեսլական, յուրաքանչյուր գործընկերոջ անկախության նկատմամբ հարգանք [...] և ոգեշնչող առաջնորդություն»¹⁰⁰: Թեպետ քննության,

¹⁰⁰ Berry, Jan. *Criminal Justice Units and Case Building. Reducing Bureaucracy in Policing Advocate*, March 2010, p. 1 [Յան Բերրի, *Քրեական արդարադատության*

քրեական հետապնդման և դատական քննության կառույցների ընդհանուր քաղաքական պարտավորությունները պետք է առանձնացված մասն, համատեղ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է հիմնական վեկտորի ընտրության և գործընթացի համատեղ կառավարման մեխանիզմ¹⁰¹:

7.1.1. Համակարգման և համագործակցության մեխանիզմների ստեղծումը ռազմավարության/քաղաքականության մակարդակում

Ռազմավարության և կառավարչական մակարդակում անհրաժեշտ է ստեղծել ԶԱՀ-ի համակարգման բազմագերատեսչական խմբեր, որոնք կհամակարգեն և կմշտադիտարկեն համապարփակ ԶԱՀ-ի և աշխատանքային ծրագրերի կատարումը: Նրանք պետք է նաև հաշվի առնեն մեկ գերատեսչությունում կատարվող փոփոխությունների ազդեցությունն այլ գերատեսչությունների վրա: Համագործակցությունը և համակարգումը կարող են զգալիորեն տուժել, եթե մեկ կառույցի կանոնները և աշխատանքային մոտեցումները ձևավորվում և փոփոխվում են՝ չստուգելով դրանց համադրելիությունը ԶԱՀ-ի այլ կառույցների գործունեության չափանիշների և մոտեցումների հետ (տե՛ս նաև IV գլուխը):

Ավելին, ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև համագործակցությունն ինստիտուցիոնալ հենքի վրա դնելու համար նախարարների և գերատեսչությունների ղեկավարների մակարդակով կարելի է ստեղծել միջգերատեսչական համակարգման մարմիններ (օրինակ՝ մշտական հանձնաժողովներ, արտաքին կապերի հանձնախմբեր և քրեական արդարադատության խորհուրդներ, որոնք կազմված կլինեն ԶԱՀ-ի տարբեր կառույցների բարձրաստիճան ներկայացուցիչներից): Այդ մարմինների խնդիրը պետք է լինի ԶԱՀ-ի ընդհանուր վեկտորների ձևակերպումը: Ուղղորդման համար պետք է կիրառվեն համագործակցության և համակարգման՝ նախապես որոշված կարիքները, ինչպես

¹⁰¹ *ստորաբաժանումները և գործերի կազմումը. հանուն ոստիկանության գործունեության մեջ բյուրոկրատիայի կրճատման*, 2010 թվականի մարտ, էջ 1]:
Auld, Sir Robin Ernest, "The Criminal Justice System", in: Auld, Sir Robin Ernest, Review of the Criminal Courts of England and Wales, Ministry of Justice, Chapter 8, pp. 315-366, September 2001, pp. 320 and 331 [Սիր Ռոբին Էռնեստ Օլդ, «Քրեական արդարադատության համակարգը», աղբյուրը՝ Սիր Ռոբին Էռնեստ Օլդ, *Ընդհանուր տեղեկություններ Անգլիայի և Ուելսի քրեական դատարանների մասին*, արդարադատության նախարարություն, 8-րդ գլուխ, էջեր 315-366, 2001 թվականի սեպտեմբեր, էջեր 320 և 331]:

նան համագործակցության և համակարգման բարելավման առկա ռազմավարությունները՝ ներառյալ տարբեր գերատեսչությունների հարաբերությունները խորացնելու նպատակով համատեղ բյուջեների նախատեսումը:

Եթե համակարգումը բավականաչափ խորացել է, ապա վերոհիշյալ մարմինները կկարողանան անգամ կազմել քրեական արդարադատության ոլորտի տարբեր կառույցների վարչարարական գործառույթների միասնականացման աշխատանքային ծրագրեր¹⁰²:

Միասնական աշխատանքների ծավալն ընդլայնելու միջոցով հնարավոր է դառնում բյուջեների համատեղ տնօրինումը և ռեսուրսների համախմբումը: Հիմնական հարցն այստեղ վերաբերելու է այն մեխանիզմներին, որոնցով հնարավոր կլինի գերատեսչություններին շահագրգռել, որպեսզի նրանք դրամական միջոցները ծախսեն ԶԱՀ-ի արդյունավետության բարձրացման ընդհանուր նպատակների և խնդիրների իրագործմանը նպաստող ծրագրերի վրա¹⁰³:

Քրեական արդարադատության համակարգման ազգային մարմինների նմանությամբ տեղական մակարդակում պետք է ստեղծել տեղական մարմիններ: Վերջիններիս կազմում կարող են ներկայացված լինել, ի թիվս այլոց, տեղի ոստիկանության պետը, տեղի գլխավոր դատախազը, տեղի քրեական դատարանի ղեկավարները, բանտային ծառայությունը, առողջապահական ծառայությունը, պրոբացիոն ծառայության ղեկավարները, անչափահաս իրավախախտների հարցերով խորհուրդների ներկայացուցիչները, տեղի փաստաբանական միությունները, համայնքային այլ կառույցները, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության՝ ներառյալ վերահսկող կառույցների ներկայացուցիչները¹⁰⁴:

¹⁰² Համեմատ. Berry, *Criminal Justice Units and Case Building* (op.cit. note 100), p. 2 [Յան Բերրի, *Քրեական արդարադատության ստորաբաժանումները և գործերի կազմումը* (տե՛ս էջատակի 100-րդ ծանոթագրությունը), էջ 2]:

¹⁰³ Համեմատ. Auld, "The Criminal Justice System" (op.cit. note 101), p. 332 [Օլդ, «Քրեական արդարադատության համակարգը» (տե՛ս էջատակի 101-րդ ծանոթագրությունը), էջ 332]:

¹⁰⁴ Նույն տեղը, էջ 333:

Ռազմավարության/քաղաքականության մակարդակում համակարգման և համագործակցության մեխանիզմների օրինակներ

Քրեական արդարադատության բարեփոխումների գրասենյակը, Քրեական արդարադատության ազգային խորհուրդը և Քրեական արդարադատության տեղական խորհուրդները Միացյալ Թագավորությունում

Քրեական արդարադատության բարեփոխումների գրասենյակը (ՔԱԲԳ) միջգերատեսչական կառույց է, որն աջակցում է արդարադատության նախարարության, ներքին գործերի նախարարության, գլխավոր դատախազության և քրեական արդարադատության ոլորտի այլ գերատեսչությունների միջև հաղորդակցությանը և համագործակցությանը՝ նպատակ ունենալով խորացնելու գործընկերային աշխատանքը: Ազգային մակարդակում ՔԱԲԳ-ին օժանդակում է Քրեական արդարադատության ազգային խորհուրդը (ՔԱԱԽ), իսկ տեղական մակարդակում՝ Քրեական արդարադատության տեղական խորհուրդները (ՔԱՏԽ-ներ)¹⁰⁵: ՔԱԱԽ-ի կազմում ներառված են ՔԱՅ-ի նախարարները, ՔԱՅ-ի գերատեսչությունների ղեկավարները, մշտական բարտուղարությունները և քաղաքական բարձրաստիճան պաշտոնյաները: ՔԱԱԽ-ն օժանդակում է կառավարության հանձնաժողովներից մեկի աշխատանքներին: ՔԱԱԽ-ի խնդիրն է ապահովել, որ «կենտրոնական կառավարության գերատեսչությունները, քաղաքական գործիչները և պաշտոնյաները, ովքեր ներգրավված են քրեական արդարադատության իրականացման մեջ, գործեն միասնաբար և իրականացնեն փոփոխություններ»¹⁰⁶: ՔԱՏԽ-ների անդամների մեծ մասը քրեական արդարադատության տեղական մակարդակում ՔԱՅ-ի հիմնական տեղական գերատեսչությունների՝ ներառյալ ոստիկանության, արքայական դատախազության, պրոբացիայի և մագիստրոսական և արքայական դատարանների գլխավոր պաշտոնյաներն են: ՔԱՏԽ-ների կազմում ներառված են նաև բանտային ծառայության և երիտասարդ իրավախախտների հետ աշխատող թիմերի բարձրաստիճան ներկայացուցիչները (մեկական ներկայացուցիչ յու-

¹⁰⁵ Հանձնառ. Berry, Jan, *Reducing Bureaucracy in Policing. Full Report*, November 2009, p. 16 [Յան Բերրի, *Բյուրոկրատիայի կրճատումը ոստիկանական գործունեության մեջ. զեկույցի ամբողջական տարբերակ*, 2009 թվականի նոյեմբեր, էջ 16], և Քրեական արդարադատության բարեփոխումների գրասենյակի գլխավոր էջը: <http://www.ocjrcommsjobs.co.uk>:

¹⁰⁶ Audit Commission, *Local Criminal Justice Boards. Supporting Change Management*, London 2003, p. 4 [Աուդիտի հանձնաժողով, *Քրեական արդարադատության տեղական խորհուրդները. օժանդակությունը փոփոխությունների կառավարմանը*, Լոնդոն 2003 թ., էջ 4]:

րաբանյուր ԶԱՏՆ-ում): Ցանկության դեպքում նրանց կազմում կարող են ներառվել նաև այլ գերատեսչությունների ներկայացուցիչները: ԶԱՏՆ-ները նույնպես հաշվետու են ԶԱԱԽ-ին: Աշխատանքային համատեղ ծրագրերում ներկայացված են սահմանված ցուցանիշների կատարման ուղիները և տարբեր նպատակների կատարման հիմնական պատասխանատուները, ինչպես նաև կարևորագույն միջոցառումները և արդյունքի ցուցանիշները¹⁰⁷: ԶԱՏՆ-ների հիմնական նպատակն է կատարել ԶԱՅ-ի հանրային ծառայության համաձայնագրի ցուցանիշները, բարելավել արդարադատության իրականացումը և տուժողներին ու վկաներին մատուցվող ծառայությունները և երաշխավորել հանրության վստահությունը: Նման ցուցանիշներ սահմանված են ԶԱՅ-ի բոլոր գերատեսչությունների համար: Դրանց համար համատեղ պատասխանատվություն են կրում ներքին գործերի նախարարությունը, Լորդ-կանցլերի դեպարտամենտը և գլխավոր դատախազը: (Չարկ է այստեղ հիշատակել, որ դատական իշխանությունը չի կարող ունենալ թիրախային ցուցանիշներ, օրինակ՝ կայացվելիք մեղադրական դատավճիռների թվի տեսքով): Թեպետ հանրային ծառայության համաձայնագրի ցուցանիշները սահմանվում են ողջ երկրի համար և ենթակա են հաստատման կառավարության կողմից, ԶԱՏՆ-ներն են որոշում դրանց իրագործման ուղիները, ընդ որում դեպքերի մեծ մասում նրանք են ձևակերպում բարեփոխման ցուցանիշները¹⁰⁸:

2007 թվականին ԶԱԲԳ-ն հրապարակեց *Քրեական արդարադատության 2008-2011 թվականների ռազմավարական ծրագիրը*, որում մատնանշվեց, թե Անգլիայի և Ուելսի ԶԱՅ-երն ինչպես են համագործակցելու հանցագործությունների մեղավորներին դատապարտելու և տուժողների կարիքները հոգալու, հանրության հետ համագործակցելու և ԶԱՅ-ի արդարացիության և արդյունավետության նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու ուղղություններով՝ միևնույն ժամանակ լավագույնս օգտագործելով ռեսուրսները, փորձագիտական կարողությունները և տեխնոլոգիաները¹⁰⁹:

¹⁰⁷ Համեմատ. նույն տեղը, էջեր 5-7:

¹⁰⁸ Նույն տեղը, էջ 8:

¹⁰⁹ Համեմատ. Office for Criminal Justice Reform, *Working Together to Cut Crime and Deliver Justice. A Strategic Plan for 2008-2011*, November 2007, pp. 7ff [Քրեական արդարադատության բարեփոխումների գրասենյակ, *Համատեղ աշխատանքը հանցավորության կրճատման և արդարադատության իրականացման ուղղությամբ. 2008-2011 թվականների ռազմավարական ծրագիր*, 2007 թվականի նոյեմբեր, էջ 7 և շարունակ.]:

Քրեական արդարադատության համակարգի ղեկավար պաշտոնյաների մշտական հանձնաժողովը Նոր Հարավային Ուելսի նահանգում (Ավստրալիա)

Նոր Հարավային Ուելսի նահանգում ստեղծվել է Քրեական արդարադատության համակարգի ղեկավար պաշտոնյաների մշտական հանձնաժողով, որի կազմում ներկայացված են գլխավոր դատախազությունը, ուղղիչ ծառայությունների դեպարտամենտը, դատարանների վարչակազմի դեպարտամենտը, ոստիկանական ծառայությունը և անչափահասների արդարադատության ծառայությունը: Կազմում կան նաև դիտորդներ կառավարության աշխատակազմից, վարչապետի դեպարտամենտից և հանցավորության վիճակագրության և հետազոտությունների բյուրոյից: Մշտական հանձնաժողովի նպատակն է բարելավել համակարգումը և հաղորդակցությունը տարբեր գերատեսչությունների միջև¹¹⁰:

Քրեական արդարադատության համակարգող հանձնաժողովները (ՔԱՀՀ-ներ) Ամերիկայի Միացյալ Նահանգներում

ՔԱՀՀ-ները ֆորմալ կամ ոչ ֆորմալ մարմիններ են, որոնց կազմում ներկայացված են ՔԱՀ-ի տարբեր կառույցները, արդարադատության հետ չառնչվող կառույցները, գործադիրը և հասարակությունը: ՔԱՀՀ-ները զբաղվում են հանցավորության խնդիրների վերլուծություններով և ՔԱՀ-ի միասնական արձագանքի բարելավմամբ: ՔԱՀՀ-ներ կարող են ստեղծվել քրեական արդարադատության ազգային, նահանգային/տարածքային և տեղական գերատեսչությունների մակարդակներում:

ՔԱՀՀ-ների պլանավորման հիմքում կարելի է դնել քաղաքականության պլանավորումը (երկարաժամկետ նպատակներ և խնդիրներ), ծրագրերի պլանավորումը և գործառնությունների պլանավորումը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների ուղղիչ ծառայությունների ազգային ինստիտուտը մշակել է ՔԱՀՀ-ների իդեալական կառուցվածքի,

¹¹⁰ Համեմատ. Glanfield, Laurie, "Strategic Planning for the Criminal Justice System", in: Biles, David/McKillop, Sandra (eds.), *Criminal Justice Planning and Coordination*, Proceedings of a conference held on 19-21 April 1993, Canberra, Australian Institute of Criminology, Canberra 1994, p. 27 [Լորի Գլենֆիլդ, «Ուղղված քրեական արդարադատության համակարգի շրջանակում, Քրեական արդարադատության ծրագրումը և համակարգումը, Կանբերայում 1993 թվականի ապրիլի 19-21-ն անցկացված խորհրդաժողովի աշխատությունները, Ավստրալիայի քրեաբանության ինստիտուտ, Կանբերա 1994 թ., էջ 27]:

խնդիրների և պարտավորությունների վերաբերյալ ուղենիշներ, ինչպես նաև ԶԱՀՀ-ների աշխատանքային գործունեության ուղղորդիչ սկզբունքները¹¹¹:

Արդարադատության համակարգի և ոստիկանության համակարգման խորհրդատվող Շվեյցարիայում

Պարբերաբար գումարվող այս խորհրդատվող մասնակցում են անվտանգության ոլորտի աշխատանքներին և ԶԱՀ-ի հիմնախնդիրների համակարգման գործում ներգրավված ազգային և տարածքային բոլոր իրավասու մարմինները և շահակիցները: Քննարկվում են նաև համագործակցության, ենթակառուցվածքի համատեղ ֆինանսավորման և դաշնային իրավասու մարմինների հետ կապված դժվարությունների հարցերը: Խորհրդատվողի մշտական քարտուղարն ապահովում է շարունակական աշխատանքը խորհրդատվողի ընթացքում բարձրացված կամ խորհրդատվողի ուշադրությանը ներկայացված հարցերի ուղղությամբ:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային խորհուրդը Սերբիայում

Սերբիայում 2012 թվականին մշակվել են *Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և տուժողների պաշտպանության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը*: Ծրագրի համաձայն՝ համակարգող կառույցը նախարարների մակարդակով ձևավորված ազգային խորհուրդն է: Ռազմավարության գործնական իրականացման պատասխանատուն ազգային համակարգողն է՝ իրագործման թիմի հետ մեկտեղ: Հասարակական կազմակերպությունները մասնակցել են գործողությունների ծրագրի մշակմանը: Նրանք ներկայացված են նաև իրագործման թիմի կազմում: Ի թիվս այլ խնդիրների, գործողությունների ծրագրով նախատեսվում է ստեղծել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և մարդկանց թրաֆիքինգից տուժած անձանց պաշտպանության հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբեր, որոնց աշխատանքները ղեկավարելու է դատախազությունը:

¹¹¹ Համեմատ. Cushman, R.C., *Guidelines for Developing a Criminal Justice Coordinating Committee*, U.S. Department of Justice, National Institute of Corrections, January 2002, Washington DC [Ռ. Կ. Կուշման, *Քրեական արդարադատության համակարգող հանձնաժողովի ձևավորման ուղենիշները*, ԱՄՆ-ի արդարադատության նախարարություն, Ուղղիչ ծառայությունների ազգային ինստիտուտ, 2002 թվականի հունվար, Վաշինգտոն, ԱՄՆ]:

Ահաբեկչության դեմ պայքարի համակարգման ազգային կենտրոնը (ԱՊՅԱԿ) Իսպանիայում

Իսպանիայի ԱՊՅԱԿ-ն ստեղծվել է Իսպանիայի նախարարների խորհրդի 2004 թվականի մայիսի 28-ի որոշմամբ: ԱՊՅԱԿ-ը, որը հաշվետու է ներքին գործերի նախարարությանը, օպերատիվ աշխատանքների, համակարգման և ռազմավարական կառույց է, որն զբաղվում է ահաբեկչությանն առնչվող ռազմավարական տեղեկությունների ստացմամբ, մշակմամբ և գնահատմամբ, ռիսկերի գնահատումներով և հակաահաբեկչական միջոցառումների պլանավորմամբ: Այդ առումով ԱՊՅԱԿ-ը համակարգում է հակաահաբեկչական գործողությունների ընթացքում հավաքված օպերատիվ տեղեկությունները:

Կենտրոնը նաև մշակում և կատարելագործում է ահաբեկչության և ծայրահեղականացման դեմ պայքարի՝ Իսպանիայի համապարփակ ռազմավարությունը: Կենտրոնն ապագա սպառնալիքների և իրավիճակների մասին խորհուրդներ է տալիս քաղաքական ատյաններին՝ օգտագործելով «հորիզոնի սկանավորման» այն մեթոդները, որոնցով ի կատար են ածվում ռազմավարության չորս հիմնադրույթները՝ կանխարգելումը, պաշտպանությունը, հետապնդումը և արձագանքը:

Իր առջև դրված խնդիրները լուծելու համար ԱՊՅԱԿ-ի աշխատակազմը համալրված է իրավապահ մարմինների (քաղաքացիական գվարդիայի և ազգային ոստիկանության), ազգային հետախուզական կենտրոնի և բանտային ծառայության փորձագետներով:

7.1.2. Համակարգման և համագործակցության մեխանիզմների ստեղծումը գործառնական մակարդակում

Քրեական գործերի քննության աշխատանքների համակարգումը և համագործակցությունը գործառնական մակարդակում կարող է զգալիորեն բարելավվել, եթե ֆիզիկական ենթակառուցվածքը ԶԱՅ-ի տարբեր կառույցների ներկայացուցիչներին թույլ է տալիս հանդիպել, քննարկել և տեղեկություններ և տեսակետներ փոխանակել:

Ֆիզիկական ենթակառուցվածքի նախագծման՝ առավել հեռուն գնացող միջոցառումներից կարող են լինել ոստիկանության և դատախազության գրասենյակների մեկտեղումը, ոստիկանության բաժիններում դատախազների՝ մշտական հիմունքներով տեղակայումը և/կամ

քննության նպատակով միևնույն գրասենյակում գործող համատեղ հատուկ թիմերի և աշխատանքային խմբերի ստեղծումը:

Համատեղ թիմերի աշխատանքային սահուն համագործակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել աշխատանքային ընդհանուր պայմաններ և չափորոշիչներ¹¹²:

ԶԱԳ-ի գործառնական մակարդակում համակարգման և համագործակցության մեխանիզմների որոշ օրինակներ

Ղատախազության և ոստիկանության միասնական աշխատանքը/ քննության երկու «արահետները» Նորվեգիայում

Ոստիկանության և դատախազության աշխատանքները Նորվեգիայում սերտորեն փոխշաղկապված են տեղական/շրջանային մակարդակում: Երկրի ոստիկանության 27 բաժիններում ոստիկանության պետերը, ովքեր իրավաբանական բուհերի շրջանավարտներ են, օժտված են միաժամանակ և՛ ոստիկանական, և՛ դատախազական լիազորություններով: Ուստի շրջանի մակարդակով ոստիկանության կողմից քրեական վարույթներն իրականացնելու իրավասությունը վերապահված է ոստիկանության պետերին¹¹³: Նրանք կարող են քրեական հետապնդման իրավասությունները պատվիրակել ոստիկանության այլ՝ իրավաբանական բուհ ավարտած պաշտոնատար անձանց, օրինակ՝ ոստիկանության պետի տեղակալին, ոստիկանության պետի օգնականին կամ ոստիկանության իրավաբանին¹¹⁴: Ոստիկանության քրեական հետապնդման ծառայությունը, համագործակցելով ոստիկանության քննիչների հետ, որոշում է կայացնում քննությունն հարուցելու կամ քննությունը շարունակելու մասին: Հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումները կայացնում է կա՛մ ոստիկանության քրեական հետապնդման ծառայությունը, կա՛մ դատարանը: Այնուհանդերձ, այդ որոշումները ոստիկանության քրեական հետապնդման ծառայության կողմից կարող են կայացվել միայն շտապ իրավիճակներում:

Քրեական հետապնդման հարցերում, սակայն, ոստիկանության պետերը գործում են շրջանային դատախազի (ով հիերարխիայի մեջ մեկ աստիճանով ավելի բարձր է) և դատախազության տնօրենի (ով հիե-

¹¹² Berry, *Criminal Justice Units and Case Building* (op.cit. note 100), p. 1 [Յան Բերրի, *Քրեական արդարադատության ստորաբաժանումները և գործերի կազմումը* (տե՛ս էջատակի 100-րդ ծանոթագրությունը), էջ 1]:

րարխիայի մեջ երկու աստիճանով ավելի բարձր է) ենթակայությամբ: 10 շրջանների շրջանային դատախազության տնօրենները և շրջանային դատախազներն իրավասու են քրեական վարույթի շրջանակում ցուցումներ տալ ոստիկաններին և դատական կարգով վերանայման մասին միջնորդություններ ներկայացնել:

Ոստիկանական և դատախազական մարմինների տարանջատման թեմայով անցկացված մի քանի բանավեճերից հետո կառավարությունը 1988 թվականին ստեղծեց հատուկ հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր համակարգը և այն համեմատեր այլ պետությունների համակարգերի հետ: Հանձնաժողովը եզրակացրեց, որ գործող համակարգն անհրաժեշտ է պահպանել: Կառավարությունը և խորհրդարանն ընդունեցին այդ եզրակացությունը:

Հաղորդակցության մեխանիզմների ստեղծումը

Եթե անգամ կոնկրետ պետությունում հնարավոր չէ ստեղծել ֆիզիկական ենթակառուցվածք, ապա հաճախ գոյություն ունեն ԶԱՀ-ի տարբեր սուբյեկտների հարաբերություններում հաղորդակցության էական բարելավման առնվազն այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք են կանոնավոր հանդիպումների կազմակերպումը կամ տվյալների պահպանության և հաղորդակցության էլեկտրոնային համակարգերի ստեղծումը, որոնց միջոցով կանխվում է տեղեկությունների կորուստը կամ ապամեկնաբանությունը¹¹⁵:

Գրանցումների և գործի նյութերի վարման արդյունավետության և ճշգրտության բարելավման միջոցառումները, որոնք հիմնարար նշանակություն ունեն հիմնավոր գործեր կազմելու տեսանկյունից, կարող

¹¹³ Համեմատ. Նորվեգիայի քրեական դատավարության օրենսգիրքը (22-ը մայիսի, 1981 թ.), § 55: Ոստիկանության պետերից մի քանիսը չունեն իրավաբանի դիպլոմ, սակայն առնվազն ուսանել են դատախազական տարբեր թեմաներ: Այդ ուսուցումը և ոստիկանությունում աշխատանքի հարուստ փորձը նրանց ընձեռում են քրեական հետապնդում իրականացնելու լիազորություններ:

¹¹⁴ Համեմատ. Նորվեգիայի քրեական դատավարության օրենսգիրքը, § 67, 22-ը մայիսի, 1981 թ.:

¹¹⁵ Համեմատ. USIP, *Model Code of Criminal Procedure* (op.cit. note 63), p. 155 [ԱՄՆ-ի խաղաղության ինստիտուտ, *Քրեական դատավարության օրինակելի օրենսգիրք* (տե՛ս էջատակի 63-րդ ծանոթագրությունը), էջ 155], և Kosovar Institute for Policy Research and Development, *The Fragile Triangle. Police judges and prosecutors coordination during criminal proceedings response in Kosovo*, Policy Research 2010/01, Pristina, February 2010, p. 17f [Կոսովոյի քաղաքական հետազոտությունների և զարգացման ինստիտուտ: *Փխրուն եռանկյունին: Ոստիկանների, դատավորների և դատախազների գործունեության համագործակցությունը քրեական վարույթներում Կոսովոյում*, Քաղաքականության հետազոտություններ 2010/01, Պրիշտինա, 2010 թվականի փետրվար, էջ 17 և շարունակ.]:

են նպաստել դատապարտման ցուցանիշների բարձրացմանը, ժամկետանց գործերի կուտակումների նվազեցմանը և կասկածյալների նախնական կալանքի ժամկետների կրճատմանը (այդպիսի բարձրացնելով քրեական արդարադատության համակարգի վստահելիությունը)¹¹⁶:

Գրանցումների վարումը

Ճշգրիտ գրանցումների վարումը կարևոր է ոչ միայն մեղադրյալների դեմ կազմվող գործերն ավելի հիմնավոր դարձնելու, այլ նաև ամբաստանյալի պաշտպանվելու իրավունքը երաշխավորելու և պաշտպանության համար նրան բավարար հնարավորություններ ընձեռելու տեսանկյունից: Ամբաստանյալին պետք է օրենքով սահմանված կարգով հասանելի լինեն «քննության ընթացքում կատարված գործողությունների գրանցումները, այդ գործողությունների արդյունքում պարզված տեղեկությունները և այդպիսի հավաքված ապացույցները՝ բացառությամբ այն տեղեկությունների և ապացույցների, որոնք չեն կարող հասու լինել ամբաստանյալին»¹¹⁷, ինչպես սահմանված է օրենքով:

Գրանցումները և փաստաթղթերն արդյունավետորեն կառավարելու համար անհրաժեշտ է հավաքել դրանք և դասավորել տվյալների էլեկտրոնային շտեմարաններում: Հանցավորությանն առնչվող տվյալները կարող են, ի թիվս այլոց, ներառել դեպքի մասին հաղորդումները, իրավախախտին և գործին վերաբերող տեղեկությունները, նախկին դատվածության և նախկինում նույն անձին ներկայացված մեղադրանքի մասին տեղեկությունները, կայացված մեղադրական դատավճիռները, բողոքարկման ամսաթվերը և արդյունքները, ԴՆԹ-ի նմուշները, ձգաբանական տվյալները, մատնահետքերը և փորձագիտական այլ տվյալները/ապացույցները (օրինակ՝ անիվների հետքերը, ապակու, ներկանյութի, մանրաթելի, պայթուցիկ նյութերի կամ անօրինական

¹¹⁶ Համեմատ. International Crisis Group, *Haiti: Justice Reform and Security Crisis*, Policy Briefing, Latin America/Caribbean Briefing No. 14, Port-au-Prince/Brussels, 2007, p. 2 [Միջազգային ձգնաժամային խումբ, Հայիթի. արդարադատության համակարգի բարեփոխումները և անվտանգության ձգնաժամը, քաղաքականության հարցերով տեղեկատվական գրություն, Լատինական Ամերիկա / Կարիբյան ծովի ավազան, տեղեկագիր թիվ 14, Պորտ-օ-Պրենս / Բրյուսել, 2007 թ., էջ 2], և USAID Office of Inspector General, *Audit of USAID/Haiti's Justice Program* (op.cit. note 113), p. 11 [ԱՄՆ-ի միջազգային գաղափարային գործակալության գլխավոր տեսչի գրասենյակ, ԱՄՆ ՄՁԳ-ի Հայիթիի արդարադատության ծրագրի աուդիտը (տե՛ս էջատակի 113-րդ ծանոթագրությունը), էջ 11]:

¹¹⁷ USIP, *Model Code of Criminal Procedure* (op.cit. note 63), p. 168 [ԱՄՆ-ի խաղաղության ինստիտուտ, *Քրեական դատավարության օրինակելի օրենսգիրք* (տե՛ս էջատակի 63-րդ ծանոթագրությունը), էջ 168]:

թմրադեղերի և պրեկուրսորների քիմիական կազմի մասին տվյալները): Այդ տվյալների օգտագործումից էականորեն կշահի քրեական գործերով իրականացվող քննությունը:

Հանցավորությանն առնչվող տվյալների շտեմարանների որոշ օրինակներ

Հանցավորությանն առնչվող տվյալների շտեմարանի համակարգն Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Կոնեկտիկուտ նահանգի քրեական արդարադատության տեղեկատվական համակարգը ներառում է հետևյալ հիմնական ծրագրային փաթեթները¹¹⁸.

- Իրավախախտի տվյալներով հսկողության համակարգը,
- Մատնահետքերի ավտոմատացված նույնականացման համակարգը,
- Կոնեկտիկուտի իրավապահ մարմինների առցանց հաղորդակցության հեռամշակման համակարգը,
- Բջջային տվյալներով հաղորդակցության համակարգը:

Ինտերպոլի տվյալների շտեմարանները

Ինտերպոլը միջազգային մակարդակով ստեղծել է քրեական ոլորտի տվյալների մի շարք շտեմարաններ, որոնք ակնթարթորեն և անմիջականորեն հասանելի են Ինտերպոլի անդամ պետություններին: Տեղեկությունները փոխանակվում են ոստիկանական հաղորդակցության «I-24/7» անվտանգ համակարգով, որը ճկուն է և կարող է տեղայնացվել: Տվյալների շտեմարանը ներառում է հետևյալը.

- *Անվանական տվյալներ.* ավելի քան 155,000 գրանցումներ միջազգային հայտնի հանցագործների, անհայտ կորած անձանց և մահացած անձանց մասին՝ նրանց քրեական պատմություններով, լուսանկարներով, մատնահետքերով և այլն,

¹¹⁸ Համեմատ. Office of Policy and Management/Criminal Justice Policy Development and Planning Division, *Comprehensive Plan for the Connecticut Criminal Justice System*, March 2007, p. 52 [Քաղաքականության և կառավարման վարչություն / Արդարադատության ոլորտում քաղաքականության զարգացման և ծրագրման բաժին, Համապարփակ ծրագիր Կոնեկտիկուտի նահանգի քրեական արդարադատության համակարգի համար, 2007 թվականի մարտ, էջ 52]:

- *ԴՆԹ-ի տվյալներ.* մոտ 136,000 անձանց ԴՆԹ-ի տվյալներ 67 պետություններից: ԴՆԹ-ի տվյալներն անհատների գենետիկ նշանների թվերով կողավորված հավաքածուներ են, որոնց օգնությամբ կարելի է բացահայտել հանցագործությունները, գտնել անհայտ կորած անձանց և ճանաչել դիակները,
- *Մատնահետքեր.* ավելի քան 171,000 անձանց մատնահետքեր, որոնք ստացվել են 172 պետություններից և կառավարվում են Ինտերպոլի կողմից՝ մատնահետքերի ինդեքսավորման ավտոմատացված համակարգի օգնությամբ,
- *Երեխաների սեռական շահագործման նկարներ.* 2012 թվականի տարեվերջին այս համակարգի օգնությամբ ճանաչվել էին մոտ 2,900 տուժողներ (40 պետություններից) և 1,570 իրավախախտներ,
- *Յրազենի տվյալներ.* ավելի քան 250,000 հրազենի մասին տեղեկություններ և բարձր որակի 57,000 նկարներ, որոնք կառավարվում են Ինտերպոլի հրազենի տեղեկատվական աղյուսակով, որը քննիչներին թույլ է տալիս պատշաճ կերպով նույնականացնել հանցագործության մեջ օգտագործված հրազենը (մակնիշը, մոդելը, տրամաչափը և այլն): Ինտերպոլի ձգաբանական տեղեկությունների ցանցը (որը պարունակում է ավելի քան 130,000 գրառումներ) թույլ է տալիս մեծածավալ տվյալների միջազգային փոխանակումներ կատարել և համեմատել ձգաբանական տվյալները:
- *«Fusion Task Force» աշխատանքային խումբը.* ահաբեկչական գործունեության հետ առնչություն ունենալու մեջ կասկածվող ավելի քան 11,000 անձանց տվյալների շտեմարան: Ներկայումս ահաբեկչությանն առնչվող հարցերով տվյալներ են տրամադրում Ինտերպոլի անդամ պետություններից 105-ը:

Ինտերպոլն ունի նաև տվյալների այլ շտեմարաններ, որոնք տեղեկություններ են պարունակում գողացված և կորցրած ճանապարհորդական փաստաթղթերի, գողացված վարչական փաստաթղթերի, գողացված տրանսպորտային միջոցների և գողացված արվեստի գործերի մասին¹¹⁹:

¹¹⁹ Հանձնատ. Interpol, *Databases Fact Sheet*, COM/FSI/2012-02/GI-04, pp. 1f [Ինտերպոլ, Փաստական տեղեկանք տվյալների շտեմարանի մասին, COM/FSI/2012-02/GI-04, էջ 1 և շարունակ]:

Տվյալների փոխանակումը բռնության կանխարգելման նպատակով. ոստիկանության և առողջապահական հաստատությունների գործընկերությունը Միացյալ Թագավորությունում

Առաջնորդվելով ՄԱԿԹՀՊԳ-ի *Քաղաքային բնակավայրերում ոստիկանական գործունեության իրականացման ուսումնական ձեռնարկով* («Քրեական արդարադատության ձեռնարկների շարք»), Կարդիֆի՝ բռնության կանխարգելման ծրագիրը, որը գտնվում է Միացյալ Թագավորության Կարդիֆ քաղաքում, սկսել է ուսումնասիրել առողջապահության մարմինների, ոստիկանության և քաղաքապետարանի պաշտոնատար անձանց միջև տվյալների փոխանակման ուղղությամբ համագործակցելու միջոցով բռնության կանխման հնարավորությունը: Այդ մոտեցումը տարբերվում է քաղաքի մակարդակով իրականացվող համագործակցությունից, որի պարագայում արտակարգ իրավիճակների հետ առնչվող գերատեսչությունների տվյալները չեն հավաքվում և չեն օգտագործվում: Վերլուծաբանը բոլոր տվյալների և ոստիկանության օպերատիվ տեղեկությունների համադրմամբ մշակում է բռնության «օջախների», զենքի օգտագործման և բռնության տեսակների մասին ընթացիկ օպերատիվ տեղեկանքներ: Գործընկերները՝ ներառյալ կրթության և տրանսպորտի ոլորտների ներկայացուցիչները, կանոնավոր հանդիպումների ընթացքում քննարկում են ձեռք բերված տվյալները, տեղեկություններ են փոխանակում կանխարգելման ռազմավարությունների մասին և փոփոխություններ են կատարում ոստիկանության աշխատանքի ռազմավարության մեջ: «Ծրագրի շնորհիվ եականորեն կրճատվել է բռնությամբ պատճառված մարմնական վնասվածքների ցուցանիշը: Ծրագրի արդյունքում աճել է քաղաքում ոչ ծանր մարմնական վնասվածքների պատճառման դեպքերի արձանագրումը ոստիկանության կողմից»¹²⁰:

¹²⁰

Հանձնատ. UNODC, *Training Manual on Policing Urban Space*, Criminal Justice Handbook Series, New York 2013 (forthcoming), p. 25 [ՄԱԿԹՀՊԳ, *Քաղաքային բնակավայրերում ոստիկանական գործունեության իրականացման ուսումնական ձեռնարկ*, Քրեական արդարադատության ձեռնարկների շարք, Նյու Յորք, 2013 թ. (պատրաստվում է տպագրության), էջ 25]: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Florence, Curtis, et al. *Effectiveness of Anonymised Information Sharing and Use in Health Service, Police, and Local Government Partnership for Preventing Violence Related Injury: Experimental Study and Time Series Analysis*, BMJ Research, 2011 [Կուրտիս Ֆլորենս և այլք, *Անանուն տեղեկությունների փոխանակման և օգտագործման արդյունավետությունն արդարադատության, ոստիկանության և տեղական ինքնակառավարման գործընկերային համակարգերում բռնությամբ պայմանավորված վնասվածքների կանխարգելման գործում. փորձարարական հետազոտություն և ժամանակային շարքերի վերլուծություն*, BMJ Research, 2011 թ.]:

ԶԱՅ-ի ղեկավարների, կառավարիչների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և գիտահետազոտական հաստատությունների կողմից վերոհիշյալ տվյալների վերլուծությունը թույլ է տալիս լուծել հետևյալ խնդիրները՝ պարզել հանցավորության միտումները և օրինաչափությունները, բացահայտել ԶԱՅ-ի տարբեր կառույցների արձագանքի թերությունները, մշակել նոր քաղաքականություն և կանոնակարգեր՝ համագործակցությունը և համակարգումը խորացնելու նպատակով, կանխատեսել ապագայում ԶԱՅ-ի գործառնական պահանջներ, մշակել վերապատրաստման և մասնագիտական զարգացման համապատասխան ռազմավարություններ/միջոցառումներ և ԶԱՅ-ի կառույցների արձագանքը բարելավելու նպատակով ապահովել ռեսուրսների առավել պատշաճ/արդյունավետ բաշխում տարբեր կառույցների միջև:

Տեղեկատվության և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաները և թվային ապացույցները ԶԱՅ-ին հնարավորություն են ընձեռում ավելի ռացիոնալ և արդյունավետ դարձնել վարչական համակարգերը և գործընթացները: Նոր տեխնոլոգիաները կարող են վերափոխել ԶԱՅ-ի յուրաքանչյուր գերատեսչության կողմից իր գործառույթների կատարման և մեղադրանքը ներկայացնելուց մինչև գործի վերջնական լուծումը տվյալների հետ կատարվող աշխատանքների արագությունը, հուսալիությունը և արդյունավետությունը¹²¹:

Այնուամենայնիվ, ԶԱՅ-ի տարբեր կառույցներ հաճախ տվյալների սեփական շտեմարաններ և ֆայլեր են վարում, թեպետ «դրանցում պարունակվող տեղեկություններից շատերը նույնն են կամ պետք է որ նույնը լինեն»¹²²: Ուստի տվյալների ոչ միասնական մշակման համակարգերում հնարավոր է տեղեկատվության հավաքման աշխատանքների համընկնում: Ավելին, տարբեր կառույցների հատվածական տվյալները կարող են չլինել համադրելի¹²³: ԶԱՅ-ի տարբեր կառույցներ

¹²¹ Համեմատ. Auld, "The Criminal Justice System" (op.cit. note 101), p. 353 [Օլդ, «Քրեական արդարադատության համակարգը» (տե՛ս էջատակի 101-րդ ծանոթագրությունը, էջ 353]:

¹²² Նույն տեղը, էջ 355:

¹²³ Համեմատ. Hudzik, John K., "Comprehensive Criminal Justice Planning: Successes, Failures and Lessons from the American Experience", in: Biles, David/McKillop, Sandra (eds.), *Criminal Justice Planning and Coordination*, Proceedings of a conference held on 19-21 April 1993, Canberra, Australian Institute of Criminology, Canberra 1994, p. 1-16, here p. 10 [Հոն Կ. Հուժիկ, «Քրեական արդարադատության համապարփակ պլանավորումը. ամերիկյան փորձի հաջողությունները, ձախողումները և քաղված դասերը», աղբյուրը՝ Ղեկվիլ Բայլս / Սանդրա ՄաքՔիլոպի (խմբագիրներ), *Քրեական արդարադատության ծրագրումը և համակարգումը*, Կանբերայում 1993 թվականի ապրիլի 19-21-ն անցկացված խորհրդաժողովի աշխատությունները, Ավստրալիայի քրեաբանության ինստիտուտ, Կանբերա 1994 թ., էջեր 1-16, այստեղ՝ էջ 10]:

րի տարբեր համակարգերը կարող են նույնիսկ հնարավորություն չըն-
ձեռել՝ պահպանված տեղեկություններն էլեկտրոնային եղանակով ու-
ղարկելու դրանց կարիքն ունեցող այլ գերատեսչություններին: ՔԱՅ-ի
որոշ կառույցների ներսում, հատկապես՝ դաշնային կառուցվածք ունե-
ցող պետություններում, անգամ օգտագործվում են տարբեր համա-
կարգեր¹²⁴:

Ոչ միասնական համակարգերում «գործի առաջընթացը կարող է դի-
տարկվել միայն յուրաքանչյուր գերատեսչության ներսում, միայն
տվյալ գերատեսչության կողմից և միայն տվյալ գերատեսչության կող-
մից գործի վարման ընթացքում: Գործի վարման պարտականություն-
ները ցաքուցրիվ են՝ ակնհայտ խզումներ առաջացնելով գործի փո-
խանցման պահին կամ խնդիրներ առաջանալու դեպքում միմյանց փո-
խարինելու առումով: Ընդ որում, հնարավոր չէ ողջ համակարգի մա-
կարդակով տեղեկություններ հավաքել ամբաստանյալների, տուժող-
ների, գործի ելքի կամ այլ գործոնների մասին, քանի որ յուրաքանչյուր
գերատեսչություն գործի նյութերի բնորոշումը տալիս է յուրովի»¹²⁵: Դ-
րա հետևանքով դատավորները կարող են որոշ դեպքերում դատավ-
ճիռներ կայացնել՝ տեղյակ չլինելով կոնկրետ ամբաստանյալների
կրկնահանցագործ լինելու հանգամանքի մասին¹²⁶:

Երբ գործը վարույթի մեկ փուլից անցնում է մյուսին, տվյալները կրկնօ-
րինակվում են ֆիզիկական գործողությամբ կամ էլեկտրոնային եղա-
նակով՝ մեկ գերատեսչության նյութերից փոխանցվելով մյուսին: «Յա-
ճախ չկա փոխանցվող տվյալների որակը կամ համապատասխանութ-
յունը ստուգող կամ երաշխավորող միասնական մարմին կամ անգամ
մեղադրանքի պահից մինչև վերջնական լուծումը գործի ընդհանուր

¹²⁴ Համեմատ. Auld, “The Criminal Justice System” (op.cit. note 101), p. 353 [Օլդ, «Քրեական արդարադատության համակարգը» (տե՛ս էջատակի 101-րդ ծանոթագրությունը, էջ 353)], և

Moskowitz, Albert, *Challenges and Priorities in Prosecuting and Adjudicating Trafficking in Person Cases*, paper presented at the “Trafficking in Persons Research and Data Forum”, November 2008 էջ 6 [Ալբերտ Մոսկովից, *Մարդկանց թրաֆիքինգի գործերի քրեական հետապնդման և դատական լուծման մարտահրավերները և առաջնայնությունները*, աշխատությունը ներկայացվել է «Մարդկանց թրաֆիքինգի հետազոտությունների և տվյալների ֆորումի» ընթացքում, 2008 թվականի նոյեմբեր, էջ 6]:

¹²⁵ Auld, “The Criminal Justice System” (op.cit. note 101), pp. 355f [Օլդ, «Քրեական արդարադատության համակարգը» (տե՛ս էջատակի 101-րդ ծանոթագրությունը, էջ 355 և շարունակ):

¹²⁶ Kosovar Institute for Policy Research and Development, *The Fragile Triangle. Police judges and prosecutors coordination during criminal proceedings response in Kosovo* (op.cit. note 114), pp. 8f [Կոսովյոյի քաղաքական հետազոտությունների և զարգացման ինստիտուտ: *Փխրուն եռանկյունին: Ոստիկանների, դատավորների և դատախազների գործունեության համագործակցությունը քրեական վարույթներում Կոսովոյում* (տե՛ս էջատակի 114-րդ ծանոթագրությունը), էջ 8 և շարունակ]:

ընթացքը կառավարող միասնական մարմին: Ավելին, համակարգում աշխատանքի հոսքը մեծ մասամբ պայմանավորվում է յուրաքանչյուր գերատեսչության և մարմնի ներքին կառուցվածքով: Համակարգի ներսում տվյալները մշտապես փոփոխությունների են ենթարկվում կա՛մ գերատեսչություններից մեկի գործողությունների հետևանքով (օրինակ՝ ամբաստանյալը նոր մեղադրանքի հիման վրա կրկին ձերբակալվում է), կա՛մ արտաքին իրադարձության պատճառով (օրինակ՝ վկան փոխում է հասցեն): Նման փոփոխությունը, որպես կանոն, նկատում է գերատեսչություններից միայն մեկը, որն այդ դեպքում պարտավոր է ապահովել դրա մասին տվյալների արդյունավետ տրամադրումը բոլոր մասնակիցներին: Մյուս գերատեսչություններից յուրաքանչյուրին անհրաժեշտ է ունենալ ստուգման ինքնուրույն ընթացակարգ՝ երաշխավորելով ստուգված փոփոխությունների՝ ժամանակին արտացոլումն իր նյութերում: Այս համակարգը լավագույն դեպքում անարդյունավետ է և վատնումային, իսկ վատագույն դեպքում կարող է հանգեցնել հիմնական գերատեսչություններում ամկա տեղեկությունների միջև հակասությունների¹²⁷:

Քրեական արդարադատության տարբեր կառույցների միջև հարաբերությունների այսօրինակ շեղումների պարագայում անհրաժեշտ է հատուկ ջանք գործադրել՝ ստեղծելու և կառավարելու գործի նյութերի կառավարման համակարգեր ոստիկանության, դատախազության, դատարանների, պաշտպանության և քրեակատարողական համակարգերի միջև: Գործի ընթացքի հսկողության և կառավարման արդյունավետ համակարգերը ոչ միայն արագացնում են քրեական հետապնդման գործընթացը, այլ նաև թույլ են տալիս ավելի լավ գնահատել քննիչների և դատախազների աշխատանքը (տե՛ս նաև 7.5.6. ենթագլուխը):

Գործի նյութերի կառավարման համակարգերը

Գործի նյութերի կառավարման համակարգի կազմակերպման առավել արդյունավետ տարբերակը ԶԱՀ-ի կառույցների միջև տվյալների միասնական շտեմարանի ձևավորումն է, որը թույլ կտա «տվյալները փոխանակել էլեկտրոնային ֆայլով, այլ ոչ՝ մեկ գերատեսչությունից ֆիզիկապես հանձնել մյուսին: Ստեղծվող էլեկտրոնային ֆայլը պետք է պարունակի կոնկրետ գործին առնչվող բոլոր փաստաթղթերը և տեղեկութ-

¹²⁷ Auld, “The Criminal Justice System” (op.cit. note 101), p. 355 [Օլդ, «Քրեական արդարադատության համակարգը» (տե՛ս էջատակի 101-րդ ծանոթագրությունը, էջ 355):

յունները: Այն պետք է արագորեն և առանց մեծ ծախսերի կարողանա տեղաշարժվել քրեական արդարադատության ողջ համակարգի ներսում: Երբ համակարգի մեկ մասնակիցն ավարտած կլինի տվյալ գործի շրջանակում իր կողմից կատարվող աշխատանքը, ֆայլն էլեկտրոնային տեսքով կտրամադրվի մյուս մասնակցին՝ ճշգրիտ, լիարժեք և թարմ տեղեկությունների տեսքով, որոնց հետ արդեն կարող է աշխատել մասնագետների հաջորդ խումբը: Յուրաքանչյուր գերատեսչություն ընդհանուր ֆայլն օգտագործում է իր աշխատանքում թարմացումների միջոցով ֆայլի մեջ արտացոլելով այլ անձանց կամ իր նախածեռնած կամ իրեն հայտնի դարձած փոփոխությունները: Յուրաքանչյուր տեղեկություն անհրաժեշտ կլինի մուտքագրել միայն մեկ անգամ»¹²⁸:

Իրենց հասանելի ֆայլերի ոչ գաղտնի բաղադրիչները ստանալու թույլտվությամբ՝ վկաները, տուժողները և ամբաստանյալները/փաստաբանները կարող են անհրաժեշտ տեղեկություններն արագորեն ստանալ գործի կառավարման մինչդատական փուլում: Գործի նյութերի պատշաճ հասանելիությունը հսկելու համար պետք է ներդրված լինեն անվտանգության տեխնոլոգիաներ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների տվյալների միասնական շտեմարան ձևավորելու դեպքում համակարգը պետք է համապատասխանի ոչ միայն անհատական, այլև ընդհանուր և միասնական պահանջներին: Գործի նյութերի մեջ ներառվելիք համապատասխան տվյալների համար անհրաժեշտ է մշակել միասնական սահմանումներ, օրինակ՝ պատահարների, կասկածյալների, տուժողների և վկաների մասին կատարվող գրառումների ստանդարտացված ձևեր: Տվյալների մուտքագրման կարգը և ստանդարտները պետք է համաձայնեցվեն և ստորագրվեն բոլոր գերատեսչությունների կողմից¹²⁹:

Տեխնիկական ենթակառուցվածքի (սարքավորումներ և ծրագրային ապահովում) տրամադրումից զատ՝ միասնական ընդհանուր համակարգի ստեղծման հաջողության մյուս գրավականը ԶԱՀ-ի բոլոր աշխատողների վերապատրաստումն է, որպեսզի նրանք կարողանան հավուր պատշաճի լրացնել գործի նյութերը՝ պահպանելով վարչական ստանդարտները և ԶԱՀ-ի բոլոր կառույցներին տրամադրելով անհրաժեշտ տեղեկությունները՝ հիմնվելով ԶԱՀ-ի այլ կառույցների գործու-

¹²⁸ Նույն տեղը, էջ 358:

¹²⁹ Նույն տեղը, էջ 360, և

Berry, *Criminal Justice Units and Case Building* (op.cit. note 100), p. 3 [Բերրի, *Քրեական արդարադատության ստորաբաժանումները և գործերի կազմումը* (տե՛ս էջատակի 100-րդ ծանոթագրությունը), էջ 3]:

նեության միջավայրի վերաբերյալ ունեցած տեղեկությունների վրա (տե՛ս նաև 7.7. ենթագլուխը): Հաջորդ կարևոր պահանջը վերաբերում է ԶԱՀ-ում աշխատանքային այնպիսի մշակույթի ձևավորմանը, որը բոլոր սուբյեկտներին կթաշալերի՝ միմյանց հետ փոխանակելու գործին առնչվող տեղեկությունները, որը չի հակասում դատական իշխանության անկախությունը երաշխավորելու սկզբունքին:

Գործի նյութերի միասնական կառավարման համակարգերը կարելի է ստեղծել զուգահեռաբար կամ հաջորդաբար՝ կախված ֆինանսական միջոցների, վերապատրաստումների և փոփոխությունների գործընթացի կառավարման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունից¹³⁰:

Միասնական համակարգերի նկատմամբ այլընտրանքային մոտեցման օրինակ

Միասնական համակարգերի այլընտրանքային տարբերակը Միացյալ Թագավորությունում

Ոստիկանական 43 կառույցների և հարակից գերատեսչությունների համար մեկ համակարգ ներդնելու փոխարեն Միացյալ Թագավորության Ազգային ոստիկանության բարելավման գործակալությունը մշակել է համապետական որոշակի չափորոշիչներ, որոնց պետք է համապատասխանեն տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերը: Չափորոշիչները ներառում են տվյալների միանգամյա մուտքագրումը և միանգամյա հաստատումը, համադրելիության և ճկունության պահանջները և ընդարձակվելու կարողությունը: «Այդ ամենը ողջունելի է շարքային ոստիկանների համար, ովքեր հաճախ լուրջ դժվարությունների են հանդիպում համակարգիչ օգտագործելու հարցում, ստիպված են լինում միևնույն տեղեկությունները մուտքագրել տվյալների բազմաթիվ շտեմարանների մեջ և մտապահել բազմաթիվ գաղտնաբառեր, որոնք, անվտանգության նկատառումներից ելնելով, անհրաժեշտ է լինում մշտապես փոխել»¹³¹:

¹³⁰ Համեմատ. Auld, “The Criminal Justice System” (op.cit. note 101), p. 361 [Օլդ, «Քրեական արդարադատության համակարգը» (տե՛ս էջատակի 101-րդ ծանոթագրությունը, էջ 361):

¹³¹ Berry, *Reducing Bureaucracy in Policing* (op.cit. note 105), p. 25 [Բերրի, *Բյուրոկրատիայի կրճատումը ոստիկանական գործունեության մեջ* (տե՛ս էջատակի 105-րդ ծանոթագրությունը, էջ 25):

7.1.3. Փորձագիտական ծառայությունները

Քրեական արդարադատության համակարգի արդյունավետության և արդարացիության տեսանկյունից էական դեր են կատարում փորձագիտական ծառայությունները, որոնք անաչառ և յուրաժամ տեղեկություններ են տրամադրում քրեական արդարադատության գործընթացի տարբեր փուլերում: Այդ ծառայությունների շնորհիվ ոստիկանությունը, օրինակ, քրեական արդարադատության գործընթացի քննության փուլում կատարում է կասկածյալների նույնականացումը: Փաստաբանները, դատախազները և դատավորները դատական քննության փուլում հենվում են փորձագիտական ծառայությունների վրա: «Փորձագիտական ծառայությունների վերջնականատակը ճշմարտության բացահայտմանն աջակցելն է, մասնավորապես՝ քրեական արդարադատության համակարգին տրամադրելով պատասխաններ, օգտագործելով անաչառ ապացույցներ և առաջադրելով իրավախախտի մեղավորության կամ անմեղության պարզմանն ուղղված հարցեր»¹³²: Ուստի հույժ կարևոր է փորձագիտական ծառայությունների արդյունավետ տրամադրումը բարձր որակավորում ունեցող և անկողմնակալ սուբյեկտի կողմից: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է հավուր պատշաճի կրթել քրեական արդարադատություն կառույցներին և գիտական փորձագետներին, ինչպես նաև արդյունավետ համագործակցություն ապահովել քրեական արդարադատության գործընթացում փորձագիտական ապացույցների ճանաչման, հավաքման, վերլուծության, մեկնաբանության և ներկայացման գործառույթներում ներգրավված բոլոր հաստատությունների միջև:

Փորձագիտական ծառայությունները հիմնականում տրամադրում են լաբորատորիաները, որոնք կարող են գործել պետական հատվածում՝ ներքին գործերի, արդարադատության, առողջապահության, կրթության և հետազոտությունների նախարարությունների ենթակայությամբ, կամ մասնավոր հատվածի կողմից՝ առևտրային հիմունքներով: Ուստի ԶԱԶԲ-ի համապարփակ մոտեցման մեջ, անհրաժեշտ է ներգրավել փորձագիտական ծառայությունների մատուցման գործում ներգրավված պետական և մասնավոր բոլոր սուբյեկտներին:

Հաշվի առնելով, որ գիտական բառապաշարի հաճախակի օգտագործումը կարող է փորձագիտական ապացույցների հետ գործ ունենալիս

¹³² UNODC, "Policing. Forensic Services and Infrastructure" (op.cit. note 49), p. 1 [ՄԱԿԹՀՊԳ, «Ոստիկանական գործունեությունը. քրեափորձագիտական ծառայությունները և ենթակառուցվածքը» (տե՛ս էջատակի 49-րդ ծանոթագրությունը), էջ 1]:

բարդացել հաղորդակցությունը ոչ գիտնական անձանց (օրինակ՝ քննիչների, իրավաբանների, դատախազների, փաստաբանների և դատավորների) և փորձագետ-գիտնականների միջև, ոչ գիտնական անձանց համար կարևոր է, որ լաբորատորիաներում աշխատողները տեղեկությունները տրամադրեն և հարցերին պատասխանեն մատչելի և ընկալելի ձևով:

Քննիչը, դատախազը, դատավորը և փաստաբանը պետք է կարողանան հասկանալ գիտական թեստերի վրա հիմնվող եզրակացությունները, ինչպես նաև այդ թեստերի սահմանափակությունները: Որոշումները հաճախ հիմնվում են լաբորատորիայի կողմից տրամադրվող գիտական տեղեկությունների վրա: Լաբորատորիայում աշխատող անձինք պետք է արդյունավետորեն հաղորդակցվեն ոստիկանության, փաստաբանների և դատական համակարգում գործող այլ անձանց հետ, որպեսզի լաբորատորիան ի վիճակի լինի մատուցել համապատասխան ծառայություններ: Հաղորդակցության բացերից խուսափելու համար կարևոր է ստեղծել այնպիսի մեխանիզմ, որը ՔԱՀ-ում ներգրավված բոլոր շահակիցներին հնարավորություն կընձեռնի աշխատելու գործընկերաբար: Դա պետք է ներառի փորձագիտական տվյալների շտեմարանի և ֆիզիկական ապացույցների պահպանման վայրերի ստեղծումը, որոնք պետք է հասանելի լինեն ՔԱՀ-ի համապատասխան կառույցների համար: Անհրաժեշտ կլինի նաև փորձագիտական ապացույցները հավուր պատշաճի ներառել գործի նյութերի մեջ: Լաբորատորիաները կարող են բարելավել հաղորդակցությունը ՔԱՀ-ի տարբեր կառույցների միջև, օրինակ՝ կազմակերպելով նոր տեխնոլոգիաներին և դրանց հնարավոր կիրառություններին առնչվող վերապատրաստման դասընթացներ ոստիկանների, փաստաբանների, դատախազների և դատավորների համար (տե՛ս նաև 7.7. ենթագլուխը): Լաբորատորիաները կարող են նաև քննիչներին հնարավորություն ընձեռնել՝ քննության ընթացքում տարաբնույթ հարցերը քննարկելու լաբորատորիայի աշխատողների հետ և/կամ ապահովել լաբորատորիաների աշխատողների մասնակցությունը քննչական թիմերի աշխատանքին: Անկախ կիրառվող մեխանիզմից, հույժ կարևոր է, որ լաբորատորիաներն ակտիվ դեր ստանձնեն՝ օգնելով ՔԱՀ-ի բոլոր սուբյեկտներին գիտական ապացույցների պատշաճ օգտագործման հարցում:

Ամբողջական բարեփոխումների գործընթացում պետք է ընդգծել.

- փորձագիտական գործընթացի բոլոր փուլերում ապացույցների անխախտելիությունը և նույնականությունը երաշխավորելու ըն-

թացակարգերի առկայությունը,

- փորձագիտական ծառայությունների որակական հատկանիշները և հավատարմագրման ուղղությամբ կատարվող աշխատանքները,
- լաբորատոր պատշաճ և ճշգրիտ սարքավորումների, ռեֆերենտային հավաքածուների և տվյալների շտեմարանների առկայությունը, ինչպես նաև՝ դրանք պահպանելու համար անհրաժեշտ կամքը և ռեսուրսները,
- արդյունավետ հաղորդակցությունը ԶԱՅ-ում աշխատողների և փորձագետ-գիտնականների միջև,
- կրթության և վերապատրաստման հնարավորությունները գիտնականների, ոստիկանների և քրեական արդարադատության համակարգում աշխատող այլ պրակտիկ մասնագետների համար,
- փորձագիտական տեղեկությունները պատրաստելու և հանցավորության կանխարգելման ծրագրերում ներառելու («փորձագիտական-օպերատիվ աշխատանք» կատարելու) կարողությունները¹³³:

Փորձագիտական կարողությունների կատարելագործման օրինակ

ԵԱՅԿ աջակցությունը Սերբիայի Հանրապետության փորձագիտական կարողությունների կատարելագործմանը

Սերբիայի Հանրապետությունում ԵԱՅԿ առաքելությունը, հաճախակի համագործակցելով արտաքին գործընկերների, օրինակ՝ Նորվեգիայի և Շվեդիայի կառավարությունների հետ, 2004-2009 թվականներին իրականացրեց դեպի վայրում կատարվող փորձագիտական աշխատանքների ծրագիր, որի նպատակն էր «զարգացնել արհեստավարժ և կատարելագործված փորձագիտական քննություն կատարելու կարողությունները և երաշխավորել պատշաճ որակի ապացույցներ՝ սատարելով իրավական վարույթների արդարացիությանը և իրավունքի գերակայությանը Սերբիայում»¹³⁴: Ծրագիրը կազմված էր

¹³³ Նույն տեղը, էջ 2 և շարունակ.:

¹³⁴ OSCE, *OSCE Support to Enhancement of Forensic Capacities within the Serbian Police in the Period 2004-2009. Closing Report. Crime Scene Forensic Programme*, OSCE Mission to Serbia, Law Enforcement Department, Belgrade 2010, p. 5 [ԵԱԿԿ, ԵԱԿԿ

չորս հիմնական բաղադրիչներից՝ փորձագիտական լաբորատորիաների և դեպքի վայրում քննչական գործողություններ կատարող ոստիկանների տեխնիկական հագեցման բարելավում, լաբորատորիաներում աշխատողների և դեպքի վայրում քննչական գործողություններ կատարող ոստիկանների վերապատրաստում, լաբորատոր անալիզների և դեպքի վայրում կատարվող քննչական գործողությունների համար որակի կառավարման համակարգի ստեղծում և Սերբիայի փորձագիտական կառույցների և արտերկրի փորձագիտական կառույցների միջև միջազգային համագործակցության ձևավորում:

Ծրագրի շրջանակում ստեղծվեցին կամ զգալիորեն կատարելագործվեցին փորձագիտական երկու տարածքային և մեկ ազգային լաբորատորիաներ: Վերջիններիս աշխատողները վերապատրաստվեցին նոր ստացված տեխնիկական սարքավորումների կապակցությամբ՝ դեպքի վայրում քննչական գործողություններ և լաբորատոր հետազոտություններ կատարելու թեմաներով՝ ներառյալ կաղապարներ ձուլելը, մատնահետքեր վերցնելը, գրաֆոսկոպիկ, մեխանոսկոպիկ և ֆիզիկաքիմիական անալիզները, հետքի տարրերի ուսումնասիրությունը և քիմիական անալիզը: Վերապատրաստումներ կազմակերպվեցին դեպքի վայրում քննչական գործողություններ կատարող ոստիկանների, լաբորատորիաների աշխատողների և դատական բժիշկների համար:

Ծրագրի շրջանակում կարևորվեց նաև դեպքի վայրում քննչական գործողությունների կատարման ամբողջական հայեցակարգի մշակումը և որակի կառավարման «QMS» համակարգի, մասնավորապես՝ «ISO 17025» ստանդարտի ներդրումը, որը երաշխավորում է ապացույցների պատասխանատու պահպանության և հսկողության շղթայի անխախտելիությունը՝ դեպքի վայրից մինչև դատարանում այդ ապացույցների ներկայացումը: Որակի կառավարման «QMS» համակարգի ստեղծման նախապատրաստական աշխատանքները ներառեցին առկա լաբորատորիաների գնահատումը՝ դրանցում «ISO 17025» ստանդարտի ներդրման հնարավորությունը պարզելու համար, ինչպես նաև՝ Սերբիայի փորձագիտական հաստատությունների անդամակցությունը Փորձագիտական գիտական հաստատություններ-

օժանդակությունը փորձագիտական կարողությունների զարգացմանը Սերբիայի ոստիկանության համակարգում 2004-2009 թթ. ժամանակահատվածում: Ավարտական զեկույց, Դեպքի վայրի դատափորձագիտական ծրագիր, ԵԱՀԿ առաքելությունը Սերբիայում, իրավապահ հարցերի վարչություն, Բելգրադ, 2010 թ., էջ 5]:

րի եվրոպական ցանցին (անգլ.՝ «European Network of Forensic Science Institutions»), որը կարևոր էր համարվում սորագույն տեղեկությունների և գիտելիքների փոխանակման միջոցով կադրերի շարունակական մասնագիտական կատարելագործումը երաշխավորելու տեսանկյունից: Ծրագրի վերջում որակի կառավարման «QMS» համակարգի լիարժեք ներդրումն ավարտին չհասցվեց: Շվեդիան երկկողմ ծրագրի շրջանակում շարունակեց որակի կառավարման «QMS» համակարգի ներդրման աշխատանքները:

7.2. Խորացված համագործակցությունը ԶԱՀ-ի կառույցների և անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորուբային և ոչ պետական կառույցների միջև

Ինչպես նշվեց, անհրաժեշտ է ստեղծել ֆորմալ ԶԱՀ-ի կառույցների և անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող սովորուբային և ոչ պետական կառույցների միջև համակարգման և համագործակցության մեխանիզմներ, որոնցով կարելի է բարելավել քրեական արդարադատության գործընթացի արդյունավետությունը և գործունակությունը:

Ինչ վերաբերում է անվտանգության ծառայություններ մատուցողներին, ապա նշված մեխանիզմները պետք է անդրադառնան, մասնավորապես, ոստիկանության վերահսկողության մեխանիզմներին, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման մեխանիզմների/ցանցերի ստեղծմանը, տեղեկատվության տարբեր տեսակների բնորոշմանը և անվտանգության ոլորտում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների համար այդ տեղեկատվության հասանելիության մակարդակի որոշմանը:

7.2.1. Աջալուրջ բնակիչների խմբերը/Թաղային պահակային դիտարկման համակարգերը

«Աջալուրջ բնակիչների խմբերի նման կառույցները հաճախ ձևավորվում են այն ժամանակ, երբ մարդկանց կարծիքով՝ աճում է հանցավորությունը կամ ավելանում են հասարակական կարգին սպառնացող հակասոցիալական և իրավախախտ վարքի դրսևորումները: Այդ խմբերը զարգանում են ոչ միայն այն վայրերում, որտեղ պետություններն ի վիճակի չեն քաղաքացիներին պաշտպանել հանցավորությունից, այլ նաև այնտեղ, որտեղ պետությունը համարվում է կոռումպացված կամ անվստահելի»¹³⁵:

Այնուհանդերձ, ոստիկանությունը որոշ պետություններում հայտնվել է այնպիսի իրավիճակներում, որոնցում մարտավարության տեսանկյունից նպատակահարմար է եղել հասարակական կարգը պաշտպանելու նպատակով ընթացիկ հարաբերություններ հաստատել այդ խմբերի հետ: Թեպետ ոստիկանությունն այդպերպ կապեր է ձևավորում նման խմբերի ազդեցության ներքո գտնվող տարածքների բնակիչների հետ, ոստիկանությունն այս առումով լուրջ դժվարությունների է հանդիպում ներառյալ ոստիկանության լեգիտիմության թուլացումը և այնպիսի խմբերի ձևավորումը, որոնք կարող են հետագայում ներգրավվել անօրինական գործունեության մեջ¹³⁶:

Թաղային պահակային դիտարկման համակարգերը կարող են օգնել՝ համայնքին ներգրավելու առկա պրոբլեմների լուծման գործընթացում, քանի որ դրանք կարող են օժանդակել ոստիկանությանը, բարելավել ընթացիկ հաղորդակցությունը հանրության և ոստիկանության միջև և ամրապնդել սեփական ապահովության համար համայնքի պատասխանատվության ոգին: Թաղային պահակային դիտարկման համակարգի անդամների կողմից օրենքն իրենց ձեռքը վերցնելու և այլ նպատակների համար համայնքի ազդեցիկ խմբերի ձեռքին գործիք դառնալու ռիսկը բացառելու նպատակով

¹³⁵ Kantor, Ana/Persson, Mariam, *Understanding Vigilantism. Informal Security Providers and Security Sector Reform in Liberia*, Folke Bernadotte Academy, Stockholm, 2009, p. 12 [Անա Կանտոր / Մերիեմ Փերսոն, *Աջալուրջության ընկալումը: Անվտանգության ոչ ֆորմալ ծառայությունները մատուցողները և անվտանգության ոլորտի բարելավիչումները Լիբերիայում*, Ֆոլկե Բերնադոտի ակադեմիա, Ստոկհոլմ, 2009 թ., էջ 12]:

¹³⁶ UNODC-UNHABITAT, *Introductory Handbook on the Policing of Urban Space*, United Nations Publication, New York 2011, pp. 22f [ՄԱԿԹՀՊԳ-ՄԱԿՀԱԲԻԹԱԹ, *Քաղաքային բնակավայրերում ոստիկանական գործունեության իրականացման ներածական ձեռնարկ*, Միավորված ազգերի կազմակերպության հրատարակություն, Նյու Յորք, 2011 թ., էջ 22 և շարունակ]:

անհրաժեշտ է մշտապես ընդգծել, որ նրանց միակ խնդիրը հաղորդելն է, և որ ուժի գործադրման մեկնաշնորհը նախկինի պես վերապահված է բացառապես ոստիկանությանը: Ուստի ցանկալի կլինեն ունենալ հստակ և խիստ կանոնակարգեր թաղային պահակային դիտարկման համակարգերի վերաբերյալ, և տեղում ապահովել մեկ ոստիկանի ներկայությունը, ով կվերահսկեր և կհամակարգեր նրանց աշխատանքը՝ պատասխանատվություն ստանձնելով նրանց գործողությունների համար:

Ֆորմալ ԶԱԳ-ի կառույցների և անվտանգության ոլորտում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների միջև համագործակցության և համակարգման օրինակ

Համագործակցությունը ոստիկանության և քաղաքացիական պարեկների («դրուժինա») միջև Ղրղզստանում

Ղրղզստանի 2010 թվականի ապրիլյան հեղափոխության ընթացքում, երբ ոստիկանությունն ի վիճակի չէր հասարակական կարգ և անվտանգություն ապահովել փողոցներում, մի շարք քաղաքացիներ մայրաքաղաք Բիշկեքում պետական շինությունները, մասնավոր ձեռնարկությունները և բնակելի թաղամասերի մասնավոր գույքը հետագա թալանից պաշտպանելու նպատակով «վերակենդանացրին» խորհրդային ժամանակաշրջանում գոյություն ունեցած քաղաքացիական պարեկային կառույցները՝ «դրուժինաները»:

Խորհրդային ժամանակաշրջանում դրուժինան մարդկանց փոքր խումբ էր, որը, ոստիկանության հետ համագործակցելով, մշտադիտարկում էր փողոցները և անվտանգության միջադեպերի մասին հաղորդում ոստիկանությանը: Իրենց ներկայությամբ նրանք հասարակական հսկողություն էին իրականացնում խնդիրներ ստեղծող տարաբնույթ տարրերի նկատմամբ: Դրուժինայի անդամներին տրամադրվում էին անձը հաստատող փաստաթղթեր և հատուկ տարբերանշաններ¹³⁷: 2005 թվականի մարտյան հեղափոխության ընթաց-

¹³⁷ Հանձնառ. Sharshenova, Aijan, *Non-state Security Providers in Kyrgyzstan: Druzhina*, Research Fellow Working Paper, Social Research Center, American University of Central Asia, Kyrgyzstan, May 2011, p. 6 [Այջան Շարշենովա, *Անվտանգության ծառայություններ մատուցող ոչ պետական սուբյեկտները Ղրղզստանում. Դրուժինան*, գիտական աշխատողի աշխատանքային գեկույց, Սոցիալական հետազոտությունների կենտրոն, Կենտրոնական Ասիայում ամերիկյան համալսարան, Ղրղզստան, 2011 թվականի մայիս, էջ 6]:

բում Բիշկեքում թալանը կանխելու նպատակով արդեն իսկ ձևավորվել էին քաղաքացիական նմանատիպ պարեկային խմբեր, որոնց գործունեությունը, սակայն, ավելի ուշ դադարել էր:

2010 թվականի ապրիլին դրուժինաների շարժումը վերածվեց զանգվածային երևույթի: Բիշկեքում հիմնադրվեցին տասնյակ դրուժինաներ, որոնց մի մասը կապակցված էր քաղաքական կուսակցությունների հետ, մյուսներն ունեին ընդհանուր հանգամանքներ, օրինակ՝ բնակվում էին միևնույն աշխարհագրական տարածքում կամ միևնույն մարզական ակումբի անդամներ էին: Խոշորագույն խումբը «Պատրիոտ» դրուժինան էր, որի անդամները հասարակության տարբեր խավերի, տարբեր սեռերի և տարիքային խմբերի ներկայացուցիչներ էին բնակելի տարբեր թաղամասերից: Մեկ օրվա ընթացքում խումբը կարողացավ հավաքագրել 8,000 անդամի: Խմբի անդամները պաշտպանում էին փողոցները՝ ոստիկանների հետ միասին, թեպետ ոստիկաններից շատերը սեփական անվտանգությունն ապահովելու նպատակով կրում էին քաղաքացիական հագուստ¹³⁸:

Ի տարբերություն 2005 թվականի, խմբերից շատերն այս անգամ շարունակեցին գործել նաև ապրիլյան հեղափոխության ավարտից հետո՝ ապահովելով անվտանգությունը, հատկապես՝ ընտրություններին առնչվող տարբեր միջոցառումների ընթացքում: Որոշ դրուժինաներ կարևոր դեր կատարեցին նաև այն առումով, որ Ղրղզստանի հարավի մի շարք քաղաքներում 2010 թվականի հունիսին տեղի ունեցած ազգամիջյան բախումների ընթացքում կարողացան կանխել բռնությունը¹³⁹:

Կառավարության նախկին՝ 1994 թվականի որոշման փոխարեն Ղրղզստանի Ժամանակավոր կառավարությունը 2012 թվականի հունիսին որոշում ընդունեց դրուժինաների գործունեությունը կանոնակարգելու մասին: Որոշմամբ սահմանվեցին դրուժինաների նպատակը, ինդիկոները, գործառույթները, կազմը և կազմակերպչական և կառավարչական կառույցները, ինչպես նաև դրուժինայի անդամների իրավունքները և պարտավորությունները: Սահմանվեցին այնպիսի

¹³⁸ Նույն տեղը, էջատակի 142-րդ ծանոթագրություն, էջ 7 և շարունակ., և UNHCR, *CORI Country Report, Southern Kyrgyzstan*, commissioned by the UNHCR, December 2010, pp.62f [ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատար, *CORI պետությունների գեկույցը, Հարավային Ղրղզստան*, ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի պատվերով, 2010 թվականի դեկտեմբեր, էջ 62 և շարունակ.]:

¹³⁹ Հանձնատ. Sharshenova [Շարշենովա] (տե՛ս էջատակի 137-րդ ծանոթագրությունը), էջ 8:

խնդիրներ, ինչպիսիք են պարեկային ծառայությունը փողոցներում, հրապարակներում և հասարակական այլ վայրերում, աջակցությունը ոստիկաններին, քաղաքացիների հետ բացատրական աշխատանքների իրականացումը և մանր իրավախախտումների և հանցագործությունների կանխման նպատակով աշխատանքը զանգվածային լրատվամիջոցների հետ: Որոշման դրույթներից մեկով թույլատրվեց արտակարգ իրավիճակի պարագայում զինել դրուժինաներին: Բացի դրանից՝ որոշման մեջ շեշտվեց դրուժինաների և ոստիկանության միջև սերտ համագործակցության անհրաժեշտությունը, ինչպես նաև դրուժինաների գործունեության ուղղորդումն առաջին հերթին ոստիկանության կողմից¹⁴⁰:

Չնայած այդ կարգավորումներին՝ Ղրղզստանի իրավական փորձագետները խորհուրդ էին տալիս ընդունել շրջանակային օրենք՝ ամրագրելով դրուժինաների գործունեության նորմատիվային-իրավական հիմքերը: Ոստիկանության պաշտոնյաները նույնպես խորհուրդ էին տալիս առավել հստակորեն կանոնակարգել և սահմանափակել դրուժինաների լիազորությունները, որպեսզի բացառվեն չարաշահումները, և որպեսզի դրուժինաների անդամները որևէ պարագայում չստանան զենք կրելու և օգտագործելու իրավունքը¹⁴¹: ԵԱՀԿ-ն ևս խորհուրդ տվեց օրենքի նախագիծ պատրաստել՝ այդ կապակցությամբ շրջանակային իրավական ակտի տեքստի նախագիծ տրամադրելով կառավարությանը:

ԵԱՀԿ-ն առաջարկեց նաև ստեղծել պետական ոլորտի, մասնավորապես՝ ներքին գործերի նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ համակարգող մարմին, որը պատասխանատու կլիներ երկրի ողջ տարածքում դրուժինաների աշխատանքի համակարգման համար: Կառավարությունը հավանություն տվեց այդ գաղափարին և ներքին գործերի նախարարությունում ստեղծեց համակարգման ստորաբաժանում, որը գլխավորեց ներքին գործերի փոխնախարարը:

ԵԱՀԿ-ն կարևորեց նաև դրուժինաների անդամների կարողությունների զարգացման անհրաժեշտությունը՝ օժանդակություն ցուցաբերելով երկրի ողջ տարածքում դրուժինաների անդամների համար բազային ուսուցման երկօրյա դասընթացների շարքի կազմակերպմանը: Ուսուցման թեմաները ներառում էին, ի մասնավորի, քաղաքացիա-

¹⁴⁰ Նույն տեղը, էջ 8 և շարունակ.:

¹⁴¹ Նույն տեղը, էջ 9:

կան պարեկային սուբյեկտների գործունեությունը կարգավորող իրավական դաշտը, բանակցության և միջնորդության հմտությունները, մարդու իրավունքները, հակասությունների հաղթահարումը և առաջին օգնությունը: Դասընթացավարները ներքին գործերի նախարարությունից, ոստիկանության ակադեմիայից և հասարակական կազմակերպություններից էին:

Դրուժինաների՝ ընդհանուր թվով 1,200 անդամներ վերապատրաստվեցին 2010 թվականի ընթացքում: Ավելին, ԵԱՀԿ-ն կազմակերպեց սեմինար Օշ քաղաքի և մարզային ոստիկանության բաժինների բարձր և միջին օղակների ղեկավար անձնակազմի համար՝ նպատակ ունենալով ոստիկաններին բացատրել ոստիկանության և դրուժինաների համագործակցության մեխանիզմները և ավելի արդյունավետ համակարգում և համագործակցություն ձևավորել ոստիկանության, համայնքային ոստիկանության կառույցների (օրինակ՝ հանցավորության կանխարգելման տեղական կենտրոնների) և դրուժինաների միջև:

2012 թվականին դրուժինաների դրական դերակատարումը գնահատանքի արժանացավ տեղի և միջազգային կառույցների կողմից, սակայն միևնույն ժամանակ պարզ էր, որ դեռևս անհրաժեշտ է ստեղծել իրավական պատշաճ կարգավորումներ և հսկողության մեխանիզմներ և բարձրացնել դրուժինաների անդամների իրազեկությունը պարեկության ռազմավարությունների և «լարվածության» ցուցիչների վերաբերյալ: Բացի դրանից՝ անհրաժեշտ էր զարգացնել համայնքների հետ աշխատանքի հմտությունները և այնպիսի մարտահրավերների հաղթահարման կարողությունները, ինչպիսիք են հասարակական կարգին սպառնացող վտանգները, խտրականությունը և կոռուպցիան:

7.2.2. Անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունները

Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողովի կողմից ստեղծված՝ Անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունների հարցերով փորձագետների խմբի զեկույցում նշվում է, որ անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունները (ԱՔՄԾ-ներ) «վճարման դիմաց ծառայություններ մատուցող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք են: ... Ե-

րանց թվում կարող են լինել առևտրային ընկերությունները և շահույթի նպատակ չհետապնդող կազմակերպությունները, ինչպես նաև ֆիզիկական անձինք»։ ԱԶՄԾ-ներն «անվտանգության հետ կապված ծառայություններ են մատուցում՝ ընդհանուր առմամբ նպատակ հետապնդելով մարդկանց, ապրանքները, տարածքները, տեղանքները, միջոցառումները, գործընթացները և տեղեկատվությունը պաշտպանել կամ գերծ պահել հիմնականում հանցավորությամբ պայմանավորված ռիսկերից: ... Անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունների կողմից մատուցվող ծառայությունները կարող են կանխարգելիչ բնույթ ունենալ կամ օժանդակել իրավապահ մարմիններին, իսկ թույլատրելիության դեպքում՝ նաև փոխլրացնող նշանակություն ունենալ պետության իրավապահ մարմինների համար»¹⁴²:

«Որոշ պետություններում պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները ԱԶՄԾ-ներին ներգրավում են ադետների հետևանքներին հակազդման միջոցառումներում կամ ԱԶՄԾ-ներին լիազորում համագործակցել պետության իրավապահ մարմինների պաշտոնյաների հետ և աջակցել վերջիններս»։ Որոշ պետություններում ԱԶՄԾ-ները բոլոր օղակներում և բոլոր ոլորտներում ամբողջովին ներգրավված են գործընկերության մեջ և ունեն նշանակալի դերակատարում: Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող համապատասխան ուղենիշներով խրախուսվում է այս մոտեցումը: Հանցավորության կանխարգելման գործում ԱԶՄԾ-ների ներգրավումը խրախուսելուց զատ՝ ոստիկանության հետ սերտ համագործակցությունը թույլ է տալիս նաև բարելավել ԱԶՄԾ-ների գործունեության մշտադիտարկումը ոստիկանության կողմից՝ այդպես էլ նրանց դարձնելով առավել վերահսկելի»:

ԱԶՄԾ-ները մի շարք պետություններում «պարտավոր են համագործակցել ոստիկանության հետ և/կամ աջակցել ոստիկանությանը տարբեր այլ ձևերով, մասնավորապես՝ տեղեկություններ տրամադրելով հանցավոր գործունեության մասին և օգնելով ապացույցների հավաքմանը: ... Անվտանգության պետական կառույցների և ԱԶՄԾ-ների համագործակցության կարևոր ուղղություններից է տեղեկատվության փոխանակումը: ԱԶՄԾ-ները հաճախ պարտավորություն ունեն անվտանգության պետական մարմիններին տեղեկություններ տրամադրել

¹⁴² UNODC, *Report on the Meeting of the Expert Group on Security Services held in Vienna on 12–14 October 2011*, Vienna, 28 October 2011, pp. 2f [ՄԱԿԹՀՊԳ, *Անվտանգության ծառայությունների հարցերով փորձագիտական խմբի՝ Վիեննայում 2011 թվականի հոկտեմբերի 12-ից 14-ն անցկացված ժողովի զեկույցը*, Վիեննա, 28-ը հոկտեմբերի, 2011 թ., էջ 2 և շարունակ:]

իրենց հայտնի դարձող վտանգների և խոցելիության մասին»: Որոշ պետություններում «անվտանգության պետական մարմինները նույնպես կարող են ձեռք բերված տեղեկությունները տրամադրել ԱՔՄԾ-ներին»¹⁴³:

Մի շարք պետություններում ԱՔՄԾ-ներին վերապահված դերի կապակցությամբ ծագել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են, մասնավորապես, «հանցագործների ներթափանցումը և կազմակերպված հանցախմբերի ներգրավումն այս ոլորտ, կոռուպցիան, անվտանգության քաղաքացիական մասնավոր պահնորդների համար վերապատրաստումների բացակայությունը կամ սակավությունը, իրավունքների չարաշահումը և ավելորդ ուժի գործադրումը, մասնագիտական ցածր ստանդարտները, իրավական հաշվետվողականության մեխանիզմների անբավարարությունը և օրենքի պահանջների չկատարումը»¹⁴⁴:

ԱՔՄԾ-ների դերը և պարտավորությունները, ինչպես նաև ոստիկանության հետ նրանց հարաբերությունները հստակեցնելու, ԱՔՄԾ-ների հաշվետվողականությունը և վերահսկելիությունը երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է հատուկ օրենսդրություն (տե՛ս նաև 5.2. ենթագլուխը): Ավելին, ԱՔՄԾ-ի աշխատողներին անհրաժեշտ է վերապատրաստել, որպեսզի նրանք կարողանան հավուր պատշաճի իրականացնել իրենց գործառնությունները, լուծել իրենց առջև դրված խնդիրները և կատարել իրենց պարտավորությունները:

7.2.3. Արդարադատության ոլորտում ծառայություններ մատուցող սովորուբային/ոչ պետական կառույցները

Մի շարք պետություններում արդարադատության ոլորտում ծառայություններ մատուցող սովորուբային/ոչ պետական կառույցները մեծ վստահություն են վայելում բնակչության շրջանում, հատկապես՝ գյուղական բնակավայրերում, քանի որ բնակչությունը նրանց համարում է պակաս կոռումպացված, և նրանց գործունեության մեջ ավելի մեծ չափով կարևորվում են վերականգնողական արդարադատությունը և հաշտեցումը:

¹⁴³ UNODC, *Civilian Private Security Services* (op. cit. note 13), p. 12 [ՄԱԿԹՀՊԳ, *Անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունները* (տե՛ս էջատակի 13-րդ ծանոթագրությունը), էջ 12]:

¹⁴⁴ Նույն տեղը, էջ 3, տե՛ս նաև NODC-UNHABITAT, *Introductory Handbook on the Policing of Urban Space* (op.cit. note 137), p. 22 [ՄԱԿԹՀՊԳ-ՄԱԿՀԱԲԻԹԱԹ, *Քաղաքային բնակավայրերում ոստիկանական գործունեության իրականացման ներածական ձեռնարկ* (տե՛ս էջատակի 137-րդ ծանոթագրությունը) էջ 22]:

Արդարադատության ֆորմալ և սովորության համակարգերի հարաբերություններին բնորոշ հիմնական դժվարությունը երկու համակարգերի միահյուսման պատշաճ աստիճանի որոշումն է՝ ներառյալ.

- արդարադատության սովորության համակարգերի իրավասության շրջանակի սահմանափակումը՝ հիմնականում մանր հանցագործություններով,
- սովորության կարգավորումների՝ որպես արտադատական հաշտության իրավաչափ ձևերի ճանաչումը,
- սովորույթի դատարանների ներառումը ֆորմալ դատական համակարգի մեջ՝ դատական ամենացածր ատյանի կարգավիճակով:

Ինչ վերաբերում է արդարադատության ոլորտում ծառայություններ մատուցող սովորության/ու պետական կառույցների և արդարադատության ֆորմալ կառույցների միջև հարաբերություններին, ապա Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեն *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածին վերաբերող թիվ 32 ընդհանուր մեկնաբանության* մեջ նշել է, որ «այն դեպքում, երբ պետությունն իր իրավական համակարգում ճանաչում է սովորության իրավունքի հիման վրա գործող դատարանները կամ կրոնական դատարանները՝ նրանց թույլատրելով կամ վերապահելով դատական որոշակի գործառույթներ, ... պետությունը պարտավոր է երաշխավորել, որ այդ դատարանները չկայացնեն պետության կողմից ճանաչված և պարտադիր իրավաբանական ուժ ունեցող որոշումներ, բացառությամբ երբ բավարարված են հետևյալ պահանջները. այդ դատարաններում իրականացվող քննությունները սահմանափակվում են քաղաքացիական և քրեական մանր գործերով, համապատասխանում են արդար դատաքննության հիմնարար պահանջներին և Դաշնագրով նախատեսված այլ կարևոր երաշխիքներին, եթե նրանց դատավճիռները վավերացվում են պետության դատարանների կողմից՝ հաշվի առնելով Դաշնագրով նախատեսված երաշխիքները, և կարող են մասնակիցների կողմից բողոքարկվել՝ Դաշնագրի 14-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող ընթացակարգով: Այդ սկզբունքները չեն բացառում սովորության և կրոնական դատարանների գործունեության ազդեցությունը

կրող անձանց համար Դաշնագրով նախատեսված իրավունքները պաշտպանելու՝ պետության ընդհանուր պարտավորությունը»¹⁴⁵:

«Թեպետ քրեական արդարադատության սովորությանին և ֆորմալ համակարգերի միջև հարաբերությունների կարգավորումը երկարաժամկետ հատվածի խնդիր է, տեղական մակարդակով որոշ դեպքերում հնարավոր է իրավիճակը բարելավել նույնիսկ միջնաժամկետ հատվածում: Ծրագրային միջոցառումների տարբերակներ կարող են լինել.

- Տեղական մակարդակով աշխատանքը սովորությանին մարմինների և պետական սուբյեկտների հետ՝ սահմանելով որոշակի չափորոշիչներ, որոնց կիրառությամբ որոշվում է, թե որ դեպքերում կարելի է քրեական գործերի քննությունը վերապահել սովորությանին մարմիններին, և այդպես բացառվում է իրավագործությունների համընկումը և նույն արարքի համար կրկնակի դատվելը,
- Աշխատանքը սովորությանին մարմինների, պետական կառույցների և քաղաքացիական հասարակության հետ՝ հատուցման և հաշտեցման վերականգնողական սկզբունքները պետության կողմից քրեական հետապնդման ենթարկվող գործերում կիրառելի դարձնելու նպատակով»¹⁴⁶:

Սովորությանին արդարադատության լուծումները նույնպես անհրաժեշտ է արձանագրել և ձևակերպել՝ տեղական մակարդակով լուծված գործերի հետագա քննությունը կամ քրեական հետապնդումը բացառելու նպատակով:

Եթե սովորությանին գործելակերպը խախտում է մարդու իրավունքների նորմերը և չափորոշիչները, ապա բարեփոխումների նպատակը

¹⁴⁵ United Nations Human Rights Committee, *General Comment No. 32, Article 14: Right to equality before courts and tribunals and to a fair trial*, U.N. Doc. CCPR/C/GC/32 (2007), Geneva 2007, Para 24 [Մարդու իրավունքների կոմիտե, *Ընդհանուր մեկնաբանություն թիվ 32, 14-րդ հոդված. դատարանների և տրիբունալների առջև հավասարության և արդար դատաքննության իրավունքը*, ՄԱԿ-ի փաստաթուղթ CCPR/C/GC/32 (2007 թ.), ժնն 2007 թ., պարբ. 24], տե՛ս նաև

United Nations, *Policy on Justice Components in United Nations Peace Operations*, UNDPKO, Department of Field Support, Ref. 2009.30, 1 December 2009, p. 9 [Միավորված ազգերի կազմակերպություն, *Արդարադատության բաղադրիչների ոլորտում քաղաքականությունը Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահ գործողություններում*, ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների վարչություն, Դաշտային օժանդակության բաժին, թիվ 2009.30, 1-ը դեկտեմբերի, 2009 թ., էջ 9]:

¹⁴⁶ UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), էջ 111 [ՄԱԿԹՀՊԳ/Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապահ պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 111]:

պետք է լինի «բնակչության խոցելի խմբերի պաշտպանությունը և ներքին փոփոխություններին աջակցությունը, մասնավորապես՝

- Համայնքների հետ աշխատանքը, որով կարելի է վնասակար սովորույթների փոխարեն խրախուսել մշակութային տեսանկյունից ընդունելի այլընտրանքների մշակումը,
- Սովորութային արդարադատության փոխարեն արդյունավետ այլընտրանքների մշակումը նրանց համար, ովքեր տուժել են վնասակար սովորույթներից և միջազգային չափանիշների խախտումներից, օրինակ՝ տրամադրելով իրավաբանական օգնություն և լրացուցիչ ռեսուրսներ, որոնց հիման վրա նրանք կկարողանան օգտվել ֆորմալ համակարգի ծառայություններից»¹⁴⁷:

Արդարադատության ֆորմալ համակարգի և սովորութային/ոչ պետական համակարգի միջև կառուցողական հարաբերություններ ձևավորելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել և շարունակել երկխոսությունը սովորութային մարմինների, տեղի բնակչության և արդարադատության ֆորմալ համակարգի սուբյեկտների միջև: Երկխոսությունը կնպաստի փոխըմբռնմանը և փոխադարձ հարգանքին, ֆորմալ և սովորութային համակարգերի միջև հարաբերություններում առկա խնդիրների բացահայտմանը և հնարավոր լուծումների մշակմանը¹⁴⁸:

Արդարադատության ֆորմալ և սովորութային/ոչ պետական կառույցների միջև հարաբերություններն անհրաժեշտ է ամրագրել օրենսդրությամբ (տե՛ս նաև 5.2. Ենթագլուխը): Բացի դրանից՝ անհրաժեշտ է կազմակերպել վերապատրաստումներ արդարադատության սովորութային/ոչ պետական կառույցների ներկայացուցիչների համար՝ արդարադատության ոլորտի իրավական դաշտին համապատասխան նրանց գործառույթների, խնդիրների և պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու թեմաներով:

¹⁴⁷ Նույն տեղը, էջ 112:

¹⁴⁸ Նույն տեղը, էջ 113:

7.3. Խորացված համագործակցությունը ԶԱՀ-ի կառույցների և քաղաքացիական հասարակության միջև

ԶԱՀԲ-ի տարբեր քայլերի մշակման և բարեփոխման աշխատանքների և ԶԱՀ-ի արտաքին վերահսկողության ձևավորման գործընթացի (տե՛ս նաև 7.5. ենթագլուխը) մեջ քաղաքացիական հասարակության ներգրավումից զատ՝ գոյություն ունեն արդարադատությանն առնչվող մի շարք կոնկրետ ոլորտներ, որոնցում քաղաքացիական հասարակության հետ ԶԱՀ-ի համագործակցությունը կարող է զգալիորեն բարելավել քրեական արդարադատության իրականացումը: Ստորև ներկայացված բնութագրական օրինակներից են համայնքային ոստիկանության ոլորտում հանցավորության կանխարգելումը, մասնավոր հատվածի կամ քաղաքացիական հասարակության օժանդակությունն ինտերնետում երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների կանխարգելման և քննության գործում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության մասնակցությունը քրեական արդարադատության իրականացմանն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արտադատական միջոցները կամ միջնորդության ծրագրերը: Քաղաքացիական հասարակության ներգրավման կարևոր ոլորտներից են նաև արդարադատության հասանելիությունը, իրավաբանական օգնության տրամադրումը, աջակցությունը տուժողներին և վկաներին և անչափահասների արդարադատությունը, որոնք քննարկվելու են 7.4. ենթագլխի՝ մարդու իրավունքներին նվիրված բաժնում:

7.3.1. Համայնքային ոստիկանությունը

Հանցավորության արդյունավետ կանխարգելումն էապես նպաստում է հանցավորության նկատմամբ վախի իջեցմանը և համայնքում կյանքի որակի բարձրացմանը: Հանցավորության կանխարգելման համար անհրաժեշտ է, որ ոստիկանությունը և հասարակությունը միասնաբար կամք և հանձնառու վերաբերմունք դրսևորեն: Դա կարող է իրականություն դառնալ միայն ոստիկանության և հանրության միջև վստահության վրա հիմնված գործընկերության առկայության դեպքում, որի պայմաններում ոստիկանության ողջ համակարգը, պետական բոլոր մարմինները և հասարակության բոլոր հատվածներն ակտիվորեն համագործակցում են խնդիրների բացահայտման և լուծման

ուղղությամբ: Համայնքային ոստիկանությունը որոշակի փիլիսոփայություն և կազմակերպական ռազմավարություն է, որի շրջանակում կարևորվում են ոստիկանության, պետական այլ մարմինների և համայնքի միջև գործընկերությունը և համագործակցային աշխատանքը:

Համայնքի հետ համագործակցությունը ենթադրում է, որ ոստիկանությունը պետք է անհրաժեշտ վայրում և անհրաժեշտ ժամանակ հասնելի լինի հանրությանը: Այն պետք է որոշակի պատրաստվածություն և բավարար ռեսուրսներ ունենա, որպեսզի համարժեքորեն արձագանքի հանրության կարիքներին պատահարների, հանցագործությունների և այլ արտակարգ իրավիճակների դեպքում: Կյանքի և գույքի պաշտպանության համար հաղորդակցության առավել անմիջական միջոցը հեռախոսային թեժ գծերն են, որոնցով քաղաքացիները կարող են օգնություն հայցել¹⁴⁹:

Համայնքի հետ շփումների ծրագրերը՝ ներառյալ ոստիկանության և բուլլոր համայնքների ներկայացուցիչների միջև բաց քննարկումների համար ֆորմալ կամ ոչ ֆորմալ մեխանիզմների ստեղծումը, հատկապես արժեքավոր են հանրության տեսակետները պարզելու, կարծիքներ փոխանակելու և համագործակցության տեսանկյունից: Դրանց շնորհիվ համայնքը կարող է ներգրավվել հանցավորության կանխարգելման ծրագրերում, որը կարող է լինել նաև պրոբլեմների լուծման դաշինքների ստեղծմամբ: Ավելին, դրանց շնորհիվ ամրապնդվում է հանրային անվտանգության բարձրացման համար համատեղ պատասխանատվության զգացումը: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել հանրության լայն շրջանակների՝ ներառյալ փոքրամասնությունների և խոցելի խմբերի ներկայացվածությանն այդ մեխանիզմների կազմում: Տեղի համայնքների բնակիչների օժանդակությունից զատ՝ ոստիկանությանը հաջողության հասնելու համար անհրաժեշտ կլինի նաև տեղի իշխանությունների օժանդակությունը: Որոշ դեպքերում համայնքում առկա սոցիալական խնդիրները ավելի լավ կարող են լուծվել գերատեսչական այլ կառույցների, քան ոստիկանության կողմից¹⁵⁰:

¹⁴⁹ Համեմատ. OSCE, *Guidebook on Democratic Policing* (op.cit. note 25), p. 43 [ԵԱՀԿ, *Ոստիկանական գործունեության ժողովրդավարական հիմունքների մասին ձեռնարկ* (տե՛ս էջատակի 25-րդ ծանոթագրությունը), էջ 43], և համեմատ. OSCE, *Good Practices in Building Police-Public Partnerships* (op.cit. note 86), p. 5 [ԵԱՀԿ, *Ոստիկանության և հասարակության միջև գործընկերության ձևավորման լավագույն փորձը* (տե՛ս էջատակի 86-րդ ծանոթագրությունը), էջ 5]:

¹⁵⁰ Համեմատ. OSCE, *Guidebook on Democratic Policing* (op.cit. note 25), p. 44 [ԵԱՀԿ, *Ոստիկանական գործունեության ժողովրդավարական հիմունքների մասին ձեռնարկ* (տե՛ս էջատակի 25-րդ ծանոթագրությունը), էջ 44]:

Փոխակտիվ հաղորդակցության մեխանիզմների օրինակներ են համայնքային խորհրդակցական խորհուրդները, ոստիկանության և համայնքի համատեղ սեմինարները, հանրային ժողովները, ոստիկանության «բաց դռների» օրերը և ոստիկանության բաժիններում համայնքային ոստիկանության աշխատասենյակները: Փոխակտիվ հաղորդակցության այդ մեխանիզմներն օգնում են՝ հանրությանը բացատրել պաշտոնական ընթացակարգերը և քաղաքականությունը, ինչպես նաև համայնքի իրավունքները և պարտավորությունները: Դրանց միջոցով հնարավոր է լինում քննարկել ոստիկանության գործողությունները (մասնավորապես՝ փոխանակել ոստիկանների և համայնքի բնակիչների անձնական փորձը) և բնակիչներին ակտիվորեն ներգրավել իրենց իսկ անվտանգության և ապահովության զգացողությանն առնչվող հիմնախնդիրների լուծմանը: Բացի դրանից՝ նման մեխանիզմները հանրությանը հնարավորություն են ընձեռում՝ բարձրաձայնելու իրենց թաղերում ոստիկանական գործունեության իրականացման առնչությամբ իրենց մտահոգությունները և նախընտրությունները, օրինակ՝ ոստիկանության պարեկային ծառայության անհրաժեշտության ժամերը և վայրերը: Այդ մեխանիզմների շրջանակում կարող են պարզաբանվել հանցավորության միտումները և անկարգության խնդիրները: Կազմվում են տարածված խնդիրների ցուցակներ, որոնց հիման վրա ոստիկանությունը հնարավորություն է ստանում նախաձեռնողաբար զբաղվել դրանց լուծմամբ¹⁵¹:

7.3.2. Արտադատական ծրագրերը

Վերականգնողական արդարադատության հայեցակարգի շրջանակներում, որի նպատակն է «լուծել հանցավորության խնդիրը՝ առաջին

¹⁵¹ Նույն տեղը, էջ 45: Ոստիկանության և հանրության գործընկերության եզրերի ձևավորման և պահպանության մասին առավել մանրակրկիտ տեղեկությունների համար տե՛ս
ԵԱՀԿ, *Good Practices in Building Police-Public Partnerships* (op.cit. note 86), in particular, pp. 48-55 [ԵԱՀԿ, *Ոստիկանության և հասարակության միջև գործընկերության ձևավորման լավագույն փորձը* (տե՛ս էջատակի 86-րդ ծանոթագրությունը), մասնավորապես՝ էջեր 48-55],
OSCE, *Police and Roma and Sinti: Good Practices in Building Trust and Understanding*, SPMU Publication Series Vol. 9, Vienna, April 2010 [ԵԱՀԿ, *Ոստիկանությունը և ռոմաները և սինթները. վստահության և փոխըմբռնման ձևավորումը: Հաջողված փորձի օրինակներ*, ՈԳՌՀՍ-ի հրատարակությունների շարք, հ. 9, Վիեննա, 2010 թվականի ապրիլ], և
OSCE, *Trafficking in Human Beings: Identification of Potential and Presumed Victims. A Community Policing Approach*, SPMU Publication Series Vol. 10, Vienna, June 2011 [ԵԱՀԿ, *Մարդկանց թրաֆիքինգը. հնարավոր է ենթադրյալ գոհերի հայտնաբերումը: Համայնքային ոստիկանության մոտեցումը*, ՈԳՌՀՍ-ի հրատարակությունների շարք, հ. 10, Վիեննա, 2011 թվականի հունիս]:

հերթին կարևորելով տուժողներին պատճառված վնասի հատուցումը, իրավախախտներից իրենց գործողությունների համար պատասխան պահանջելը և հաճախ նաև հակասության լուծման գործընթացի մեջ համայնքին ներգրավելը»¹⁵², քրեական արդարադատության արտադատական ծրագիրը քրեական գործերի վարման սովորական ընթացակարգի այլընտրանքային և/կամ փոխլրացնող ընթացակարգ է: Արտադատական ծրագրերը մեղադրյալին հնարավորություն են ընձեռում խուսափելու հրապարակային քրեական վարույթից և ստանալու համապատասխան աջակցություն՝ վերականգնման, խորհրդատվության և/կամ ուղղման տեսքով, մինչդեռ տուժողը կամ ամբողջությամբ վերցրած համայնքն օգտվում են, քանի որ տարբեր բարեգործական հիմնադրամների կամ համայնքային տեղական ծրագրերի համար ստացվում են հանգանակություններ կամ չվճարվող հանրօգուտ աշխատանք¹⁵³: Ավելին, արտադատական ծրագրերը կարող են օգնել ԶԱԶ-ի բանտային հատվածին՝ թեթևացնելով բանտերի՝ բանտարկյալներով գերծանրաբեռնվածության խնդիրը:

Հատկապես տարածված են անչափահասների արտադատական ծրագրերը: Վերջիններիս ստեղծման նպատակն է բացառել անչափահասների վաղ մուտքն անչափահասների դատական համակարգ: Այդ ծրագրերը նախատեսում են ենթադրյալ իրավախախտի նկատմամբ ֆորմալ քրեական վարույթի կամ անչափահասների արդարադատության համակարգում իրականացվող վարույթի կասեցումը և անչափահասի ներգրավումը վերականգնողական կամ ուղղիչ ծրագրերի մեջ¹⁵⁴:

Կոնկրետ գործով արտադատական կարգավորման նպատակահարմարությունը պարզելու համար պետք է մշակել որոշակի չափորոշիչներ, ինչպիսիք կարող են լինել, օրինակ, իրավախախտման բնույթը (նվազագույն ամրագրված պատժաչափի կամ տուգանքի կիրառելիությունը տվյալ իրավախախտման նկատմամբ), մեղադրյալի կողմից մեղքի ընդունումը և զղջումը, նրա տարիքը, մեղադրյալի՝ համայնքի համար օգտակար որոշակի հատուկ հմտություններ ունենալու հան-

¹⁵² UNODC, *Handbook on Restorative Justice Programmes*, Criminal Justice Handbook Series, New York, 2006, p. 6 [ՄԱԿԹՀՊԳ, *Վերականգնողական արդարադատության ծրագրերի ձեռնարկ*, Քրեական արդարադատության ձեռնարկների շարք, Նյու Յորք, 2006 թ., էջ 6]:

¹⁵³ Համենաստ. Magistrates' Court of Victoria, *Criminal Justice Diversion Program* [Վիկտորիայի մագիստրոսական դատարան, *Քրեական արդարադատության արտադատական ծրագրերը*]:

¹⁵⁴ Համենաստ. Russell, Stephen T. et al., *Establishing Juvenile Diversion in Your Community*, University of Nebraska – Lincoln, 1998, p. 1 [Ստեֆեն Թ. Ռասել և այլք, *Անչափահասների արտադատական մեխանիզմի ստեղծումը Ձեր համայնքում*, Նեբրասկայի համալսարան – Լինկոլն, 1998 թ., էջ 1]:

գամանքը, միջնորդության կամ հաշտության որոշակի տեսակի կիրառության համար տուժողի համաձայնությունը, ինչպես նաև գործի արտադատական լուծում կիրառելու համար դատախազության համաձայնությունը: Արտադատական բոլոր ընթացակարգերը պետք է համահունչ լինեն մարդու իրավունքների միջազգային չափանիշներին¹⁵⁵:

«Արտադատական ծրագրի կիրառման հարցը կարող է լուծվել գործի վերջնական լուծումից առաջ կամ հետո: Նախքան գործը դատարան ուղարկելը ոստիկանությունը կամ դատախազը որոշում են կայացնում արտադատական ծրագիր կիրառելու մասին: Գործով դատական որոշում կայացնելուց հետո դատավորը կամ մագիստրոսը որոշում է կայացնում բանտային պատժի փոխարեն, որպես այլընտրանք, արտադատական ծրագիր կիրառելու մասին: Դեպքերի մեծ մասում նման որոշում կայացնելու հայեցողությունը և արտադատական ծրագրով զբաղվելու գործառույթը վերապահված է ոստիկանությանը կամ դատախազին: Որոշ դեպքերում արտադատական ծրագիրը կարող է իրականացվել արդարադատության ոչ ֆորմալ կամ սովորութային համակարգի կամ որևէ հասարակական կազմակերպության կողմից»¹⁵⁶:

Արտադատական ծրագրերի կիրառության համար պահանջվում է համայնքի, տնտեսվարողների, իրավապահ մարմինների և դատական համակարգի օժանդակությունը: Արտադատական ծրագրերի հաջողությունը կախված է աշխատանքում փոխադարձ աջակցությունից և շահակիցների տևական ներգրավումից և հանձնառու վերաբերմունքից¹⁵⁷: Զաղաքացիական հասարակության սուբյեկտները կարող են կարևոր դեր կատարել արտադատական ծրագրերի իրագործման հարցում, քանի որ քաղաքացիական հասարակության կառույցները կարող են աշխատել իրավախախտների հետ՝ վերջիններիս ուղղման և վերաինտեգրման ուղղությամբ, ինչպես նաև՝ մշտադիտարկել և օժան-

¹⁵⁵ Համեմատ. UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), p. 86 [ՄԱԿԹՀՊԳ/ԱՄՆՍԻ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտությունների վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 86], և

Համեմատ. Magistrates' Court of Victoria, *Criminal Justice Diversion Program* (op.cit. note 153) [Վիկտորիայի մագիստրոսական դատարան, *Քրեական արդարադատության արտադատական ծրագրերը* (տե՛ս էջատակի 153-րդ ծանոթագրությունը)]:

¹⁵⁶ Համեմատ. UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), p. 86 [ՄԱԿԹՀՊԳ/ԱՄՆՍԻ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտությունների վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 86]:

¹⁵⁷ Համեմատ. Russell, Stephen T. et al., *Establishing Juvenile Diversion in Your Community* (op.cit. note 154), p. 3 [Ստեֆեն Թ. Ռասել և այլք, *Անչափահասների արտադատական մեխանիզմի ստեղծումը Ձեր համայնքում* (տե՛ս էջատակի 154-րդ ծանոթագրությունը), էջ 3]:

դակությունն ցուցաբերել արտադատական ծրագրի մասնակիցների մշտադիտարկմամբ:

7.3.3. Զրեական գործերով միջնորդությունը

Հաշվի առնելով, որ քրեական գործերով միջնորդությունը «ճկուն, համապարփակ, ինդիդը լուծող և մասնակցային տարբերակ է, որն ավանդական քրեական վարույթի լրացումն է կամ այլընտրանքը», Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն 1999 թվականին ընդունեց հանձնարարական քրեական գործերով միջնորդության վերաբերյալ: Նախարարների կոմիտեն ընդգծեց միջնորդության ընդհանուր սկզբունքներից մի քանիսը՝ ներառյալ տուժողների և իրավախախտների իրավունքները, իրավական հիմքերը, քրեական արդարադատության մարմինների մասնակցությունը միջնորդությանը, միջնորդական ծառայությունների դերը, պահանջները, պարտավորությունները և ինդիկները: Եվրոպայի խորհրդի հանձնարարականի համաձայն՝ ՀԿ-ները և տեղի համայնքները կարող են զգալի մասնակցություն ունենալ քրեական գործերով միջնորդության գործընթացին: Պետական և մասնավոր ծրագրերի ջանքերն անհրաժեշտ է համադրել և համակարգել: «Միջնորդներին անհրաժեշտ է հավաքագրել հասարակության բոլոր հատվածներից: Նրանք ընդհանուր առմամբ պետք է քաջատեղյակ լինեն տեղի մշակույթի և համայնքների առանձնահատկությունների մասին»: Նրանք պետք է նաև նախաաշխատանքային և ընթացիկ վերապատրաստումներ անցնեն, որպեսզի «շատ բանիմաց դառնան. ունենան հակասությունների լուծման հմտություններ, հասկանան տուժողների և իրավախախտների հետ աշխատելու առանձնահատուկ պահանջները և տարրական գիտելիքներ ունենան քրեական արդարադատության համակարգի մասին»¹⁵⁸: Ինչ վերաբերում է միջնորդների և քրեական արդարադատության մարմինների միջև հարաբերություններին, ապա հանձնարարականում նշված է հետևյալը.

- «Քրեական գործը միջնորդության ուղարկելու մասին որոշումը կայացնելու, ինչպես նաև միջնորդական ընթացակարգի արդյունքի գնահատման իրավասությունները պետք է վերապահված լինեն քրեական արդարադատության մարմիններին...,

¹⁵⁸ Council of Europe, *Recommendation No. R (99) 19 of the Committee of Ministers to Member States concerning mediation in penal matters*, pp. 1f [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ R (99) 19 հանձնարարականն անդամ պետություններին՝ քրեական գործերով միջնորդության վերաբերյալ*, էջ 1 և շարունակ.]:

- Միջնորդության արդյունքում կնքված համաձայնագրերի հիման վրա կայացված՝ մեղադրանքը կարճելու մասին որոշումները պետք է ունենան նույն կարգավիճակը, ինչ՝ դատական որոշումները կամ դատավճիռները, ընդ որում՝ դրանց արդյունքում պետք է բացառվի միևնույն փաստերի հիման վրա կրկին քրեական հետապնդման ենթարկվելու հնարավորությունը («*ne bis in idem*») ...,
- Միջնորդական ծառայությունը պետք է բավականաչափ ինքնուրույն լինի իր պարտականությունների կատարման մեջ,
- Միջնորդական ծառայությունը պետք է մշտադիտարկվի լիազոր մարմնի կողմից ...,
- Չսահմանափակվելով գաղտնիության սկզբունքով՝ միջնորդը պարտավոր է իրավասու մարմիններին կամ համապատասխան անձանց հաղորդել կամ տեղեկացնել վերահաս ծանր հանցագործությունների մասին իր ունեցած բոլոր տեղեկությունները, որոնք կարող են իրեն հայտնի դառնալ միջնորդության ընթացքում ...,
- Միջնորդը պետք է քրեական արդարադատության մարմիններին զեկուցի միջնորդության շրջանակում կատարված քայլերի և ձեռք բերված արդյունքների մասին ...,
- Փոխըմբռնում ձևավորելու նպատակով կանոնավոր խորհրդակցություններ պետք է կազմակերպվեն քրեական արդարադատության մարմինների և միջնորդական ծառայությունների միջև ...»¹⁵⁹:

Միջնորդական համակարգի օրինակներ

Ոչ ծանր գործերի արտադատական լուծումը միջնորդության եղանակով

Ինչպես ներկայացված է ՄԱԿԹՅՊԳ-ի/Ամերիկայի Միացյալ Նահանգների խաղաղության ինստիտուտի (ԱՄՆԻԻ) «Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում» անվանումը կրող ուղեցույցի մեջ, Դանիայի՝ մարդու իրավունքների ինստիտուտը Մալավիի երեք

¹⁵⁹ Նույն տեղը, էջ 1 և շարունակ.:

շրջաններում 2008 թվականից սկսել է Գյուղական միջնորդության ծրագիր իրականացնել: Ծրագրի շրջանակում վերապատրաստվել են մի խումբ ուսուցիչներ, ովքեր իրենց հերթին վերապատրաստումներ են անցկացրել գյուղական տառաճանաչ և կիսատառաճանաչ, սակայն տեղի լեզուն վարժ իմացող 350 միջնորդների համար, որպեսզի վերջիններս իրենց համայնքների բնակիչներին օգնեն առօրյա վեճերի լուծման հարցում, և նրանց կարողությունների զարգացման արդյունքում հնարավոր լինի կանխել գործերի՝ ֆորմալ համակարգում հայտնվելը: Մերձիրավաբանական մասնագետները գյուղական միջնորդներին կապակցում են դատարանների, ոստիկանության և բանտային ծառայությունների հետ՝ միմյանց գործերի ուղարկումը դյուրացնելու նպատակով: Միջնորդությամբ չլուծվող գործերը կարող են ուղարկվել ոչ ֆորմալ արբիտրաժային լուծման՝ ցեղային առաջնորդների կողմից կամ դատական կարգով լուծվելու մագիստրոսական դատարանում:

Այս ծրագիրը ներկայումս կրկնօրինակվում է Սիերա Լեոնեում՝ հաշվի առնելով կառավարության և «Ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի» առաջարկությունները հակամարտություններ վերապրած համայնքներում առաջնային արդարադատություն իրականացնելու վերաբերյալ՝ նրանց շրջանում զարգացնելով սեփական վեճերը կարգավորելու կարողությունները¹⁶⁰:

Միջնորդական համակարգերը ԵԱՀԿ մասնակից պետություններում

Ֆրանսիայում քրեական գործերով միջնորդության համակարգը օրենքով ներդրվել է 1993 թվականին, ապա՝ փոփոխություններ կրել 2004 թվականին¹⁶¹: Դա քրեական վարույթի փոխարեն կիրառվող այլընտրանքային մեխանիզմ է: Միջնորդությունը կիրառվում է միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում: Միջնորդություն նախաձեռնելու դեպքում կասեցվում է քրեական հետապնդումը պետության կողմից¹⁶²:

¹⁶⁰ UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), p. 87 [ՄԱԿԹՀՊԳ/ԱՄՆՍԻԻ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտությունների վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 87]:

¹⁶¹ Հանձնառ. Legifrance, *Loi n° 93-2 du 4 janvier 1993, portant réforme de la procédure pénale*, և Legifrance, *Loi n° 2004-204 du 9 mars 2004, portant adaptation de la justice aux évolutions de la criminalité* (1), և WikiMediation, *Penal Mediation in France* [Քրեական միջնորդությունը Ֆրանսիայում]:

¹⁶² Հանձնառ. Legifrance, *Code de procédure pénale*, հոդվածներ 41 և D.15-1:

Միջևորդը, ով սովորաբար դատական ոստիկանության ծառայող է, դատախազի պատվիրակ կամ միջևորդ, ժանդարմերիայից կամ ազգային ոստիկանությունից թռչակի անցած ոստիկան կամ Տուժողների օգնության և միջևորդության ազգային ինստիտուտի անդամ, նպատակ է հետապնդում մեկտեղելու կողմերին և ապահովելու տուժողի կրած վնասի հատուցումը, վերացնելու իրավախախտմամբ պատճառված անհարմարությունը և աջակցելու իրավախախտի վերադասակարգմանը: Կողմերին թույլ է տրվում ցանկության դեպքում օգտվել փաստաբանի ծառայություններից: Զրեական գործերով միջևորդի օգնությամբ կողմերը փորձում են հաշտության համաձայնության հասնել (վնասի գումարի և տոկոսների վճարում, ներողություն և այլն): Կողմերն իրավունք ունեն հրաժարվելու միջևորդության փորձից:

Նախքան դատական վարույթը քրեական գործով միջևորդություն նախաձեռնելու բացառիկ իրավասությունը վերապահված է դատախազին: Միջևորդը գործում է որպես «դատախազի պատվիրակը» և որպես այդպիսին կարող է կողմերի հետ միասին կազմել և ստորագրել «պաշտոնական արձանագրությունը»: Պաշտոնական արձանագրությունը ճանաչվում է որպես պաշտոնական որոշում կամ դատավճիռ և ենթակա է կատարման:

Միջևորդը ստուգում է համաձայնագրի պայմանների կատարումը և դատախազին տեղեկանք ներկայացնում միջևորդության արդյունքի մասին: Միջևորդության դրական արդյունքի դեպքում գործը կարելի է փակել՝ չդադարեցնելով պետական քրեական հետապնդումը:

Վարույթից հրաժարվելու կամ հատուցման ձևի շուրջ անհամաձայնության դեպքում դատախազը որոշում է կայացնում բողոքի առնչությամբ կատարվելիք հետագա դատական գործողությունների՝ դատական վարույթ հարուցելու կամ գործը փակելու մասին:

Իտալիայում միջևորդությունը սկզբնական շրջանում (1988 թ.) կիրառելի էր միայն անչափահաս իրավախախտների դեպքում, սակայն ընդգրկման չափանիշները հետագայում ընդլայնվեցին՝ տարածվելով նաև այն չափահաս անձանց նկատմամբ, ովքեր մեղադրվել են ոչ մեծ ծանրության հանցագործությունների մեջ (որոնց համար նախատեսված պատիժը չի գերազանցում չորս տարի ժամկետով ազատազրկումը): Որպեսզի դատավորն ընդունի միջևորդության արդյունքը,

պետք է բավարարված լինեն մի շարք պայմաններ՝ ներառյալ պատճառված վնասի ամբողջական հատուցումը և վերականգնումը: Միջնորդական ծառայությունները մատուցվում են շահույթի նպատակ չհետապնդող կազմակերպությունների կողմից, որոնք պարտավոր են փոխըմբռնման հուշագիր ստորագրել տեղական ինքնակառավարման համապատասխան մարմնի հետ: Գործնականում, սակայն, միջնորդության կիրառությունն Իտալիայում բավականին սահմանափակ է:

Ռումինիայի ազգային օրենսդրությամբ քրեական օրենքում նախատեսվել է միջնորդության հնարավորությունը: Թիվ 192/2006 օրենքի 67-70-րդ հոդվածներում կոնկրետ դրույթներ կան քրեական գործերով միջնորդության վերաբերյալ: Միջնորդությունը կարող է նախաձեռնվել քրեական հետապնդման փուլում կամ դատական քննության ընթացքում: Այն կարող է կիրառվել նաև նախքան բողոքը ներկայացնելը, քանի որ միջնորդության մասին օրենքով նախատեսվում է, որ վեճերի լուծման այլընտրանքային այս մեթոդին կարելի է դիմել ցանկացած ժամանակ: Միջնորդություն իրականացնելու թույլտվությունը կարող են տալ քրեական հետապնդման մարմինները կամ առաջին ատյանի դատարանը:

Միջնորդությունը հատկապես կիրառելի է քրեական գործերով՝ քրեական այն հանցագործությունների դեպքում, որոնց համար օրենքով նախատեսված է քրեական պատասխանատվության բացառումը նախնական բողոքը հետ վերցնելու կամ կողմերի հաշտության դեպքում: Այնուհանդերձ, միջնորդությունը չի բացառվում նաև այլ քրեական գործերում, հատկապես՝ քրեական գործի դատական քննության ընթացքում քաղաքացիական հայցին անդրադառնալիս:

Հաշվի առնելով, որ միջնորդության ընթացակարգը կիրառվում է տուժողի ցանկության դեպքում միայն, իրավախախտին կամ քրեական դատավարության որևէ այլ մասնակցի հնարավոր չէ ստիպել, որ նրանք մասնակցեն միջնորդության ընթացակարգին: Միջնորդության ընթացքում կողմերից յուրաքանչյուրին պետք է երաշխավորել իրավաբանական օգնություն ստանալու և թարգմանչի ծառայություններից օգտվելու իրավունքը: Պետք է երաշխավորել նաև անչափահասների՝ քրեական օրենքով ամրագրված իրավունքները:

Եթե միջնորդությունը նախաձեռնվում է քրեական հետապնդման կամ քրեական գործի դատական քննության մեկնարկից հետո, ապա քրեական գործի քննությունը կասեցվում է: Կասեցման ժամկետը չի

կարող գերազանցել միջնորդության մասին համաձայնագրի ստորագրման ամսաթվին հաջորդող եռամսյա ժամկետը: Կասեցումը վերանում է այն պահին, երբ միջնորդության ընթացակարգն օրենքով նախատեսված կարգով փակվում է, անգամ եթե եռամսյա ժամկետը չի լրացել: Եռամսյա ժամկետը կիրառելի է այն գործերի նկատմամբ, որոնցում միջնորդությունը համապատասխան ժամկետի ընթացքում չի հասցվել ավարտին¹⁶³:

Տաջիկստանում միջնորդությունն իրականացվում է ավագանիների ավանդական խորհուրդների կողմից: Զրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ հաշտեցման համար դիմելու հիմնական պայմանը տուժողին պատճառված վնասն ամբողջությամբ հատուցելու՝ իրավախախտի պատրաստակամությունն է¹⁶⁴:

Մինչդատական փուլում իրականացվող արտադատական ծրագրերի վերաբերյալ օգտակար տեղեկությունների աղբյուր է ՄԱԿԹՅՊԳ-ի *Ուղեցույցն ազատագրված ալլընտրանքների հիմնարար սկզբունքների և խոստումնային պրակտիկայի մասին* («*Handbook of Basic Principles and Promising Practices on Alternatives to Imprisonment*»): Մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավական նորմերի համաձայն, որոնցում նշվում է, որ «ազատագրվումը պետք է լինի հնարավոր միջոցներից վերջինը», մինչդատական փուլում իրականացվող արտադատական ծրագրերը կարող են հատկապես օգտակար լինել երեխաների համար¹⁶⁵: ԶԱՅ-ի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու, գործերը համակարգից դուրս ուղարկելու և համակարգում տարաբնույթ «կառուցողական» պատժամիջոցներ նախատեսելու մյուս հնարավոր մոտեցումը վերականգնողական արդարադատության ծրագրերի ներդրումն է: ՄԱԿԹՅՊԳ-ն լիարժեք կերպով ամփոփել և հրապարակել է վերականգ-

¹⁶³ Հանձնառ. Sustac, Zeno Daniel, *Mediation in the Criminal Law*, 2008 [Զենո Դանիել Սուստակ, *Միջնորդությունը քրեական իրավունքի բնագավառում*, 2008 թ.]:

¹⁶⁴ Հանձնառ. OSCE ODIHR, *III Expert Forum on Criminal Justice for Central Asia. 17-18 June 2010, Dushanbe, Tajikistan, Final Report*, 2010, pp. 22f [ԵԱՀԿ ԺՀՄԻԳ, *Քրեական արդարադատության հարցերով Կենտրոնական Ասիայի փորձագետների III ժողովը: 17-18-ը հունիսի, 2010 թ., Դուշանբե, Տաջիկստան, ավարտական զեկույց*, 2010 թ., էջ 22 և շարունակ.]:

¹⁶⁵ UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), p. 86 [ՄԱԿԹՀՊԳ/ԱՄՆԵԻ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 86]:

նողական արդարադատության տարաբնույթ նոր մոդելների և ծրագրերի իրագործման և գնահատման ընթացքում քաղված դասերը¹⁶⁶:

7.3.4. Ինտերնետում երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների կանխարգելումը, քննությունը և քրեական հետապնդումը

Քրեական արդարադատության կառույցների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի, մասնավորապես՝ ինտերնետային ոլորտում գործող ձեռնարկությունների համագործակցությունը հույժ կարևոր է դարձել ինտերնետում երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների կանխարգելման, քննության և քրեական հետապնդման համատեքստում: Մի շարք մասնակից պետություններում ստեղծվել են ինտերնետային թեժ գծեր, որոնց միջոցով օգտագործողները կարող են անանուն հաղորդումներ ներկայացնել ինտերնետային այնպիսի նյութերի վերաբերյալ, որոնք, իրենց կարծիքով, կարող են անօրինական լինել: Հաղորդումների մեջ նշվող կայքերի անօրինականությունը հետազայում սովորաբար գնահատվում և ստուգվում է մասնագիտացած վերլուծաբանների կողմից, ովքեր կասկածելի կայքերի և նյութերի մասին համապատասխան տեղեկություններն ուղարկում են իրավապահ մարմիններին: Ինտերնետային թեժ գծերը նաև օգնում են ինտերնետային ծառայություններ մատուցող և հոսթինգ իրականացնող ընկերություններին՝ «ծանուցելու և ջնջելու» ընթացակարգի միջոցով պայթարելու իրենց ցանցերի չարաշահումների դեմ՝ հանցավոր նյութերի մասին տեղեկանալու արդյունքում իրենց ցանցերից ջնջելով այդ նյութերը:

Ինտերնետում երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների դեմ մասնավոր հատվածի պայթարի օրինակներ

Ինտերնետի դիտարկման հիմնադրամը Միացյալ Թագավորությունում
Ինտերնետի դիտարկման հիմնադրամը (ԻԴՀ) ստեղծվել է ինտերնետ-

¹⁶⁶ Վերականգնողական արդարադատության ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս UNODC, *Handbook on Restorative Justice Programmes* (op.cit. note 152) [ՄԱԿԹՀՊԳ, *Վերականգնողական արդարադատության ծրագրերի ձեռնարկ* (տե՛ս էջատակի 152-րդ ծանոթագրությունը)]:

տային ոլորտի ձեռնարկությունների կողմից 1996 թվականին՝ նպատակ ունենալով Միացյալ Թագավորությունում ստեղծել ինտերնետային թեժ գիծ, որի միջոցով հանրությունը և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետները կարող են հաղորդումներ ներկայացնել ինտերնետում առկա հանցավոր նյութերի մասին, ընդ որում՝ հանցավոր նյութի հանդիպելու դեպքում դա անել ապահով և անվտանգ ձևով: Հաղորդումները կարելի է ներկայացնել ԻԴՅ-ի կայքի միջոցով: Ոստիկանության ղեկավար պաշտոնյաների միության (ՈՂՊՍ) և ԻԴՅ-ի միջև կնքված՝ ծառայությունների մակարդակի մասին համաձայնագրում նկարագրված է Միացյալ Թագավորությունում հոսթավորվող և ինտերնետում տեղադրվող հանցավոր նյութի հետ աշխատելու կարգը¹⁶⁷: Ավելին, արքայական դատախազության և ՈՂՊՍ-ի միջև կնքված փոխըմբռնման հուշագրով ԻԴՅ-ին վերապահված է լիազոր մարմնի կարգավիճակ՝ ինտերնետում երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների պատկերների մասին հաղորդումները ներկայացնելու և այդ երևույթների դեմ պայքարի հարցերով: «ԻԴՅ-ի ընթացակարգերի համաձայն՝ վերջինիս ներկայացվող հաղորդումները կարող են ուղարկվել համապատասխան մարմիններին՝ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով...: Եթե հանցավոր նյութն առերևույթ հոսթավորվում է Միացյալ Թագավորությունում, ապա ԻԴՅ-ն աշխատում է ինտերնետային ծառայություններ մատուցող համապատասխան ձեռնարկության և Միացյալ Թագավորության ոստիկանության հետ՝ նյութը որպես ապացույց պահպանելու, ապա «ջնջելու» ուղղությամբ, միաժամանակ՝ գործառնական հնարավորությունների սահմաններում օգնելով, որպեսզի իրավախախտները պատասխանատվության ենթարկվեն հայտնաբերված հանցավոր նյութը տարածելու կամ դրան տիրապետելու համար...: Կասեցված քրեական գործերի/մեղադրանքի քննության պարտավորությունը ցանկացած պարագայում շարունակում է կրել ոստիկանությունը»¹⁶⁸:

¹⁶⁷

ԻԴՅ-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս <http://www.iwf.org.uk/> Համեմատ. ACPO/IWF, Service Level Agreement between the Association of Chief Police Officers (ACPO) and the Internet Watch Foundation (IWF), 2010, pp. 4f [ՈՂՊՍ/ԻԴՅ, Ծառայությունների մակարդակի մասին համաձայնագիր Ոստիկանության ղեկավար պաշտոնյաների միության (ՈՂՊՍ) և Ինտերնետի դիտարկման հիմնադրամի (ԻԴՅ) միջև, 2010 թ., էջ 4 և շարունակ:]

¹⁶⁸

Համաշխարհային առցանց աշխատանքային խումբը

Հաշվի առնելով ինտերնետում երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների հանցագործությունների համաշխարհային բնույթը՝ շատ կարևոր է դրա դեմ պայքարել համաշխարհային մակարդակով: Ուստի աշխարհի տարբեր պետությունների իրավապահ 9 կառույցներ ստեղծել են Համաշխարհային առցանց աշխատանքային խումբը (ՅԱԱԽ)՝ աշխարհով մեկ ինտերնետում երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների հանցագործությունների դեմ պայքարի նպատակով: Նրանք նաև ցանկանում են ձևավորել իրավապահ կառույցների, հասարակական կազմակերպությունների, գիտական շրջանակների և ոլորտի մասնավոր ձեռնարկությունների արդյունավետ միջազգային գործընկերություն, որը կօգնի՝ երեխաներին պաշտպանելու ինտերնետում կատարվող սեռական ոտնձգություններից: Ինտերնետն օգտագործողները կարող են ոչ պարկեշտ կամ անօրինական ինտերնետային գործողությունների մասին հաղորդումները ներկայացնել ուղղակիորեն ՅԱԱԽ-ին կամ իրավապահ մի քանի կառույցների, որոնց ինտերնետային հասցեների հղումները տեղադրված են ՅԱԱԽ-ի կայքում¹⁶⁹:

7.4. Մարդու իրավունքներին առնչվող առանձնահատկությունները

Քրեական արդարադատության արդար, արդյունավետ և գործունակ համակարգը, որպես կանոն, պաշտպանում է անհատի անձնական անձեռնմխելիության, կյանքի և ազատության իրավունքները և ապահովում է արդարադատության հասանելիությունը և հավասարությունն օրենքի առջև: Ավելին, նման համակարգում հարգվում են տուժողների, վկաների, կասկածյալների և իրավախախտների հիմնարար իրավունքները՝ ներառյալ, մասնավորապես, անչափահասների և խոցելի այլ խմբերի իրավունքները: Ստորև ներկայացված են մարդու իրավունքների պաշտպանության այն ուղղությունները, որոնցում անհրա-

¹⁶⁹

ժեշտ է արդյունավետ համագործակցություն ՔԱՅ-ի տարբեր կառույցների և քաղաքացիական հասարակության միջև:

7.4.1. Արդարադատության հասանելիությունը/հրավաքանակյան օգնության տրամադրումը

Արդարադատության հասանելիության շրջանակում մարդու իրավունքների կարևորագույն բաղադրիչներից է ձեռքբերված, կալանավորված և քրեական հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրված անձանց՝ արդյունավետ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Իրավաբանական օգնության արդյունավետ համակարգը կարող է.

- վերոհիշյալ անձանց պաշտպանել կամայական կամ անօրինական ձեռքբերվածությունից կամ կալանավորումից, ինչպես նաև խոշտանգումներից,
- կրճատել ոստիկանության բաժիններում և ազատագրկման վայրերում ազատագրկման տևողությունը,
- վերոհիշյալ անձանց համար երաշխավորել արդյունավետ պաշտպանության և քրեական արդարադատության գործընթացը հասկանալու հարցում օգնություն ստանալու իրավունքը, ինչպես նաև արդար դատաքնության իրավունքը՝ ներառյալ նրանց դատավարական իրավունքները (օրինակ՝ լռություն պահպանելու իրավունքը, տեղեկանալու իրավունքը, գործի դատավորի կողմից քննվելու իրավունքը):

«Քննության փուլը, հատկապես՝ ոստիկանությունում անազատության մեջ պահման առաջին ժամերը և օրերը վճռորոշ ժամանակահատված են քրեական արդարադատության գործընթացում, քանի որ հենց այդ ժամանակ է որոշվում կասկածյալի դեմ ձեռք բերվող ապացույցների ծավալը և որակը, ինչպես նաև սեփական պաշտպանությունը կազմակերպելու՝ նրա կարողությունը, անկախ նախնական կալանքի կիրառության կամ չկիրառության հանգամանքից, արտադատական միջոցների կիրառությունից, գործով նշանակված դատական նիստի ամսաթվից: Այդ հարցերի պատասխանները կարող են լրջորեն ազդել թե՛ անհատի, թե՛ գործընթացի արդյունքի վրա: Օրինակ՝ նախնական կալանքի ընթացքում անհատին օգնություն ցուցաբերելու հանգամանքը կարող է ազդել նրա սոցիալական, տնտեսական և առողջական վիճակի, ինչպես նաև նրա ընտանիքի և համայնքի վիճակի վրա:

Ավելին, այս փուլում առավել հավանական են չարաշահումները, մաս-

նավորապես՝ հարկադրանքի ազդեցությամբ տրվող ինքնախոստովանական ցուցմունքները, կաշառքի պահանջները կամ օրենքով սահմանված կարգի այնպիսի պարզ խախտումները, որոնց հետևանքն անձի անօրինական ազատագրկումն է: Հենց այս ժամանակ են տուժողները և վկաներն առաջին անգամ առնչվում քրեական արդարադատության համակարգի հետ: Նրանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը և իրենց իրավունքների մասին նրանց տեղեկացման ձևը կարող են կանխորոշել կոնկրետ գործով ոստիկանության հետ համագործակցելու՝ նրանց և այլ անձանց պատրաստակամությունը, ինչպես նաև հանցագործությունների մասին ընդհանրապես ոստիկանությանը հաղորդելու հակվածությունը: Առանց ուշացման անկախ իրավաբանի օգնությունը ստանալու իրավունքը համարվում է դատավարական երաշխիք, որի նպատակը խոշտանգումների և դաժան վերաբերմունքի ռիսկի կրճատումն է ազատագրկման վայրերում»¹⁷⁰:

Ոստիկանները, դատախազները և դատավորները պարտավոր են երաշխավորել իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացումը և բացառել այդ իրավունքի կամայական սահմանափակումները: Ոստիկանության վերադասները, դատախազները և դատավորները պարտավոր են պատշաճ քայլեր ձեռնարկել, եթե ոստիկանությունը և դատական մարմինները չեն կատարում իրենց պարտավորությունները և չեն հարգում կասկածյալի իրավունքները: Դատախազները և դատավորները պարտավոր են նաև գործող օրենքի շրջանակում պարզել, թե արդյոք ոստիկանության պարտավորությունների խախտմամբ և/կամ ձերբակալված կամ կալանավորված կամ քրեական հանցագործության կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձանց իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցները կարող են թույլատրելի ճանաչվել և հաշվի առնվել նախնական կալանքի կամ անձի մեղքի/անմեղության մասին որոշումներ կայացնելիս:

Իրավաբանական օգնության հասանելիությունը կենսական կարևորություն ունի նաև տուժողների և վկաների համար, քանի որ այդպիսի նրանք կարողանում են համարժեք տեղեկություններ և օժանդակություն ստանալ և հասկանալ քրեական արդարադատության գործընթա-

¹⁷⁰

UNODC/UNDP, *Concept Note. A Handbook and Training Curriculum for Policymakers and Practitioners on Early Access to Legal Aid*, 2012, p. 3 [ՄԱԿԹՀՊԳ/ՄԱԿԶԾ, Հայեցակարգ. իրավաբանական օգնության վաղ հասանելիության մասին ձեռնարկ և ուսումնական ծրագիր քաղաքականությունը որոշող անձանց և պրակտիկ աշխատողների համար, 2012 թ., էջ 3]:

ցը՝ ներառյալ իրենց դատավարական իրավունքները¹⁷¹ (լրացուցիչ մանրամասների համար տե՛ս 130-137 էջերը):

Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն և փաստաբանների կամ իրավաբանների միություններից և գործընկերային այլ կառույցներից պահանջեն, որ վերջիններս կազմեն իրավաբանական օգնության համակարգին սատարող իրավաբանների և հարակից մասնագետների ցուցակներ: Իրավաբանական օգնության համակարգերում կարող են ներգրավվել հանրային պաշտպանները, մասնավոր փաստաբանները, անվճար մատուցվող ծառայությունները, փաստաբանական միությունները և իրավաբանությանն առնչվող մասնագետները:

«Ոստիկանությունը, դատախազները և դատավորները պարտավոր են ապահովել իրավաբանական օգնության հասանելիությունն իրենց առջև ներկայացող այն անձանց համար, ովքեր ֆինանսապես ի վիճակի չեն փաստաբան վարձել և/կամ խոցելի են»¹⁷²:

Պետությունները պետք է նաև մարդկային և ֆինանսական բավարար ռեսուրսներ հատկացնեն իրավաբանական օգնության համակարգին, ինչպես նաև համապատասխան մեխանիզմներով բարձրացնեն մարդկանց իրազեկվածությունն օրենքով նախատեսված իրենց իրավունքների և պարտավորությունների մասին, որը կնպաստի հանցավոր վարքագծի և զոհայնացման կանխարգելմանը:

«Պետությունները չպետք է միջամտեն իրավաբանական օգնությունը ստացող անձի պաշտպանության կազմակերպմանը և չպետք է սահմանափակեն նրան իրավաբանական օգնություն տրամադրողի անկախությունը»¹⁷³: Փոխարենը, պետությունները պետք է «քրեական արդարադատության գործընթացի բոլոր փուլերում ապահովեն և երաշխավորեն արդյունավետ իրավաբանական օգնության տրամադրումը ձերբակալված, կալանավորված կամ ազատազրկված, քրեական հանցագործության մեջ կասկածվող կամ մեղադրվող, ինչպես նաև հանցագործությունից տուժած անձանց»¹⁷⁴: Յետևապես, պետությունները պետք է «խրախուսեն արդարադատության ոլորտի կառույցների և այլ

¹⁷¹ Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս United Nations, *United Nations Principles and Guidelines on Access to Legal Aid in Criminal Justice Systems* (op.cit. note 81), Guidelines 7 and 8, pp. 13f [Միավորված ազգերի կազմակերպություն, *Միավորված ազգերի կազմակերպության սկզբունքները և ուղենիշները քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության հասանելիության մասին* (տե՛ս էջատակի 81-րդ ծանոթագրությունը), 7-րդ և 8-րդ ուղենիշներ, էջ 13 և շարունակ.:

¹⁷² Նույն տեղը, պարբ. 23, էջ 7:

¹⁷³ Նույն տեղը, պարբ. 16, էջ 6:

¹⁷⁴ Նույն տեղը, պարբ. 55 (ա), էջ 16:

ուլորտներում աշխատող (օրինակ՝ առողջապահության, սոցիալական ծառայությունների և տուժողների հետ աշխատող) մասնագետների համակարգված աշխատանքը, որի միջոցով առավելագույնի կհասցվի իրավաբանական օգնության համակարգի արդյունավետությունը՝ մինևույն ժամանակ չվտանգելով մեղադրյալի իրավունքները»: Պետությունները պետք է «բրեական արդարադատության գործընթացի բոլոր փուլերում իրավաբանական օգնության տրամադրումը երաշխավորելու նպատակով գործընկերային կապեր հաստատեն փաստաբանների կամ իրավաբանների միությունների հետ»¹⁷⁵:

7.4.2. Աջակցությունը տուժողներին

ՔԱՅ-ում անհրաժեշտ է կանխել զոհայնացումը, պաշտպանել և աջակցել տուժողներին, նրանց վերաբերվել կարեկցանքով և հարգել նրանց արժանապատվությունը: Գործի նյութերը պատրաստելիս ուստիկանությունը պետք է հնարավորինս հստակորեն և լիարժեքորեն ձևակերպի ու նկարագրի տուժողի ստացած վնասվածքները և կրած կորուստները:

Տուժողը պետք է կարողանա ժամանակին տեղեկություններ ստանալ իր գործով կայացված որոշումների և քննության արդյունքների մասին: Ավելին, տուժողին պետք է հասանելի լինեն կրած վնասից իրավական պաշտպանություն ստանալու դատական և այլ մեխանիզմները: Նա պետք է կարողանա արագ, արդար և հասանելի ֆորմալ և ոչ ֆորմալ ընթացակարգերի միջոցով անհապաղ ստանալ պատճառված վնասի հատուցում:

ՔԱՅ-ում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել տուժողներին պատճառվող անհարմարությունը նվազագույնի հասցնելու, տուժողի մասնավոր կյանքի գաղտնիությունը պաշտպանելու, անհրաժեշտության դեպքում՝ նրա, նրա ընտանիքի անդամների և նրա կողմից ցուցմունք տվող վկաների անվտանգությունն ապահովելու և նրանց ահաբեկումից և վրեժխնդրությունից պաշտպանելու ուղղությամբ (տե՛ս *վկաների պաշտպանության մասին բաժինը*՝ ստորև): ՔԱՅ-ում անհրաժեշտ է նաև ապահովել մասնագիտական օգնության հասանելիությունը հուզական տրավմայի հետևանքները և զոհայնացման պատճառով առաջացած այլ խնդիրները հաղթահարելու նպատակով՝ հաշվի առնելով

¹⁷⁵ Նույն տեղը, պարբ. 55 (գ) և (դ), էջ 16:

տուժողի անձնական հանգամանքները և անմիջական կարիքները, տարիքը, սեռը, հաշմանդամությունը և հասունության աստիճանը¹⁷⁶:

Տուժողներին աջակցման համակարգերի օրինակներ

Սեռական բռնությունից տուժած անձանց ցուցաբերվող օժանդակությունը Միացյալ Թագավորությունում

Միացյալ Թագավորությունում Սեռական բռնության հարցերով անկախ խորհրդատուները (ՍԲԱԽ-ներ) միջգերատեսչական համակարգի շրջանակներում մասնագիտական խորհուրդներ են տալիս և գործնական ու հուզական օժանդակություն են ցույց տալիս սեռական բռնությունից տուժած անձանց: Նրանք կարևոր օժանդակություն են ցուցաբերում տուժողների նկատմամբ քրեական արդարադատության գործընթացում՝ միաժամանակ օգնելով, որպեսզի նրանք ստանան իրենց հասանելիք առողջապահական ծառայությունները և խնամքը: ՍԲԱԽ-ները տուժողներին օժանդակում են հարցազրույցի ընթացքում: Նրանք տուժողին տեղեկացնում են վերջինիս գործի ընթացքի մասին և դատարանում ցուցմունք տալու ընթացքում ուղեկցում նրան: ՍԲԱԽ-ների ներգրավման շնորհիվ ոստիկանությունը և դատախազությունը որոշակի ժամանակ են տնտեսում, որը հատկացնում են հիմնավոր ապացույցներ պատրաստելուն: Տուժողները ՍԲԱԽ-ների շնորհիվ ձեռք են բերում անհրաժեշտ վստահությունը՝ իրավախախտի առջև կանգնելու և/կամ իրենց տված ցուցմունքներից չհրաժարվելու համար¹⁷⁷:

Մարդկանց թրաֆիքինգից տուժած անձանց ուղղորդման ազգային

¹⁷⁶ Համեմատ. OSCE, *Guidebook on Democratic Policing* (op.cit. note 25), pp. 30f [ԵԱՀԿ, *Ոստիկանական գործունեության ժողովրդավարական հիմունքների մասին ձեռնարկ* (տե՛ս էջատակի 25-րդ ծանոթագրությունը), էջ 30 և շարունակ.], Council of Europe, *Position of the Victim in the Framework of Criminal Law and Procedure* (op.cit. note 96), Articles 1-4 [Եվրոպայի խորհուրդ, *Քրեական իրավունքի և վարույթի շրջանակում տուժողի կարգավիճակի վերաբերյալ* (տե՛ս էջատակի 96-րդ ծանոթագրությունը), հոդվածներ 1-4], Council of Europe, *Assistance to Crime Victims* (op.cit. note 96), Arts. 2 and 3 [Եվրոպայի խորհուրդ, *Հանցավորությունից տուժածներին աջակցելու վերաբերյալ* (տե՛ս էջատակի 96-րդ ծանոթագրությունը), հոդվածներ 2 և 3], United Nations, *Declaration of Basic Principles of Justice for Victims of Crime and Abuse of Power* (op.cit. note 96) [Միավորված ազգերի կազմակերպություն, *Հանցավորությունից և իշխանության չարաշահումից տուժած անձանց համար արդարադատության հիմնարար սկզբունքների վերաբերյալ հռչակագիր* (տե՛ս էջատակի 96-րդ ծանոթագրությունը)], և United Nations, *Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime* (op.cit. note 96) [Միավորված ազգերի կազմակերպություն, *Հանցավորությունից տուժած և վկա անչափահասների մասնակցությամբ գործընթացներում արդարադատության վերաբերյալ ուղեմիջոցներ* (տե՛ս էջատակի 96-րդ ծանոթագրությունը)]:

մեխանիզմները (ՌԲԱՄ-ներ)

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համատեքստում ԶԱՅ-ի և քաղաքացիական հասարակության համագործակցության կարևոր կառույցներից են ՌԲԱՄ-ները: ՌԲԱՄ-ը բնորոշվում է որպես համագործակցության մեխանիզմ, որի միջոցով պետական կառույցները կատարում են իրենց պարտավորությունները՝ պաշտպանելու թրաֆիքինգի ենթարկված անձանց՝ մարդու իրավունքները և ռազմավարական գործընկերության շրջանակում համակարգելու իրենց աշխատանքները քաղաքացիական հասարակության հետ: ՌԲԱՄ-ի հիմնական նպատակն է ապահովել թրաֆիքինգի ենթարկված անձանց՝ մարդու իրավունքների հարգումը և թրաֆիքինգից տուժած անձանց արդյունավետորեն ուղղորդել անհրաժեշտ ծառայությունները մատուցողների մոտ: Ցանկացած ՌԲԱՄ-ի կարևորագույն խնդիրը թրաֆիքինգից տուժած ենթադրյալ անձանց հայտնաբերման և նույնականացման գործընթացն է: Վերջինիս մասնակցում են ՌԲԱՄ-ում ներգրավված տարբեր կազմակերպություններ, որոնք պետք է համագործակցության միջոցով տուժողների համար հասանելի դարձնեն անհրաժեշտ աջակցությունը՝ տուժողներին ուղղորդելով մասնագիտացած ծառայություններ մատուցողների մոտ: ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ը 2004 թվականին հրապարակել է «Ուղղորդման ազգային մեխանիզմները. համատեղ ջանքերը մարդկանց թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանության ուղղությամբ» վերտառությամբ ձեռնարկը, որն ուղենիշներ է պարունակում ՌԲԱՄ-ների ստեղծման վերաբերյալ: ԵԱՀԿ մասնակից պետություններում ՌԲԱՄ-ների ստեղծումը թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ ԵԱՀԿ-ի կողմից տարվող կարևորագույն աշխատանքներից է¹⁷⁸:

¹⁷⁷

Office for Criminal Justice Reform, *Working Together to Cut Crime and Deliver Justice* (op.cit. note 109), p. 39 [Քրեական արդարադատության բարեփոխումների գրասենյակ, *Համատեղ աշխատանքը հանցավորության կրճատման և արդարադատության իրականացման ուղղությամբ* (տե՛ս էջատակի 109-րդ ծանոթագրությունը), էջ 39]:

¹⁷⁸

OSCE, *Trafficking in Human Beings: Identification of Potential and Presumed Victims* (op.cit. note 151), p. 36 [ԵԱՀԿ, *Մարդկանց թրաֆիքինգը. հնարավոր և ենթադրյալ զոհերի հայտնաբերումը* (տե՛ս էջատակի 151-րդ ծանոթագրությունը), էջ 36.]:

Համենաու. OSCE ODIHR, *National Referral Mechanisms: Joining Efforts to Protect the Rights of Trafficked Persons: A Practical Handbook*, Warsaw, 2004, pp. 15f [ԵԱՀԿ ԺՄԻԳ, *Ուղղորդման ազգային մեխանիզմները. համատեղ ջանքերը մարդկանց թրաֆիքինգի զոհերի իրավունքների պաշտպանության ուղղությամբ*, Վարշավա, 2004 թ., էջ 15 և շարունակ.], և

OSCE ODIHR, *Current NRM Developments in the OSCE Region*, Warsaw, October 2008, p. 2 [ԵԱՀԿ ԺՄԻԳ, *ՌԲԱՄ-ի ընթացիկ զարգացումները ԵԱՀԿ տարածաշրջանում*, Վարշավա, 2008 թվականի հոկտեմբեր, էջ 2]:

ԵԱՀԿ ծրագրերի համակարգողն Ուկրաինայում 2007 թվականից ի վեր օժանդակություն է ցուցաբերում Ուկրաինայի կառավարությանը՝ թրաֆիքինգի դեմ պայքարի նորմատիվային-օրենսդրական դաշտը բարելավելու աշխատանքում: Այդ կապակցությամբ նաև աջակցություն է ցուցաբերվում թրաֆիքինգի ենթարկված անձանց: «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» Ուկրաինայի օրենքի համաձայն, որը մշակվել է ԵԱՀԿ ծրագրերը համակարգողի օգնությամբ և հաստատվել Ուկրաինայի խորհրդարանի կողմից 2011 թվականի սեպտեմբերին, կառավարությունը ստեղծել է պետության կողմից ղեկավարվող ՌԲԱՄ: Բազմագերատեսչական ՌԲԱՄ-ի ինդիքն է օգնել թրաֆիքինգից տուժած անձանց նույնականացմանը և նրանց համար երաշխավորել աջակցության հասանելիությունը: ԵԱՀԿ ծրագրերի համակարգողի աշխատանքների շրջանակում ՌԲԱՄ-ը ներդրվել և փորձարկվել է Ուկրաինայի երկու շրջաններում (Դոնեցկ և Չերնիվցի): 2013 թվականին ծրագրերի համակարգողը, համագործակցելով Ուկրաինայի սոցիալական քաղաքականության նախարարության հետ, որը 2012 թվականին ստանձնել էր թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային համակարգողի գործառույթը, շարունակել է շանքեր գործադրել ՌԲԱՄ-ը ողջ երկրի տարածքում հավուր պատշաճի ներդնելու ուղղությամբ :

Երեխաների նկատմամբ ոտնձգությունների մասին հաղորդումները

ԵԱՀԿ մասնակից պետություններից շատերը մինչ օրս ունեն երեխաների նկատմամբ ոտնձգությունների մասին հաղորդումների պարտադիր ներկայացման մեխանիզմներ, որոնց համաձայն հաղորդումներ ներկայացնելու պարտավորությունը կրող անձինք, մասնավորապես՝ բուժաշխատողները և մանկավարժները, ովքեր իրենց աշխատանքի բերումով հաճախ են շփվում երեխաների հետ, օրենքի համաձայն՝ պարտավոր են երեխայի նկատմամբ ոտնձգությունների և երեխային անուշադրության մատնելու երևույթներ կասկածելու դեպքում համապատասխան հաղորդումներ ներկայացնել լիազոր մարմին (պետությունների մեծ մասում դա ոստիկանության տեղի բաժինն է և/կամ երեխաների պաշտպանության ծառայությունը): Լիազոր մարմինն իր հերթին պարտավոր է ստուգել ներկայացված հաղորդումը, և եթե հավանական է, որ ոտնձգությունն իսկապես տեղի է ունեցել, ապա նշանակվում է դեպքի վարող, ով պետք է գնահատի իրավիճա-

կը և պարզի, թե արդյոք անվտանգ կլինի երեխային թողնել ընտանիքում, թե անհրաժեշտ է նրան դուրս բերել ընտանիքից: Ուստի բազմասուբյեկտային այս համակարգում անհրաժեշտ է ներգրավված բոլոր սուբյեկտների սահուն համագործակցությունը: Իրավապահ մարմինները, օրինակ, պարտավոր են նման դեպքերում մշակել անվտանգության ապահովման ծրագիր և քննել ենթադրյալ ոտնձգության դեպքը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների գրեթե բոլոր նահանգներում սահմանված են այն մասնագիտությունները, որոնց տերերն օրենքի համաձայն պարտավոր են հաղորդումներ ներկայացնել երեխայի հետ վատ վարվեցողության դեպքերի մասին: Այդ անձանց թվում կարող են լինել սոցիալական աշխատողները, ուսուցիչները և դպրոցներում աշխատող այլ անձինք, բժիշկները և առողջապահության ոլորտում աշխատող այլ անձինք, հոգեկան առողջության ոլորտում աշխատող մասնագետները, երեխայի խնամք կազմակերպողները, հերձողները, առևտրային հիմունքներով ժապավեններ և լուսանկարներ տպողները, ակոհոլի և թմրանյութերի չարաշահման հարցերով խորհրդատուները, պրոբացիայի և փորձաշրջանի պատասխանատուները, կենցաղային բռնության հարցերով զբաղվող մասնագետները, հոգևորականները և իրավապահ մարմիններում աշխատողները: Բացի դրանից՝ նահանգներից շատերում ցանկացած անձ, անկախ մասնագիտությունից, պարտավոր է հաղորդում ներկայացնել նման ոտնձգությունների կամ անուշադրության մատնելու դեպքերի մասին: Հաղորդում ներկայացնելու պարտավորություն ունեցող անձինք պարտավոր են հաղորդում ներկայացնել, եթե կասկածում են կամ հիմքեր ունեն կարծելու, որ երեխան ենթարկվել է ոտնձգության կամ մատնվել է անուշադրության: «Հաղորդակցության գաղտնիությունը», այսինքն՝ գաղտնի կերպով հաղորդակցվելու՝ օրենքով սահմանված իրավունքը, որպես կանոն, ճանաչվում է միայն փաստաբան-վստահորդ և հոգևորական-ապաշխարող հաղորդակցության դեպքում: Բժիշկ-խնամառու և ամուսին-կին հաղորդակցության գաղտնիությունը նահանգներում հիմնականում պաշտպանված չէ¹⁷⁹: Այդ հաղորդում-

¹⁷⁹ Համեմատ. United States Department of Health and Human Services et al., *Child Welfare Information Gateway. Mandatory Reporters of Child Abuse and Neglect: Summary of State Laws*, Washington, DC, April 2010 [Ամերիկայի Միացյալ Նահանգների առողջապահության և սոցիալական ծառայությունների նախարարություն և այլք, *Երեխայի բարեկեցության հարցերով տեղեկատվական հարթակ: Երեխայի նկատմամբ բռնության և անուշադրության հարցերով պարտադիր զեկուցողները. ամփոփ տեղեկություններ նահանգների օրենքների մասին*, Վաշինգտոն, ԱՄՆ, 2010 թվականի ապրիլ]:

ները սովորաբար ստանում և ստուգում են երեխայի պաշտպանության ծառայությունները: Եթե պարզվում է, որ տվյալ իրավիճակը համապատասխանում է կոնկրետ նահանգում սահմանված՝ ունձագության կամ անուշադրության հատկանիշներին, ապա հաղորդում ներկայացնող անձը լրացուցիչ օգնություն ստանալու համար ուղարկվում է համայնքային այլ ծառայություններ կամ իրավապահ մարմիններ: Դատական գործընթաց նախաձեռնվում է այն դեպքում, երբ երեխայի անվտանգությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է անչափահասների դատարանի միջամտությունը¹⁸⁰:

Տուժողներին ցուցաբերվող աջակցությունը կարող է ներառել նաև տուժողների խորհրդատվության մեխանիզմների ներդրումը, որոնք տուժողներին հնարավորություն են ընձեռում խորհրդակցելու քրեական հետապնդումն իրականացնող մարմնի հետ նախքան մեղքի ընդունման պայմանագրի բանակցությունների ավարտը կամ գործը կարճելու մասին որոշումների, մասնավորապես՝ գործը կարճելու կամ մեղադրանքը դադարեցնելու կամ ներկայացված մեղադրանքը կրճատելու մասին որոշումների կայացումը: Տուժողների խորհրդատվությունը կարևոր է նաև տուժողին/վկային ահաբեկումից և ճնշումներից պաշտպանելու ընդհանուր համատեքստում, օրինակ՝ իրավախախտի պայմանական վաղակետ ազատման մասին որոշումները կայացնելուց առաջ կամ «տուժողի հետ շփումներն արգելելու մասին» սանկցիա կիրառելուց առաջ: Այնուամենայնիվ, նախքան մեղքի ընդունման պայմանագրի բանակցությունների ավարտը կամ գործը կարճելու մասին որոշումների կայացումը քրեական հետապնդումն իրականացնող մարմնի հետ խորհրդակցելու՝ տուժողի իրավունքը չի սահմանափակում որևիցե համաձայնագիր կնքելու՝ դատախազության իրավասությունը կամ հայեցողությունը:

«Ոստիկանության, արդարադատության, առողջապահության, սոցիալական ծառայությունների և այլ ոլորտների համապատասխան աշխատողները պետք է վերապատրաստվեն, որպեսզի հասկանան տուժող-

¹⁸⁰ Բռնության որոշակի տեսակների, օրինակ՝ սեռական բռնության կամ ֆիզիկական ծանր բռնության դեպքում կիրառվող դատական ներգործության միջոցների և իրավապահ մարմինների ներգրավման մասին տե՛ս U. S. Department of Health and Human Services et al., *Child Information Gateway, How the Child Welfare System Works*, Washington, DC, May 2012, pp. 4-7 [Ամերիկայի Միացյալ Նահանգների առողջապահության և սոցիալական ծառայությունների նախարարություն և այլք, *Երեխայի բարեկեցության հարցերով տեղեկատվական հարթակ: Ինչպես է գործում երեխայի բարեկեցության համակարգը*, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 2012 թվականի մայիս, էջեր 4-7]:

ների կարիքները և ծանոթ լինեն պատշաճ և անհապաղ օգնություն ցուցաբերելու մասին ուղեւորներին (տե՛ս նաև 7.7. ենթագլուխը)»¹⁸¹:

7.4.3. Աջակցությունը վկաներին/Վկաների պաշտպանությունը

Մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն բաղադրիչներից է հանցագործության վկայի, նրա ազգականների և մերձավորների կյանքի և անձնական անվտանգության պաշտպանությունը: Ավելին, դա քրեական վարույթի արդյունավետության գրավական է, քանի որ վրեժխնդրության կամ ահաբեկման ենթարկվելու մտավախություն ունենալու դեպքում վկաները բացարձակապես հակված չեն լինի ցուցմունք տալու քննության ընթացքում կամ դատարանում:

Հանցագործության վկաներին ահաբեկումից և վրեժխնդրությունից պաշտպանելու նպատակով դատական իշխանությունը, համագործակցելով ոստիկանության հետ, պետք է ներդնի պատշաճ իրավական մեխանիզմներ և վկայի պաշտպանության կոնկրետ ծրագրեր¹⁸²: «Վկայի պաշտպանության ծրագրով պետք է նախատեսել պաշտպանության տարաբնույթ մեթոդներ, մասնավորապես՝ վկայի և նրա ազգականների կամ մերձավոր անձանց ինքնության փոփոխությունը, բնակության վայրի փոփոխությունը, աջակցությունը նոր աշխատանք գտնելու հարցում, թիկնապահների տրամադրումը և ֆիզիկական պաշտպանության այլ միջոցները»¹⁸³:

Վկայի պաշտպանության ծրագրերը կարող են իրականացվել ազգային և/կամ տարածաշրջանային մակարդակով: Եթե պետությունն ունի միաժամանակ և՛ ազգային, և՛ տարածաշրջանային ծրագրեր, «պաշտ-

¹⁸¹ United Nations, *Declaration of Basic Principles of Justice for Victims of Crime and Abuse of Power* (op.cit. note 96), Art. 16 [Միավորված ազգերի կազմակերպություն, *Հանցավորությունից և իշխանության չարաշահումից տուժած անձանց համար արդարադատության հիմնարար սկզբունքների վերաբերյալ հռչակագիր* (տե՛ս էջատակի 96-րդ ծանոթագրությունը), 16-րդ հոդված]:

¹⁸² Համեմատ. OSCE, *Guidebook on Democratic Policing* (op.cit. note 25), pp. 30f [ԵԱՀԿ, *Ոստիկանական գործունեության ժողովրդավարական հիմունքների մասին ձեռնարկ* (տե՛ս էջատակի 25-րդ ծանոթագրությունը), էջ 30 և շարունակ.]:
Վկայի պաշտպանության մեխանիզմների ամբողջական ուսումնասիրության համար տե՛ս նաև UNODC, *Good Practices for the Protection of Witnesses in Criminal Proceedings involving Organized Crime*, New York, 2008 [ՄԱԿԹՀՊԳ, *Կազմակերպված հանցավորությանն առնչվող քրեական վարույթներում վկաների պաշտպանության հաջողված փորձը*, Նյու Յորք 2008 թ.]:

¹⁸³ Council of Europe, *Intimidation of Witnesses and the Rights of the Defence* (op. cit. note 96) [Եվրոպայի խորհուրդ, *Վկաների ահաբեկումը և պաշտպանական կողմի իրավունքները*] (տե՛ս էջատակի 96-րդ ծանոթագրությունը), հոդվածներ 14-15, տե՛ս նաև 51-րդ հոդվածը, և
Council of Europe, *Protection of Witnesses and Collaborators of Justice* [Եվրոպայի խորհուրդ, *Վկաների և արդարադատության օգնող անձանց պաշտպանությունը*] (տե՛ս էջատակի 97-րդ ծանոթագրությունը), հոդվածներ 1, 2, և 8-28:

պանության համար պատասխանատու կառույցների պարտավորությունները պետք է հստակորեն սահմանազատել, թեպետ լավագույն տարբերակն այն է, երբ նրանց որոշումները կայացվում են կենտրոնացված կարգով՝ ազգային մակարդակում՝ այդպիսի ապահովելով ծրագրի մեջ ընդգրկման չափորոշիչների և կիրառվող միջոցների միատեսակությունը»¹⁸⁴:

«Վկային պաշտպանության ծրագրի մեջ ընդգրկելու կամ ծրագրից հեռացնելու իրավասությունը սովորաբար վերապահված է վկայի պաշտպանությունն իրականացնող ստորաբաժանումից դուրս գործող որևէ մարմնի: Այդ իրավասությամբ օժտված մարմինը ... վերահսկում է ծրագրի կատարման ընթացքը, որոշումներ է կայացնում բյուջետային հատկացումների մասին և ուղղորդում է ընդհանուր քաղաքականությունը»¹⁸⁵:

«Վկայի պաշտպանության ծրագրի բարեհաջող աշխատանքի կարևորագույն գրավականը կազմակերպության ինքնուրույնությունն է: Վկայի պաշտպանությունն իրականացնող ստորաբաժանումը պետք է առանձնացված լինի քննության և քրեական հետապնդման մարմիններից: Այն պետք է գործառնություններով «անջատված» լինի ոստիկանական ծառայություններից: Ոստիկանական մարմինների հետ տեղեկատվության փոխանակումը պետք է թույլատրելի լինի միայն բացառիկ հանգամանքներում, այն էլ՝ վկայի պաշտպանությունն իրականացնող ստորաբաժանման նախաձեռնությամբ: Դա կարող է տեղի ունենալ, եթե կոնկրետ գործով ոստիկանությանը խնդրում են տեխնիկական օժանդակություն ցուցաբերել ստորաբաժանման աշխատանքներին կամ մասնակցել վկայի կյանքին սպառնացող վտանգի ծանրության աստիճանի գնահատմանը»¹⁸⁶:

Վկայի պաշտպանության ծրագրի հաջողության մյուս գրավականը կառավարական մարմինների և մասնավոր հատվածի սերտ համագործակցությունն է, որի շնորհիվ հնարավոր կլինի վկաներին տրամադրել անհրաժեշտ տարաբնույթ ծառայություններ (օրինակ՝ անձը հաստատող նոր փաստաթղթեր, կացարան, ֆինանսական օժանդակություն, բուժապասարկում, երեխաների կրթություն)՝¹⁸⁷:

¹⁸⁴ UNODC, *Good Practices for the Protection of Witnesses in Criminal Proceedings involving Organized Crime* (op.cit. note 182), p. 46 [ՄԱԿԹՀՊԳ, *Կազմակերպված հանցավորությանն առնչվող քրեական վարույթներում վկաների պաշտպանության հաջողված փորձը* (տե՛ս էջատակի 182-րդ ծանոթագրությունը), էջ 46]:

¹⁸⁵ Նույն տեղը, էջ 60:

¹⁸⁶ Նույն տեղը, էջ 53:

¹⁸⁷ Նույն տեղը, էջ 54 և շարունակ.:

Պաշտպանության ծրագրի մեջ ընդգրկելուց զատ՝ վկային կարելի է աջակցել անվտանգության հետ չառնչվող հարցերում, օրինակ՝ խոցելի խմբերին (օրինակ՝ երեխաներին, տարեցներին և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց) և օտարերկրացիներին (ովքեր չգիտեն կամ լավ չգիտեն տվյալ պետության լեզուն) անհրաժեշտ օժանդակությունը ցուցաբերելու եղանակով: Օժանդակության նպատակն է վկային նախապատրաստել, որպեսզի նա արժանահավատ ցուցմունք տա քննության ընթացքում և դատարանում՝ «հաշվի առնելով նրա անհատական հանգամանքները և անմիջական կարիքները, տարիքը, սեռը, հաշմանդամությունը և հասունության մակարդակը և լիարժեքորեն հարգելով նրա ֆիզիկական, հոգեկան և բարոյական անձեռնմխելիությունը»¹⁸⁸: Որոշ դեպքերում պահանջվում են հատուկ ծառայություններ և օժանդակության հատուկ ձևեր, որոնք պայմանավորված կլինեն վկայի սեռի և տարիքի առանձնահատկություններով, ինչպես նաև քրեական վարույթներում քննվող որոշակի հանցագործությունների, օրինակ՝ սեռական բռնության դեպքերի տարբերվող բնույթով¹⁸⁹:

Վկայի պաշտպանության ծրագրերի օրինակներ

Վկայի պաշտպանության համակարգի հիմնական հատկանիշներն Իտալիայում

Եթե վկայի պաշտպանության ստանդարտ միջոցառումները (օրինակ՝ տան կամ աշխատավայրի դիտարկումը և ուղեկցումը) բավարար չեն, և եթե անձը լրջորեն վտանգված է, ապա կարող է իրագործվել հատուկ միջոցառումների ծրագիր:

Պաշտպանության ծրագրի մասին որոշումը կայացնում է Կենտրոնական հանձնաժողովը (որի կազմում են ներքին գործերի փոխնախարարը, երկու դատավոր և հինգ ոստիկան) դատախազի միջնորդության հիման վրա՝ 6-ից մինչև 60 ամիս ժամկետով: Պաշտպանության հատուկ միջոցառումները կարող են տարածվել նաև վկայի հետ մշտապես բնակվող անձանց կամ վկայի հետ հարաբերությունների պատճառով ռիսկի ենթակա անձանց նկատմամբ:

¹⁸⁸ United Nations, *Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime* (op.cit. note 96), Art. 10 [Միավորված ազգերի կազմակերպություն, *Հանցավորությունից տուժած և վկա անչափահասների մասնակցությամբ գործընթացներում արդարադատության վերաբերյալ ուղեկցիներ* (տե՛ս էջատակի 96-րդ ծանոթագրությունը), 10-րդ հոդված]:

¹⁸⁹ Նույն տեղը, հոդված 17:

Պաշտպանության համակարգի հիմքում դրված է «բողարկման» սկզբունքը, այսինքն՝ բացարձակ անանուն և գաղտնի իրավիճակի ձևավորումը: Սուբյեկտները տեղափոխվում են բնակության նոր, ապահով վայր և ստանում անձը հաստատող ժամանակավոր փաստաթղթեր, որոնք վավերական են միայն պաշտպանության ժամկետի ընթացքում: Հատկապես զգայուն գործերի համար իրավական կարգավորումներով նախատեսվում է ինքնությունը մեկընդմիջտ փոխելու հնարավորությունը: Կարող են կիրառվել նաև աջակցության միջոցառումներ, որոնք կնպաստեն սոցիալական վերաինտեգրմանը և նյութական օժանդակության տրամադրմանը (օրինակ՝ կացարան, տեղափոխման վճարներ, առողջապահություն, իրավաբանական և հոգեբանական աջակցություն և կենսաթոշակներ նրանց համար, ովքեր ի վիճակի չեն աշխատել):

Ծրագրի իրականացման համար պատասխանատու են Պաշտպանության կենտրոնական ծառայությունը և տեղական 19 գործառնական ստորաբաժանումները: Մասնավորապես՝ նրանք ուղղակի աջակցություն են ցուցաբերում պաշտպանվող անձանց, կապեր են հաստատում տարբեր կառույցների հետ՝ նպատակ ունենալով օգնելու պաշտպանվող անձանց սոցիալական հարաբերություններին (դպրոց, առողջապահություն, աշխատանք և այլն), և աջակցություն են ցուցաբերում տեղի ոստիկանությանը՝ պաշտպանվող անձանց անվտանգությունը երաշխավորելու հարցում:

Պաշտպանվող անձինք պարտավորվում են հետևել անվտանգության կանոններին և ակտիվորեն համագործակցել պաշտպանության միջոցառումների իրականացման ուղղությամբ, պատասխանել հարցերին և հարցաքննվել, պատրաստակամորեն մասնակցել իրականացվող բոլոր գործողություններին, վարույթի փաստերը չհայտնել ոչ մեկին՝ բացառությամբ իրավապահ և դատական մարմինների և պաշտպանվող անձանց պաշտպանող փաստաբանների, և կապեր չհաստատել հանցավոր գործունեության մեջ ներգրավված որևէ անձի հետ:

Ծրագիրը դադարեցվում է այն ժամանակ, երբ ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորող հանգամանքները դադարում են գոյություն ունենալ, կամ եթե անձը չի կատարում իր պարտավորությունները, կատարում է հանցանք, առանց թույլտվության վերադառնում է իր սկզբնական բնակավայրը, կամ երբ բացահայտվում է անձի նոր ինքնությունը կամ բնակավայրը: Պաշտպանվող անձը կարող է նաև

սեփական գրավոր դիմումի համաձայն դուրս գալ ծրագրից:

Ծրագիրը կարող է ներառել սոցիալական վերաինտեգրման օժանդակության միջոցառումներ, որոնք իրականացվում են համագործակցության ավարտից հետո: Վկաների դեպքում այդ միջոցառումները շարունակվում են մինչև 10 տարի ժամկետով և երաշխավորում են անձի՝ նախքան ծրագրում ընդգրկվելն ունեցած կենսամակարդակը: Վկաները բաց թողնված եկամտի դիմաց ստանում են հատուցման որոշակի գումար, կարող են ստանալ երաշխավորված վարկեր կամ իրենց անշարժ գույքը շուկայական գնով վաճառել պետական եկամուտների մարմիններին: Եթե վկան քաղաքացիական ծառայող է, նա վճարվող արձակուրդի սկզբունքով պահպանում է իր աշխատատեղը¹⁹⁰:

Վկայի պաշտպանության կառույցները Միացյալ Թագավորությունում

Կազմակերպված ծանր հանցագործությունների գործակալությունը, որն ստեղծվել է «Կազմակերպված ծանր հանցագործությունների և ոստիկանության մասին» 2005 թվականի օրենքի հիման վրա և գործում է համապետական մակարդակով, ունի վկաների պաշտպանության ստորաբաժանում: Բացի դրանից՝ ստեղծվել է վկաների պաշտպանության բյուրո Միացյալ Թագավորության ներքին գործերի նախարարության կառուցվածքում: Այն գործառնական կարողություններ չունի, սակայն վկաների պաշտպանության ստորաբաժանմանը տրամադրում է օժանդակություն և մատուցում կենտրոնացված ծառայություններ, մասնավորապես՝ սոցիալական կացարանից օգտվելու հնարավորություն, նպաստներ և բուժօգնություն պաշտպանվող վկաների համար: Բյուրոն նաև միասնական համակարգողի դեր է կատարում միջազգային հարաբերություններում և ծրագրերում:

Ինչ վերաբերում է տարածաշրջանային մակարդակին, ապա Շոտլանդիայի հանցավորության և թմրադեղերի դեմ պայքարի գործակալությունը վկաների պաշտպանություն է իրականացնում Շոտլանդիայի, Գլուսիսային Իռլանդիայի և Ուելսի ոստիկանական բոլոր ուժերի համար, ընդ որում՝ վկաների պաշտպանությունն իրականացվում է տեղական մակարդակով, և ոստիկանական մի շարք կառույցներում

¹⁹⁰ Համեմատ. UNODC, *Digest of Organized Crime Cases. A Compilation of Cases with Commentaries and Lessons Learned*, New York, October 2012, pp. 50f [ՄԱԿԹՀՊԳ, *Կազմակերպված հանցագործություններին առնչվող քրեական գործերի ամփոփագիր: Գործերի հավաքածու՝ մեկնաբանություններով և քաղված դասերով*, Նյու Յորք, 2012 թվականի հոկտեմբեր, էջ 50 և շարունակ.]:

այդ նպատակով ստեղծվել են հատուկ ծրագրեր: Վկաների պաշտպանության սեփական ծրագրեր չունեցող կառույցներն այդ ծառայությունները մատուցելու համար հատուկ պայմանագրեր են կնքում «հարևան» կառույցների հետ¹⁹¹:

Նախաձեռնելու և որոշումներ կայացնելու իրավասությունները

Միացյալ Թագավորությունում քննիչը կարող է համապատասխան միջնորդությունը ներկայացնել անմիջապես պաշտպանությունն իրականացնող մարմինն, որն էլ որոշում է կայացնում վկային ծրագրի մեջ ընդգրկելու մասին:

Գերմանիայում դաշնային և նահանգային մակարդակներում վկաներին ծրագրի մեջ ներառելու կամ ծրագրից հեռացնելու մասին որոշումը համատեղ կայացնում են վկաների պաշտպանության ստորաբաժանումը և դատախազը:

Սլովակիայում անձին վկաների պաշտպանության ծրագրի մեջ ներառելու և հրատապ միջոցառումներ իրականացնելու մասին գրավոր առաջարկը մշակում և պաշտպանության ստորաբաժանմանն է ներկայացնում քրեական գործով քննիչը կամ դատախազը: Դատական քննության մեկնարկից հետո այդ նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև նախագահող դատավորը: «Վկաների պաշտպանության մասին» թիվ 256/1989 օրենքը վկաների պաշտպանությունն իրականացնող մարմինն թույլ է տալիս վերանայել անձին վկաների պաշտպանության ծրագրի մեջ ընդգրկելու կամ ծրագրի մեջ անձի ընդգրկումը մերժելու մասին իր որոշումները: Տվյալ գործընթացը համարվում է միջանկյալ տարբերակ՝ իրավական պաշտպանության միջոցների իսպառ բացակայության տարբերակի և պաշտոնական բողոքարկման տարբերակի միջև, ընդ որում գործընթացը կարող է նախաձեռնվել քրեական գործով քննիչի, դատախազի կամ դատավորի միջնորդությամբ¹⁹²:

Ուսումնառության ունակություն չունեցող վկաներին ցուցաբերվող օժանդակությունը Միացյալ Թագավորությունում

Լիվերպոլում «ուսումնառության ունակություն չունեցող վկաների

¹⁹¹ Հանձնատ. UNODC, *Good Practices for the Protection of Witnesses in Criminal Proceedings involving Organized Crime* (op.cit. note 182), p. 47 [ՄԱԿԹՀՊԳ, *Կազմակերպված հանցավորությանն առնչվող քրեական վարույթներում վկաների պաշտպանության հաջողված փորձը* (տե՛ս էջատակի 182-րդ ծանոթագրությունը), էջ 47]:

¹⁹² Նույն տեղը, էջ 59 և շարունակ.:

հետ աշխատում է Լիվերպուլի քաղաքային խորհրդի քննությունների օժանդակության ծառայության սոցիալական աշխատողը»: Նշված ծառայությունը սերտորեն համագործակցում է Մերսիսայդի ոստիկանության և Արքայական դատախազության հետ՝ փորձելով ապահովել ուսումնառության ունակություն չունեցող անձանց՝ որպես վստահելի վկաների ընկալումը: 1998 թվականից ի վեր ծառայության Վկաների օժանդակության, պատրաստման և պրոֆիլավորման մոդելի օգնությամբ ցուցմունք են տվել դատախազության 25 վկաներ (հիմնականում՝ սեռական ոտնձգություններից տուժած անձինք): Վկաների օժանդակության, պատրաստման և պրոֆիլավորման մոդելի շրջանակում 10-12 շաբաթվա ընթացքում սերտ աշխատանքներ են իրականացվում վկայի հետ: Այդ ժամանակահատվածում վկան Նոր հմտություններ է ձեռք բերում և սկսում է հասկանալ ցուցմունք տալու գործընթացը: Նախապատրաստական այս փուլի ավարտին պատրաստվում է վկայի բնութագիրը՝ պրոֆիլը, որն ուղարկվում է դատարանին»¹⁹³: Լիվերպուլում բարեհաջող ներդրվելուց հետո մոդելը ներդրվել է երկրի տարբեր մասերում: Այն նաև տեղայնացվել է՝ տարեցների և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պարագայում օգտագործման համար:

7.4.4. Իրավախախտի վարման միասնական մոտեցումը

Իրավախախտի վարման միասնական մոտեցման շրջանակում իրականացվող տեղեկատվության փոխանակումը պետք է համահունչ լինի միջազգային չափորոշիչներին, այսինքն՝ տեղեկատվության փոխանակումը պետք է կատարվի օրինական կարգով, սահմանված որոշակի նպատակով, լինի համարժեք, վերաբերելի և ոչ ավելորդ: Տեղեկատվությունը չի կարող պահպանվել անհրաժեշտ չափից ավելի երկար ժամկետով: Իրավախախտի վարման միասնական մոտեցման հիմնական սկզբունքն է աշխատել այն իրավախախտների հետ, ովքեր շահագրգռված են դադարեցնել իրավախախտ վարքը: Այդ սկզբունքի շնորհիվ քրեական արդարադատության մարմինները կարող են համակարգում ռեսուրսներ տնտեսել, որպեսզի հետապնդեն և դատապարտեն այն իրավախախտներին, ովքեր ավելի վտանգավոր են համապատասխան համայնքների համար:

¹⁹³ Office for Criminal Justice Reform, *Working Together to Cut Crime and Deliver Justice* (op.cit. note 109), p. 40 [Քրեական արդարադատության բարեփոխումների գրասենյակ, *Համատեղ աշխատանքը հանցավորության կրճատման և արդարադատության իրականացման ուղղությամբ* (տե՛ս էջատակի 109-րդ ծանոթագրությունը), էջ 40]:

Այս մոտեցման շրջանակում համատեղ աշխատանքներ են տարվում ոստիկանության, պրոբացիայի ծառայության աշխատողների և կարևոր այլ գործընկերների կողմից: Նպատակն անձի ուղղումն է, օրինապահ վարքի ձևավորումը և իրավակիրառ աշխատանքների արդյունավետ իրականացումը՝ փորձելով նվազեցնել կրկնահանցավորությունը և շարունակաբար հանցանքներ գործող իրավախախտների որոշակի խմբի կողմից համայնքներին պատճառվող վնասը:

7.4.5. Անչափահասների արդարադատությունը

Մարդու իրավունքները երաշխավորելու և հարգելու պարտավորությունը կատարելու նպատակով ԶԱԴ-ի տարաբնույթ սուբյեկտների սերտ համագործակցությունը կարևոր է նաև անչափահասների արդարադատության ոլորտում իրականացվող քրեական արդարադատության գործընթացում: Անչափահասների արդարադատության խնդիրներով հետաքրքրված հիմնական սուբյեկտները և շահակիցներն են ոստիկանությունը, դատախազությունը և դատարանները: Բացի դրանից՝ կարող են ներգրավված լինել տարաբնույթ այլ գերատեսչություններ և սուբյեկտներ, մասնավորապես՝ սոցիալական աշխատողները և պրոբացիայի աշխատողները, տեղական ինքնակառավարման մարմինները, երեխայի և երիտասարդի խնամքի հարցերով պատասխանատուները, վերականգնողական հաստատությունները, բանտերում աշխատող անձինք, օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների համար քրեական հետապնդման այլընտրանքային ծրագրեր իրականացնող կառույցները (արտադատական ծառայություններ մատուցողները) և համայնքային աշխատողները: Ավելին, երբ հանցագործության կատարման մեջ մեղադրվողը երեխա է, շարքային քաղաքացիները նույնպես կարող են վերականգնողական արդարադատության ոլորտում առկա «քաղաքացիական» կամ «ժողովրդական» դատավորների հանձնախմբերի միջոցով ներգրավվել քրեական արդարադատության գործընթացներում¹⁹⁴:

Անչափահասների արդարադատության համակարգի ձևավորումը և կիրառությունն ուղղորդող հիմնական սկզբունքները թվարկված են ստորև.

¹⁹⁴ Հանձնատ. UNODC, “Cross-Cutting Issues. Juvenile Justice” (op.cit. note 20), p. 1 [ՄԱԿԹՀՊԳ, «Ընդհանուր հիմնահարցեր: Արդարադատությունն անչափահասների գործերով» (տե՛ս էջատակի 20-րդ ծանոթագրությունը), էջ 1]:

- Ազատությունից զրկելու վայրերում երեխաները պետք է պահվեն չափահաս անձանցից անջատ:
- Ազատագրվումը պետք է կիրառել միմիայն այլ միջոցների անհնարինության կամ անարդյունավետության դեպքում, այն էլ՝ հնարավորինս կարճ ժամկետով:
- Օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների հետ վարվեցողությունը պետք է երաշխավորի երեխայի արժանապատվության և արժանիքի զգացողության հարգումը՝ այդպես ամրապնդելով երեխայի հարգանքն առ այլ անձանց հիմնարար իրավունքները և ազատությունները: Հարկ է հաշվի առնել երեխայի տարիքը և հասարակության մեջ նրա վերաինտեգրումը կազմակերպելու կարևորությունը՝ երեխային քաջալերելով կառուցողական դերակատարում ստանձնելու հասարակության մեջ:
- Մարդու իրավունքների և իրավունքի պաշտպանության երաշխիքների լիարժեք հարգման պայմաններում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել երեխաների խնդիրներն առանց դատական վարույթների լուծելու ուղղությամբ (արտադատական մեխանիզմների վերաբերյալ տե՛ս նաև 7.3.2. ենթագլուխը)¹⁹⁵:

7.5. Հաշվետվողականությունը և վերահսկողությունը

Հաշվետվողականությունն այն է, երբ վերահսկողական տարաբնույթ հաստատությունների կողմից իրականացվող դիտարկումների համար բաց են ՔԱՀ-ի բոլոր կառույցները և գործընթացները՝ ՔԱՀ-ում աշխատող անհատների վարքից մինչև քրեական արդարադատության գործընթացի կառավարման ռազմավարությունները, աշխատանքի ընդունման ընթացակարգերը և բյուջետային միջոցների կառավարումը:

ՔԱՀ-ի կառույցների գործունեության շրջանակի սահմանների որոշման պատասխանատուն օրենսդիրն է: Գործադիրը (նախագահը և/կամ վարչապետը, համապատասխան նախարարությունները, ազգային անվտանգության խորհրդականները, խորհրդարանական հանձնաժողովները) պատասխանատու են ՔԱՀ-ի հայեցակարգի իրագործման

¹⁹⁵ Նույն տեղը, էջեր 4 և 9:

համար: Դատական իշխանությունը և օրենսդիրը պատասխանատու են հայեցակարգի պատշաճ իրագործումը գնահատելու համար:

Պետական իշխանության վերոհիշյալ երեք ճյուղերի կողմից իրականացվող վերահսկողությունից զատ՝ գոյություն ունեն արտաքին և ոչ պետական բազմաբնույթ կառույցներ, որոնք նույնպես կարող են առանցքային դերակատարում ունենալ ԶԱՀ-ի վերահսկողության հարցում, մասնավորապես՝ մարդու իրավունքների հանձնախմբերը, քաղաքացիների բողոքները քննող մարմինները, անկախ օմբուդսմենտները, ջատագովության խմբերը և զանգվածային լրատվամիջոցները¹⁹⁶:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են վերահսկողական տարաբնույթ աշխատանքներ իրականացնել՝ ներառյալ ԶԱՀ-ի կառույցների կողմից մարդու իրավունքների խախտումների և թույլ տրված այլ չարաշահումների մասին տեղեկությունների հավաքումը և զեկույցներով ներկայացումը, աշխատանքային ծանրաբեռնվածության գնահատումը, նախնական կալանքի վայրերում և բանտերում պայմանների մշտադիտարկումը և զեկույցներով ներկայացումը, դատական նիստերին ներկայությունը և դրանց վերաբերյալ մեկնաբանությունների հրապարակումը, ինչպես նաև՝ քրեական արդարադատության համակարգի արդյունավետության միտումների վերլուծությունը և զեկույցներով ներկայացումը: (Չաջորդ մի քանի պարբերություններում բերված են սմանատիպ աշխատանքների որոշ օրինակներ):

7.5.1. Ոստիկանության հաշվետվողականությունը և վերահսկողությունը

Ոստիկանության ներքին տեսչություններից զատ՝ ոստիկանությանը վերահսկող կառույցների թվում կարող են լինել գործադիրը (պետական քաղաքականության հսկողություն, ֆինանսական հսկողություն և

¹⁹⁶ Համեմատ. OSCE, *Guidebook on Democratic Policing* (op.cit. note 9), p. 39 [ԵԱՀԿ, *Ոստիկանական գործունեության ժողովրդավարական հիմունքների մասին ձեռնարկ* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 39], և UNODC, *Handbook on Police Accountability, Oversight and Integrity*, Criminal Justice Handbook Series, New York, 2011 [ՄԱԿԹՀՊԳ, «Ոստիկանության հաշվետու գործելակերպի, վերահսկողության և բարեվարքության ձեռնարկ, Քրեական արդարադատության ձեռնարկների շարք, Նյու Յորք, 2011 թ.], այստեղ մասնավորապես էջ 93: *Վերահսկողական գործունեության առանձնահատկությունների մասին ամբողջական տեղեկությունների համար տե՛ս նաև՝* England, Madeline L., *Security Sector Governance and Oversight: A Note on Current Practice*, Henry L. Stimson Center, Washington D.C., 12 December 2009 [Մեդլին Լ. Ինգլանդ, *Անվտանգության ոլորտի կառավարումը և վերահսկողությունը. տեղեկանք ընթացիկ գործելակերպի վերաբերյալ*, Հենրի Լ. Սթիմսոնի անվ. կենտրոն, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, ԱՄՆ, 12-ը դեկտեմբերի, 2009 թ.]:

հորիզոնական վերահսկողություն կառավարական կառույցների կողմից), օրենսդիրը (խորհրդարանի անդամներ, խորհրդարանական հետաքննող հանձնաժողովներ) և դատական իշխանությունը, ինչպես նաև մարդու իրավունքների հանձնաժողովները, քաղաքացիների բողոքները քննող հանձնաժողովները և անկախ օմբուդսմենները:

Ռազմավարական և կառավարչական հարթություններում ուստիկանության հաշվետվողականության մակարդակի բարձրացման նպատակով կարող են իրականացվել կառուցվածքային և կազմակերպական հետևյալ բարեփոխումները՝ կազմակերպական կառուցվածքի գծագրերի մշակումը և դերերի և պարտականությունների սահմանումը, տեխնիկական միջոցների (գրասենյակային նվազագույն պարագաների, տեղեկատվական տեխնոլոգիաների, հարցազրույցների և դիտարկման տեխնիկական սարքավորումների և ավտոմեքենաների) տրամադրումը, աշխատողների ընտրության և աշխատանքի ընդունման գործընթացների բարելավումը, ինչպես նաև՝ քննիչների վերապատրաստումն այնպիսի թեմաներով, ինչպիսիք են գործող օրենսդրությունը, հարցազրույցների վարումը և դիտարկումը, գաղտնի նյութերի և փաստաթղթերի պատշաճ պահպանությունը, զեկույցներ գրելու հմտությունները և գործի նյութերի նախապատրաստումը (տե՛ս նաև 7.1. ենթագլուխը):

Իրենց վերահսկողական լիազորություններն արդյունավետորեն կատարելու փոխարեն վերահսկողության ներքին և արտաքին կառույցներին անհրաժեշտ են բավարար ռեսուրսներ, իրավասություններ և անկախություն գործադիրի ազդեցությունից¹⁹⁷:

Վերահսկողության արտաքին մեխանիզմների արդյունավետության և գործունակության համար անհրաժեշտ է բավարարել կառուցվածքային հետևյալ հիմնարար պահանջները.

- Վերահսկողության արտաքին մեխանիզմները պետք է օրենքի համաձայն իրավունք ունենան բողոքներ ընդունելու ցանկացած անձից:
- Ուստիկանությունը պետք է օրենքի համաձայն պարտավոր լինի վերահսկողության արտաքին համապատասխան մեխանիզմներին:

¹⁹⁷ Համեմատ. OSCE, *Guidebook on Democratic Policing* (op.cit. note 25), pp. 39-42 [ԵԱՀԿ, Ուստիկանական գործունեության ժողովրդավարական հիմունքների մասին ձեռնարկ (տե՛ս էջատակի 25-րդ ծանոթագրությունը), էջեր 39-42], UNODC, *Handbook on Police Accountability, Oversight and Integrity* (op.cit. note 196), pp. 93-99 [ՄԱԿԹՀՊԳ, «Ուստիկանության հաշվետու գործելակերպի, վերահսկողության և բարեվարքության ձեռնարկ (տե՛ս էջատակի 196-րդ ծանոթագրությունը), էջեր 93-99]:

րին տեղեկացնել ոստիկանությունում անազատության պայմաններում մահացած բոլոր անձանց և ոստիկանության գործողությունների պատճառով մահացած բոլոր անձանց մասին, ընդ որում՝ չտեղեկացնելու կամ ուշացմամբ տեղեկացնելու համար պետք է կիրառվեն պատժամիջոցներ:

- Մեխանիզմը պետք է արձանագրի բողոքները և խախտումները և հետևի դրանց ընթացքին, ինչպես նաև վարի ամբողջական գրառումներ:
- Համապատասխան մեխանիզմը պետք է իրավունք ունենա քննելու ստացված բողոքները:
- Համապատասխան մեխանիզմը պետք է իրավունք ունենա ստիպելու ոստիկանությանը՝ համագործակցելու իր կողմից իրականացվող քննության շրջանակներում, ինչպես նաև պետք է ունենա քննություն իրականացնելու բոլոր իրավասությունները՝ ոստիկանության քննիչների նմանությամբ:
- Համապատասխան մեխանիզմը պետք է իրավունք ունենա գործերը քրեական հետապնդման նպատակով փոխանցելու դատախազին և առաջարկություն ներկայացնելու ոստիկանության բաժնի նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու վերաբերյալ, իսկ դատախազը պետք է պարտավոր լինի որոշակի ժամկետում պատասխանել մեխանիզմին: Եթե դատախազը որոշում է քրեական հետապնդում չիրականացնել, ապա նա պարտավոր է գրավոր բացատրություն ներկայացնել մեխանիզմին:
- Մեխանիզմը պետք է ի վիճակի լինի անհրաժեշտության դեպքում վկայի պաշտպանություն իրականացնել կամ վկային ուղարկել պաշտպանություն իրականացնող մարմինների մոտ,
- Մեխանիզմը պետք է ի վիճակի լինի ոստիկանության ընդհանուր բարեփոխումներ առաջարկել ոստիկանությանը և կառավարությանը¹⁹⁸:

Արդյունավետ արտաքին վերահսկողության կարևորագույն սկզբունքներից է ոստիկանության, քաղաքացիական հասարակության և վերահսկող մարմինների միջև շարժունակ հարաբերությունների առկա-

¹⁹⁸ Համեմատ. UNODC, *Handbook on Police Accountability, Oversight and Integrity* (op.cit. note 196), p. 69 [ՄԱԿԹՀՊԳ, «Ոստիկանության հաշվետու գործելակերպի, վերահսկողության և բարեկարգության ծեռնարկ (տե՛ս էջատակի 196-րդ ծանոթագրությունը), էջ 69: Չեռնարկի 70-րդ էջում թվարկված են լրացուցիչ պահանջները]:

յությունը: Հետևաբար հույժ կարևոր է բարձրացնել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների իրազեկությունն իրենց իրավունքների և անվտանգության և արդարադատության՝ իրենց հասանելի ծառայությունների մասին, ինչպես նաև զարգացնել վերահսկողական իրենց գործառույթն իրականացնելու՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները: Ռեսուրսների տրամադրումից և իրավասություններից ու անկախությունից զատ՝ նրանք պետք է տեղեկացվեն վերահսկողության որոշակի ընթացակարգերի՝ ներառյալ մշտադիտարկման և բողոքների քննության գործառույթների մասին: Բացի դրանից՝ ԶԱՀ-ի կառույցների հետ արդյունավետ շփումների միջոցով քաղաքացիական հասարակությունը պետք է վստահություն ձևավորի վերահսկող կառույցների աշխատանքի նկատմամբ ու վստահորեն և ապահով կերպով համագործակցի վերահսկողական այդ մեխանիզմների հետ¹⁹⁹:

«Վերահսկողության գործընթացին կանանց մասնակցության ավելացումն օգնում է դրանք ներկայացուցչական դարձնել և ապահովել դրանց՝ որպես ներկայացուցչական գործընթացների ընկալումը, որի շնորհիվ կարող է բարձրանալ հանրության վստահությունը, և երաշխավորվել վերահսկողության գործընթացում քաղաքացիներին հուզող հարցերի դիտարկումը: Քաղաքացիական հասարակության՝ գենդերային հարցերի ուղղությամբ աշխատանքի փորձ ունեցող կառույցների՝ ներառյալ կանանց կազմակերպությունների, տղամարդկանց կազմակերպությունների և գենդերային փորձագետների ներգրավմամբ կարելի է կատարելագործել անվտանգության ոլորտի վերահսկողության թե՛ ֆորմալ, թե՛ ոչ ֆորմալ մեխանիզմները»²⁰⁰:

Ներքին վերահսկողության մարմինների և քաղաքացիական մշտադիտարկման արտաքին խորհուրդների կողմից իրականացվող ընդհա-

¹⁹⁹ Հանսնաու. Hansen et al., *The Transition to a Just Order – Establishing Local Ownership after Conflict* (op.cit. note 51), pp. 53ff [Հանսեն և այլք, *Անցումն արդար իրավակարգին. «տեղական սեփականության» սկզբունքի ներդրումը հակամարտությունից հետո* (տե՛ս էջատակի 51-րդ ծանոթագրությունը), էջ 53 և շարունակ.]: UNODC, *Handbook on Police Accountability, Oversight and Integrity* (op.cit. note 196), pp. 101-109 [ՄԱԿԸՀՊԳ, «Ոստիկանության հաշվետու գործելակերպի, վերահսկողության և բարեկարգության ձեռնարկ» (տե՛ս էջատակի 196-րդ ծանոթագրությունը), էջեր 101-109]:

²⁰⁰ Valasek, Kristin, “Security Sector Reform and Gender”, Tool 1, in: Bastick, Megan/Valasek, Kristin (eds.), *Gender and Security Sector Reform Toolkit*, DCAF/ ODIHR/ International Research and Training Institute for the Advancement of Women, Geneva 2008, p. 10 [Քրիստին Վալասեկ, «Գենդերը և անվտանգության ոլորտի բարեփոխումները», թիվ 1 գործիք, աղբյուր՝ Մեզան Բաստիք / Քրիստին Վալասեկ (խմբագիրներ), «Գենդերը և անվտանգության ոլորտի բարեփոխումները» ուսումնական ձեռնարկ, ԶՈՒԺՎ/ ԺՀՄԻԳ/ Կանանց դերի բարձրացման հարցերով հետազոտությունների և ուսուցումների միջազգային ինստիտուտ, Ժնև, 2008, էջ 10]:

նուր վերլուծությունները կարող են բացահայտել յուրաքանչյուր մարմնի ստացած գործերի/բողոքների առնչությամբ դրսևորվող միտումները, օրինաչափությունները և հիմնախնդիրները: Այդ տեղեկությունների արդյունքում կարող են մշակվել քաղաքականության մեջ անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ, ինչպես նաև վերապատրաստման համապատասխան դասընթացներ, խրախուսման և շահագրգռման մեխանիզմներ, իրավիճակը շտկելուն ուղղված քայլեր և բարեփոխումներ:

7.5.2. Դատական իշխանության հաշվետվողականությունը և վերահսկողությունը

Դատական իշխանության վերահսկողության ֆորմալ մեխանիզմներ կարող են լինել դատական ծառայության հանձնաժողովները, օմբուդսմենի ազգային գրասենյակը կամ մարդու իրավունքների հանձնաժողովները:

Զաղաքացիական հասարակությունը կարող է մասնակցել վերահսկողությանը, օրինակ, արդարադատության մարմինների ներկայացուցիչների հետ ներգրավվելով տեղական այնպիսի հանձնաժողովների աշխատանքում, որոնց նպատակն է ուսումնասիրել աշխատանքային ծանրաբեռնվածությունը, վերանայել անհատական գործերը կամ ազատագրկված անձանց վիճակը²⁰¹ կամ մշտադիտարկել դատավարությունները:

Աշխատանքային ծանրաբեռնվածության ուսումնասիրությունները

Եթե գործերի քննության մեջ նկատվում են լուրջ ձգձգումներ և կուտակումներ, և/կամ բանտերը գերբնակեցված են, «առավել նվազ ծանրության քրեական գործերը հետապնդելու օգտակարությունը սովորաբար մեծ չէ: Դա, սակայն, չի նշանակում, թե դրանք պետք է կարճել: Դրանք պետք է ստանան այլընտրանքային լուծումներ»²⁰²: Զաղաքացիական հասարակության խմբերը և իրավաբանական օգնություն տրամադրողները կարող են օգնել ԶԱՅ-ին՝ գործերի ձգձգումները նվազեցնելուն զուգահեռ վերահսկողական կարևոր գործառույթ կա-

²⁰¹ Հանեմատ. UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), pp. 88f [ՄԱԿԹՀՊԳ/ԱՄՆՆԻ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հավանարտություններ վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջեր 88 և շարունակ.]:

²⁰² Նույն տեղը, էջ 85:

տարելու հարցում վերանայելով անհատական գործերը և ազատագրված առանձին անձանց կարգավիճակը, ինչպես նաև՝ յուրաքանչյուր ամիս առաջարկություններ ներկայացնել գլխավոր դատախազին կա՛մ համապատասխան գործերով մեղադրանքը կարծելու²⁰³, կա՛մ կասկածյալին գրավով կամ սեփական ստորագրությամբ նախքան դատն ազատ արձակելու մասին՝ հաշվի առնելով, որ ազգային օրենսդրությամբ դատախազին վերապահված է նման հայեցողություն: Քաղաքացիական հասարակության խմբերը և իրավաբանական օգնություն տրամադրողները կարող են ԶԱՀ-ին օժանդակել նաև՝ այցելելով բանտեր և ազատագրված անձանց ստուգելու միջոցով բացահայտելով նրանց, ովքեր մնացել են նախատեսվածից ավելի երկար կամ պահվել են անհարկի երկար, և նրանց գործերն ուղարկել դատարաններին՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար²⁰⁴: Ավելին, նրանք կարող են նաև որոշում կայացնել որոշ գործեր հնարավորության դեպքում արդարադատության սովորութային/ավանդական համակարգ ուղարկելու մասին: Որոշ գործեր էլ կարող են լուծվել արտադատական ծրագրերով (տե՛ս նաև 7.3.2. ենթագլուխը): Այլընտրանքային լուծումներ չստացած մյուս գործերը, սակայն, պետք է քննվեն դատարանի կողմից:

ԶԱՀ-ի խորհրդատուները պետք է, աշխատելով արդարադատության մարմինների հետ և խորհրդակցելով տեղի խորհրդատուների, քաղաքացիական հասարակության խմբերի և իրավաբանական օգնություն տրամադրողների հետ, մշակեն ստուգման այնպիսի գործընթաց, որով հնարավոր կլինի որոշել, թե որ գործերն է անհրաժեշտ ուղղորդել այլ մարմինների կամ արտադատական կարգավորման: Ստուգման գործընթացի կազմակերպման կարևոր քայլերից է գործի հետագա ընթացքը որոշելիս կիրառվող չափորոշիչների համաձայնեցումը տեղական և միջազգային սուբյեկտների միջև²⁰⁵:

Ազատագրված վայրերի մշտադիտարկումը

ԶԱՀ-ի արտաքին վերահսկողության կարևոր մեխանիզմներից է ազատագրված վայրերի մշտադիտարկումը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից: Այդ մշտադիտարկումը հնարավոր չէ առանց ԶԱՀ-ի և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության: Մշտադիտարկման աշխատանքները կարելի է

²⁰³ Նույն տեղը, էջ 87:

²⁰⁴ Նույն տեղը, էջ 88:

²⁰⁵ Նույն տեղը, էջ 85:

կատարել ոստիկանությունում և ազատագրկման վայրերում քրեական վարույթի բոլոր փուլերում: ԶԱՀ-ի կառույցների և բաղաբացիական հասարակության կազմակերպությունների միջև կնքվող փոխըմբռնման հուշագրերով անհրաժեշտ է սահմանել մշտադիտարկումային այցելությունների ձևը և մեխանիզմները, նկարագրել ԶԱՀ-ում աշխատող անձանց և ազատագրկման վայրերը դիտարկող անձանց պարտականությունները և խնդիրները:

Տեղային համաձայնագրերի հիման վրա դիտորդներին թույլատրում են այցելել ազատագրկման վայրերը՝ կա՛մ նախապես այդ մասին ծանուցելով, կա՛մ առանց ծանուցման: Այցելության ընթացքում դիտորդները պարզում են, թե արդյոք բարեխղճորեն պահպանվում են ազատագրկված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող միջազգային իրավական չափորոշիչները և նորմերը, ինչպես նաև ազատագրկվածների հետ վարվեցողության պատշաճ սկզբունքները:

Ազատագրկման վայրերի մշտադիտարկման մեխանիզմների օրինակներ

Ազատագրկման վայրերի մշտադիտարկումը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) կողմից

Ժնևյան կոնվենցիաների հիման վրա ԿԽՄԿ-ն իրավասու է այցելել ռազմագերիներին և զինված ընդհարումների ժամանակ ներկայված բաղաբացիական անձանց: «Ջնարավորության դեպքում ԿԽՄԿ-ն այցելում է նաև բռնության այլ իրավիճակներում ազատությունից զրկված անձանց: ԿԽՄԿ-ի այցելություններն ազատագրկվածներին նպատակ ունեն երաշխավորելու, որ ազատագրկված անձինք, ծերեակալման կամ կալանավորման պատճառներից անկախ, ստանան արժանապատիվ և մարդասիրական վերաբերմունք՝ միջազգային նորմերի և ստանդարտների պահպանմամբ: ԿԽՄԿ-ի պատվիրակներն աշխատում են իրավասու մարմինների հետ՝ բռնությունը կանխելու և ազատագրկված անձանց հետ վարվեցողությունը և նրանց ազատագրկման պայմանները բարելավելու ուղղությամբ»²⁰⁶:

Ազատագրկման վայրերի մշտադիտարկումը Ղրղզստանում

Ղրղզստանի մայրաքաղաք Բիշկեքում ԵԱՀԿ կենտրոնի աջակցությամբ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր օմբուդսմենի գրասենյա-

²⁰⁶ International Committee of the Red Cross, *Visiting Detainees* [Կարմիր խաչի միջազգային կոմիտե, *Ազատագրկվածների այցելությունները*]:

կի, գլխավոր դատախազության, ներքին գործերի նախարարության, պատիժների կատարման պետական ծառայության, արդարադատության նախարարության և քաղաքացիական հասարակության միջազգային և տեղական 14 կարևոր կազմակերպությունների (ազատագրման վայրերի մշտադիտարկման գծով մասնագիտացող տեղական 12 ՀԿ-ներ, Ղրղզստանի Սորոսի հիմնադրամ և Ղրղզստանի «Ֆրիդմ Հաուզ») միջև: Փոխըմբռնման հուշագրով մարդու իրավունքների տեղացի դիտորդներին և օմբուդսմենի գրասենյակի պաշտոնյաներին թույլատրվում է առանց նախապես ծանուցելու այցելել ազատագրման վայրեր: Բիշկեքում ԵԱՀԿ կենտրոնն օժանդակություն է տրամադրում ներքին գործերի նախարարության և Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր՝ պատիժների կատարման պետական ծառայության ենթակայությամբ գործող ազատագրման վայրերի համատեղ դիտարկումների անցկացմանը երկրի ողջ տարածքում: Մշտադիտարկման արդյունքները վերլուծող և շահագրգիռ բոլոր անձանց ուղղված մանրակրկիտ առաջարկություններ պարունակող ամենամյա առաջին զեկույցը հրապարակվել է 2012 թվականի դեկտեմբերին:

Դատավարությունների մշտադիտարկումը

Դատավարությունների մշտադիտարկումն իրականացվում է ԵԱՀԿ *Կոպենհագենյան փաստաթղթի* հիման վրա, որում ԵԱՀԿ մասնակից բոլոր պետությունները պարտավորվել են թույլատրել դատարանների դիտորդների աշխատանքը՝ որպես վստահության ամրապնդման միջոցառում, ինչպես նաև՝ ապահովել արդար դատավարության վերաբերյալ իրենց ստանձնած հանձնառությունների կատարման թափանցիկությունը՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի դրույթներին համապատասխան²⁰⁷:

Դատավարությունների մշտադիտարկման շնորհիվ կարելի է բարելավել արդարադատության արդյունավետ և արդար իրականացումը և ուշադրություն հրավիրել առկա լուրջ թերությունների վրա: Դատավարություն-

²⁰⁷ Համեմատ. CSCE, *Document of the Copenhagen Meeting of the Conference on the Human Dimension of the CSCE*, Copenhagen, 29 June 1990, Paragraph 12 [ԵԱՀԿ, ԵԱՀԿ-ի մարդկային տարածաչափի հարցերով կոպենհագենյան խորհրդատուական փաստաթուղթը, Կոպենհագեն, 29-ը հունիսի, 1990 թ., պարբ. 12], և United Nations, *International Covenant on Civil and Political Rights* (op. cit. note 82) [Միավորված ազգերի կազմակերպություն, *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը* (տե՛ս էջատակի 82-րդ ծանոթագրությունը)]:

ների մշտադիտարկման շնորհիվ ժամանակի ընթացքում դատական իշխանության և իրավական ոլորտի այլ շահակիցների շրջանում բարձրացվում է իրազեկությունը հրապարակային դատաքննության իրավունքի վերաբերյալ: Դատավարությունների մշտադիտարկումը կարող է նպաստել, որ արդարադատության ոլորտի սուբյեկտները բարելավեն իրենց աշխատանքը, գործադիրը տրամադրի արդարադատության գործընթացում առկա թերությունները հաղթահարելու համար պահանջվող ռեսուրսները, իսկ օրենսդիրը ցանկություն հայտնի ընդունելու օրենքներ կամ օրենքներում փոփոխություններ, որոնց արդյունքում արդարադատության ոլորտի գործունեությունը կհամապատասխանի մարդու իրավունքներին վերաբերող չափորոշիչներին: Դատավարությունների մշտադիտարկումը նեղ իմաստով վերաբերում է միայն դռնբաց դատական նիստերին և դատավորների, դատախազների, փաստաբանների և դատարանում ներկա գտնվող այլ պաշտոնյաների վարքագծին: Դատավարությունների մշտադիտարկումը նեղ իմաստով անդրադառնում է նաև քրեական արդարադատության այլ կառույցների, մասնավորապես՝ ոստիկանության, արդարադատության վարչարարության մարմինների և բանտերի թերություններին, որոնց կողմից քրեական արդարադատության գործընթացում կատարված աշխատանքի որակը կարող է տեսանելի դառնալ դատական քննության փուլում²⁰⁸:

Դատավարությունների մշտադիտարկման մեխանիզմի օրինակ

ԵԱՀԿ-ի կողմից դատավարությունների մշտադիտարկման ծրագիրը Ղրղզստանում

2004 թվականի նոյեմբերից մինչև 2006 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում ԺՅՄԻԳ-ը, համագործակցելով Բիշկեքում ԵԱՀԿ կենտրոնի և Ղրղզստանի գերագույն դատարանի հետ, դատավարությունների մշտադիտարկման ծրագիր իրականացրեց Ղրղզստանում: Ընտրվեցին և ԺՅՄԻԳ-ի դատավարությունների մշտադիտարկման ուղեցույցի հիման վրա վերապատրաստվեցին բարձրագույն իրավաբանական կրթություն կամ մարդու իրավունքների ոլորտում աշխատանքի փորձ ունեցող 19 անձինք: Նրանք 2005 թվականի փետրվարից մինչև 2006 թվականի ապրիլն ընկած ժամա-

²⁰⁸ Համեմատ. ODIHR, *Trial Monitoring. A Reference Manual for Practitioners*, Revised edition 2012, Warsaw, 2012, pp. 16f [ԺՀՄԻԳ, *Դատական վարույթների մշտադիտարկումը: Կողմնորոշիչ ձեռնարկ պրակտիկ աշխատողների համար*, վերանայված հրատարակություն 2012 թ., Վարշավա, 2012 թ., էջ 16 և շարունակ.]:

նակահատվածում ներկա գտնվեցին առաջին ատյանի դատարանների 1,134 նիստերին՝ ընդհանուր թվով 821 քրեական գործերով, 26 դատական շրջաններում, երեք տարածաշրջանային դատարաններում, նիստը նախագահող 105 դատավորների մասնակցությամբ:

Ծրագրի հիմնական նպատակն էր գնահատել, թե քրեական գործերով դատական պրակտիկան Ղրղզստանում որքանով է համապատասխանում արդար դատաքննության միջազգային չափորոշիչներին, մշակել և վերլուծել մշտադիտարկման արդյունքները, առաջարկություններ մշակել քրեական դատավարության գործող օրենսդրության հետագա բարելավման և օրենսդրության կիրառության պրակտիկայի՝ արդար դատաքննության միջազգային չափորոշիչներին համահունչ հետագա կատարելագործման վերաբերյալ: Մշտադիտարկումն անդրադարձավ, մասնավորապես, արդար դատաքննության այնպիսի չափորոշիչների, ինչպիսիք են դատական նիստերի հասանելիությունը հանրության լայն շրջանակներին, անմեղության կանխավարկածը, «զենքերի» հավասարության և մրցակցային դատավարության սկզբունքների պահպանումը և դատավորի հասանելիությունը՝ ներառյալ փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքի իրականացումը:

Միատեսակ և հետևողական զեկույցների պատրաստումը երաշխավորելու նպատակով դատավարությունների դիտորդներն առաջնորդվեցին ԺՅՄԻԳ-ի մշակած՝ *Դատավարությունների մշտադիտարկման զեկույցների ձևաթղթով*²⁰⁹: Դատավարությունների մշտադիտարկման աշխատանքների շարունակականությունը և տեղի կառույցների կողմից հետագա իրականացումն ապահովելու նպատակով ԺՅՄԻԳ-ն ծրագրի ավարտից հետո կարողությունների զարգացման օժանդակություն է ցուցաբերել Ղրղզստանում դատավարությունների մշտադիտարկմանը մասնակցող հասարակական կազմակերպություններին և իրավապաշտպաններին՝ կիրառելով *ԺՅՄԻԳ-ի դատավարությունների մշտադիտարկման ուղեցույցի* հիմքում դրված մեթոդաբանական գործիքները²¹⁰:

²⁰⁹ Դատական վարույթների ծրագրի արդյունքները և առաջարկությունները, ինչպես նաև Դատական վարույթների մշտադիտարկման հաշվետվությունների ձևը և Դատական վարույթների մշտադիտարկման ուղեցույցը, որոնք մշակվել էին ԺՎՄԻԳ-ի կողմից, հասանելի են հետևյալ զեկույցի տեքստում. OSCE ODIHR/Centre in Bishkek, *Results of Trial Monitoring in the Kyrgyz Republic, 2005-2006* [ԵԱՀԿ ԺՎՄԻԳ/ կենտրոն Բիշկեքում, *Ղրղզստանի Հանրապետությունում 2005-2006 թթ. ընթացքում դատական վարույթների մշտադիտարկման արդյունքները*]:

²¹⁰ ԵԱՀԿ ԺՎՄԻԳ, *Դատական վարույթների մշտադիտարկումը: Կողմնորոշիչ ձեռնարկ պրակտիկ աշխատողների համար*, Վարշավա 2008: Փաստաթղթի վերանայված

7.5.3. Բանտային համակարգի հաշվետվողականությունը և վերահսկողությունը

«Բանտային համակարգում պետք է գոյություն ունենան տեսչական ստուգման անկախ մեխանիզմներ: Մի շարք պետություններում բանտային տեսչության ղեկավարի պաշտոնն զբաղեցնող անձը դատավոր է: Որոշ պետություններում բանտեր այցելող դիտորդների կառույցին թույլատրվում է պարբերաբար այցելել բանտեր և տեսչական ստուգումներ իրականացնել: Խորհրդատուները պետք է բանտերի ղեկավարության հետ քննարկեն նման մեխանիզմների օգտակարությունը և հնարավոր կարևոր դերակատարումը՝ բանտային բարեփոխումները ջատագովելու և ընդհանուր առմամբ բանտային պայմանների բարելավման ծրագրերն առաջ մղելու տեսանկյունից: Բանտերի կանոնավոր տեսչական ստուգումների պահանջը նախատեսված է Միավորված ազգերի կազմակերպության Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններով (55-րդ կանոն)»²¹¹: «Բանտերի տեսչական ստուգումները հույժ կարևոր են բանտարկյալների կենցաղային պայմանները բարելավելու, մասնավորապես՝ բռնությունը կանխելու և կոռուպցիան նվազեցնելու տեսանկյունից, հատկապես հաշվի առնելով, որ նշված երկու երևույթները հավանաբար լայն տարածում ունեն հավամարտություններ վերապրած պետություններում»:

7.5.4. Անվտանգության ոլորտում ծառայություններ մատուցող ոչ պետական սուբյեկտների հաշվետվողականությունը և վերահսկողությունը

Անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունների հաշվետվողականությունը կարելի է խստացնել արտոնագրման հա-

տարբերակը հրատարակվել է 2012 թվականին. տե՛ս էջատակի 208-րդ ծանոթագրությունը: Ավելին, 2012 թվականին ԺՀՄԻԳ-ը հրատարակել է «Legal Digest of International Fair Trial Rights» (Արդար դատաքննության իրավունքի միջազգային կարգավորումները. իրավական հավաքածու) հավաքածուն ի լրումն կողմնորոշիչ ձեռնարկին: Իրավական հավաքածուի մեջ համապարփակ կերպով նկարագրված են արդար դատաքննության իրավունքները: Ներկայացված են ԵԱՀԿ-ի կողմից դատական վարույթների մշտադիտարկման աշխատանքների փորձի վրա հիմնված՝ գործնական ստուգաթերթեր: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս OSCE ODIHR, *Legal Digest of International Fair Trial*, Warsaw 2012 [ԵԱՀԿ ԺՀՄԻԳ, *Արդար դատաքննության իրավունքի միջազգային կարգավորումները. իրավական հավաքածու*, Վարշավա, 2012 թ.]:

²¹¹ UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), p. 101 [ՄԱԿԹՀՊԳ/ԱՄՆԽԻ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 101]:

մակարգերի և ոստիկանության կողմից նրանց գործունեության վերահսկողության միջոցով²¹²:

Պետությունները կարող են նաև «դիտարկել անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունների վերահսկողության գործում համապատասխան ՅԿ-ների ներգրավումը խրախուսելու նպատակահարմարությունը, մասնավորապես՝ անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունների աշխատողների և սուբյեկտների կողմից հնարավոր չարաշահումները բացահայտելու և կանխելու հարցում...: Որևէ կերպ չբացառելով քրեական արդարադատության համակարգի սովորական ընթացակարգերի գործողությունը՝ պետությունները կարող են անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայություններում աշխատող անձանց կամ նման ծառայություններ մատուցողների նկատմամբ կիրառել վերջիններիս դեմ ներկայացվող բողոքների ընդունման և քննության հատուկ ընթացակարգեր: Այդ առումով, պետությունները կարող են դիտարկել հետևյալ միջոցառումների նպատակահարմարությունը.

- ա) Ստեղծել անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայություններում աշխատող անձանց կամ նման մասնավոր ծառայություններ մատուցողների դեմ տարբեր անձանցից ստացված բողոքների անկողմնակալ քննության մեխանիզմներ:
- բ) Սահմանել նման մեխանիզմների կողմից քննվող բողոքների տեսակները:
- գ) Առավել ծանր խախտումների վերաբերյալ բողոքների դեպքում անկողմնակալ մարմնի ներգրավմամբ պարզել նրանց մեղավորությունը և կիրառվելիք պատիժները և ստեղծել այդ որոշումների վերանայման/բողոքարկման պատշաճ ընթացակարգեր:
- դ) Հրապարակել տեղեկություններ նման մեխանիզմների և ընթացակարգերի գոյության մասին:
- ե) Երաշխավորել ծանր խախտումների դեպքում քրեական հետապնդման իրականացումը քրեական արդարադատության համակարգում...²¹³:

²¹² Հանձնատ. UNODC, *Civilian Private Security Services* (op. cit. note 13), p. 7 [ՄԱԿԶՀՊԳ, *Անվտանգության քաղաքացիական մասնավոր ծառայությունները* (տե՛ս էջատակի 13-րդ ծանոթագրությունը), էջ 7], և England, *Security Sector Governance and Oversight* (op.cit. note 196), p. 25 [Ինգլանդ, *Անվտանգության ոլորտի կառավարումը և վերահսկողությունը* (տե՛ս էջատակի 196-րդ ծանոթագրությունը), էջ 25]:

7.5.5. Արդարադատության ոլորտում ծառայություններ մատուցող սովորութային/ոչ պետական սուբյեկտների հաշվետվողականությունը և վերահսկողությունը

Արդարադատության ոլորտում ծառայություններ մատուցող սովորութային/ոչ պետական սուբյեկտների հաշվետվողականությունը և վերահսկողությունը պետք է ապահովի արդարադատության նախարարությունը: Դա իրագործվում է՝ մշակելով նրանց որոշումներն արձանագրելու և նախարարությունում գրանցելու ընթացակարգեր, երաշխավորելով արդարադատության ոլորտում ծառայություններ մատուցող սովորութային/ոչ պետական սուբյեկտների որոշումների՝ օրենքի ուժով ստեղծված դատարաններում բողոքարկելու, ինչպես նաև ազգային օրենսդրության և մարդու իրավունքների միջազգային կոնվենցիաներին այդ որոշումների համապատասխանությունը վերանայելու հնարավորությունները²¹⁴:

Ավելին, պետք է ստեղծել մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ, որոնք կապահովեն իրավաբանական օգնություն տրամադրող ոչ պետական ծառայությունների որակը²¹⁵:

7.5.6. ԶԱՀ-ի կառույցների հարաբերությունների հաշվետվողականությունը և վերահսկողությունը

Ինչպես նշվեց, դատական իշխանությունը պարտավոր է գնահատել, թե արդյոք ԶԱՀ-ի տարբեր կառույցները պատշաճ կերպով կատարում են իրենց գործունեությունը կարգավորող իրավական դրույթների պահանջները, այսինքն՝ իրենց գործառույթները, պարտականությունները և պարտավորությունները: Ոստիկանությունը պարտավոր է կատարել անձանց ձերբակալելու կամ ազատ արձակելու մասին դատարանների

²¹³ UNODC, *Report on the Meeting of the Expert Group on Security Services* (op. cit. note 142), pp. 4-6 [ՄԱԿԹՀՊԳ, *Անվտանգության ծառայությունների հարցերով փորձագիտական խմբի ժողովի զեկույցը* (տե՛ս՝ էջատակի 142-րդ ծանոթագրությունը), էջեր 4-6:

²¹⁴ Համեմատ. England, *Management of the Security Sector: A Note on Current Practice*, Henry L. Stimson Center, Washington D.C., 12 December 2009, p. 5 [Ինգլանդ, *Անվտանգության ոլորտի ղեկավարումը. տեղեկանք ընթացիկ գործելակերպի վերաբերյալ*, Հենրի Լ. Սթիմսոնի անվ. կենտրոն, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 12-ը դեկտեմբերի, 2009 թ., էջ 5]:

²¹⁵ United Nations, *United Nations Principles and Guidelines on Access to Legal Aid in Criminal Justice Systems* (op.cit. note 81), Para 70 (c), p. 20 [Միավորված ազգերի կազմակերպություն, *Միավորված ազգերի կազմակերպության սկզբունքները և ուղենիշները քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության հասանելիության մասին* (տե՛ս՝ էջատակի 81-րդ ծանոթագրությունը), պարբ. 70 (գ), էջ 20]:

կարգադրությունները: Քննչական որոշ գործողություններ կատարելու համար ոստիկանությունը պարտավոր է նախապես միջնորդել և ստանալ քննության դատավորի թույլտվությունը:

Բացի դրանից՝ «ուժային կառույցների չարաշահումների և խախտումների համար իրավական հաշվետվողականության ապահովման առաջնային մեխանիզմը դատական իշխանությունն է: Վերջինս պետք է քննի և լուծի անվտանգության ծառայությունների և դրանցում աշխատող անձանց դեմ ներկայացված բողոքները, պաշտպանի մարդու իրավունքները, պահպանի իրավունքի գերակայությունը, մշտադիտարկի անվտանգության ծառայությունների հատուկ իրավասությունների իրականացումը, գնահատի սահմանադրականությունը, ապահովի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների գործողությունը և վերանայի անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցողների գործունեությունը քրեական հետապնդման համատեքստում»²¹⁶: Եթե քննվող քրեական գործով (կամ քաղաքացիաիրավական վարույթով) «անցնում» է ոստիկանությունը, ապա անհրաժեշտ է ունենալ որոշակի մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն, որ սովորական քրեական վարույթների շրջանակում ոստիկանության և դատախազության ընթացիկ և սերտ աշխատանքային հարաբերությունները չսասանեն ոստիկանական չարաշահումները քննող դատախազի անկախությունը և անկողմնակալությունը²¹⁷:

Բնականաբար, պետք է գոյություն ունենան նաև դատական իշխանության բարեվարքության երաշխավորման մեխանիզմներ²¹⁸:

²¹⁶ England, *Security Sector Governance and Oversight* (op.cit. note 196), p. 24 [Ինգլանդ, *Անվտանգության ոլորտի կառավարումը և վերահսկողությունը* (տե՛ս էջատակի 196-րդ ծանոթագրությունը), էջ 24], տե՛ս նաև

OECD, *OECD DAC Handbook on Security System Reform* (op.cit. note 28), p. 113 [ՏՀԶԿ, *ՏՀԶԿ ԶԱՀ-ի ուղեցույցն անվտանգության ոլորտի բարեփոխումների համար* (տե՛ս էջատակի 28-րդ ծանոթագրությունը), էջ 113]:

²¹⁷ Համեմատ. UNODC, *Handbook on Police Accountability, Oversight and Integrity* (op.cit. note 196), p. 99 [ՄԱԿԸՀՊԳ, «Ոստիկանության հաշվետու գործելակերպի, վերահսկողության և բարեվարքության ձեռնարկ» (տե՛ս էջատակի 196-րդ ծանոթագրությունը), էջ 99], և

Wisler, Dominique, *Police Governance: European Union Best Practices*, DCAF, COGINTA, 2011, p. 32 [Ռոմինիկ Վիսլեր, *Ոստիկանության կառավարումը. Եվրոպական միության լավագույն փորձը*, ԶՈՒԺԿ, COGINTA, 2011 թ., էջ 32]:

²¹⁸ Այդ մեխանիզմները պետք է համապատասխանեն, ի թիվս այլոց, հետևյալ փաստաթղթերին. «The United Nations *Bangalore Principles of Judicial Conduct*» [Միավորված ազգերի կազմակերպության *Դատավորի վարքագծի բանգալորյան սկզբունքներ*], «The United Nations *Guidelines on the Role of Prosecutors*» [Միավորված ազգերի կազմակերպության *Ուղենիշնները դատախազի դերի վերաբերյալ*] և «United Nations *Basic Principles on the Independence of the Judiciary*»

Ի վերջո, ԶԱՀ-ում պետք է բացառել ԶԱՀ-ի կառույցների ընթացիկ աշխատանքների մեջ քաղաքական միջամտություններ կատարելու փորձերը: Քաղաքական միջամտությունը կարող է ընդունելի լինել միմիայն ԶԱՀ-ի բարձրագույն պաշտոնատար անձանց նշանակման առումով:

Կատարողականի գնահատումը

ԶԱՀ-ի հաշվետվողականության երաշխավորման միջոցներից է ԶԱՀ-ի աշխատանքային կատարողականի թափանցիկ գնահատումը: ԶԱՀ-ի տարբեր կառույցների կատարողականի գնահատման ցուցանիշներ կարող են լինել որակական այնպիսի տվյալներ, ինչպիսիք են մատուցվող ծառայությունների որակի մասին հանրության կարծիքը, անվտանգության և արդարադատության հասանելիությունը, ԶԱՀ-ի կառույցների նկատմամբ հանրության վստահության մակարդակը և զոհայնացման հետազոտությունների արդյունքներով ստացված տվյալները: Հանրային կարծիքի հետազոտություններ իրականացնելիս կարևոր է չմոռանալ մարգինալացված անձանց, քանի որ անհամաչափ զոհայնացման պարագայում հենց նրանց առջև են ծառանում արդարադատության հասանելիության լրջագույն խոչընդոտները²¹⁹: Հանցագործությունների մասին հաղորդումների և մեղադրական դատավճիռների տոկոսային մասնաբաժնի վերաբերյալ քանակական տվյալների արժանահավատությունը և վավերականությունը հաճախ կասկածի տակ են հայտնվում²²⁰, ուստի դրանք չպետք է օգտագործել որպես

[Միավորված ազգերի կազմակերպության *Ղատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքները*]:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս նաև UNODC, *Resource Guide on Strengthening Judicial Integrity and Capacity*, New York 2011 [ՄԱԿԹՀՊԳ, *Ղատական իշխանության բարեկարգության ամրապնդման և կարողությունների զարգացման տեղեկատվական ուղեցույց*, Նյու Յորք, 2011 թ.]:

²¹⁹ Համեմատ. United Nations, *The United Nations Rule of Law Indicators. Implementation Guide and Project Tools*, DPKO/OHCHR, New York 2011, pp. 3f [Միավորված ազգերի կազմակերպություն, *Միավորված ազգերի կազմակերպության իրավունքի գերակայության ցուցիչները: Գործնական ուղեցույց և ծրագրային գործիքներ*, ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների վարչություն / Սարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Նյու Յորք, 2011 թ., էջ 3 և շարունակ.]:

²²⁰ Օրինակ, հանցավորության ցածր ցուցանիշների պատճառը կարող է լինել հանրության կողմից հանցագործության մասին հաղորդումներ չներկայացնելը՝ պայմանավորված ՔԱՀ-ի պատշաճ արձագանքի առումով ցածր ակնկալիքներով, մինչդեռ հանցավորության ցուցանիշների աճը կարող է պայմանավորված լինել ՔԱՀ-ի նկատմամբ բարձր վստահության պայմաններում հանցագործությունների մասին հաղորդումներ ներկայացնելու հանրության պատրաստակամության աճով: Ավելին, դատապարտման բարձր ցուցանիշները կարող են պայմանավորված լինել խոշտանգումների միջոցով ստացված ինքնախոստովանական ցուցմունքների վրա կայացված մեղադրական դատավճիռներով:

ԶԱՅ-ի աշխատանքային կատարողականի գնահատման հիմնական ցուցանիշներ:

Ինչ վերաբերում է ԶԱՅ-ի բարեփոխումների համապարփակ մոտեցմանը, ապա ԶԱՅ-ի տարբեր կառույցների միջև հարաբերությունների գնահատման արդյունավետ մեթոդ կարող է լինել կատարողականի գնահատման միասնական չափորոշիչների և արդյունքի չափման միավորների մշակումն օրենքով նախատեսված քրեական հետապնդման գործընթացի շրջանակում²²¹: Եթե գործերի վարման համակարգն ի գործ է տվյալներ տրամադրելու դատական քննության «սպասող» գործերի թվի, քննված գործերի թվի և քննության արդյունքների վերաբերյալ, ապա հնարավոր է դառնում բացահայտել քրեական արդարադատության գործընթացում առկա խուլերը և աշխատանքային պատասխանատվություն պահանջել ԶԱՅ-ի տարբեր ոլորտներում գործող առանձին սուբյեկտներից (տե՛ս նաև 7.1.2. ենթագլուխը)²²²: Այնուամենայնիվ, վիճակագրությունը չափից ավելի կարևորելը կրկին հղի է բացասական հետևանքներով քրեական արդարադատության ողջ գործընթացի համար: Օրինակ՝ դատախազության աշխատանքը գնահատելիս կիրառվող «մաշվածության» ցուցանիշը, որը վերաբերում է արդարացման դատավճիռների թվին կամ գործերի կարճման կամ մեղադրանքի դադարեցման դեպքերի թվին, կարող է դատախազությանը դրդել՝ ուստիկանությունից պահանջելու անհրաժեշտ չափից շատ ապացույցներ, ինչը կհանգեցնի փաստաթղթային աշխատանքի ծավալների ավելացմանը և մեղադրանքի ներկայացման ձգձգումների կամ ձախողումների: Խուսափելով այդ ռիսկերից՝ դատախազությունը կարող է նաև փաստացի հակասություններ ունենալ ուստիկանության հետ²²³: Բացի դրանից՝ ապացույցների անբավարարության հիմքով կամ քրեական հետապնդման փոխարեն այլընտրանք կիրառելու հիմքով (օրինակ՝ արտադատական ծրագրեր կամ միջնորդական գործընթացներ, տե՛ս նաև 7.3. ենթագլուխը) քրեական հետապնդման կարճումը չպետք է ինքնաբերաբար համարվի դատախազության մասնա-

²²¹ Համեմատ. Berry, *Reducing Bureaucracy in Policing* (op.cit. note 105), p. 15 [Բերրի, *Բյուրոկրատիայի կրճատումը ուստիկանական գործունեության մեջ* (տե՛ս էջատակի 105-րդ ծանոթագրությունը), էջ 15]:

²²² Համեմատ. USAID Office of Inspector General, *Audit of USAID/Haiti's Justice Program* (op.cit. note 116), pp. 9f [ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության գլխավոր տեսչի գրասենյակ, ԱՄՆ ՄԶԳ-ի Հայիթիի արդարադատության ծրագրի աուդիտը (տե՛ս էջատակի 116-րդ ծանոթագրությունը), էջ 9 և շարունակ.]:

²²³ Համեմատ. Cp. Flanagan, Sir Ronnie, *The Review of Policing. Final Report*, 2008, p. 60 [Սիր Ռոնի Ֆլենեգեն, *Ուստիկանական գործունեության վերլուծությունը: Ավարտական զեկույց*, 2008 թ., էջ 60]:

գիտական ձախողումը և ինքնաբերաբար էլ բացասաբար ազդի դատախազի կատարողականի գնահատականի վրա²²⁴:

ԶԱՅ-ի կատարողականի գնահատման մեխանիզմի օրինակ

Միավորված ազգերի կազմակերպության «իրավունքի գերակայության» ցուցիչները

Միավորված ազգերի կազմակերպությունը 2011 թվականին հրապարակեց *Միավորված ազգերի կազմակերպության իրավունքի գերակայության ցուցիչները*²²⁵՝ դրանք ներկայացնելով որպես քրեական արդարադատության ազգային կառույցների գործունեության և առանձնահատկությունների փոփոխությունները դիտարկելու գործիք: Ուղենշային այս համապարփակ փաստաթղթում սահմանված են ԶԱՅ-ի երեք կառույցներում՝ ոստիկանությունում, դատական համակարգում և բանտերում, տեղի ունեցող փոփոխությունների գնահատման 135 ցուցիչներ: ԶԱՅ-ի նշված երեք կառույցների կատարողականից զատ՝ ուղենիշները ցուցիչներ են պարունակում նաև այնպիսի գործոններ գնահատելու համար, ինչպիսիք են ԶԱՅ-ի կառույցների բարեվարքությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը, ԶԱՅ-ի կառույցների վերաբերմունքը խոցելի խմբերի ներկայացուցիչների նկատմամբ և ԶԱՅ-ի կառույցների կողմից իրենց գործառույթները կատարելու կարողությունների մակարդակը: Ուղենիշները նաև տեղեկություններ են պարունակում գնահատումների իրականացման մեթոդների մասին: Չտեղված են հետազոտությունների իրականացման համար օգտագործվող որոշ ձևաթղթեր²²⁵:

²²⁴ Համեմատ. OSCE ODIHR, *III Expert Forum on Criminal Justice for Central Asia* (op.cit. note 164), pp. 9 and 22 [ԵԱՀԿ ԺՀՄԻԳ, *Քրեական արդարադատության հարցերով Կենտրոնական Ասիայի փորձագետների III ժողովը* (տե՛ս էջատակի 164-րդ ծանոթագրությունը), էջեր 9 և 22]:

²²⁵ Համեմատ. United Nations, *The United Nations Rule of Law Indicators. Implementation Guide and Project Tools* (op. cit.note 219) [Միավորված ազգերի կազմակերպություն, *Միավորված ազգերի կազմակերպության իրավունքի գերակայության ցուցիչները: Գործնական ուղեցույց և ծրագրային գործիքներ* (տե՛ս էջատակի 219-րդ ծանոթագրությունը)]: Թեպետ այս 135 ցուցիչներն օգտակար և կարևոր են ԶԱՅ-ի երեք հիմնական հաստատությունների աշխատանքը և առանձնահատկությունները գնահատելու տեսանկյունից, դրանք չեն անդրադառնում ԶԱՅ-ի երեք հաստատությունների միջև հարաբերություններին և չեն բացահայտում քրեական արդարադատության գործընթացում փաստացի առկա խոչընդոտները:

7.6. Մշակույթի փոփոխությունները ԶԱՀ-ում

Կառավարչական և գործառնական հարթություններում նոր օրենքներին, քաղաքականությանը և կանոնակարգերին համահունչ իրականացվող կառուցվածքային և կազմակերպական բոլոր փոփոխությունները մեծ արդյունք չեն ունենա, եթե չկա ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև համագործակցության և համակարգման *մշակույթ*²²⁶:

Շատ պետություններում, հատկապես՝ հակամարտություններ վերապրած հասարակություններում և անցումային պետություններում խոր անվստահություն կա ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև, որի պատճառներից են ԶԱՀ-ի այլ կառույցների գործառնականների, պարտավորությունների և կարիքների ոչ բավարար ընկալումը և գնահատումը²²⁷, օրենքի և կարգուկանոնի էության վերաբերյալ տարբեր պատկերացումները²²⁸ և միմյանց ոչ արհեստավարժ, խնդիրներին բավարար չափով չարձագանքող, անգամ կոռումպացված համարելու փաստը²²⁹:

Եթե համագործակցությունը և համակարգումը խորացնելու մասին խնդրանքը կասկածի տակ է առնում ԶԱՀ-ի տարբեր կառույցների միջև ձևավորված ուժերի հարաբերակցությունը, ապա անհրաժեշտ է ակնկալել, որ «տանուլ տվող» կողմը դիմադրելու է: Ոստիկանները կամ դատախազները նույնպես կարող են դժկամություն դրսևորել փոփոխություններն ընդունելու հարցում, հատկապես եթե քննությունը կատարելու պարտավորությունները մեկ կառույցից փոխանցվում են մյուսին:

²²⁶ «DCAF Toolkit on Police Integrity» (ՁՈՒԺԿ Ոստիկանության բարեվարքության գործիքակազմ) ծեռնարկում զետեղված սահմանմանը համահունչ մշակույթը պետք է այստեղ բնորոշել որպես «մարդկանց որոշակի խմբի հիմնարար ենթադրությունների (արժեքների, հիմնարար սկզբունքների) ընդհանուր օրինաչափությունները, որոնք այդ մարդիկ ձևավորել են փորձելով տիրապետել արտաքին աշխարհին հարմարվելու և սեփական աշխարհին ինտեգրվելու խնդիրների լուծումներին», DCAF, *Toolkit on Police Integrity*, Geneva 2012, p. 59 [ՁՈՒԺԿ, Ոստիկանության բարեվարքության գործիքակազմ, Ժնև, 2012 թ., էջ 59]:

²²⁷ Համեմատ. Centre for International Governance Innovation, *Afghanistan, Security Sector Reform Monitor*, No.4, September 2010, p.12 [Միջազգային կառավարման նորարարության կենտրոն, *Աֆղանստանի անվտանգության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկումը*, թիվ 4, 2010 թվականի սեպտեմբեր, էջ 12]:

²²⁸ Համեմատ. Downes, Mark/Keane, Rory, *Security-Sector Reform Applied: Nine Ways to Move from Policy to Implementation*, International Peace Institute, Policy Papers, New York/Vienna, February 2012, p. 6 [Մարկ Դոունզ / Ռորի Քին, *Անվտանգության ոլորտի բարեփոխումների կիրառությունը. քաղաքականությունից իրագործման անցնելու 9 ուղիները*, Խաղաղության միջազգային ինստիտուտ, քաղաքականության փաստաթղթեր, Նյու Յորք / Վիեննա, 2012 թվականի փետրվար, էջ 6]:

²²⁹ Համեմատ. Centre for International Governance Innovation, *Afghanistan* (op.cit. note 227), p. 12 [Միջազգային կառավարման նորարարության կենտրոն, *Աֆղանստան* (տե՛ս էջատակի 227-րդ ծանոթագրությունը), էջ 12]:

Ավելին, դատարանների և ՔԱՀ-ի այլ կառույցների միջև համագործակցության և համակարգման ոգու ամրապնդումը հաճախ խոչընդոտվում է իշխանությունների տարանջատման ուսմունքի այն մեկնաբանությամբ, որում շեշտադրվում են գործադիր իշխանությունից դատական իշխանության անկախության մասին պնդումները²³⁰:

ՔԱՀ-ի կառույցների աշխատանքային մշակույթի փոփոխությունը պետք է վերաբերի ոչ միայն ՔԱՀ-ի ներսում համագործակցության նկատմամբ առկա դիրքորոշումներին, այլև հանրության հետ շփումներին: Թեպետ ոստիկանական կառույցները հաճախ հրապարակավ ջատագովում են ոստիկանության և հանրության գործընկերության գաղափարը՝ կիրառելով համայնքային ոստիկանության հռետորաբանությունը, «այդ շփումներն իրականության մեջ ոչ սիմետրիկ են, իսկ ոստիկանությունը գործում է ոչ թե հանրության ներգրավման, այլ հասարակայնության հետ կապերի դիրքերից»²³¹: Այնուամենայնիվ, որպեսզի հնարավոր լինի հանրությանը քաջալերել՝ պատասխանատվություն ստանձնելու համայնքի կենսամակարդակը բարձրացնելու համար, և որպեսզի հանրությունը ցանկանա ակտիվորեն օժանդակել ոստիկանությանը հանցավորության կանխարգելման և հանցավորության դեմ պայքարի ջանքերում, ոստիկանությունը պետք է ձգտի իսկական գործընկերություն կերտել հանրության հետ, որը կբնորոշվի գործընկերների հավասարությամբ և միմյանց կարիքներին արձագանքելու պատրաստակամությամբ (տե՛ս նաև 7.3. ենթագլուխը): Հետևաբար ոստիկանությունը պետք է հանրության հետ համաձայնեցնի փոխադարձ երկխոսությունը՝ հիմքում ունենալով գիտելիքների փոխանակումը և որոշումները կայացնելու և առաջնահերթությունները որոշելու իրավունքների հավասարությունը՝ այնքանով, որքանով հավասարությունը ողջամտության սահմաններում թույլատրվում է ազգային օրենքներով և գործառնական կարիքներով²³²: Հանրությանը որպես հավասար գործընկեր ընդունելու պատրաստակամությունը կախված է նաև ոստիկանների և քրեական արդարադատության այլ սուբյեկտների մտածելակերպից և դիրքորո-

²³⁰ Համեմատ. Berry, *Criminal Justice Units and Case Building* (op.cit. note 100), p. 1 [Յան Բերրի, *Քրեական արդարադատության ստորաբաժանումները և գործերի կազմումը* (տե՛ս էջատակի 100-րդ ծանոթագրությունը), էջ 1]:

²³¹ Greene, Jack R., *Policing through Human Rights*, Ideas in American Policing, Police Foundation, No.13, December 2010, p. 14 [Ջեյք Ռ. Գրին, *Ոստիկանական գործունեությունը մարդու իրավունքների միջոցով*, Ամերիկյան ոստիկանության գործունեության գաղափարներից, Ոստիկանության հիմնադրամ, թիվ 13, 2010 թվականի դեկտեմբեր, էջ 14]:

²³² Համեմատ. OSCE, *Good Practices in Building Police-Public Partnerships* (op.cit. note 86), pp. 22, 54 and 65 [ԵԱՀԿ, *Ոստիկանության և հասարակության միջև գործընկերության ձևավորման լավագույն փորձը* (տե՛ս էջատակի 86-րդ ծանոթագրությունը), էջեր 22, 54 և 65]:

շումներից, մասնավորապես՝ նրանք չպետք է չափազանց սուր արձագանքեն ԶԱՀ-ի գործունեության վերաբերյալ հանրության քննադատությանը²³³ և պետք է առավել լիարժեքորեն ներդնեն ժողովրդավարական ուստիկանության գործունեությունը բնորոշող՝ հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքները: Հանրության քննադատության պատճառները կնվազեն, եթե աշխատանքային մշակույթի փոփոխությանն ուղղված բոլոր ծրագրերում ընդգծվի նաև քաղաքացիների և ուստիկանների՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը և պահպանումը:

ԶԱՀ-ի կառույցների աշխատանքային մշակույթը փոխելը, սակայն, կարող է լուրջ մարտահրավերներ առաջացնել: ԶԱՀ-ի կառույցներն ընդհանուր առմամբ ի վերուստ պահպանողական են: Ավելին, ԶԱՀ-ում աշխատողների հասարակական դերերը, կազմակերպական մեխանիզմները և աշխատանքային մոտեցումները կարող են այնքան խոր արմատներ ունենալ, որ դժվար լինի դրանք փոխելը²³⁴:

Ուստի ԶԱՀ-ի տարբեր կառույցների աշխատանքային մշակույթը փոխելու համար անհրաժեշտ են փոփոխությունների գործընթացի կառավարման պատշաճ մոտեցումներ, որոնցում հաշվի կառնվեն փոփոխությունների նկատմամբ անհատներից և կազմակերպություններից սպասվող անխուսափելի դիմադրությունը, փոփոխություններն առաջ մղող ուժերի առանձնացումը և նրանց ցուցաբերվող օժանդակությունը, ինչպես նաև խանգարողների զսպումը, ԶԱՀ-ի մակարդակով փոփոխությունների անհրաժեշտության, բոլոր շահակիցների համար դրանց արդյունքում սպասվող օգուտների և փոփոխությունների իրականացման գործում ԶԱՀ-ի տարբեր սուբյեկտների դերի բացատրությունը: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նաև հաստատել գործառ-

²³³ Հանձնառ. Greene, *Policing through Human Rights* (op.cit. note 231), p. 14 [Գրին, *Ոստիկանական գործունեությունը մարդու իրավունքների միջոցով* (տե՛ս էջատակի 231-րդ ծանոթագրությունը), էջ 14]:

²³⁴ Հանձնառ. UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), p. 73 [ՄԱԿԹՀՊԳ/ԱՄՆՍԻ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերադարձ պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 73], Marenin, Otwin, "The goal of democracy in international police assistance programs", *Policing: An International Journal of Police Strategies & Management*, Vol. 21 Iss: 1 1998, pp.159-177, here p. 160 [Օտվին Մարենին, «ժողովրդավարության նպատակը ուստիկանության աջակցման միջազգային ծրագրերում», Ոստիկանական գործունեությունը. Ոստիկանության ռազմավարությունների և կառավարման միջազգային ամսագիր, հ. 21, թող. 1, 1998 թ., էջեր 159-177, այստեղ՝ էջ 160], և UNDP, *Justice and Security Sector Reform. BCPR's Programmatic Approach*, November 2002, pp. 16f [ՄԱԿԶԾ, *Արդարադատությունը և անվտանգության ոլորտի բարեփոխումները: Ըզնաժամերի կանխարգելման և վերականգնման ծրագրի հայեցակարգային մոտեցումը*, 2002 թվականի նոյեմբեր, էջ 16 և շարունակ.]:

նական ստանդարտ ընթացակարգեր (ԳՍԸ-ներ) և համապատասխան անձանց վերապատրաստել դրանց կիրառության ուղղությամբ²³⁵:

Աշխատանքային մշակույթը փոխելու համար անհրաժեշտ է նաև ԶԱՀ-ի կառույցների միջև արդյունավետ և զորեղ դաշինք, որն առաջ կմղի փոփոխությունները, հստակորեն կշարադրի տեսլականը և կառաջացնի հրատապության զգացում:

Ոստիկանության համակարգում մշակույթի փոփոխությունների գործընթացի կառավարման օրինակ

Մշակույթի փոփոխությունները Սերբիայի ոստիկանությունում

Սերբիայի ներքին գործերի նախարարության զարգացման նոր ռազմավարությամբ, որը հաստատվել է 2011 թվականին, ուղղակիորեն նշվում է, մասնավորապես, կազմակերպական և կառավարչական հետևյալ փոփոխությունների կատարումը.

- ռազմավարական կառավարման և մարդկային ռեսուրսների կառավարման նոր մոտեցումներ,
- պետական սուբյեկտների, մասնավորապես՝ դատախազների և մաքսավորների, ինչպես նաև անվտանգության ոլորտում ծառայություններ մատուցող մասնավոր սուբյեկտների և քաղաքացիական հասարակության հետ գործընկերության նոր մոտեցումներ,
- Համայնքային ոստիկանության գործելաճի ամրապնդում,
- Թափանցիկության, ներքին հսկողության և աուդիտի, ինչպես նաև քաղաքացիական վերահսկողության արդյունավետ համակարգերի ներդրում:

Սահմանված հավակնոտ նպատակներին հասնելու համար նախարարների խորհուրդը, մասնավորապես՝ Ռազմավարական պլանավորման բյուրոն, նախաձեռնել է նախարարության կազմակերպական մշակույթը փոփոխելու գործընթաց: ԵԱՀԿ-ի, ՉՈՒԺԿ-ի, Շվեդիայի և

²³⁵ Հանձնառ. UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), p. 30f and 50 [ՄԱԿԹՀՊԳ/ԱՄՆՍԻ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապրած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջեր 30 և շարունակ, էջ 50], և OECD, *OECD DAC Handbook on Security System Reform* (op.cit. note 28), p. 82 [ՏՀԶԿ, *ՏՀԶԿ ԶԱՀ-ի ուղեցույցն անվտանգության ոլորտի բարեփոխումների համար* (տե՛ս էջատակի 28-րդ ծանոթագրությունը), էջ 82]:

Միացյալ Թագավորությունների կառավարությունների հետ գործընկերության շրջանակներում մի շարք ծրագրեր են իրականացվում՝ ռազմավարական կառավարման, հորիզոնական հաղորդակցության և մարդկային ռեսուրսների կառավարման բնագավառներում, որոնք բոլորը նպատակաուղղված են բարեփոխումների համար անհրաժեշտ նորմատիվային և մշակութային դաշտի ձևավորմանը:

ԶԱՅ-ի տարբեր կառույցների ղեկավարների միջև համագործակցության և համակարգման՝ ներառյալ աշխատողների դիրքորոշումների և վարքագծի կարևորության վրա հիմնված աշխատանքային նոր մշակույթը կարող է արդյունավետ լինել միայն ամօրյա կյանքի անբաժանելի մասը դառնալու և ողջ ԶԱՅ-ի կողմից որպես հիմնարար արժեք ճանաչվելու դեպքում: Դրան հասնելու համար ղեկավարները պետք է առաջնորդեն սեփական օրինակով²³⁶:

7.7. Վերապատրաստումը և մասնագիտական զարգացումը

Ինչպես արդեն նշվել է, ԶԱՅ-ի տարբեր կառույցների միջև համագործակցությունը և համակարգում բարելավելու նպատակով իրականացվող կառուցվածքային և կազմակերպական բարեփոխումները մնալուն արդյունք կունենան միայն այն դեպքում, եթե դրանց զուգահեռ իրականացվում են ԶԱՅ-ի տարբեր կառույցների ներքին աշխատանքային մշակույթի փոփոխության միջոցառումներ: Մշակույթը (ներառյալ ԶԱՅ-ում աշխատող անձանց դիրքորոշումները և վարքը) փոխելու համար անհրաժեշտ է քաղաքականության, վարքագծի կանոնադրերի և ԳՍԸ-ների ներդրումը և ղեկավարության կողմից համապատասխան արժեքների կանոնավոր և հետևողական ձևակերպումը համադրել նախաաշխատանքային և աշխատանքի ընթացքում կազմակերպվող շարունակական վերապատրաստմամբ և մասնագիտական զարգացման ծրագրերով: Մասնագիտական զարգացման գործընթացում վերադասները կարող են աշխատողներին պատրաստելու, խրախուսե-

²³⁶ Համեմատ. Coxhead, John, *Improving Performance in Race and Diversity*, Lambard Academic Publishing, 2009, Chapter 6 [Զոն Կոքսհեդ, *Ուսայի և բազմազանության հետ կապված հարցերում աշխատանքի արդյունավետության բարձրացումը*, Lambard Academic Publishing, 2009 թ., 6-րդ գլուխ]:

լու, պարզևատրելու և կարգապահական տույժերի ենթարկելու միջոցով ամրապնդել և մնայուն դարձնել փոփոխություններն աշխատողների շրջանում՝ երաշխավորելով պատշաճ վարքագծի դրսևորումը: Վարքագծի ճշգրտումն աշխատավայրում, այլ ոչ՝ լսարանում հնարավորություն է ընձեռում աշխատողների վարքագծի վրա ազդել իրական կյանքի պայմաններում: Արժեքների և դիրքորոշումների՝ ներառյալ չափահաս անձանց շրջանում հաճախ խորապես արմատացած կարծրատիպերի փոփոխությունները հղի են առանձնահատուկ դժվարություններով, ուստի դրանք իրականացնելու համար անհրաժեշտ են հմուտ վերապատրաստողներ և տևական գործընթացներ²³⁷:

Ինչ վերաբերում է վերապատրաստման ոլորտում ԶԱՐԲ-ի համապարփակ մոտեցումներին, ապա ԶԱՐ-ի պրակտիկ աշխատողներին անհրաժեշտ է գիտելիքներ տրամադրել քրեական դատավարության օրենսգրքերի վերաբերյալ, որոնցով կարգավորվում են ԶԱՐ-ի տարբեր կառույցների գործառույթները, պարտականությունները և պարտավորությունները, ինչպես նաև ԶԱՐ-ի այլ կառույցների գործունեության միջավայրի վերաբերյալ: Դա խիստ կարևոր է ԶԱՐ-ի՝ միմյանց հետ հարաբերվող բոլոր կառույցների կարիքների մասին իրազեկությունը բարձրացնելու տեսակետից, որը կբարձրացնի քրեական արդարադատության գործընթացի արդյունավետությունը և գործունակությունը: Աշխատանքային մշակույթը փոխելու առումով արժեքավոր կարող են լինել նաև վերապատրաստման համատեղ միջոցառումների ընթացքում իրականացվող՝ միջգերատեսչական թիմ ստեղծելու վարժությունները:

Ավելին, որպես ռազմավարական օգտակար մոտեցում, ոստիկաններին և դատախազներին կարելի է կարճ ժամկետով գործուղել քրեական արդարադատության այլ կառույցների քննչական բաժիններ՝ որպես «ուսուցանողների» կամ «այցելող մասնագետների»²³⁸: Լավագույն տարբերակն այն է, երբ ոստիկանության քննիչները և դատախազները բարձրագույն կրթության արդյունքում ստանում են ոստիկանական ծառայությունը և իրավաբանությունը համատեղող կրթական կամ գիտական աստիճան:

²³⁷ Համեմատ. OSCE, *Guidebook on Democratic Policing* (op.cit. note 25), pp. 50 and 57 [ԵԱՀԿ, *Ոստիկանական գործունեության ժողովրդավարական հիմունքների մասին ծեռնարկ* (տե՛ս էջատակի 25-րդ ծանոթագրությունը), էջեր 50 և 57], և OSCE, *Police and Roma and Sinti: Good Practices in Building Trust and Understanding* (op.cit. note 151), pp. 80-84 [ԵԱՀԿ, *Ոստիկանությունը և ռոմաները և սինթիները. վստահության և փոխըմբռնման ձևավորումը: Հաջողված փորձի օրինակներ* (տե՛ս էջատակի 151-րդ ծանոթագրությունը), էջեր 80-84]:

²³⁸ Համեմատ. Berry, *Criminal Justice Units and Case Building* (op.cit. note 100), p. 4 [Յան Բերրի, *Քրեական արդարադատության ստորաբաժանումները և գործերի կազմումը* (տե՛ս էջատակի 100-րդ ծանոթագրությունը), էջ 4]:

Ոստիկանական ծառայությունը և իրավաբանական կրթությունը համադրելու օրինակ

Ոստիկանության քննիչների իրավաբանական կրթությունը Բուլղարիայում

Բուլղարիայում բոլոր քննիչները պետք է պարտադիր կերպով ունենան իրավունքի մագիստրոսի աստիճան և քննություն հանձնեն արդարադատության նախարարության հատուկ հանձնաժողովում: Զբեական արդարադատության գործընթացի դատական բաղադրիչի մասին ունեցած գիտելիքների շնորհիվ ոստիկանության քննիչները կարող են իրենց կողմից կատարվող քննչական գործողություններն առավել համապատասխանեցնել դատախազության կարիքներին՝ այդպես էսպես խորացնելով իրենց համագործակցությունը:

Վերապատրաստումները պետք է անդրադառնան նաև անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ ԶԱՀ-ի համագործակցության խորացման պահանջներին: Զբեական արդարադատության գործընթացի շահակիցների շրջանում իրազեկությունը բարձրացնելու համար օգտակար կլինի այդ վերապատրաստումներն իրականացնել խառը կազմ ունեցող խմբերի համար, որոնցում ներառված կլինեն ԶԱՀ-ի տարբեր կառույցների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ու անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների ներկայացուցիչները:

7.7.1. Խորացված համագործակցությունը ԶԱՀ-ի կառույցների միջև

ԶԱՀ-ի կառույցների միջև համագործակցության և համակարգման ամրապնդման նպատակով իրականացվող վերապատրաստումների ընդհանուր/միասնական համալորտային թեմաներ կարող են լինել կառավարիչների և ղեկավարների կատարելագործման ընդհանուր վերապատրաստումները, ինչպես նաև միջգերատեսչական համագործակցության մեթոդները՝ ներառյալ դատարան ուղարկվելիք գործերի կազմումը²³⁹: Վերջինս պետք է ներառի նաև իրավախախտումների և

²³⁹ Համեմատ. Hudzik, John K., “Comprehensive Criminal Justice Planning” (op.cit. note 123), p. 10 [Ձևն 4. Հունիկ, «Զբեական արդարադատության համապարփակ պլանավորումը» (տե՛ս էջատակի 123-րդ ծանոթագրությունը), էջ 10], և

գործերի դասակարգման մասին միասնական պատկերացումների ձևավորումը ոստիկանության քննիչների և դատախազների շրջանում՝ գործերի մասին հաղորդումներ ներկայացնելիս և քրեական գործը պատրաստելիս հնարավոր տարակարծություններից և շեղումներից խուսափելու նպատակով: Ապացույցների հավաքման և գույքի առգրավման, հատկապես՝ ապացույցների գնահատման տարբեր չափորոշիչների կիրառությունը կարող է շփոթություն առաջացնել տվյալների հավաքման գործընթացում և խորացնել կասկածները և թյուրիմացությունը ոստիկանների և դատախազների միջև հարաբերություններում: Ուստի ոստիկանները, դատախազները և դատավորները պետք է վերապատրաստվեն այնպես, որ հասկանան քրեական օրենսդրությամբ նախատեսվող ապացույցման տարրերը՝ որպես հանցագործությունների քրեական հետապնդման անհրաժեշտ նախապայման, և որ քննությունը վարելիս և հավաքված ապացույցները վերլուծելիս ապահովեն այդ տարրերը²⁴⁰:

Խորհուրդ է տրվում հանցագործությունների քննության թեմայով համատեղ մասնագիտացված վերապատրաստումներ իրականացնել քրեական արդարադատության ոլորտում աշխատող այն անձանց համար, ովքեր առնչվում են որոշակի հանցագործությունների, օրինակ՝ սեռական ոտնձգությունների, կենցաղային բռնության, մարդկանց թրաֆիքինգի, անօրինական թմրադեղերի և պրեկուրսորների, տնտեսական հանցագործությունների, ֆինանսական հանցագործությունների՝ ներառյալ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, կոռուպցիայի և կիբերհանցավորության հետ: Ոստիկանության և դատախազության մասնագիտացված ստորաբաժանումները, որոնք պայքարում են հանցագործությունների այնպիսի կոնկրետ տեսակների դեմ, որոնց բնորոշ են իրավական և փաստական յուրահատուկ հիմնախնդիրներ, մասնագիտացված համատեղ վերապատրաստումներ ստանալու դեպքում կարողանում են արդյունավետ և հիմնավոր գործեր կազմել, որոնք հանգեցնում են մեղադրական դատավճիռների կայացմանը և համարժեք պատժի նշանակմանը²⁴¹:

UNDP, *Justice and Security Sector Reform* (op.cit. note 234), p. 23 [ՄԱԿԶԾ, *Արդարադատության և անվտանգության ոլորտի բարեփոխումները* (տե՛ս էջատակի 234-րդ ծանոթագրությունը), էջ 23]:

²⁴⁰ Համեմատ. Moskowitz, *Challenges and Priorities in Prosecuting and Adjudicating Trafficking in Person Cases* (op.cit. note 124), p. 5 [Մոսկովից, *Մարդկանց թրաֆիքինգի գործերի քրեական հետապնդման և դատական լուծման մարտահրավերները և առաջնայնությունները* (տե՛ս էջատակի 124-րդ ծանոթագրությունը), էջ 5]:

²⁴¹ Նույն տեղը, էջ 16:

Վերապատրաստման բնագավառում անհրաժեշտ է սերտ համագործակցություն և համակարգում ապահովել նաև այն դեպքում, երբ քննության պարտավորությունները ԶԱՀ-ի մեկ կառույցից փոխանցվում են մյուսին, օրինակ՝ դատախազությունից ոստիկանությանը: Քննությունը փոխանցող կառույցի քննիչները պետք է իրենց հմտություններով և գիտելիքներով օգնեն քննության գործառույթն ընդունող կառույցի քննիչներին: Դա կարող է ներառել նաև որոշակի ժամանակահատվածի ընթացքում մյուս կառույցում աշխատող գործընկերների համար գործնական պարապմունքների՝ «մարզումների» անցկացումը:

Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետորեն պայքարելու և ՄԱԿԱԿՅԿ-ի և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարին առնչվող այլ կոնվենցիաների (տե՛ս նաև 5.1. ենթագլուխը) դրույթները կյանքի կոչելու համար կարևոր է նաև վերապատրաստման համատեղ ծրագրեր իրականացնել տարբեր պետությունների ԶԱՀ-ի տարբեր կառույցների համար:

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում քննիչների համատեղ մասնագիտացված վերապատրաստումների օրինակներ

Կիբերհանցավորությունը

2008 թվականին Չեռնոգորիայում ԵԱՀԿ առաքելությունն օգնեց Չեռնոգորիայի ոստիկանության տնօրինության քրեական ոստիկանության բաժնի մասնագիտական կատարելագործմանը և կարողությունների զարգացմանը՝ կազմակերպելով կիբերհանցավորության դեմ պայքարի թեմայով վերապատրաստման ընդհանուր ծրագիր, որը վերաբերում էր հատկապես կրեդիտ-բարտերով կատարվող գեղծարարությանը: Դասընթացին մասնակցեցին Տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի բաժնի և Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարի բաժնի 10 ոստիկաններ, ինչպես նաև Չեռնոգորիայի դատախազությունը ներկայացնող 3 դատախազներ:

2011 թվականին ԵԱՀԿ ՈԳՌՅՍ-ն, համագործակցելով Սերբիայում ԵԱՀԿ առաքելության Իրավունքի գերակայության բաժնի հետ, Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում հյուրընկալեց «Համակարգչային փորձաքննությունները և թվային ապացույցները ոստիկանության, դատախազների և դատավորների համար Հարավարևելյան Եվրոպայում» թեմայով տարածաշրջանային դասընթացը: Ոստիկանութ-

յան բարձրաստիճան պաշտոնյաների, վերաքննիչ մակարդակի դատախազների և դատավորների համար նախատեսված դասընթացի ժամանակ ներկայացվեցին համակարգչային հանցագործությունները, համակարգչային փորձաքննությունները և կիրառապացույցները: Միջոցառմանը մասնակցեցին քրեական արդարադատության 25 փորձագետներ Բոսնիա-Յերցեգովինայից, Խորվաթիայից, Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետությունից, Չեռնոգորիայից և Սերբիայից: Վերապատրաստումն անցկացրին Սերբիայի ներքին գործերի նախարարության և արդարադատության նախարարության, Սերբիայի դատախազության և Կիրեռիանցավորության հետազոտությունների ինստիտուտի (ք. Զյոլն, Գերմանիա) կիրեռիանցավորության քննության գծով փորձագետները: Վերապատրաստման շնորհիվ մասնագետները ծանոթացան համակարգչային հանցագործություններին, համակարգչային փորձաքննություններին և կիրեռապացույցներին: Դասընթացը նախատեսված էր ոստիկանության ղեկավար անձնակազմում կիրեռիանցագործությունների քննությունը վերահսկող ներկայացուցիչների, Էլեկտրոնային ապացույցներին առնչվող վերաքննիչ բողոքներով զբաղվող դատախազների և կիրեռապացույցների և ինտերնետային հանցագործությունների գործերին առնչվող դատավորների համար: Այն ֆինանսավորվեց Նորվեգիայի կառավարության կողմից և իրականացվեց Սերբիայում ԵԱՀԿ առաքելության Իրավունքի գերակայության բաժնի հետ համագործակցության շրջանակում²⁴²:

Ֆինանսական հանցագործությունների քննությունը

2008 թվականին Բաքվում ԵԱՀԿ գրասենյակն օժանդակել է Ադրբեջանի կառավարության համապատասխան ներկայացուցիչների վերապատրաստմանն Ադրբեջանում և ԵԱՀԿ մասնակից մի շարք պետություններում: Գրասենյակի Իրավունքի գերակայության բաժինը երկօրյա սեմինար է անցկացրել՝ նպատակ ունենալով բարձրացնելու իրավապահ մարմինների ներկայացուցիչների իրազեկությունը փողերի լվացման դեմ պայքարի մասին գործող օրենսդրության և միջազգային մեխանիզմների վերաբերյալ: Սեմինարին մասնակցել են 21 դատավոր և 10 դատախազ:

²⁴²

OSCE, *Annual Report of the Secretary General on Police-Related Activities in 2011*, Vienna 2012, p. 19 [ԵԱՀԿ, *Գլխավոր քարտուղարի 2011 թ. տարեկան զեկույցը ոստիկանությանն առնչվող աշխատանքների վերաբերյալ*, Վիեննա 2012 թ., էջ 19]:

2009 թվականին Ուզբեկստանում ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակը և Ուզբեկստանում ԵԱՀԿ ծրագրերի համակարգողն օժանդակել են Համաշխարհային բանկին և Ուզբեկստանի կառավարությանը՝ Ուզբեկստանի ֆինանսական հետախուզության կենտրոնի պաշտոնյաների համար Տաշքենդում կազմակերպելու վերապատրաստման ազգային դասընթաց: Դասընթացի նպատակն էր զարգացնել Ուզբեկստանի ֆինանսական հետախուզության կենտրոնի (ՖՀԿ) կարողությունները և խորացնել ՖՀԿ-ի և իրավապահ/դատախազական իրավասու մարմինների համագործակցությունը, ինչպես նաև զարգացնել ՖՀԿ-ի միջազգային համագործակցությունը: Եռօրյա միջոցառումը կազմակերպվել էր Ասիական զարգացման բանկի և Փողերի լվացման դեմ պայքարի եվրասիական խմբի համագործակցությամբ: Միջոցառմանը մասնակցում էին 30 փորձագետներ գլխավոր դատախազությունից և Ուզբեկստանի այլ կառույցներից: Քննարկումները հիմնականում վերաբերում էին ՖՀԿ-ի կառավարմանը և գործառնական անկախությանը, ՖՀԿ-ի անվտանգությանը և տվյալների պաշտպանությանը, ՖՀԿ-ների միջև միջազգային համագործակցությանը, կասկածելի գործարքների կասեցմանը, ներպետական միջգերատեսչական համագործակցությանը վերաբերող միջազգային չափորոշիչներին և լավագույն փորձին, ինչպես նաև գործնական մի շարք օրինակների վերլուծություններին:

2010 թվականին Չեռնոգորիայում ԵԱՀԿ առաքելությունը, համագործակցելով Պողգորիցայում Իտալիայի դեսպանության հետ, կազմակերպեց եռօրյա սեմինար՝ նվիրված փողերի լվացման և ֆինանսական հանցագործությունների բնության նորագույն մեթոդներին: Սեմինարին, որը վարում էին Իտալիայի «Guardia di Finanzia» կառույցի փորձագետները, մասնակցում էին ոստիկանության և դատախազության բարձրաստիճան պաշտոնյաներ, հարկային տեսուչներ, Փողերի լվացման դեմ պայքարի տնօրինության աշխատողներ: Մասնակիցները տարաբնույթ տեղեկություններ քաղեցին փողերի լվացման դեմ պայքարի ու ֆինանսական և տնտեսական հանցագործությունների բնության վերաբերյալ²⁴³:

²⁴³

OSCE, *Annual Report of the Secretary General on Police-Related Activities in 2010*, Vienna 2011, p. 50 [ԵԱՀԿ, *Գլխավոր քարտուղարի 2010 թ. տարեկան զեկույցը ոստիկանությանն առնչվող աշխատանքների վերաբերյալ*, Վիեննա, 2011 թ., էջ 50]:

Մարդկանց թրաֆիքինգը

2006 թվականին Ալբանիայում ԵԱՀԿ Ներկայացուցչությունը, համագործակցելով ԵԱՀԿ ՈԳՌՅՍ-ի հետ, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ԵԱՀԿ գործողությունների ծրագրի շրջանակում կազմակերպեց վերապատրաստման երկօրյա դասընթաց, որին մասնակցեցին տարբեր գերատեսչություններ: Շահառուների թվում էին իրավապահ մարմինները, ներքին գործերի նախարարությունը, ոստիկանության ակադեմիան, դատախազությունը և հակաթրաֆիքինգային ՅԿ-ները: Վերապատրաստման դասընթացն անդրադարձավ տեղեկությունների ստացման բազմագերատեսչական աշխատանքի մեթոդներին և քրեական հետապնդումն առանց տուժողի ցուցմունքի վրա հիմնվելու իրականացնելու եղանակներին: ՈԳՌՅՍ-ի հրավիրած փորձագետների կողմից վերապատրաստվեցին ավելի քան 20 մասնակիցներ:

2011 թվականին Աստանայում ԵԱՀԿ կենտրոնը (Ղազախստան) Ալմաթի քաղաքում կազմակերպեց Կենտրոնական Ասիայում մարդկանց թրաֆիքինգի և միգրանտների մաքսանենգ տեղափոխման դեմ պայքարի ոլորտում իրավապահ և դատական մարմինների համագործակցության խորացման թեմայով չորրորդ ամենամյա խորհրդաժողովը: Միջոցառման համակազմակերպիչներն էին Ղազախստանի ներքին գործերի նախարարությունը, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ), ՄԱԿԹՅՊԳ-ն, Ղազախստանում ԱՄՆ դեսպանությունը, Բիշկեքում ԵԱՀԿ կենտրոնը և Տաջիկստանում ԵԱՀԿ գրասենյակը: Մասնակցում էին ավելի քան 70 բարձրաստիճանի դատախազներ, իրավապահ ոլորտի աշխատողներ, օտարերկրյա նախարարությունների և ՅԿ-ների ներկայացուցիչներ²⁴⁴:

Թմրադեղերի անօրինական շրջանառությունը

2007 թվականին ԵԱՀԿ ՈԳՌՅՍ-ն Ղրղզստանի մայրաքաղաք Բիշկեքում կազմակերպեց «Իրավապահ և դատական մարմինների համագործակցության սերտացումը Կենտրոնական Ասիայի թմրամիջոցների տեղափոխման ճանապարհներին» խորագրով տարածաշրջանային խորհրդաժողովը: Միջոցառումը կազմակերպվեց ՄԱԿԹՅՊԳ-ի հետ սերտ համագործակցությամբ, Բիշկեքում ԵԱՀԿ կենտրոնի և

²⁴⁴ OSCE, *Annual Report of the Secretary General on Police-Related Activities in 2011* (op.cit. note 242), p. 99 [ԵԱՀԿ, *Գլխավոր քարտուղարի 2011 թ. տարեկան զեկույցը ոստիկանությանն առնչվող աշխատանքների վերաբերյալ* (տե՛ս էջատակի 242-րդ ծանոթագրությունը), էջ 99]:

տարածաշրջանում ԵԱՀԿ այլ գրասենյակների օժանդակությամբ: Մասնակցում էին փորձագետներ ՄԱԿԹՅՊԳ-ից, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից (ՀԱՊԿ) և Չինաստանից, Ղազախստանից, Ղրղզստանից, Մոնղոլիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից և Ուզբեկստանից: Փորձագետների բնակարանները նվիրված էին միջազգային իրավական փաստաթղթերին, չափորոշիչներին, ազգային օրենսդրությանը և դատավորների, դատախազների և ոստիկանության միջև անդրազգային համագործակցության բարելավման ճանապարհին առկա գործնական խոչընդոտներին: Խորհրդածողովը ծառայեց երեք հիմնական նպատակի, որոնք էին՝ անձնական կապերի ստեղծումն Աֆղանստանից հերոհների անօրինական տեղափոխման հետևանքները կրող պետություններում փոխօգնության խնդիրներով զբաղվող իրավապահ և դատական համապատասխան մարմինների միջև, տեղեկատվության տարածումը յուրաքանչյուր երկրի իրավական և դատավարական կոնկրետ պահանջների վերաբերյալ, ներպետական և անդրազգային համագործակցության հետ կապված խնդիրների բացահայտումը:

2011 թվականին Կոսովոյում ԵԱՀԿ առաքելությունը կազմակերպեց հսկվող առաքումների վարժանք Ալբանիայի, Բուլղարիայի, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության, Գերմանիայի, Չեռնոգորիայի, Սլովենիայի և Թուրքիայի քրեական արդարադատության մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Կոսովոյի ոստիկանության գլխավոր շտաբում ստեղծվեց օպերատիվ-համակարգող կենտրոն²⁴⁵: Կոսովոյում առաջին անգամ իրականացվեց հսկվող առաքումների գործնական վարժանք, որի շնորհիվ կատարելագործվեցին ոստիկանության, մաքսային ծառայության և դատական համակարգի պաշտոնատար անձանց կարողությունները թմրադեղերի անօրինական շրջանառության դեմ պայքարի և տարածաշրջանային համագործակցության բարելավման ոլորտներում: Արդյունքում, բարելավվեց վարժանքին մասնակցող գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև բարձրացավ փոխադարձ վստահությունը²⁴⁶:

²⁴⁵ Կոսովոյի հաստատությունների/առաջնորդների վերաբերյալ բոլոր հիշատակումները վերաբերում են ինքնակառավարման ժամանակավոր կառույցներին:

²⁴⁶ OSCE, *Annual Report of the Secretary General on Police-Related Activities in 2011* (op.cit. note 242), p. 48 [ԵԱՀԿ, *Գլխավոր քարտուղարի 2011 թ. տարեկան զեկույցը ոստիկանությանն առնչվող աշխատանքների վերաբերյալ* (տե՛ս էջատակի 242-րդ ծանոթագրությունը), էջ 48]:

7.7.2. Համագործակցության խորացումը ԶԱՀ-ի կառույցների, պետական այլ մարմինների, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև

Ինչպես ներկայացվեց վերոհիշյալ աղյուսակի տեքստում, կազմակերպված հանցագործությունների կոնկրետ տեսակների դեմ մղվող պայքարի թեմայով վերապատրաստման ծրագրեր կարող են իրականացվել նաև պետական այլ մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի այն ներկայացուցիչների համար, ովքեր կարևոր դերակատարում ունեն այդ հանցագործությունները կանխելու (իրազեկության բարձրացման միջոցով) հարցում կամ օժանդակում են այդ հանցագործություններից տուժած անձանց (տուժողներին նույնականացնելու և հետագայում նրանց օժանդակություն ցուցաբերելու միջոցով), օրինակ՝ թմրադեղերի անօրինական շրջանառության, մարդկանց թրաֆիքինգի և ինտերնետում երեխաների նկատմամբ կատարվող ոտնձգությունների պարագայում:

Այնուամենայնիվ, վերապատրաստման համատեղ ծրագրերի մեծ մասը վերաբերում է համագործակցության այն բնագավառներին, որոնց նպատակը բնակչության անվտանգության և ապահովության ընդհանուր զգացողության մակարդակի բարելավումն է, մարդու իրավունքների պաշտպանությունը (տե՛ս նաև 7.7.3. ենթագլուխը) և ԶԱՀ-ի նկատմամբ հանրային վերահսկողության ապահովումը (տե՛ս նաև 7.7.4. ենթագլուխը):

Վերապատրաստման նմանօրինակ դասընթացներն առաջին հերթին կարող են կարևոր գործիք լինել փոխադարձ վստահության մակարդակը բարձրացնելու և խմբերի միջև առկա կարծրատիպերը և անվստահությունը հաղթահարելու, ինչպես նաև միջանձնային և միջմշակութային դրական և արդյունավետ կապերը խթանելու տեսանկյունից: Այդ դասընթացները հնարավոր են դարձնում փորձի և տեսակետների փոխանակումը տարբեր շահակիցների միջև, որի արդյունքում կարելի է եսկանորեն բարձրացնել այլ խմբերի կարիքների և այլ անձանց հուզող հարցերի մասին նրանց իրազեկվածությունը և ընկալումները: Փորձը և տեսակետները փոխանակելու պատրաստակամությունը կարևոր նախապայման է համայնքներում առկա պրոբլեմները հայտնաբերելու և դրանք լուծելու համար համատեղ ջանքերով ծրագրեր մշակելու և իրականացնելու համար: Վերապատրաստման այդ դասընթացների շնորհիվ հետագայում կարելի է բարձրացնել

ներգրավված այլ խմբերի իրազեկությունը հիմնախնդիրների լուծման այդ գործընթացում իրենց գործառնությունների, իրավունքների և պարտավորությունների մասին:

Վերապատրաստման շնորհիվ կարող են կատարելագործվել այնպիսի ուղորտներին առնչվող տեխնիկական հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցությունը, վստահության ամրապնդումը, հակամարտությունների միջնորդությունը, մշակութային բազմազանությունը և համայնքին հուզող հարցերի և հիմնախնդիրների հնարամիտ լուծումների մշակումը:

Վերապատրաստման համատեղ դասընթացները կարող են անդրադառնալ նաև զանգվածային լրատվամիջոցների հետ արդյունավետ համագործակցության ձևավորմանը՝ ներառյալ զանգվածային լրատվամիջոցների հետ շփումների վերաբերյալ ուղենիշների մշակումը, մամուլի խոսակցիների գործառնությունների հստակ ձևակերպումը և իրավապահ ուղորտի ներկայացուցիչների վերապատրաստումը զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքի թեմայով²⁴⁷:

Ավելին, համագործակցության ծրագրերին բանախոսի կարգավիճակով մասնակցելու հրավեր պետք է ուղարկել նաև քաղաքացիական հասարակության և ԶԱՀ-ի մեջ չմտնող այլ կառույցների ներկայացուցիչներին, որպեսզի նրանք ընդհանուր առմամբ ներգրավվեն քրեական արդարադատության ուղորտում աշխատող անձանց վերապատրաստումների գործընթացում: Ուստի ԶԱՀ-ի կառույցները պետք է գործընկերային հարաբերություններ հաստատեն քաղաքացիական հասարակության տարաբնույթ խմբերի հետ և հայտնաբերեն տարիքային, սեռային և տարբեր այլ խմբերի այն ներկայացուցիչներին, ովքեր կկարողանան ներկայացնել հասարակության որոշակի խմբերի տարբեր կարծիքները²⁴⁸:

7.7.3. Մարդու իրավունքներին առնչվող առանձնահատկությունները

ԶԱՀ-ում աշխատող անձանց համար կազմակերպվող սկզբնական, խորացված կամ մասնագիտացված վերապատրաստման դասընթաց-

²⁴⁷ Համեմատ. OSCE, *Good Practices in Building Police-Public Partnerships* (op.cit. note 86), pp. 46f, pp. 54 and 58, and 65f [ԵԱՀԿ, *Ոստիկանության և հասարակության միջև գործընկերության ձևավորման լավագույն փորձը* (տե՛ս էջատակի 86-րդ ծանոթագրությունը), էջ 46 և շարունակ., էջեր 54 և 58, էջ 65 և շարունակ.]:

²⁴⁸ Համեմատ. OSCE, *Police and Roma and Sinti: Good Practices in Building Trust and Understanding* (op.cit. note 151), p. 80 [ԵԱՀԿ, *Ոստիկանությունը և ռոմները և սինթները. վստահության և փոխըմբռնման ձևավորումը: Հաջողված փորձի օրինակներ* (տե՛ս էջատակի 151-րդ ծանոթագրությունը), էջ 80]:

ների կամ կրթական ծրագրերի բոլոր տեսակները պետք է պարտադիր ներառեն մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները²⁴⁹: Այդ իրավունքները և ազատություններն են.

- Կյանքի իրավունքը,
- Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի չենթարկվելու ազատությունը,
- Ազատության և անձեռնմխելիության իրավունքը,
- Մտքի, խղճի և կրոնի ազատությունը,
- Արտահայտվելու ազատությունը,
- Միավորումների և խաղաղ հավաքների ազատությունը,
- Արդար դատաքննության իրավունքը,
- Աշխատանքի, կրթության և հասարակական կյանքին մասնակցության իրավունքը,
- Անմեղության կանխավարկածը,
- Ձերբակալված անձանց, փոքրամասնությունների, կանանց և երեխաների իրավունքները,
- Մասնավոր կյանքի վերաբերող տեղեկությունների գաղտնիության իրավունքը²⁵⁰:

Խորացված և մասնագիտացված դասընթացին մասնակցելու նախապայմանը պետք է լինի մարդու իրավունքներին առնչվող օրենսդրության, քաղաքականության և ընթացակարգերի մասին տեղեկացվածությունը և դրանք գործնականում հավուր պատշաճի կիրառելու համար անհրաժեշտ հմտություններ ունենալը: Ավելին, դասընթացներ կազմակերպողները և վարողները պետք է մարդու իրավունքների բնագավառում կրթության փորձ և գիտելիքներ ունենան:

²⁴⁹ Համեմատ. OSCE ODIHR, *Guidelines on Human Rights Education for Law Enforcement Officials*, Warsaw, September 2012, p. 3 [ԵԱՀԿ ԺՀՄԻԳ, *Իրավապահ մարմինների աշխատողների մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման ուղեցուցիչները*, Վարշավա, 2012 թվականի սեպտեմբեր, էջ 3]:

²⁵⁰ Համեմատ. OSCE, *Good Practices in Basic Police Training – Curricula Aspects by the Senior Police Adviser to the OSCE Secretary General*, SPMU Publication Series Vol. 5, Vienna, October 2008, p. 31 [ԵԱՀԿ, *Ոստիկանության սկզբնական ուսուցման լավագույն փորձը. ուսումնական ծրագրի առանձնահատկությունները, հեղինակ ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի ավագ խորհրդական ոստիկանության հարցերով, ՈԳՈՀՄ-ի հրատարակությունների շարք, 5-րդ հատոր, Վիեննա, 2008 թվականի հոկտեմբեր, էջ 31*]:

Վերջին տարիներին միջազգային տարբեր կազմակերպությունների և իրավապաշտպան ՅԿ-ների կողմից մշակվել են վերապատրաստումներին վերաբերող մի քանի օգտակար փաստաթղթեր, որոնք որոշ ուղե-նիշներ են պարունակում ԶԱՀ-ի վերապատրաստման ուսումնական ծրագրերի մեջ մարդու իրավունքներին առնչվող առանձնահատկությունների ներառման համար:

Միավորված ազգերի կազմակերպությունը մարդու իրավունքների թեմայով վերապատրաստման ծրագրեր է մշակել ԶԱՀ-ի տարբեր կառույցներում՝ ներառյալ ոստիկանությունում, դատարաններում, բանտային համակարգում, օմբուդսմենի գրասենյակում և խորհրդարանում աշխատող, ինչպես նաև իրավապահ և անվտանգության գործառույթներ կատարող պաշտոնական այլ մարմիններում աշխատող անձանց համար: Միավորված ազգերի կազմակերպության խաղաղության և անվտանգության գործադիր կոմիտեի (ԽԱԳԿ) խաղաղարար գործողությունների շրջանակում իրավունքի գերակայության համապարփակ ռազմավարությունների մշակման հարցերով աշխատանքային խումբը 2002 թվականին գեկույց պատրաստեց ոստիկանության, դատական համակարգի և բանտերի համար կազմակերպվող վերապատրաստման ծրագրերի վերաբերյալ: ԽԱԳԿ-ին ներկայացված գեկույցում աշխատանքային խումբը վերլուծել էր իրավունքի գերակայության ոլորտի վերապատրաստման ավելի քան 50 ծրագիր և ձեռնարկ, որոնք ստեղծվել են Միավորված ազգերի կազմակերպության գործակալությունների կամ բաժինների կողմից²⁵¹:

2012 թվականին ԺՅՄԻԳ-ն, համագործակցելով ԵԱՀԿ ԱԱՍԴՎ/ՈԳՌՅՍ-ի հետ, մշակեց *Իրավապահ մարմինների աշխատողների՝ մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման ուղենիշները*: Ուղենիշները թույլ են տալիս գնահատել ծրագրերի որակը և կարող են օգտագործվել նրանց կողմից, ովքեր մարդու իրավունքների պաշտպանության լավագույն փորձի սկզբունքների պահպանմամբ կրթական ծրագրեր են մշակում և իրականացնում իրավապահ մարմիններում աշխատողների համար: Փաստաթղթում առաջարկվում են վեց հիմնական ոլորտներ, որոնց առկայությամբ կարելի է երաշխավորել մարդու իրավունքների թեմայով կրթական ծրագրերի հաջողությունն իրավապահ ոլորտներում աշխատողների համար: Այդ ոլորտներն են՝

²⁵¹ UNODC/USIP, *Criminal Justice Reform in Post-Conflict States* (op.cit. note 9), p. 75 [ՄԱԿԹՀԴԳ/ԱՄՆԽԻ, *Քրեական արդարադատության բարեփոխումները հակամարտություններ վերապահած պետություններում* (տե՛ս էջատակի 9-րդ ծանոթագրությունը), էջ 75]:

մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումներն ընդհանուր գործընթացներին և նպատակներին, հիմնական իրավասությունները, ուսումնական ծրագրերը, դասավանդման/վերապատրաստման և ուսումնառության գործընթացները, գնահատումը և վերապատրաստողների մասնագիտական զարգացումը և օժանդակությունը²⁵²:

Ավելին, ԺՅՄԻԳ-ն, համագործակցելով ԱԱՄԿ/ՈԳՈՅՍ-ի հետ, իրավապահ մարմիններում աշխատող անձանց համար գործնական ուսուցման ծրագիր է մշակել՝ ահաբեկչության քննության ընթացքում մարդու իրավունքների երաշխավորման թեմայով²⁵³:

Անհրաժեշտ է նաև գիտելիքներ և հմտություններ հաղորդել ԶԱՅ-ի բոլոր սուբյեկտներին, որպեսզի նրանք հավուր պատշաճի անդրադառնան գեոդերային արդարադատությանը և գեոդերահեն բռնությանը և արդյունավետորեն արձագանքեն ահաբեկչության քննությանը՝ դրսևորելով զգայնություն գեոդերային բաղադրիչի նկատմամբ: Այս ոլորտում, մասնավորապես, անհրաժեշտ է համագործակցել պետական և ոչ պետական կառույցների (օրինակ՝ առողջապահական ծառայությունների, մերձիրավաբանական ծառայություններ մատուցողների, գյուղական խորհուրդների, կանանց խմբերի և ապաստանների, իրավաբանական օգնություն տրամադրող շարժական խմբերի) հետ, ընդ որում՝ ԶԱՅ-ի պրակտիկ աշխատողները պետք է պատրաստ լինեն արդյունավետորեն համագործակցելու քաղաքացիական հասարակության տարաբնույթ սուբյեկտների հետ²⁵⁴:

Առաջնորդվելով ԶԱՅԲ-ի համապարփակ մոտեցմամբ՝ ԵԱՅԿ ղեկավար կառույցները վերապատրաստման համատեղ դասընթացներ են կազմակերպում ԶԱՅ-ի տարբեր կառույցների համար՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով մարդու իրավունքների պաշտպանությանը

²⁵² Համեմատ. OSCE, *Annual Report of the Secretary General on Police-Related Activities in 2011* (op.cit. note 242), p. 48 [ԵԱՀԿ, *Գլխավոր քարտուղարի 2011 թ. տարեկան զեկույցը ոստիկանությանն առնչվող աշխատանքների վերաբերյալ* (տե՛ս էջատակի 242-րդ ծանոթագրությունը), էջ 48], և OSCE ODIHR, *Guidelines on Human Rights Education for Law Enforcement Officials* (op.cit. note 249) [ԵԱՀԿ ԺՅՄԻԳ, *Իրավապահ մարմինների աշխատողների՝ մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման ուղեմիջոցները* (տե՛ս էջատակի 249-րդ ծանոթագրությունը)]:

²⁵³ OSCE ODIHR, *Human Rights in Counter-Terrorism Investigations – A Practical Manual for Law Enforcement Officers*, Warsaw, 2013, forthcoming [ԵԱՀԿ ԺՅՄԻԳ, *Մարդու իրավունքները հակաահաբեկչական քննության շրջանակում. գործնական ուղեցույց իրավապահ մարմիններում աշխատողների համար*, Վարշավա, 2013 թ., պատրաստվում է տպագրության]:

²⁵⁴ UNDP, *United Nations Development Programme in Timor-Leste*, Project Document, New York 2008, pp. 26f [ՄԱԿԶԾ, *Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը Թիմոր Լեշթիում*, ծրագրային փաստաթուղթ, Նյու Յորք, 2008 թ., էջ 26 և շարունակ.]:

քրեական արդարադատության մի շարք ոլորտներում, որոնցում մեծ է տուժողների և իրավախախտների՝ մարդու իրավունքների խախտումների հավանականությունը:

Քրեական արդարադատության գործընթացում մարդու իրավունքների պաշտպանության թեմայով վերապատրաստման համատեղ դասընթացների օրինակներ

Կենցաղային բռնությունը

2011 թվականին Մոլդովայում ԵԱՀԿ առաքելությունը ոստիկանների, դատախազների, դատավորների և փաստաբանների համար կազմակերպեց «Կենցաղային բռնության դեմ պայքարի թեմայով» վերապատրաստման մի քանի սեմինարներ՝ նվիրված տուժողների՝ մարդու իրավունքներին, վերջիններիս պաշտպանության երաշխավորման իրավական մեխանիզմներին և լավագույն փորձին, ինչպես նաև իրավախախտների պատշաճ քրեական հետապնդման ինդիկատորներին: Դասընթացների մասնակիցները գիտելիք ստացան նաև կենցաղային բռնության գործերի բացահայտման ուղղությամբ բազմազերատեսչական համագործակցության բարելավման ուղիների մասին: Ծրագրում ներառված էին Մոլդովայի դատական նախադեպերը, ինչպես նաև կենցաղային բռնության գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները: Սեմինարներն իրականացվում էին Արդարադատության ազգային ինստիտուտի և տեղացի հայտնի իրավաբան-փորձագետների, հոգեբանների և սոցիալական աշխատողների հետ գործընկերության շրջանակներում²⁵⁵:

Մարդու իրավունքների պաշտպանությունը մարդկանց թրաֆիքինգի գործերի քննության ընթացքում

2011 թվականին Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով ԵԱՀԿ հատուկ ներկայացուցիչը և համակարգողն Իտալիայի մայրաքաղաք Հռոմում մասնակցեց Իտալիայի դատավորների խորհրդի կողմից դատավորների և դատախազների համար կազմակերպված՝ «Քրեական համակարգերը, միգրացիոն հոսքերը և միջազգային հա-

²⁵⁵ Համեմատ. OSCE, *Annual Report of the Secretary General on Police-Related Activities in 2011* (op.cit. note 242), p. 80 [ԵԱՀԿ, *Գլխավոր քարտուղարի 2011 թ. տարեկան զեկույցը ոստիկանությանն առնչվող աշխատանքների վերաբերյալ* (տե՛ս էջատակի 242-րդ ծանոթագրությունը), էջ 80]:

մագործակցությունը» խորագրով վերապատրաստման միջազգային դասընթացին: Մասնակիցների թվում էին դատավորներ և դատախազներ Ալբանիայից, Ֆրանսիայից, Իտալիայից և Ռումինիայից, ինչպես նաև «Eurojust»-ի և ՀԿ-ների ներկայացուցիչներ: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով ԵԱՀԿ հատուկ ներկայացուցիչը դասախոսություն կարդաց՝ նվիրված տուժողների իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին և թրաֆիքինգի ենթարկված անձանց հայտնաբերելու և աջակցելու նպատակով բազմագերատեսչական մոտեցում որդեգրելու անհրաժեշտությանը:

Մարդու իրավունքներն ազատագրված վայրերում

2001 թվականին Տաջիկստանում ԵԱՀԿ գրասենյակի իրավական և դատական բարեփոխումների ստորաբաժանման ծրագրի շրջանակում ուսումնասիրվեցին քրեական դատավարության նոր օրենսգրքի և իրավապահ մարմինների, դատախազների և դատավորների կողմից դրա իրագործման պրակտիկայի բացերը և բարելավման ենթակա ուղղությունները: Հատուկ ուշադրության արժանացան ԶԴՕ-ի այն դրույթները, որոնք անձի համար լրացուցիչ պաշտպանություն են նախատեսում ազատագրված և նախնական քննության ընթացքում: «Մարդու իրավունքների կենտրոն» ՀԿ-ի կողմից գլխավոր դատախազության հետ սերտ համագործակցության պայմաններում իրականացվող ծրագրի շրջանակներում երկրի տարբեր շրջանների ավելի քան 100 դատախազներ վերապատրաստվեցին ահաբեկիչների և ծայրահեղականների նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման ընթացքում խոշտանգումների կանխարգելման, արդար դատաքննության իրավունքների և մարդու իրավունքների երաշխիքների թեմաներով: Զաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ծրագրի շրջանակներում կանոնավոր հանդիպումներ ունեցան փաստաբանների հետ՝ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերը հայտնաբերելու և մարդու իրավունքների այդ խախտումներին հանգեցրած դատավարական խնդիրները պարզելու նպատակով:

7.7.4. Հաշվետվողականությունը և վերահսկողությունը

ԶԱՀ-ի ներկայացուցիչները, անվտանգության և արդարադատության ոլորտներում ծառայություններ մատուցող ոչ պետական և սովորական

կառույցները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հաշվետվողականության և վերահսկողության երաշխավորման առումով իրենց ունեցած իրավունքների, պարտականությունների և պարտավորությունների մասին իրազեկվելու համար պետք է նախ տեղեկացված լինեն անվտանգության և արդարադատության տարբեր ծառայությունների վարքագծի կանոնադրերի և ԳՍԸ-ների մասին:

Հաշվետվողականության և վերահսկողության խնդիրներին նվիրված վերապատրաստման համատեղ դասընթացների օրինակներ

Կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով վերապատրաստումը Կոսովոյում

2011 թվականին Կոսովոյում ԵԱՀԿ առաքելությունը կազմակերպեց վերապատրաստման դասընթացներ, որոնք նպատակաուղղված էին կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում քննության հմտությունների բարելավմանը և միջգերատեսչական համագործակցության խորացմանը Կոսովոյում: Կազմակերպվեց խորացված դասընթաց, որի մասնակիցները Կոսովոյի ոստիկանությունից, ոստիկանության տեսչությունից, մաքսային ծառայությունից, հակակոռուպցիոն գործակալությունից, հակակոռուպցիոն աշխատանքային խմբից էին, ինչպես նաև՝ դատախազների և դատավորների թվից: Դասընթացն ընդհանուր առմամբ նվիրված էր կոռուպցիայի քննության հատուկ մեթոդներին, քննության մեջ օպերատիվ տեղեկությունների օգտագործմանը, վկաների և իրազեկողների հետ տարվող աշխատանքներին, ինչպես նաև բարեվարքության ստուգումներին, որոնց առնչությամբ նոր լիազորություններ են վերապահվել Կոսովոյի ոստիկանության տեսչությանը: Դատախազների և դատավորների մասնակցությունը լուրջ ձեռքբերում համարվեց, ուստի փորձ կարվի նրանց ներգրավել նաև ապագայում կազմակերպվող վերապատրաստման ծրագրերին:

Ավելին, Կոսովոյում ԵԱՀԿ առաքելությունը Կոսովոյի ոստիկանությունում, դատախազությունում և Լրագրողների միությունում աշխատող փորձագետների օժանդակությամբ մշակեց և իրականացրեց վերապատրաստման դասընթաց, որի թեման զանգվածային լրատվամիջոցների՝ որպես մշտադիտարկումային մեխանիզմի դերն էր: Դասընթացը կազմակերպվեց Կոսովոյի 6 շրջաններում: Դասընթացի շրջանակներում ներկայացվեց Կոսովոյի ոստիկանության ներկայացուցիչների, դատախազների և զանգվածային լրատվամիջոցների

միջև արդյունավետ համագործակցության և հաղորդակցության կարևորությունը: Դասընթացի մասնակիցները քննարկեցին իրենց պարտականությունները կարգավորող իրավական դաշտը և դրույթները: Միաժամանակ քննարկվեցին հաղորդակցության հմտությունների պակասը և հանրության համար անվտանգության ոլորտի ունեցած դերի մասին սկզբունքային ընկալումները: Նպատակ ունենալով հեշտացնել համագործակցությունը՝ յուրաքանչյուր դասընթացի ավարտին մասնակիցներին տրամադրվեց բոլոր կառույցների կողմից հաճախ օգտագործվող եզրույթների մասնագիտական բառարան:

Դատավարությունների մշտադիտարկման թեմայով վերապատրաստումը Ղրղզստանում

Ղրղզստանում դատավարությունների մշտադիտարկման՝ ԺՅՄԻԳ-ի ծրագրի (տե՛ս նաև 7.5.2. ենթագլուխը) շրջանակներում բարձրագույն իրավաբանական կրթություն կամ մարդու իրավունքների ոլորտում աշխատանքի փորձ ունեցող 26 անձինք ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից ԺՅՄԻԳ-ի դատավարությունների մշտադիտարկման ուղեցույցի հիման վրա վերապատրաստվեցին որպես դատավարությունների դիտորդներ՝ առաջին հերթին կարևորելով դատավարությունների մշտադիտարկման նպատակները և ընթացակարգը, ինչպես նաև՝ գեկույցների անկողմնակալության սկզբունքը և դատավարությունների ընթացքին չմիջամտելու սկզբունքը: Դասընթացի շրջանակում կազմակերպվեց դատախազ, որին մասնակցեցին գերագույն դատարանի դատավորը և գլխավոր դատախազության աշխատակիցները²⁵⁶:

²⁵⁶ Համեմատ. OSCE ODIHR/Centre in Bishkek, *Results of Trial Monitoring in the Kyrgyz Republic, 2005-2006* (op.cit.note 134), p.14f [ԵԱՀԿ ԺՅՄԻԳ / կենտրոն Բիշկեքում, *Ղրղզստանի Հանրապետությունում 2005-2006 թթ. ընթացքում դատական վարույթների մշտադիտարկման արդյունքները* (տե՛ս էջատակի 134-րդ ծանոթագրությունը), էջ 14 և շարունակ.]:

VIII. ԶԱՐԲ-ի գնահատումը և վերանայումը

Ուսումնառության և հաշվետվողականության գործառույթներին համահունչ՝ գնահատմամբ պետք է պարզվի որոշակի բարեփոխումների իրականացման աշխատանքների արդյունավետությունը, օգտավետությունը և վերաբերելիությունը: Գնահատման նպատակն է աջակցել մարտավարության, ընթացակարգերի և մեթոդների բարելավմանը, պարզել ծրագրերը և նախագծերը շարունակելու կամ դադարեցնելու նպատակահարմարությունը, ծախսված գումարների և սուղ միջոցների տնօրինման վերաբերյալ հաշվետու լինել շահառուներին և հարկեր վճարողներին²⁵⁷: Ինչպես նշվեց IV գլխում, գնահատման միջոցով պետք է պարզել, թե որքանով են կատարվել բարեփոխումների ռազմավարության մշակման փուլում սահմանված ցուցանիշները: Գնահատման չափորոշիչները պետք է լինեն կոնկրետ, չափելի, իրագործելի, վերաբերելի և դիտարկելի:

Համապարփակ ԶԱՐԲ-ի իրականացումը երկարաժամկետ գործընթաց է, որը պետք է գնահատել շրջափուլերով՝ գնահատումները կապակցելով քաղաքականության շրջափուլերին, որպեսզի ռազմավարական օղակները կարողանան համակարգված և շարունակական կերպով բարելավել ԶԱՐ-ի ծառայությունների որակը: Այս գործընթացում հաջողության հասնելու համար կարելի է օգտագործել կազմակերպական զարգացման օժանդակության ուղենշային այնպիսի համակարգեր, ինչպիսիք են Որակի կառավարման եվրոպական հիմնադրամի մոդելը և Համընդհանուր գնահատման շրջանակի Ամբողջական որակի կառավարման մոդելը²⁵⁸: Վերջնական գնահատումներ պետք է կատարել, քանի դեռ իրագործման ծրագրերը հաջողության հասնելու հնարավորություն չեն ունեցել: Երբ ԶԱՐԲ իրականացնելիս հատուկ ուշադրություն է դարձվում ԶԱՐ-ի սուբյեկտների միջև համագործակցությանը և համակարգմանը, ծրագրերի իրագործման համար կարող է պահանջվել երկուսից

²⁵⁷ Հանձնատ. OSCE, *Good Practices in Building Police-Public Partnerships* (op.cit. note 86), p. 58 [ԵԱՀԿ, *Ոստիկանության և հասարակության միջև գործընկերության ձևավորման լավագույն փորձը* (տե՛ս էջատակի 86-րդ ծանոթագրությունը), էջ 58], և OECD, *DAC Evaluation Quality Standards*, Paris 2006, p. 6 [ՏՀԶԿ, *ԶԱՀ-ի գնահատման որակի չափանիշները*, Փարիզ 2006 թ., էջ 6]:

²⁵⁸ Հանձնատ. OSCE, *Good Practices in Building Police-Public Partnerships* (op.cit. note 86), pp. 58f [ԵԱՀԿ, *Ոստիկանության և հասարակության միջև գործընկերության ձևավորման լավագույն փորձը* (տե՛ս էջատակի 86-րդ ծանոթագրությունը), էջ 58 և շարունակ.]:

հինգ տարի՝ կախված իրագործման ճանապարհին առկա մարտահրավերներից: Բացի դրանից՝ առանձնահատուկ ջանասիրություն պետք է գործադրել, որպեսզի մշտադիտարկման և գնահատման բոլոր համակարգերը պարունակեն որակական և քանակական ցուցանիշների բավականաչափ լայն շրջանակ: Այդպես հնարավոր է դառնում կոնկրետ ոլորտներում իրականացվող փոփոխությունների մեկնաբանությունն ավելի լայն համատեքստում:

Գնահատումների կողմնակալության կամ շահերի բախումների առկայության մասին կասկածներից խուսափելու և գնահատումների արժանահավատությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ԶԱՀ-ի տարբեր կառույցների ինքնագնահատումները համատեղել անկախ արտաքին գնահատումների հետ²⁵⁹:

8.1. Գնահատման չափորոշիչները

Չարգացմանն աջակցող ծրագրերի գնահատման համար Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Չարգացման աջակցության հանձնաժողովը (ՏՀՁԿ ՉԱՀ) մշակել է որոշակի չափորոշիչներ, որոնց համաձայն ԶԱՀ-ի կատարման գործընթացների գնահատման *ընդհանուր չափորոշիչներն* են բարեփոխումների նախաձեռնությունների վերաբերելիությունը, օգտավետությունը, արդյունավետությունը, ազդեցությունը և շարունակելիությունը²⁶⁰:

ԶԱՀ-ին ցուցաբերվող աջակցությունը գնահատելու համար ՉԱՀ-ի մշակած չափորոշիչները

Վերաբերելիությունը. որքանով են ԶԱՀ-ի իրագործման միջոցառումները համապատասխանում թիրախային խմբերի, շահառուների և դոնորների առաջնահերթություններին և քաղաքականությանը:

Ի՞նչ հարցերի է անհրաժեշտ անդրադառնալ.

²⁵⁹ Համեմատ. OECD, *DAC Principles for Evaluation of Development Assistance*, OECD/GD(91)208, Paris 1991, Para. 11 [ՏՀՁԿ, *Չարգացման աջակցության գնահատման ՉԱՀ-ի սկզբունքները*, OECD/GD(91)208, Փարիզ 1991 թ., պարբ.11]:

²⁶⁰ Համեմատ. OECD, *DAC Evaluation Quality Standards* (op.cit. note 257), p. 6 [ՏՀՁԿ, *ՉԱՀ-ի գնահատման որակի չափանիշները* (տե՛ս էջատակի 257-րդ ծանոթագրությունը), էջ 6]:

- Ծրագրի նպատակները ո՞ր չափով են դեռևս գործում:
- Ծրագրի միջոցառումները և արդյունքները համահունչ են ընդհանուր նպատակին և խնդիրներին:
- Ծրագրի միջոցառումները և արդյունքները համահունչ են ակնկալվող ազդեցությանը և նշանակությանը:

Արդյունավետությունը. որ չափով են ծրագրերում իրագործվում դրված նպատակները:

Ի՞նչ հարցերի է անհրաժեշտ անդրադառնալ.

- Ո՞ր չափով են իրագործվել նպատակները, կամ որքա՞ն հավանական է դրանց իրագործումը:
- Ի՞նչ հիմնական գործոններ են ազդել նպատակների իրագործման կամ չիրագործման վրա:

Օգտավետությունը. կատարված ներդրումների օգտավետությունը՝ չափելով ստացված որակական և քանակական արդյունքները: Այս կապակցությամբ անհրաժեշտ է համեմատել նույն արդյունքին հասնելու այլընտրանքային մոտեցումները և պարզել, թե արդյոք կիրառվել է առավել շահեկան գործընթացը:

Ի՞նչ հարցերի է անհրաժեշտ անդրադառնալ.

- Իրականացված միջոցառումների վրա կատարված ծախսերն արդարացվա՞ծ են եղել:
- Նպատակներն իրագործվե՞լ են ժամանակին:
- Ծրագիրն իրագործվե՞լ է տնտեսապես առավել շահեկան եղանակով:

Ազդեցությունը. ԶԱԲ-ի ծրագրի արդյունքում ուղղակիորեն կամ անուղղակիորեն, կամա թե ակամա ստացված դրական և բացասական փոփոխությունները:

Ի՞նչ հարցերի է անհրաժեշտ անդրադառնալ.

- Ի՞նչ արդյունք է տվել ծրագիրը:
- Իրականում ի՞նչ է փոխել միջոցառումը շահառուների համար:
- Զանի՞ հոգու վրա է ազդել ծրագիրը:

Շարունակելիությունը. միջոցառման արդյունքների՝ դոնորների ֆինանսավորման, արտաքին խորհրդատվության և վերահսկողության դադարեցումից հետո շարունակվելու հավանականության գնահատականը:

Ի՞նչ հարցերի է անհրաժեշտ անդրադառնալ.

- Ո՞ր չափով են շարունակվել ծրագրի դրական արդյունքները դոնորների ֆինանսավորման դադարեցումից հետո:
- Ի՞նչ հիմնական գործոններ են ազդել ծրագրի շարունակելիության ապահովման կամ չապահովման վրա:

Վերջին հաշվով, ԶԱՅ-ի տարբեր կառույցներում նախաձեռնությունների հաջողության և քրեական արդարադատության գործընթացի վրա դրանց ընդհանուր ազդեցության գնահատման չափորոշիչը կարող է լինել կառուցվածքային և կազմակերպական փոփոխությունների մակարդակը՝ ներառյալ ԶԱՅ-ի ներսում սերտ համագործակցությունը և համակարգումն ապահովող իրավական դաշտի կայացումը, հաղորդակցության և համակարգման կառույցների՝ ներառյալ տվյալների հավաքման և մշակման միասնական համակարգերի ձևավորումը, ռեսուրսների և վերապատրաստումների կազմակերպումը և իրականացումը, ինչպես նաև հաշվետվողականության թափանցիկ, արդար և արդյունավետ մեխանիզմների ստեղծումը և, մասնավորապես, ԶԱՅ-ի տարբեր կառույցների կատարողականը և ԶԱՅ-ի վերաբերյալ հանրության պատկերացումները՝ 7.5. Ենթագլխում նկարագրված չափորոշիչներին համապատասխան:

Հանրությունը պետք է տեղեկացվի գնահատման թե՛ դրական, թե՛ բացասական արդյունքների մասին: Դա կարող է էլ ավելի ակտիվացնել քաղաքացիական հասարակության մասնակցությունը, խորացնել

Նրա ներգրավումը ԶԱՐԲ-ի գործընթացում, ի վերջո՝ բարձրացնել ԶԱՐԲ-ի նկատմամբ քաղաքացիական հասարակության վստահությունը:

Կատարողականի և արդյունքների գնահատման հիման վրա պետք է նախաձեռնել վերանայման գործընթաց, որը բոլոր շահակիցների մասնակցությամբ կանդրադառնա աշխատանքների իրականացման բոլոր փուլերին: Անհրաժեշտ կլինի հիմնավորապես վերափոխել ռազմավարական, կառուցվածքային, կազմակերպական և գործառնական այն միջոցառումները, որոնք առավել տևական ժամանակի ընթացքում չեն նպաստել քրեական արդարադատության գործընթացի արդյունավետության և օգտավետության ցուցանիշների բարելավմանը:

8.2. ԶԱՐԲ-ի աշխարհագրական ընդգրկումը

ԶԱՐԲ-ի միջոցառումները հաճախ կենտրոնացված են մայրաքաղաքում կամ խոշոր քաղաքներում գործող կառույցներում: Հաշվի առնելով, սակայն, որ անվտանգության և արդարադատության հասանելիությունը հաճախ շատ ավելի խնդրահարույց է գյուղական բնակավայրերում, կարևոր է ԶԱՐԲ իրականացնել նաև գյուղական շրջաններում:

Եթե փորձով ապացուցվել է, որ բարեփոխումների իրագործման որոշակի միջոցառումներ (օրինակ՝ հաղորդակցության որոշակի մեխանիզմների կամ գործի նյութերի կառավարման համակարգերի ներդրումը որոշ շրջաններում/քաղաքներում) արդյունավետ են, ապա դրանք պետք է ընդլայնել՝ նմանօրինակ ծրագրեր իրականացնելով երկրի ողջ տարածքում: Ընդլայնումը, բնականաբար, կախված կլինի իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունից (օրինակ՝ ծրագրերի համակարգողների թվից, համագործակցության և համակարգման խորացման թեմաներով վերապատրաստված՝ ԶԱՐԲ-ի պրակտիկ աշխատողների և ղեկավարների թվաքանակից, պահանջվող տեխնիկական սարքավորումները գնելու համար անհրաժեշտ բյուջեից): ԶԱՐԲ-ի այն պրակտիկ աշխատողները, ովքեր մասնակցել են փորձնական փուլին, պետք է խորհրդատուների հիմնական թիմի դեր կատարեն՝ ԶԱՐԲ-ի այլ ստորաբաժանումներում/մասնաճյուղերում և աշ-

խարհագրական այլ տարածաշրջաններում աշխատող իրենց գործընկերներին բացատրելով ռազմավարությունը:

Այնուհանդերձ, մշտապես անհրաժեշտ է մտապահել, որ տարածաշրջանային տարբերությունները կարող են տարբեր ձևերով ազդել ռազմավարությունների իրագործման վրա. մեն տարածաշրջանում կամ ԶԱՀ-ի որոշ սուբյեկտների հարաբերություններում արդյունքներ ապահոված ռազմավարությունը, հնարավոր է արդյունքներ չապահովի այլ տարածաշրջաններում կամ հարաբերություններում: Փորձնական ծրագրի հաջողված փորձն այլ միջավայրում կիրառելուց առաջ անհրաժեշտ է այն որոշակիորեն տեղայնացնել նոր միջավայրի պայմաններին²⁶¹:

8.3. Շարունակելիությունը և «ելքի» փուլը

ԶԱՀ-ի շարունակելիությունը պայմանավորող է երկու հիմնական պահանջ կա. (I) քրեական արդարադատության գործընթացի ամբողջականության և միասնականության հայեցակարգի պատշաճ ընկալումը, ընդունումը և կիրառությունն ազգային բոլոր շահակիցների կողմից, (II) համապարփակ մոտեցումների սատարումն ազգային շահակիցների կողմից, մասնավորապես՝ իրավական գրավոր հիմքերի ձևավորումը բարեփոխումների համար, որոնք միաժամանակ թույլ կտան ինստիտուցիոնալ հենքի վրա դնել նոր մոտեցումը և ապահովել անհրաժեշտ ֆինանսավորման առկայությունը²⁶²:

Եթե բարեփոխումների իրագործումը վերանայելու գործընթացում պարզ է դառնում, որ բարեփոխումների որոշ ցուցանիշներ կատարվել են, և բարեփոխումների նվաճումները հասել են շարունակելիության բավարար մակարդակի, ապա բարեփոխումներին ցուցաբերվող միջազգային աջակցությունը կարելի է աստիճանաբար նվազեցնել՝

²⁶¹ Համեմատ. OSCE, *Good Practices in Building Police-Public Partnerships* (op.cit. note 86), pp. 62f [ԵԱՀԿ, *Ոստիկանության և հասարակության միջև գործընկերության ձևավորման լավագույն փորձը* (տե՛ս էջատակի 86-րդ ծանոթագրությունը), էջ 62 և շարունակ.]:

²⁶² Համեմատ. OSCE, *Implementation of Police-Related Programmes* (op.cit. note 52), p. 52 [ԵԱՀԿ, *Ոստիկանական գործունեությանն առնչվող ծրագրերի իրագործումը* (տե՛ս էջատակի 52-րդ ծանոթագրությունը), էջ 52]:

դրանք ինքնուրույնաբար շարունակելու կարողությունների աճի տեմպին համընթաց: Ճկուն մոտեցումը թույլ կտա համապատասխան դեպքերում աստիճանաբար դադարեցնել տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումներին ցուցաբերվող արտաքին աջակցությունը: Այն դեպքում, երբ միջազգային կազմակերպությունները որոշակի ենթակառուցվածք ստեղծելու և վերապատրաստումներ իրականացնելու լիազորություններ կամ պարտավորություններ են ունեցել, անհրաժեշտ է մանրամասնորեն պլանավորել այդ պարտավորությունների փոխանցումը միջազգային խորհրդատուներից տեղացի գործընկերներին՝ հաշվի առնելով իրատեսական ժամկետներ սահմանելու կարևորությունը և անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների, տեղեկությունների, փաստաթղթերի, ուսումնական ծրագրերի և այլ նյութերի պատշաճ հանձնում-ընդունումը²⁶³:

²⁶³

Նույն տեղը, էջ 51:

IX. ԶԱՅԲ-ի վերաբերյալ միասնական մոտեցումները բարեփոխումներին աջակցող միջազգային կազմակերպությունների միջև

ԵԱՀԿ գործադիր մարմինների և ԶԱՅԲ-ում ներգրավված միջազգային այլ շահակիցների միջև սերտ քննարկումները շատ կարևոր են բարեփոխումների համապարփակ և փոխլրացնող նպատակներ և ռազմավարություններ մշակելու տեսանկյունից: Արդյունքում, նրանք կկարողանան ազգային շահակիցների առջև հանդես գալ համահունչ և միասնական նպատակներով և ակնկալիքներով:

Սերտ համագործակցությունը և համակարգումն օգնում են նաև խուսափելու իրականացվող ծրագրերի իրարամերժ գաղափարախոսություններից և կատարման հակասական մեթոդաբանություններից, որոնք կարող են լուրջ շփոթություն և դժգոհություն առաջացնել ծրագրերի շահառուների՝ ներառյալ ԶԱՅԲ-ի կառույցների, պետական և ոչ պետական այլ կառույցների և քաղաքացիական հասարակության շրջանում:

Հաշվի առնելով ֆինանսական և կադրային ռեսուրսների սղությունը՝ համագործակցության շնորհիվ կարելի է ձևավորել սիներգիա, պատվիրակել և լիազորել գործառույթները և բացառել ջանքերի կրկնողությունը և անհամատեղելի տեխնիկական միջոցների նվիրաբերումը:

Ուստի ԶԱՅԲ-ի աջակցության միջազգային ծրագրերը պետք է համակարգել թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ հարթություններում՝ ներգրավելով միջազգային կազմակերպություններին, հետազոտական հաստատություններին և դոնոր պետություններին:

ԶԱՅԲ-ի համապարփակ և բազմամասնագիտական մոտեցմանը մասնակից պետք է լինեն նաև քաղաքական և տնտեսական զարգացմանն աջակցող սուբյեկտները:

Համակարգումը կարող է ներառել նաև ծրագրվող աշխատանքների մասին տեղեկությունների փոխանակումը, որի արդյունքում կարող է մշակվել աշխատանքների ժամանակացույց: Կարող են կատարվել ճշգրտումներ՝ աշխատանքների փոխադարձ ներդաշնակեցման ուղղությամբ:

Ռազմավարական և գործառնական մակարդակի բազմակողմ հանդիպումները կարելի է անցկացնել ոչ ֆորմալ կարգով՝ ըստ կարիքի, կամ

կանոնավոր պաշտոնական հանդիպումների կամ խորհրդածոլովների շրջանակում:

Միջազգային համակարգման մեխանիզմների օրինակներ

Ոստիկանության բարեփոխումների բնագավառում ԵԱՀԿ գործադիր կառույցներն աջակցություն են ցուցաբերում տեղեկատվության փոխանակմանը և աշխատանքների համակարգմանը՝ ոստիկանության բարեփոխումների ծրագրերի համար համապատասխան պետություններում ստեղծելով ոստիկանության բարեփոխումների ծրագրերի տվյալների շտեմարաններ և օժանդակելով դրանց ընթացիկ սպասարկմանը, ինչպես նաև ակտիվորեն օժանդակելով ոստիկանության տեխնիկական խորհրդատվության տվյալների միջազգային այնպիսի շտեմարանների գործունեությանը, ինչպիսին է Դոնորների աջակցության ավտոմատացված մեխանիզմի (ԴԱԱՄ) տվյալների շտեմարանը, որն ստեղծվել է ՄԱԿԹՀՊԳ-ի կողմից: Ի լրումն վերապատրաստումների ժամանակացույցը վարելուն՝ Տաջիկստանում ԵԱՀԿ գրասենյակը ստեղծել է նաև համակարգման ոչ ֆորմալ մեխանիզմ՝ «իրավապահ ոլորտի նախաճաշը», որի ընթացքում արդարադատության և անվտանգության կառույցների, ինչպես նաև ՀԿ-ների ներկայացուցիչները համատեղ քննարկում են քրեական արդարադատության բարեփոխումներին առնչվող հիմնահանդիսները:

ԵԱՀԿ գործադիր կառույցներն օժանդակություն են ցուցաբերում նաև ոստիկանության աջակցության համակարգման տարածաշրջանային և միջազգային այնպիսի մեխանիզմների, ինչպիսին է Տարածաշրջանային համակարգման խորհուրդը (ՏՀԽ) Սարանոյում:

Ավելին, համակարգման կայացած մեխանիզմներ գոյություն ունեն ԵԱՀԿ-ի և ՄԱԿԹՀՊԳ-ի միջև, որոնք օժանդակում են միջազգային կոնվենցիաների կատարմանը և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ռազմավարությունների իրագործմանը: Այդպիսի մեխանիզմի օրինակ է «Ծիածանի ռազմավարությունը» (անգլ.՝ «Rainbow Strategy»): Համակարգված այսօրինակ համագործակցությունն անհրաժեշտ է ամրապնդել՝ տեղերում գործող գրասենյակների օժանդակությամբ երաշխավորելով համակարգման արդյունավետությունը²⁶⁴:

²⁶⁴ Հանձնառ. OSCE, Report by the OSCE Secretary General on Police-Related Activities of the OSCE Executive Structures up to the End of 2009, Vienna, April 2010, pp. 35f. and

Ակնհայտ է, որ ԶԱՅԲ-ի համար միջազգային աջակցություն ստացող շահառուները պետք է ներգրավված լինեն բարեփոխումների միջազգային աշխատանքների պլանավորման և համակարգման գործընթացներում, հատկապես որպեսզի այդ շահառուները՝ որպես տեղացիներ, ավելի մեծ պատրաստակամությամբ տեր կանգնեն բարեփոխումների գործընթացին (տե՛ս նաև IV գլուխը): Շահառուի կողմից իրականացվող համակարգմանը կարող են աջակցել համակարգող միավորները կամ հանձնախմբերը՝ բուն ծրագրերի իրականացմամբ զբաղվող ազգային կառույցներում, կամ միջազգային առաջատար կառույցներից մեկնումեկը, որին կընտրի աջակցությունն ստացող պետության կառավարությունը, և որին կվերապահվեն արտաքին բոլոր գերատեսչությունների և շահակիցների գործունեությունը համակարգելու գործառնությունները և դրա համար անհրաժեշտ լիազորությունները: Համակարգող միավորը, հանձնախումբը կամ առաջատար կառույցը կարող են բոլոր շահագրգիռ կառույցների ամենամսյա կամ առնվազն եռամսյակային բազմամասնագիտական հանդիպումներ գումարել, որոնց ընթացքում կքննարկվեն իրականացվող ծրագրերը և միջոցառումները՝ նվազեցնելով կրկնությունը և բարձրացնելով արդյունավետությունը: Այդ հանդիպումները կարող են նաև նպաստել ծրագրերի և միջոցառումների իրագործման ճանապարհին հանդիպող խոչընդոտների հաղթահարմանը²⁶⁵:

81 [ԵԱՀԿ, ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի գեկույցը ԵԱՀԿ գործադիր կառույցների կողմից ոստիկանության առնչությամբ մինչև 2009 թվականի տարեվերջն իրականացված գործունեության մասին, Վիեննա, 2010 թվականի ապրիլ, էջ 35 և շարունակ., և էջ 81]:

265

Համեմատ. OSCE, *Implementation of Police-Related Programmes* (op.cit. note 52), pp. 21f [ԵԱՀԿ, *Ոստիկանական գործունեությանն առնչվող ծրագրերի իրագործումը* (տե՛ս նաև էջառակի 52-րդ ծանոթագրությունը), էջ 21 և շարունակ]:

X. ԶԱՐԲ-ի վերաբերյալ միասնական մոտեցումները բարեփոխումներին աջակցող միջազգային կազմակերպությունների ներսում

ԶԱՐԲ-ի շրջանակում ուստիկանության բարեփոխումների համապարփակ մոտեցումն ապահովելու համար, բնականաբար, անհրաժեշտ է, որ միասնական մոտեցում ձևավորված լինի աջակցությունը ցուցաբերող կազմակերպության ներսում, որպեսզի կազմակերպության տեղի գրասենյակի և գլխավոր գրասենյակի/բարտուղարության բոլոր ներգրավված ստորաբաժանումները, որոնց աշխատանքը կարևոր է «համակառավարական» մոտեցման համար (այսինքն՝ իրավապահ մարմինների, իրավունքի գերակայության, ժողովրդավարացման, մարդու իրավունքների, տնտեսական զարգացման, շրջակա միջավայրի և զանգվածային լրատվամիջոցների ուղղությամբ աշխատող ստորաբաժանումները), սերտորեն համակարգեն, փոխհամաձայնեցնեն և փոխլրացնեն միմյանց աշխատանքները պլանավորման, գնահատման, իրագործման և վերանայման փուլերում: Բարեփոխումների տարբեր փուլերում անհրաժեշտ է ներգրավել նաև վարչական այլ ստորաբաժանումները, մասնավորապես՝ մարդկային ռեսուրսների և ֆինանսների կառավարման, իրավաբանական հարցերի և հաղորդակցության բաժինները:

Միասնական մոտեցումների հիմքում պետք է դրված լինեն ոչ միայն անձնական կապերը, այլ նաև ինստիտուցիոնալ կառուցվածքը, մասնավորապես՝ վարչությունների պետերի գործառույթները, ինչպես նաև ծրագրերի ավագ պատասխանատուների և վարչական պատասխանատուների գործառույթները: Գրասենյակի ներսում համակարգումը և համագործակցությունը կբարելավվեն, եթե մշակվեն գրասենյակի ունեցած տեղեկությունների հետ աշխատանքի համակարգչային միասնական համակարգեր, որոնք կհստակեցնեն ներքին հաշվետվությունների գործընթացը, կոյուրացնեն տեղեկատվության հոսքը և կապահովեն համապատասխան տվյալների հասանելիությունը շահագրգիռ բոլոր ստորաբաժանումներին:

Տեղերում գործող գրասենյակները պետք է հնարավորության դեպքում ստեղծեն ծրագրի համակարգման և գնահատման ստորաբաժանում-

ներ, որոնք ծրագրերի ղեկավարներին օժանդակություն կցուցաբերեն ծրագրի իրագործման ողջ գործընթացում՝ ապահովելով տվյալ գրասենյակի բոլոր ծրագրերի իրականացման բարձր որակը:

Անհրաժեշտ է դիտարկել տեղի գրասենյակներում ԶԱՅԲ-ի ստորաբաժանում ստեղծելու կամ առնվազն համակարգման հարցերով պատասխանատուի հաստիքը նախատեսելու նպատակահարմարությունը. այդ ստորաբաժանումը կամ պատասխանատուն կհամակարգեն ԶԱՅԲ-ը և կաջակցեն ԶԱՅԲ-ի իրականացմանը տվյալ շահառու պետության տարածքում, սերտորեն կհաղորդակցվեն իրենց գլխավոր գրասենյակի/քարտուղարության բոլոր շահագրգիռ ներկայացուցիչների հետ (օրինակ՝ Նյու Յորքում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր գրասենյակի կամ Վիեննայում ԵԱՀԿ քարտուղարության հետ): Նշված ստորաբաժանումը կամ պատասխանատուն պետք է ռազմավարական մակարդակով տեղակայված լինի տեղի գրասենյակի ղեկավարի աշխատակազմում, որպեսզի քաղաքական և բյուրոկրատական բավարար լծակներ ունենա և երաշխավորի գրասենյակի համապատասխան վարչությունների համակարգված և փոխլրացնող աշխատանքը: Տվյալ ստորաբաժանումը կամ պատասխանատուն պարտավոր կլինի նաև ԶԱՅԲ-ի բոլոր ծրագրերում հաշվի առնել համալորտային այնպիսի խնդիրները, ինչպիսիք են գենդերային բաղադրիչի ներառումը, մարդու իրավունքները և հաշվետվողականությունը: Ավելին, ստորաբաժանումը կամ պատասխանատուն պարտավոր կլինի իրականացնել ԶԱՅԲ-ի առաջընթացի մշտադիտարկումը և գնահատումը, ինչպես նաև մոտեցումներում անհրաժեշտ փոփոխությունների կատարումը²⁶⁶: Կազմակերպության գլխավոր գրասենյակում/քարտուղարությունում կլինի հատուկ համակարգող կամ ստորաբաժանում, որը կօժանդակի ԶԱՅԲ-ի հարցերով պատասխանատուների հատուկ մասնագիտական ցանցի գործունեությանը, ինչպես նաև կմշակի ԶԱՅԲ-ի քաղաքականություն և ուղենիշներ ԶԱՅԲ-ին աջակցող բոլոր

²⁶⁶

Հանձնառ. Hänggi, Heiner/Scherrer, Vincenza, "UN Integrated Missions and Security Sector Reform: The Way Ahead", in Hänggi/Scherrer, *Security Sector Reform and UN Integrated Missions: Experience from Burundi, the Democratic Republic of Congo, Haiti, and Kosovo*, DCAF, Geneva, 2007, p. 239 [Հայեր Վանգի / Վինչենզա Շերեր, «ՄԱԿ-ի համալիր առաքելությունները և անվտանգության ոլորտի բարեփոխումները. ապագայի ուղին», աղբյուրը՝ Վանգի / Շերեր, *Անվտանգության ոլորտի բարեփոխումները և ՄԱԿ-ի համալիր առաքելությունները. Բուրունդիի, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության, Հայիթիի և Կոսովոյի փորձը*, ԶՆԻԺԿ, Ժնև 2007 թ., էջ 239]:

գրասենյակների համար՝ աջակցելով և/կամ ուղղորդելով տեղի գրասենյակներին²⁶⁷։

Միջազգային կազմակերպությունների համահունչ, համապարփակ և միասնական մոտեցումն ապահովելու համար առաջին հերթին անհրաժեշտ է, որ տեղի գրասենյակի տարբեր վարչությունները համոզված լինեն, որ պետք է կիրառել ԶԱՀԲ-ի համապարփակ բազմաուղրտային մոտեցումներ, և պատրաստ լինեն բարեփոխումների իրենց ծրագրերը միավորելու գրասենյակի բազմաուղրտային մոտեցման հովանու ներքո։ Դրանից զատ՝ նրանց անհրաժեշտ կլինի տեղեկացված լինել շահառու պետության ԶԱՀ-ի տարբեր կառույցների, ինչպես նաև միջազգային կազմակերպության տեղի գրասենյակի այլ վարչությունների առանձնահատուկ կարիքների և համատեքստի առանձնահատկությունների մասին։ Այդ իմացությունը և մտածելակերպը տարածելու համար անհրաժեշտ կլինի իրականացնել միջազգային կազմակերպության տեղի գրասենյակի աշխատողների վերապատրաստման մանրակրկիտ և համատեղ աշխատանքներ։

Տեղի գրասենյակի աշխատողների վերապատրաստման համատեղ դասընթացները ԶԱՀԲ-ի փորձագետների համար

2011 թվականին Միավորված ազգերի կազմակերպության՝ իրավունքի գերակայության համակարգման և ռեսուրսների խումբը պատրաստեց Միավորված ազգերի կազմակերպության իրավունքի գերակայության թեմայով մասնագիտացված դասընթացը։ Վերջինս պետք է իրավունքի գերակայությանն առնչվող ոլորտներով (ոստիկանություն, քրեական արդարադատություն, բանտեր, ԱՌԲ և օրենսդրության բարեփոխումներ, գենդերային արդարադատություն, անցումային արդարադատություն և այլն) զբաղվող՝ Միավորված ազգերի կազմակերպության աշխատակիցներին հնարավորություն ընձեռեր կիրառելու իրավունքի գերակայության միասնական մոտեցում Միավորված ազգերի կազմակերպության ողջ համակարգում։ Սկզբնական ուսուցման ծրագրերն անդրադառնում էին իրավունքի գերակայության սկզբունքներին և հիմնարար արժեքներին, իրավունքի գերա-

²⁶⁷ Heiner/Scherrer, Vincenza, *Recent Experience of UN Integrated Missions in Security Sector Reform (SSR): Review and Recommendations*, DCAF, Final Report, Geneva 2007, p. 19 [Հայեր չանգի / Վինչենզա Շերրեր, *Միավորված ազգերի կազմակերպության համալիր առաքելությունների վերջին շրջանի փորձն անվտանգության ոլորտի բարեփոխումներում. ամփոփում և առաջարկություններ*, ԶՈԻԺՎ, ավարտական գեկոյց, Ժնև 2007 թ., էջ 19]։

կայությանն առնչվող՝ Միավորված ազգերի կազմակերպության նորմերին և ստանդարտներին, քարտեզագրման և գնահատման ուղենիշներին, ինչպես նաև համակարգմանը և ռազմավարության մշակումներին²⁶⁸:

Գերմանիայի միջազգային խաղաղարար գործողությունների կենտրոնը, համագործակցելով Շվեդիայի Ֆոլկե Բերնադոտի ակադեմիայի հետ, իրավունքի գերակայության թեմային նվիրված ամբողջական դասընթացներ է կազմակերպում նրանց համար, ովքեր մտադիր են աշխատել իրավունքի գերակայության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում: Դասընթացներին մասնակցում են ոստիկաններ, դատախազներ, դատավորներ, քրեակատարողական ծառայողներ և այլք: Նպատակը ԶԱՐԲ-ի համապարփակ մոտեցման վերաբերյալ նրանց իրազեկության բարձրացումն է²⁶⁹:

ԵԱՀԿ շրջանակում անհրաժեշտ է դիտարկել նաև ԶԱՐԲ-ի վերաբերյալ ԵԱՀԿ ռազմավարական հայեցակարգ մշակելու նպատակահարմարությունը, որը կներառի ԶԱՐԲ-ի իրագործման ուղենիշներ: ԵԱՀԿ տարբեր գործադիր կառույցներում աշխատողները և ԶԱՐԲ-ով զբաղվող պրակտիկ մասնագետներն այդ ուղենիշների հիման վրա միասնաբար կզբաղվեն ԶԱՐԲ-ի տարբեր բաղադրիչներով՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակի առանձնահատկությունները:

²⁶⁸ United Nations System Staff College, *UN Unified Rule of Law Training* [Միավորված ազգերի կազմակերպության համակարգի կադրերի քոլեջ, *Միավորված ազգերի կազմակերպության միասնական դասընթաց իրավունքի գերակայության թեմայով*], և United Nations Rule of Law Unit, *UN System-Wide Training on Rule of Law Piloted in Turin* [Միավորված ազգերի կազմակերպության իրավունքի գերակայության ստորաբաժանում, *ՄԱԿ-ի համակարգային ուսուցում իրավունքի գերակայության թեմայով. անցկացվել է փորձնական կարգով Թուրինում*]:

²⁶⁹ Համեմատ. Center for International Peace Operations (ZIF), “Rule of Law”, in: ZIF Training Courses Overview 2012, p. 15 [Միջազգային խաղաղապահ գործողությունների կենտրոն («ZIF»), «Իրավունքի գերակայությունը», աղբյուրը՝ «ZIF»-ի 2012 թվականի ուսումնական դասընթացների մասին տեղեկագիր, էջ 15], և Folke Bernadotte Academy, “Specialised Rule of Law Course” in: *Folke Bernadotte Academy Courses 2012*, p. 16 [Ֆոլկե Բերնադոտի ակադեմիա, «Իրավունքի գերակայության թեմայով մասնագիտացված դասընթաց», աղբյուրը՝ *Ֆոլկե Բերնադոտի ակադեմիայի 2012 թվականի դասընթացները*, էջ 16]:

Հղումներ

Փաստաթղթեր

Council of Europe, *Recommendation No. R (85) 11 of the Committee of Ministers to Member States on the Position of the Victim in the Framework of Criminal Law and Procedure*, Strasbourg, 1985 [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ R (85) 11 հանձնարարական անդամ պետություններին՝ քրեական իրավունքի և վարույթի շրջանակում տուժողի կարգավիճակի վերաբերյալ*, Ստրասբուրգ, 1985 թ.]:

Council of Europe, *Recommendation No. R (97) 13 of the Committee of Ministers to Member States Concerning Intimidation of Witnesses and the Rights of the Defence*, Strasbourg, 1997 [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ R (97) 13 հանձնարարական անդամ պետություններին՝ հանցավորությունից տուժածներին՝ վկաների ահաբեկման և պաշտպանության իրավունքների վերաբերյալ*, Ստրասբուրգ, 1997 թ.]:

Council of Europe, *Recommendation No. R (99) 19 of the Committee of Ministers to Member States concerning Mediation in Penal Matters*, Strasbourg 1999 [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ R (99) 19 հանձնարարական անդամ պետություններին՝ քրեական գործերով միջնորդության վերաբերյալ*, Ստրասբուրգ, 1999 թ.]:

Council of Europe, *Recommendation Rec(2001) 10 of the Committee of Ministers to Member States on the European Code of Police Ethics*, Strasbourg, 2001 [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի Rec (2001) 10 հանձնարարական անդամ պետություններին՝ Ոստիկանական էթիկայի եվրոպական կանոնագրքի վերաբերյալ*, Ստրասբուրգ, 2001 թ.]:

Council of Europe, *Recommendation Rec(2005) 9 of the Committee of Ministers to Member States on the Protection of Witnesses and Collaborators of Justice*, Strasbourg, 2005 [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ Rec (2005) 9 հանձնարարական անդամ պետություններին՝ վկաների և արդարադատության հետ*

համագործակցող անձանց պաշտպանության վերաբերյալ, Ստրասբուրգ, 2005 թ.]:

Council of Europe, *Recommendation Rec(2006) 8 of the Committee of Ministers to Member States on Assistance to Crime Victims*, Strasbourg, 2006 [Եվրոպայի խորհուրդ, *Նախարարների կոմիտեի թիվ Rec (2006) 8 հանձնարարական անդամ պետություններին՝ հանցավորությունից տուժածներին աջակցելու վերաբերյալ*, Ստրասբուրգ, 2006 թ.]:

Council of Europe, Parliamentary Assembly, Recommendation 1713 (2005), *Democratic Oversight of the Security Sector in Member States*, Strasbourg, 23 June 2005 [Եվրոպայի խորհուրդ, *խորհրդարանական վեհաժողով, թիվ 1713 (2005) հանձնարարական անդամ պետություններում անվտանգության ոլորտում ժողովրդավարական հսկողության վերաբերյալ*, Ստրասբուրգ, 23-ը հունիսի, 2005 թ.], տե՛ս. <http://www.assembly.coe.int/ASP/Doc/XrefViewPDF.asp?FileID=17360&Language=EN>

Legifrance, *Loi n° 93-2 du 4 janvier 1993, portant réforme de la procédure pénale*, 1993, at: <http://www.legifrance.gouv.fr/affichTexte.do?cidTexte=LEGITEXT000006080750>

Legifrance, *Loi n° 2004-204 du 9 mars 2004, portant adaptation de la justice aux évolutions de la criminalité*, 2004, at: <http://www.legifrance.gouv.fr/affichTexte.do?cidTexte=JORFTEXT000000249995>

Legifrance, Code de procédure pénale, at: <http://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006071154>

OSCE, *OSCE Strategy to Address Threats to Security and Stability in the Twenty-First Century*, Eleventh Meeting of the Ministerial Council, Maastricht, 1 and 2 December 2003, at: <http://www.osce.org/mc/17504> (10 August 2011) [ԵԱՀԿ, *21-րդ հարյուրամյակում անվտանգության և կայունության սպառնալիքներին հակազդեցության՝ ԵԱՀԿ ռազմավարությունը*, Նախարարների խորհրդի 11-րդ նիստ, Մասստրիխտ, 1–2-ը դեկտեմբերի, 2003 թ.]:

OSCE, Ministerial Council Decision No. 5/06, *Organized Crime*, Fourteenth Meeting of the Ministerial Council, Brussels, 5 December 2006, at: <http://www.osce.org/mc/23060> (10 August 2011 թ.) [ԵԱՀԿ, *Նախարարների խորհրդի թիվ 5/06 որոշումը, Կազմակերպված հանցավորությունը*, Նախարարների խորհրդի

14-րդ կիստ, Բոյունսեյ, 5-ը դեկտեմբերի, 2006 թ.]:

OSCE, *OSCE Strategic Framework for Police-Related Activities*, Permanent Council Decision No. 1049, 922nd Plenary Meeting, Vienna, 26 July 2012, at: <http://www.osce.org/pc/92559> (6 August 2012) [ԵԱՀԿ, ԵԱՀԿ ռազմավարական հայեցակարգը ոստիկանական գործառնություններին առնչվող գործունեության ոլորտում, Մշտական խորհրդի թիվ 1049 որոշումը, 922-րդ լիագումար կիստ, Վիեննա, 26-ը հուլիսի, 2012 թ.]:

United Nations Economic and Social Council, *Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime*, Vienna, 25 May 2005, at: <http://www.unrol.org/files/V0582605.pdf> (25 April 2012) [Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական խորհուրդ, *Յանցավորությունից տուժած և վրասնացի ահաբեկիչների մասնակցությամբ գործընթացներում արդարադատության վերաբերյալ ուղեցուցիչներ*, Վիեննա, 25-ը մայիսի, 2005 թ.]:

United Nations Economic and Social Council, *United Nations Principles and Guidelines on Access to Legal Aid in Criminal Justice Systems*, Vienna, 25 April 2012, at: <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/LTD/V12/528/23/PDF/V1252823.pdf?OpenElement> (6-ը հուլիսի, 2012) [Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական խորհուրդ, *Միավորված ազգերի կազմակերպության սկզբունքները և ուղեցուցիչները քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության հասանելիության մասին*, Վիեննա, 25-ն ապրիլի, 2012 թ.]:

United Nations Human Rights Committee, *General Comment No. 32, Article 14: Right to equality before courts and tribunals and to a fair trial*, U.N. Doc. CCPR/C/GC/32 (2007), Geneva 2007, <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G07/437/71/PDF/G0743771.pdf?OpenElement> (11 March 2012) [Մարդու իրավունքների կոմիտե, *Ընդհանուր մեկնաբանություն թիվ 32, 14-րդ հոդված. դատարանների և տրիբունալների առջև հավասարության և արդար դատաքննության իրավունքը*, փաստաթուղթ թիվ CCPR/C/GC/32 (2007 թ.), Ժնև, 2007 թ.]:

United Nations, *Policy on Justice Components in United Nations Peace Operations*, UNDPKO, Department of Field Support, Ref. 2009.30,1 December 2009 [Միավորված ազգերի կազմակերպություն, *Արդարադատության բաղադրիչների ոլորտում քաղա-*

քականությունը Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահ գործողություններում, ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների վարչություն, Դաշտային օժանդակության բաժին, թիվ 2009.30, 1-ը դեկտեմբերի, 2009 թ.]:

Օգտագործված գրականությունը

Aromaa, Kauko et al., *Crime and Criminal Justice in Europe and North America 1995-1997: Report on the Sixth United Nations Survey on Crime Trends and Criminal Justice Systems*, European Institute for Crime Prevention and Control, affiliated with the United Nations (HEUNI), Publication Series No. 40, Helsinki 2003 [Արոմաա, Կաուկո և այլք, *Հանցավորությունը և քրեական արդարադատությունը Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում 1995-1997 թթ.*: Հանցավորության միտումների և քրեական արդարադատության համակարգերի գործունեության վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության վեցերորդ հետազոտության զեկույցը, Հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի եվրոպական ինստիտուտ՝ Միավորված ազգերի կազմակերպությանն առընթեր, հրատարակությունների թիվ 40 շարք, ՅԵԻՍԻՆԿԻ, 2003 թ.]:

Audit Commission, *Supporting Change Management*, London 2003 [Աուդիտի հանձնաժողով, *Քրեական արդարադատության տեղական խորհուրդները. օժանդակությունը փոփոխությունների կառավարմանը*, Լոնդոն 2003 թ.], տե՛ս <http://www.audit-commission.gov.uk/SiteCollectionDocuments/AuditCommissionReports/NationalStudies/20030702localcriminaljusticeboardsreport.pdf> (12-ը հունիսի, 2012 թ.):

Auld, Sir Robin Ernest, “The Criminal Justice System”, in: Auld, Sir Robin Ernest, *Review of the Criminal Courts of England and Wales*, Ministry of Justice, Chapter 8, pp. 315-366, September 2001 [Սիր Ռոբին Էռնեստ Օլդ, «Քրեական արդարադատության համակարգը», աղբյուրը՝ Սիր Ռոբին Էռնեստ Օլդ, *Ընդհանուր տեղեկություններ Անգլիայի և Ուելսի քրեական դատարանների մասին*, արդարադատության նախարարություն, 8-րդ գլուխ, էջեր 315-

366, 2001 թվականի սեպտեմբեր], տե՛ս <http://webarchive.nationalarchives.gov.uk/+http://www.criminal-courts-review.org.uk/chpt8.pdf> (23-ը նոյեմբերի, 2011 թ.):

Ball, Nicole/Fayemi, Kayode (eds.), *Security Sector Governance in Africa: A Handbook, Centre for Democracy and Development*, Chapter 4. Policy Development and Implementation, 2004, at: www.ssronline.org/ssg_a/index3.cfm?id=83&p=17 (7 March 2012) [Նիկոլ Բոլ / Կայոդե Ֆայեմի (խմբագիրներ), *Անվտանգության ոլորտի կառավարումն Աֆրիկայում. ուղեցույց*, Ժողովրդավարության և զարգացման կենտրոն, 4-րդ գլուխ. բաղաբանականության մշակումը և իրագործումը, 2004 թ., տե՛ս www.ssronline.org/ssg_a/index3.cfm?id=83&p=17 (7-ը մարտի, 2012 թ.):

Berry, Jan, *Criminal Justice Units and Case Building. Reducing Bureaucracy in Policing Advocate*, March 2010 [Յան Բերրի, *Քրեական արդարադատության ստորաբաժանումները և գործերի կազմումը. հանուն ոստիկանության գործունեության մեջ բյուրոկրատիայի կրճատման*, 2010 թվականի մարտ], տե՛ս <http://library.npia.police.uk/docs/homeoffice/reducing-bureaucracy-criminal-justice-units.pdf> (12-ը դեկտեմբերի, 2011 թ.):

Berry, Jan, *Reducing Bureaucracy in Policing. Full report*, November 2009 [Յան Բերրի, *Բյուրոկրատիայի կրճատումը ոստիկանական գործունեության մեջ. զեկույցի ամբողջական տարբերակ*, 2009 թվականի նոյեմբեր], տե՛ս <http://www.policessupers.com/uploads/news/reducing-bureaucracy-policing.pdf> (12-ը դեկտեմբերի, 2011 թ.):

Biles, David/McKillop, Sandra (eds.), *Criminal Justice Planning and Coordination, Proceedings of a conference held 19-21 April 1993, Canberra*, Australian Institute of Criminology, Canberra 1994 [Դեյվիդ Բայլս / Սանդրա ՄաքԲիլոփ (խմբագիրներ), *Քրեական արդարադատության ծրագրումը և համակարգումը*, Կանբերայում 1993 թվականի ապրիլի 19-21-ն անցկացված խորհրդաժողովի աշխատությունները, Ավստրալիայի քրեաբանության ինստիտուտ, Կանբերա 1994 թ.], տե՛ս <http://aic.gov.au/en/publications/previous%20series/proceedings/1-27/24.aspx> (15-ն օգոստոսի, 2011 թ.):

Blank, J.L.T. (ed.), *Public Provision and Performance*. Amsterdam 2000 [Ջ.Լ.Տ. Բլանկ (խմբ.), *Պետական ապահովումը և արտադրողականությունը*: Ամստերդամ, 2000 թ.]:

Center for International Peace Operations (ZIF), “Rule of Law”, in: *ZIF Training Courses Overview 2012* [Միջազգային խաղաղապահ գործողությունների կենտրոն («ZIF»), «Իրավունքի գերակայությունը», աղբյուրը՝ «ZIF»-ի *2012 թվականի ուսումնական դասընթացների մասին տեղեկագիր*, էջ 15], տե՛ս http://archiv.zif-berlin.org/fileadmin/uploads/training/dokumente/ZIF_Course_Overview_2012.pdf (5-ը սեպտեմբերի, 2012 թ.):

Centre for International Governance Innovation, *Afghanistan, Security Sector Reform Monitor*, No.4, September 2010 [Միջազգային կառավարման նորարարության կենտրոն, *Աֆղանստանի անվտանգության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկումը*, թիվ 4, 2010 թվականի սեպտեմբեր], տե՛ս <http://www.cigionline.org/publications/2010/9/security-sector-reform-monitor-afghanistan> (10-ը դեկտեմբերի, 2011 թ.):

Coxhead, John, *Improving Performance in Race and Diversity* [Ջոն Կոքսհեդ, *Ռասայի և բազմազանության հետ կապված հարցերում աշխատանքի արդյունավետության բարձրացումը*], Lambard Academic Publishing, 2009 թ.:

Cushman, R.C., *Guidelines for Developing a Criminal Justice Coordinating Committee*, US Department of Justice, National Institute of Corrections, January 2002, Washington D.C [Ռ. Կ. Կուշման, *Քրեական արդարադատության համակարգող հանձնաժողովի ձևավորման ուղենիշները*, ԱՄՆ-ի արդարադատության նախարարություն, Ուղղիչ ծառայությունների ազգային ինստիտուտ, 2002 թվականի հունվար, Վաշինգտոն, ԱՄՆ], տե՛ս <http://static.nicic.gov/Library/017232.pdf>:

DCAF/OSCE ODIHR/UN-INSTRAW, *Security Sector Reform Assessment. Monitoring and Evaluation and Gender*, Practice Note 11, Gender and SSR Toolkit, Geneva 2008 [ԶՈՒԺՎ/ԺՅՄԻԳ/Կանանց դերի բարձրացման հարցերով հետազոտությունների և ուսուցումների միջազգային ինստիտուտ, *Անվտանգության ոլորտի բարեփոխումների գնահատումը, մշտադիտարկումը, վերլուծությունը և գենդերը*, թիվ 11 գործնական ուղեցույց, Գենդերը և անվտանգության ոլորտի բարեփոխումների

գործիքակազմը, Ժնև, 2008 թ.]:

DCAF, *Operational Guidance Note: Following on from a Security & Justice Assessment*, The International Security Sector Advisory Team (ISSAT), ISSAT Operational Guidance Notes (OGNs) Online, Supporting the International Community's SSR Capacity, Geneva 2010 [ԶՈՒԺՎ, *Գործառնական ուղեցույց-հուշագիր. անվտանգության և արդարադատության գնահատման արդյունքների հիման վրա միջոցառումների իրականացումը*, Անվտանգության ոլորտի միջազգային խորհրդատվական թիմ (ԱՈՄԽԹ), ԱՈՄԽԹ-ի գործառնական ուղեցույց-հուշագրերն ինտերնետում, ԱՌԲ-ի բարեփոխումների՝ միջազգային հանրության ներուժի զարգացման օժանդակությունը, Ժնև, 2010 թ.], տե՛ս <http://issat.dcaf.ch/content/download/1180/8960/file/ISSAT%20Assessment%20OGN%204%20Follow%20On.pdf>:

DCAF, *Operational Guidance Note: Processing a Security & Justice Assessment Proposal*, The International Security Sector Advisory Team (ISSAT), ISSAT Operational Guidance Notes (OGNs) Online, Supporting the International Community's SSR Capacity, Geneva, 2010 [ԶՈՒԺՎ, *Գործառնական ուղեցույց-հուշագիր. անվտանգության և արդարադատության համակարգի գնահատման չափորոշիչների վերաբերյալ առաջարկությունների քննարկումը*, Անվտանգության ոլորտի միջազգային խորհրդատվական թիմ (ԱՈՄԽԹ), ԱՈՄԽԹ-ի գործառնական ուղեցույց-հուշագրերն ինտերնետում, ԱՌԲ-ի բարեփոխումների՝ միջազգային հանրության ներուժի զարգացման օժանդակությունը, Ժնև, 2010 թ.], տե՛ս <http://issat.dcaf.ch/content/download/440/2794/file/ISSAT%20Assessment%20OGN%201%20Processing%20the%20Proposal%20FINAL.pdf>:

DCAF, *Toolkit on Police Integrity*, Geneva 2012 [ԶՈՒԺՎ, *Ոստիկանության բարեվարքության գործիքակազմ*, Ժնև, 2012 թ.]:

DeNicola, Christopher, *Criminal Procedure Reform in Bosnia and Herzegovina: Between Organic Minimalism and Extrinsic Maximalism* [Զրիստոֆեր ԴեՆիկոլա, *Ջրեական դատավարության բարեփոխումները Բոսնիա-Յերցեգովինայում. օրգանական մինիմալիզմի և արտաքին մաքսիմալիզմի մեջտեղում*, 2010 թ.], տե՛ս

<http://laworgs.depaul.edu/journals/RuleofLaw/Documents/DeNicola-Final.pdf> (10-ը մարտի, 2013 թ.):

DFID, *Security Sector Reform and the Management of Military Expenditure: High Risks for Donors, High Returns for Development*, Report on an International Symposium Sponsored by the UK Department for International Development, London, February 2000 [Միջազգային զարգացման դեպարտամենտ (DFID), *Անվտանգության ոլորտի բարեփոխումները և ռազմական ծախսերի կառավարումը*. *Մեծ ռիսկեր՝ դոնորների, մեծ օգուտներ զարգացման համար*, Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման դեպարտամենտի հովանու ներքո անցկացված միջազգային սիմպոզիումի մասին զեկույց, Լոնդոն, 2000 թվականի փետրվար], տե՛ս <http://www.effectivepeacekeeping.org/sites/effectivepeacekeeping.org/files/04/DfID%20SSR%20and%20Military%20Expenditures.pdf>:

Dodik, Bozidarka, “Prosecutorial Investigation – the Experiences of Bosnia and Herzegovina”, in: Petrovic, Ana/Jovanovic, Ivan, *New Trends in Serbian Criminal Procedure Law and Regional Perspectives. Normative and Practical Aspects*, OSCE Mission to Serbia, Belgrade, 2012 [Բոզիդարկա Դոդիկ, «Դատախազական քննությունը. Բոսնիա-Յերցեգովինայի փորձը», *Նոր միտումները Սերբիայի քրեական դատավարության օրենսդրում և տարածաշրջանային զարգացումները, նորմատիվային-գործնական առանձնահատկություններ*, Սերբիայում ԵԱՀԿ առաքելություն, Բելգրադ, 2012 թ.], էջեր 25-46:

Downes, Mark, *Paper for OSCE Meeting on “Police Reform within the Reform of the Wider Criminal Justice System”*, ԵԱՀԿ, Vienna, September 2011 [Մարկ Դոունզ, *զեկույց ԵԱՀԿ «Ոստիկանության բարեփոխումները քրեական արդարադատության առափել ընդլայնված համակարգի բարեփոխումների շրջանակում» խորագրով ժողովի համար*, ԵԱՀԿ, Վիեննա, 2011 թվականի սեպտեմբեր]:

Downes, Mark/Keane, Rory, *Security-Sector Reform Applied: Nine Ways to Move from Policy to Implementation*, International Peace Institute, Policy Papers, New York/Vienna, February 2012 [Մարկ Դոունզ / Ռորի Էին, *Անվտանգության ոլորտի բարեփոխումների կիրառությունը. քաղաքականությունից իրագործման անցնելու 9 ուղիները*, Խաղաղության միջազգային ինստիտուտ,

քաղաքականության փաստաթղթեր, Նյու Յորք / Վիեննա, 2012 թվականի փետրվար]:

England, Madeline L., *Management of the Security Sector: A Note on Current Practice*, Henry L. Stimson Center, Washington, D.C., 12 December 2009 [Մեդլին Լ. Ինգլանդ, *Անվտանգության ոլորտի ղեկավարումը. տեղեկանք ընթացիկ գործելակերպի վերաբերյալ*, Յենրի Լ. Սթիմսոնի անվ. կենտրոն, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, ԱՄՆ, 12-ը դեկտեմբերի, 2009 թ.], տե՛ս http://www.stimson.org/images/uploads/research-pdfs/Stimson_Management_of_security_sector_FINAL_12dec09_1.pdf (10-ը դեկտեմբերի, 2011 թ.):

England, Madeline L.; *Security Sector Governance and Oversight: A Note on Current Practice*, Henry L. Stimson Center, Washington, D.C., 12 December 2009 [Մեդլին Լ. Ինգլանդ, *Անվտանգության ոլորտի կառավարումը և վերահսկողությունը. տեղեկանք ընթացիկ գործելակերպի վերաբերյալ*, Յենրի Լ. Սթիմսոնի անվ. կենտրոն, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, ԱՄՆ, 12-ը դեկտեմբերի, 2009 թ.], տե՛ս http://www.stimson.org/images/uploads/researchpdfs/Stimson_Governance_oversight_security_Sector_FINAL_12dec09_1.pdf (12-ը դեկտեմբերի, 2011 թ.):

European Forum for Urban Safety, *Guidance on Local Safety Audits - Compendium of International Practice*, Paris 2007 [Զաղաքների անվտանգության եվրոպական ֆորում, *Անվտանգության տեղական ստուգումների մասին ուղեցույց. միջազգային փորձի օրինակների հավաքածու*, Փարիզ 2007 թ.], տե՛ս http://efus.eu/files/fileadmin/efus/secutopics/EFUS_Safety_Audit_e_WEB.pdf (11-ը մարտի, 2012 թ.):

Flanagan, Sir Ronnie, *The Review of Policing. Final Report*, 2008 [Սիր Ռոնի Ֆլենեգեն, *Ոստիկանական գործունեության վերլուծությունը: Ավարտական զեկույց*, 2008 թ.], տե՛ս http://www.polfed.org/Review_of_Policing_Final_Report.pdf (3-ը մարտի, 2012 թ.):

Florence, Curtis, et al. *Effectiveness of Anonymised Information Sharing and Use in Health Service, Police, and Local Government Partnership for Preventing Violence related Injury: Experimental Study and Time Series Analysis*, BMJ Research, 2011 [Կուրտիս Ֆլորենս և այլք, *Անանուն տեղեկությունների փոխանակման և օգտագործման արդյունավետությունն արդարադատության, ու-*

տիկանության և տեղական ինքնակառավարման գործընկերա-
յին համակարգերում՝ բռնությամբ պայմանավորված վնասվածք-
ների կանխարգելման գործում. փորձարարական
հետազոտություն և ժամանակային շարքերի վերլուծություն,
BMJ Research, 2011 թ.], տե՛ս
<http://www.bmj.com/content/342/bmj.d3313> (6-ը դեկտեմբերի,
2012 թ.):

Folke Bernadotte Academy/Swedish Contact Group, *Security Sector Reform. Assessment Framework*, Stockholm [Ֆոլկե Բերնադոտի ակադեմիա / Շվեդիայի կոնտակտային խումբ, *Անվտանգության ոլորտի բարեփոխումները: Գնահատման հայեցակարգը*, Ստոկհոլմ]:

Folke Bernadotte Academy, “Specialised Rule of Law Course” in: *Folke Bernadotte Academy Courses 2012*, p. 16 [Ֆոլկե Բերնադոտի ակադեմիա, «Իրավունքի գերակայության թեմայով մասնագիտացված դասընթաց», աղբյուրը՝ *Ֆոլկե Բերնադոտի ակադեմիայի 2012 թվականի դասընթացները*, էջ 16], տե՛ս http://folkebernadotteacademy.se/PageFiles/2498/Kurskatalog_2012.pdf (5-ը սեպտեմբերի, 2012 թ.):

Glanfield, Laurie, “Strategic Planning for the Criminal Justice System”, in: Biles, David/McKillop, Sandra (eds.), *Criminal Justice Planning and Coordination*, Proceedings of a conference held on 19-21 April 1993, Canberra, Australian Institute of Criminology, Canberra 1994 [Լորի Գլենֆիլդ, «Ռազմավարական ծրագրումը քրեական արդարադատության համակարգի շրջանակում, աղբյուրը՝ Դեյվիդ Բայլս / Սանդրա ՄաքՔիլոպի (խմբագիրներ), «Քրեական արդարադատության ծրագրումը և համակարգումը» խորագրով՝ Կանբերայում 1993 թվականի ապրիլի 19-21-ն անցկացված խորհրդաժողովի աշխատությունները, Ավստրալիայի քրեաբանության ինստիտուտ, Կանբերա, 1994 թ.], էջեր 19-31, տե՛ս <http://aic.gov.au/en/publications/previous%20series/proceedings/1-27/24.aspx> (15-ն օգոստոսի, 2011 թ.):

Greene, Jack R., *Policing through Human Rights, Ideas in American Policing*, Police Foundation, Number 13, December 2010 [Ջեք Ռ. Գրին, *Ոստիկանական գործունեությունը մարդու իրավունքների միջոցով*, Ամերիկյան ոստիկանության գործունեության գաղափարներից, Ոստիկանության հիմնադրամ, թիվ 13, 2010

թվականի ղեկտեմբեր, էջ 14], տե՛ս <http://www.policefoundation.org/content/policing-through-human-rights> (15-ը հոկտեմբերի, 2012 թ.):

